557

20
4-93

1880

2001

2010

ՀՕՐՆ

ԱԼՓ. ԿՐԱԴՐԻ

ԳԱՂՂԻԱՑՒՈՑ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԱՆԱԿԻՆ ՀԱՒԱՏՈՑ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1880

20
Կ-93

280
857-4Ր

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԱՆԱԿԻՆ ՀԱՒԱՏՈՑ

ՀՕՐՆ

ԱԼՓ. ԿՐԱԴՐԻ

ԳԱՂՂԻԱՑԻՈՑ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՒԱՏՈՑ

ՎԵՆԵՏԻԿ
ՎԱՆՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
1880 — ՌՅԼ-ՌՅԼԱ

11636

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ըստ ջրահեղեղ ամբարիշտ վարդապետութեանցն յոր-դելոյ յարուցանէ Տէր միշտ՝ իբրև լոյս 'ի վերայ բարձրա-բերձ աշտարակի, արս հոյակապս հանճարոյ, որք զճշմար-տութիւն բանիցն իւրոց, զաւանդեալն սրբոյ Եկեղեցւոյ, 'ի նորին հրամանէ և ոգւոյ՝ և ևս պայծառ փայլեցուցանեն, հնարագիւտ և նրբին իմաստիւք, և յստակութեամբ ճոխ և վայելչազարդ ասացուածոց, գերելով միանգամայն զուշ և զսիրտ առ գեղեցիկ և վսեմ հիւսուածոցն կարգ, և առ կէտ երջանկափառ նպատակին:

Ոչինչ երկբայիմք ասել զի 'ի սոցուն սակի հռչակա-պանծ եկաց յաւուրս մեր և մատենագիրս Կրագրի, յոգ-նաթիւ իմաստասիրական և աստուածաբանական երկասի-րութեամբք, մինչև յորջորջիլ յոմանց Պլատոն քրիստոնեայ, և արժանապէս վերակոչիլ 'ի պատիւ անդամակցութեան Անմահականաց կաճառոյն իւրոյն հայրենեաց, մեծարգին հանդիսացեալ ցվախճան կենացն 'ի գործ և 'ի գիր, որ-պէս տեսցի ըստ կարգի:

Ծնաւ Ա. Յովսէփ Ալփոնսոս Կրագրի յամի Տեառն 1805, և վարժեալ նախ 'ի հրահանգս ուսողական մակա-

ցուԹեանց՝ եմուտ 'ի 1825 'ի Վարժարանն Բազմարուեստից (École polytechnique)․ ապա եւ զանձն յուսումն կրօնական գիտուԹեանց, և ընկալեալ զկարգ և զաստիճան քահանայուԹեան՝ կարգեցաւ յամին 1841 վերատեսուչ Ստանիսլաւ վարժոցին, և յետոյ 'ի 1846 կոչեցաւ իբրև պարգեւապետ 'ի բարձրագոյն Դպրոցն Կանոնական (École normale), ուրանօր ախոյեան ընդդէմ արձանացաւ Վաշըրոյի՝ որ տեսուչն էր վարժատանն, 'ի հրատարակել նորին զերրորդ հատոր Պատմութեան Աղեքսանդրեան դպրոցին կոչեցեալ գրուածոյն, մինչև 'ի բաց կալ նմա 'ի տեսչուԹենէն յամին 1851․ բայց և ինքնին Կրատրի 'ի յաջորդ ամին հրաժարեցաւ 'ի պաշտամանէն, և ընդ երիցուն Բեգըրդյի նուիրեաց զանձն 'ի վերանորոգումն և 'ի բարեզարդուԹիւն Աղօթավանից կարգին, որ 'ի պատիւ Անարատ յղուԹեան Ս․ Կուսին։ Առ այսոքիւք և ամս ոչ սակաւս 'ի վերջայս կենացն եկաց վարժապետ Բարոյական Աստուածաբանութեան 'ի Սորբոնեան կղերանոցին։

Ի գրական երկասիրուԹիւնս իւր մեծահամբաւ է յոյժ, Թող զԹուղԹսն և զՊատասխանիսն առ Վաշըրոյ, Իմաստասիրութիւն ընդարձակ 'ի վեց ստուար հատորս, հրատարակեալ 'ի 1855է ց57, յերիս մասունս բաժանեալ, որք են՝ Ծանօթութիւն Աստուծոյ, Տրամաբանութիւն և Ծանօթութիւն հոգւոյ։ Անուանիք են մեծապէս և մատեանքն որք կոչին Իմաստակք և Բանադատութիւն. — Աղբերք. — Ամս Ս. Կուսին. — Երկունք հաւատոյ. — Խաղաղութիւն. — Ուսումն 'ի վերայ այժմեան իմաստակութեան. — Մեկնութիւն Աւետարանին Մատթէի. — Յիսուս Քրիստոս, պատասխանի առ Ռընան. և այլն, և այլն։ Յայսոսիկ ամենայնի ներկուռ է և նրբիմաստ ոճ գրութեանն, և կորովաբան 'ի ջատագովութիւն կրօնից և ուղիղ վարդապետութեան։ Իսկ 'ի մէջ հրատարակելոց յետ մահուն իւրոյ ընտիր յոյժ Յիշատակք պատանեկութեան իմոյ, գողտրիկ և սրտառուչ գրութիւն, յայտարար ամփոփ հոգւոյ իւրոյ և սրտին նախանձելի պարզութեան։

Սխրացեալ ընդ հոգեւանդն ոճ մատենագրիս և ընդ դիւրամն հանճարեղս 'ի լուսափայլել զճշմարտութիւնս սրբոյ կրօնիս, զորս և նորանոր զարգացմամբ ուսմանց աւուրցս հզօրագոյնս ևս առնէ հաւաստի, իղձ եղև մեզ յեղուլ 'ի հայ զառաջիկայս՝ զԻմաստութիւն կամ զԻմաստասիրութիւն Հանգանակին Հաւատոյ, առանձինն 'ի նպաստ և իբրև առաձեռն 'ի նուէր վիճակակցաց մերոց և դասակցաց յասպարիզի երկնահրաւէր կոչմանս, գերագունի պաշտաման քահանայութեան։

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ

Ոչ Աստուածաբանութիւն լինչ է մատեանս, այլ տրամախօսութիւն քահանայի ուրուք ընդ բանիբուն ումեք առն։ Քահանայն՝ առ 'ի դիւրիմաց առնել զբանն՝ զգուշանայ որչափ հնար է չառնուլ 'ի կիր առածս ուսումնականս և աստուածաբանականս, այլ խօսի հասարակաց բարբառով. Նա մանաւանդ խրախոյս առեալ յօրինակէ սրբոյն Պօղոսի առաջի Աթենացւոց, գուն գործէ յարմարել զբանս իւր բանից ունկնդրին, և 'ի մտի ունի միայն՝ փարատելով զկանխակալու կարծիս խաթարիչս մերոյս վարդապետութեանց, ածել յեռանդն զմտաւոր լսողն առ 'ի ճանաչել զՔրիստոնէութիւն, քան թէ ածել 'ի ծանօթութիւն աստուածային անհուն վարդապետութեան, որ զարդիս վասն աշխարհի եղեալ է վարդապետութիւն անծանօթին Աստուծոյ։

Իցէ՛ անկատար լծովքս այսոքիւք հորդել մեզ հանճարեղ մտաց ոմանց զճանապարհ կրօնիցս, զանգիտացեալն յինքեանց և զակնկալեալն 'ի հոգւոց նոցա։

ԹՈՒՂԹ ԿԱՐՈԼՈՍԻ ՎԵՐՉԵԼԼՈՆԷ

ԲԱՌՆԱԲԵԱՆ ԿՐՕՆԱՒՈՐԻ ԵՒ ՀԱՆՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԻՒՐՈՑ ՈՒԽՏԻՆ ԵՒ ՔՆՆԻՉԻ ԳՐՈՑ Ի ՀՌՈՎՄ

ԱՌ ՀԱՅՐՆ ԿՐԱԴՐԻ

Շնորհ ունիմ մեծապէս վասն ընծայելոյդ ինձ զընտիր և զպատուական մատեանդ զիմաստութիւն Հանգանակին Հաւատոյ։ Արդարև մատեանս այս ընտիր՝ արժանի ամենայն դրուատեաց և գովելի ոգւով գրեալ ըստ ամենայնի, օգտակար լիցի ընթերցանելեաց, առ 'ի բառնալ զյոլով կանխակալս կարծիս և 'ի լուծումն բազում դժուարին խնդրոց, որք յամենայն կողմանց յառնեն զարդիս ընդդէմ ամենասուրբ կրօնից մերոց: Վասն որոյ 'ի սիրտ սրտէ խնդամ ընդ քեզ, արժանապատիւ Հայր, զի 'ի վերայ այլոց գրոց քոց յաւելեր և զայս նոր երկասիրութիւն, դիպող յոյժ և ձեռնտու առ 'ի հաստատել առնել ամենեցուն զսրբութիւն և զճշմարտութիւն մերոյս հաւատոյ:

Տէր մեր Յիսուս Քրիստոս օգնական լիցի քեզ: Ողջ լեր:

Հռովմ. եօթն իդոսաց յունիսի,
յամի Տեառն ՌՊԿԱ։

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԱՆԱԿԻՆ

ՀԱՒԱՏՈՑ

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ա

Հաւատք. — Աստուած Արարիչ.

«Հաւատամ՝ 'ի մի Աստուած,
«'ի Հայրն ամենակալ, յարարիչն
«երկնի և երկրի»:

Ա

Զինչ առնել իցէ առ 'ի հաւատս ունելոյ:

Պարտ է առնել զոր ասաց Քրիստոս:

Եւ զինչ հնարս եցոյց առ հաստատելոյ 'ի հաւատս:

«Ամենայն որ զչար գործէ՝ ասաց Քրիստոս, ատեայ զլոյս, և ոչ գայ առ լոյսն... իսկ որ առնէ զճշմարտութիւն (զբարին), գայ առ լոյսն[1]»: Գալ առ լոյսն՝ է հաւատս ունել:

Արդ կարծիցես զի չունելով իմ հաւատս՝ և գործք իմ չարք իցեն. և ընդէ՞ր իցեն չարք:

1 Յովհ. Աւետ. գ. 20, 21:

Տեսանեմ զի զգործս քո առ լաւս ունիս, և բարի ոք զանձն համարիս. այլ զմտաւ ած զի Յիսուս Քրիստոս՝ ամենալաւն յորդիս մարդկան, պատասխանի տուեալ պատանւոյն՝ որ կոչէր զնա «Վարդապետ բարի», ասէ ցնա. «Զի՞ ասես զիս բարի. չիք ոք բարի, բայց մի Աստուած[1]»։

Թերևս ստոյգ չար յամենայն գործս քո, այլ և վէրք հոգւոյ քում, բարի համարելդ զքեզ իցէ. և զայն զայս վէրս կոչեմք մեք ամբարտաւանութիւն։ Արդ ամբարտաւանութիւն է սկիզբն և հաւատիք ստարանալոյ մերոյ յԱստուծոյ։

Անշուշտ լեր զի իմ չիք բնաւ ամբարտաւանութիւն։

Խաբիս. ամբարտաւանութիւն է 'ի քեզ յորժամ համարիս զքեզ բարի լինել։ Այլ անգիտանամք մեք զինչ ամբարտաւանութիւն իցէ և զինչ խոնարհութիւն։

Զինչ իցէ ուրեմն։

Ասացից քեզ արդ։

Մարդ 'ի կշիռ արկանէ միշտ զէութիւն իւր ընդ մարթելի լինելութեանն. համեմատէ զընիկ և զառաջիկայ մեծութիւն իւր՝ ընդ հանդերձելոյ հնարաւոր և իմանալի մեծութեանն։

Արդ որ ոչ մտաբերէ զիմանալին, և որում նիւղ է հանդերձեալն, և զոյգն զարգացումն հնարաւոր և օճան սակաւ, այս է՝ ոչ ընաւ աղբիւր աստուածային 'ի խորս հոգւոյն, այնպիսին որչափ և աղքատին ոք իցէ՝ մեծ ումն զանձն համարի, զի չափէ զզոյգն՝ զոր թուի լինել՝ ընդ ոչնչին յինքեան օթելոյ։

Աւադիկ ամբարտաւանութիւն։

[1] Ղուկ. ԺԸ. 19։

Իսկ որ ունի 'ի խորս հոգւոյն և զգայ յանձին զաստուածային, առատաղեղ, խորին և զմշտաբուղխ աղբիւրն, զիմանալին երկնային, զանհունն ապառնի, զհնարաւորն յաւիտենական, այնպիսին որչափ և մեծ իցէ, արհամարհէ զսահմանափակ մեծութիւնն զայն, զոչինչն առ անբաւութեամբ, զոր զգայ նախուստ և կրէ յինքեան։

Աւադիկ խոնարհութիւն։

Վասն որոյ խոնարհ լինել կամ ամբարտաւան՝ է ունել կամ չունել զԱստուած յանձին։

Եւ աստի 'ի միտ առնուս զի որ ոք հաճ և հաւան գտանի ընդ անձն՝ նա յամբարտաւանութեան կայ։

Արդ զի՞նչ միտք են քո զհաւատոց։

Կարծիցես զի հաւատալ յԱստուած՝ իցէ ասել բերանով և կամ յերիւրել 'ի մտի զբանս զայսոսիկ, թէ Հաւատամ յԱստուած։ Հաւատալ յԱստուած՝ կենդանի հաւատովք, է ունել զԱստուած յանձին։

Յորմէ մարթ է իմաստասիրել զի որոյ չիք հաւատք՝ չիք և խոնարհութիւն։

Այլ արդ զինչ իցեն հաւատացեալքն այն, որոց գործք չարութեան են, և ոչ հաւատարակիցք իւրեանց. ո՞չ ապաքէն յամբարտաւանութեան են նոքա։

Եթէ զչար գործեն, թէպէտ և հաւատացեալք զանձինս կոչիցեն՝ ոչ սիրեն զլոյս, հեռացեալք առ 'ի նմանէ։ Հաւատք նոցա մեռեալ է, և ամբարտաւանութիւն նոցա մեծ՝ առաւել քան զլոյժ։ Արդ հաւատք մեռեալ՝ է զխակ իմն, զոր սակաւ ինչ աւուրք լուծանեն և վատնեն յաճախ։

Ուրեմն հաւատք զգործոց մերոց և կամ գէթ զկամաց կախեալ կայցեն։

Լուր աղէ՛ եթէ որպէս ծնանին հաւատք 'ի սիրտս

մեր ըստ սրբոյն Օգոստինեայ։ «Ծագեն 'ի մեզ հաւատք՝ ըստ հնազանդելոյ մերոյ կանխաժաման և հրաւիրակ ողորմութեանն Աստուծոյ»։

«Յայնժամ տպաւորէ Աստուած զհաւատս 'ի սիրտս մեր։ Ապա ուրեմն հաւատք ընդ մերով իշխանութեամբ են. քանզի իւրաքանչիւր ոք յորժամ կամի՝ յայնժամ հաւատայ, և յորժամ հաւատայ՝ յայտ է թէ կամի զայն [1]»։

Յայս միտս ուրեմն հաւատք զմերոց կամաց կախեալ կան։ Այլ ընդ ձեռամբ է Աստուծոյ որ շնորհէ զայն նախ. բայց Աստուծոյ կամք են տալ զայն առ հասարակ ամենեցուն, և ոչ կասի 'ի պարգևելոյ զայն բոլորից. զոր ոմանք ընդունին և այլք մերժեն, որչափ զի համբոյր և հլու իցէ հոգին և կամ ոչ. այնպէս զի զմէնջ կախեալ կայ ունելն հաւատս և կամ չունել։ Այս բանք են Քրիստոսի. «Որ ոք զչարիս գործէ՝ զայ առ լոյսն»։

Սուրբն Օգոստինոս պնդէր և պնդելու ոք է. այլ իցէ՞ արդեօք և աստուածային ներկուռ։ Արդարև զարմանալի այն իցէ վասն իմ՝ որէ և առ Դպրոցականս գտանիցին իմացք զհասարակ այսպէս լայն և բանաւոր։

Սուրբն Օգոստինոս այնքան հրաշալի է յաստուածաբանութեան՝ մինչ զի ըստ Դպրոցականաց իսկ «Պարտ է զգուշանալ չհամարելոյ զոք նախամեծար քան զնա [2]»։ Սակայն ածից 'ի մէջ արդ

1 Հաւատք ընդ իշխանութեամբ են. զի հաւատայ ոք յորժամ կամիցի, և յորժամ հաւատայցէն՝ հաւատայ զի կամի. (փ. 552. բ.)։ Տես արդ թէ հաւատայցէ ոք՝ եթէ կամեսցի, և կամ թէ ոչ հաւատայցէ՝ եթէ կամեսցի։ Եթէ անտեղի է այս . . . ապա հաւատք ընդ իշխանութեամբ են, այլ ըստ այնմ զոր ասէ Առաքեալ. «Ոչ ուստեք է իշխանութիւն՝ եթէ ոչ յԱստուծոյ»։

2 Առած էր այս Թովմայականաց։

զսուրբն Թովմաս, իւրով մեծահրաշ բովանդակութեամբ ամենայն վարդապետութեան հաւատոց։

Սուրբն Թովմաս ճշգիւ զնոյն վարդապետութիւն սրբոյն Օգոստինեայ ընդունի, թէ «Հաւատք զկամաց հաւատացելոց կախին [1]», այլ հանդոյն սրբոյն Օգոստինեայ խօսի և զկամաց մարդոյ՝ թէ պատրաստիցի 'ի շնորհաց Աստուծոյ։

Ահա որ զինչ զպատճառաց հաւատոց ուսուցանէ նա։

«Արտաքին հաճութիւն՝ յազդեցութենէ հրաշից և կամ 'ի գիտութենէ ծագեալ, չէ ստոյգ պատճառ հաւանութեանն՝ որ է գործ հաւատոյ։ Ներքին է պատճառն ստոյգ։

«Այլ զայս ներքին պատճառ միակ յանձնիշխան կամս մարդոյ դնէին Պեղագեանք, որ մոլորական է ամենևին։ Արդարև հաւատք զկամաց հաւատացելոց կախեալ կան, սակայն զկամաց պատրաստելոց յԱստուծոյ, որ մղէ զմեզ 'ի հաւանութիւն՝ ներքին ազդեցութեամբ շնորհաց իւրոց [2]»։

Տեսանես եթէ զիարդ միաձայն են երկաքանչիւր վարդապետութիւնքն։

Հաւանիմ ընդ այդ. այլ ո՞ր իցէ հանրական և դիւրըմբռնելի վարդապետութիւն Եկեղեցւոյ զայսմանէ։

Նոյն այս է. միայն զի ուսումն աստուածաբանականին՝ արար զայն ընդ այլ և այլ դարս միանգամայն սերտագոյն, կատարեալ և պայծառ։ Ի մի բան բովանդակեալ է ամենայնն, իմն յայս վարդապետական սահման հաւատոյ, զոր աղաչեմ և փարելի ասեմ քաջ 'ի միտ առնուլ քեզ բան առ բան։

1 Գիրք Նախասահմանութեան. Գլ. Ե։

2 Զպատճառաց հաւատոյ. Զ. Յօդ. 1։

«Հաւատք՝ է ազատ հաւանութիւն մտաց և կամաց, օգնականութեամբ շնորհացն Աստուծոյ, առ ճշմարտութիւնն զորս Աստուած յայտնէ»։ Յայսմ սահմանի անհրաժեշտ կարևոր է բովանդակն առ հաւատալ։

Եթէ չիցէ Աստուած ինքնին յայտնող, եթէ չիցէ ինքնին Աստուած՝ ներքին ազդմամբ յորդոր մեզ 'ի հաւատալ, եթէ հաւանութիւն չիցէ ազատ, եթէ չիցէ միանգամայն գործ մտաց և կամաց, գործ իմացականութեան և ազատութեան, եթէ մի ևեթ 'ի պայմանացս սոսի պակասեսցի, ոչ ևս իցեն հաւատքն ուղղափառ։

Այլ բազում այն է զի ոչ այսպէս խորհին մարդիկ զհաւատոց։ Համարիմք զհաւատս՝ իբրև զաչացու նմանողութիւն մտաց առ իշխանութիւն ինչ արտաքին և մարդկային։

Աշխարհ ոչ գիտէ ամենևին զոր ուսուցանէ ուղղափառ Եկեղեցի, և այս է մի յաղետից իւրոց։ Հզօրագոյն զօրութիւն բանակռուողաց ընդդէմ մեր հաստատեալ կայ յընծայել մեզ վարդապետութիւնս որք չեն մեր բնաւ։

Արդարև յորժամ ազատ իցէ հաւանութիւն մտաց և կամաց առ Աստուած՝ առ ազդիչն ներքին և յայտնող արտաքոյ, հաւատք այսպիսի՝ են չքնաղ իմն իմանալի. և ցանկալի էր ինձ յոյժ այսմ այսպէս լինել։ Այլ այս է խնդրելին՝ թէ Աստուա՞ծ իցէ ազդիչն և յայտնող։

Ըստ այս Աւետարանն ինքնին տայ պատասխանի բանիցդ. «Եթէ ոք, ասէ Յիսուս, կամի զկամս նորա առնել, (որ առաքեացն զիս), գիտասցէ վասն վարդապետութեանս, յԱստուծո՞յ իցէ արդեօք՝ եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ[1]»։ Մի և նոյն պատաս-

1 Յովհ. է. 17։

խանին է միշտ, թէ Արա նախ զԱրդարութիւն, և եկեսցէ ճշմարտութիւն։

Արդ զինչ ինչ նախ 'ի դէպ իցէ ինձ առնել։

Թևակոխեա խոնարհ լինել սրտիւ. 'ի միտ առ զի չես այր ըստ կամաց Աստուծոյ, այր արդարև ըստ իմացման նորա, և որպէս դու իսկ ինքնին իմանաս յորժամ խորհուրդք քո անաղօտք թեւածին զհոգւովդ։ Զի՞նչ գործեցեր ցարդ 'ի կեանս քո։ — Յո՞ գնացին անուանք աստուածային որդեգրութեանդ։ — Իցե՞ս արդեօք որդի Աստուծոյ և գործովք և խորհրդովք։ — Ոչ։ — Ապա ուրեմն ողբա զամբարիշտ կեանս քո՝ զպղծեալն, զունայնն և զանարգասաւոր. լա՛ց, և յառաջին շիթս արտասուացդ գտցես զԱստուած։

Բ

Միթէ բանաւո՞ր իցէ այս եղանակ առ հաւանել 'ի ծանօթութիւն Աստուծոյ։ Ո՞չ ապաքէն լաւ ևս իցէ մտօք վարել՝ քան արտասուօք։

Ոչ գիտեմ։ Երկաքանչիւրն ևս ընտիրք են, և համայն յիմն յիմն հանդէպք միմեանց։ Այլ աղէ ասա, զիա՞րդ իմաստասէրք 'ի գիտութիւն Աստուծոյ ժամանեն։

Յայտ է թէ բանիւ, լուսովն անով զոր տայ Աստուած ամենայն մարդկան եկելոց յաշխարհ։

Արդարև այդ այդպէս է. այլ ո՞ր իցէ եղանակն հանրական և հիմն անտեղիտալի առ հասարակ ամենայն փաստից՝ որովք հաւաստի գոյութիւնն Աստուծոյ։

Հասու լինին միտք թէ անցաւոր և անձուկ է աշխարհս, զի կարողութիւն մտաց մերոց անկատար, և հոգիս մեր՝ տկար և սահմանաւոր՝ 'ի խնդիր է ընդ անհունայն տեղիս անհուն կեանս առ 'ի ձգտման և ամբառնալ առ ևս: Եւ քանզի յայտնի է այս անմիջապէս հետևութեամբ, անարգել որպէս զհաստատի ինչ, և ընդհանուր զօրէն համարողական ցուցակութեանց, 'ի վերայ ամենայն միտք թէ սահմանաւոր և բերակատար արարածք՝ զորս տեսանեմք, հաստատիմ առնել հակառակս զհակն անհուն զոր ոչն տեսանեմք: Գեղեցիկ ընծայութիւնս այս՝ փառս յաւերժ մեծահանճար մտաց Պղատոնի առնէ և սրբոյն Օգոստինեայ, սրբոյն Անսելմոսի և սրբոյն Թովմայի Աքուինացւոյ, Կարդեսիոսի և Ֆենելոնի. և մարթ է առնել երէ յայս հիմնեալ կայ գործ և հիմնական յառաջացումն բանաւոր կենաց:

Արդ քաջ է. և խոնարհամիտք իսկ, որպէս և մանկունք և տգէտք զնոյն առնեն, առանց ամենևին գիտելոյ և առանց յօդաձայնելոյ զգաստումն մտաց. և սակայն կատարեն զնոյն 'ի խորս հոգւոցն սրտիւ և կամօք, յորժամ զարձ առնեն առ լոյսն աստուածային, զոր ցուցանէ Աստուած ամենեցուն: Յակամայ ընդդիմակրութիւնս՝ զոր յանձին զգայ ամենայն ոք ընդ բովանդակ յուղմունս կենաց ընդ ինքն և ընդ Աստուած՝ որ մերձաւոր է միշտ, տեսանէ զանձն հէք և թշուառ, անձնասէր և թիւր, ընդ անեզր բարւոյն համեմատեալ՝ որ թափ անցանէ ընդ ինքն, և նովին գործով որով ողբայր զհէքութիւն իւր՝ գտանէ զԱստուած: Այն այս գործ՝ գլխաւոր արարք բարոյական և կրօնական կենաց, որով հասանէ մարդ առ Աստուած 'ի վեր քան զամենայն սրտիւն և կամօք, է գործն այն բնական հաւատոյ՝ զորմէ սուրբն Օգոստինոս ասէ, թէ «Գործն հաւատոյ՝ է նախածին ճա-

ռագայթ սրտի», և զոր ուսուցմն աստուածաբանականին կոչէ. Գործոն բերադրութիւն խղճի մտաց [1]:

Այս գիծն հաղորդութիւն կայցէ ընդ գործս բնական հաւատոյ և ընդ գործն աստուածաբանական հաւատոյ:

Ներա խմն ազերս և զօդ զոյ ընդ երկոսին սոսա, թէպէտ և իցեն գործք կարի յոյժ այլազանք: Այլազանք են ամենևին, զի մին՝ պարզ գործ եղով գիտակցութեան և բանի, սոփական գործ է մարդկային բնութեան. իսկ միւսն՝ անցանէ զանցանէ զկոյին բնութեան, զոր և վին զզօրութեամբք մարդկային բնութեան, զոր և անհնարին լիցի մեզ առնել՝ եթէ ոչ բարութիւնն Աստուծոյ, շնորհք և ազդեցութիւնք վերամբարձցեն զմեզ անդրագոյնս քան զմեզ: Համայն և այնպէս չիք ինչ բնաւ որ այնչափ սերտիւ զօդեալ իցէ 'ի նոյն, որչափ երկոքին այս գործք. զի որ դերընանքոյ՝ որչափ երկոքին այս գործք. զի որ դերընականն իցէ՝ է միանգամայն գործ խղճի մտաց և բանի: Եւ եթէ գործ բնական հաւատոյ չգործիցէ 'ի հոգւոջ անհնարին իցէ և միւսն, վասն կալոյն յայնժամ հաւատոյ 'ի չարութեան. «Ամենայն ինչ որ ոչ 'ի հաւատոյ է՝ մեղք են», ասէ սուրբն Պօղոս, 'ի խօսելն զբնական հաւատոյ:

Հոգին յայնժամ զչար գործէ, ատեայ զլոյս և հեռանայ 'ի լուսոյ: Իսկ յորժամ գիտակցութիւն և բան կեան 'ի հոգւոջ և գործեն զգործ իւրեանց, նովին իսկ յետս կայ հոգի 'ի խափան լինելոյ աստուածապարգև լուսոյն, շնորհաց և հաւատոյ: Երկաքանչիւր գործք այնպէս յօդեալ են ընդ միմեանս 'ի կեանս յոյս, զի բովանդակեալ թուին յիրեարս որպէս զոսկի 'ի ծրարի իւրում. և այս տայր ասել Ֆենելոնի՝ թէ

[1] Կրկին իմաստք են հաւատոյ բառիս. մին՝ Հաւատք աստուածաբանական. միւսն՝ Հաւատք՝ որ է գործոն թելադրութիւն մտաց խղճի. (Բէէրրոնէ): Ըստ երկրորդ իմաստիս ասէ սուրբն Պօղոս՝ թէ «Ամենայն ինչ որ ոչ 'ի հաւատոյ է՝ մեղք են»: Հռ. ԺԴ. 23:

« Աստուած՝ զսկիզբն գերբնական շնորհաց ընդխառնէ ընդ մնացուած բարւոյ բնութեան »։ Եւ Փենելոն խօսէր ըստ սրբոյն Օգոստինեայ ասելոյն՝ թէ « են են 'ի հոգիս մեր սկզբունք հաւատոյ՝ հանգոյն սերմանց 'ի մայրական ծոցի նիրհելոց »։

Լոյսն յաւիտենական Աստուած՝ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհ։ Աստուած լուսաւորէ միշտ զխսաւար մեր. այլ բազում 'ի մարդկանէ՝ ըստ ասից Աւետարանին, ոչ ընդունին յինքեանս լոյս և ըստ կամաց Աստուծոյ զլոյսն յաւիտենական։ Բառնան 'ի բաց յանձմանէ զճառագայթն որ կարևոր և անհրաժեշտ պէտք են մարդոյ, այն է՝ զբանն բնածին։ Մերժեն զզխսաւորն զօրութիւն, հանգոյն սառնակոյտ լերանց՝ նահանջողաց յետս զլոյս արեգական, 'ի բաց հատանելով յինքեանց զարգասաւորութիւն։ Այլ որք ընդունին յանձինս զլոյս և 'ի միտ առնուն, համառօտ ասել՝ որք ՀԱՒԱՏԱՆ, որդիք Աստուծոյ եղիցին[1]։

Միթէ այս ո՛չ բուն տկարացուցանէր զզանազանելոյ յարմարութ զգործս բնական հաւատոյ՝ 'ի գերբնականաց, և զբանն և զհաւատս 'ի միմեանց։

Բա՛ւ, մի՛ լիցի։ Անդստին 'ի բնէ գոն 'ի մեզ միտք, այլ ոչ բնատուր են և հաւատք։ Միտք 'ի մեզ՝ է լոյս հարկաւոր, և հաւատք՝ լոյս ազատ. լոյս հարկաւոր՝ զի սեփական է մարդոյ, և լոյս ազատ՝ զի 'ի կամաց Աստուծոյ է տալն, և 'ի կամաց մերոց՝ ընդունելն ընդ նոյն։ Մարթ է մեզ չունել հաւատս՝ ունելով ողջ բովանդակ զմերային բնութիւն, և չիք հնար մերումս բնութեան անձամբ անձին հասանել 'ի հաւատս։ Հաւատք՝ է ազատ իմն, բարոյական, անձնաւոր և

1 « Իսկ որք ընկալան զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատացեն յանուն նորա »։ Յովհ. Աւետ. 1, 12։

կամաւոր հաղորդութիւն Աստուծոյ ընդ մարդկան, և մարդոյ ընդ Աստուած. ընդ Աստուծոյ ասեմ՝ որ ամբառնայ զմեզ 'ի վեր քան զանձինս մեր զգլխովին։ Արդ հաւատք՝ ըստ այսց իմաստից, են յանչափս գերագոյն քան զլոյսն՝ որ բնաւորապէս է 'ի ներքս 'ի մեզ. այլ յԱստուած՝ յաղբիւրն առ հասարակ մտաց և հաւատոց, միտք և հաւատք կրկին ճառագայթք են՝ ըստ աստուածաբանից՝ նոյնաբուն լուսոյ։ Եւ այսոքիկ են զոյս սուրբն Թովմաս կոչէ երկեակ աստիճանս աստուածային իմանալեաց. կրկին աստիճանք ըստ մարդոյ՝ այլ ոչ վասն Աստուծոյ։

Այլ եթէ հաւատք և բան զուգաւորք ճառագայթք իցեն համապատասխան լուսոյ, զիա՞րդ ընդդիմամարտք մնալ լինիցին այնուհետեւ։

Նոքա 'ի վերին երեսս միայն պատերազմողք են միմեանց։ Յորժամ թուիցին հակառակամարտք լինել, և ընդդիմամարտութիւնս այս լնուցու խաւարաւ կամ զհոգի ուրուք և կամ զդար մի ողջոյն, յիրաւի արկած է այս աղետաւոր, այլ ոչ անմեկնելի։ Լոյս այս կրկին՝ 'ի միջէ ևեթ աղբերէ ծագի, և է 'ի կէտ ծագմանն ճառագայթ համաբուն։ Սակայն մարդ բաժանէ զճառագայթն, և ազատութեամբն իւրով կարող է այլայլել զուղղութիւն լուսաւոր գծիցն, և տալ նոցա ծոծումն հակառակ և չիջուցանել միումն ըզմիւսն։ Զայն և 'ի Բնախօսութեան տեսանեմք. յորժամ կրկին լուսաւոր ճառագայթք 'ի մի ևեթ աղբերէ ծագեալք, այլ զարտուղեալք և խոտորնակի ճաճանչելով բաղխիցին ընդդէմ միմեանց, երկաքանչիւր ճառագայթքն եղծանին զիրարեալք, և յառաջ ածեն զխաւար։ Այսոքիկ կէտք խաւարին՝ յառաջ եկեալք 'ի պատահմանէ և 'ի բախմանէ կրկին լուսոյ, կոչին 'ի բնախօսից կէտք ընդխառնելման։ Իցեն ինչ

պէտք և զարուց ընդխառնըման։ Ո՜հ, այսպիսի է ահա մերս։

Միայն զի զարք՝ հանդոյն հոգւոց, մտանեն և ելանեն ազատօրէն ընդ պահս խաւարային ժամանակաց այսոցիկ։

Գ

Ընդունիմ զայս վարդապետութիւն զհաւատոց, որ թուի ինձ չայնկան, և զոր մինչև ցարդ չև էր իմ այսպէս 'ի միտ առեալ։ Այդ ըստ քոց բանից հաւատք չեն ինչ այլ՝ քան ժառանգել զԱստուած։

Այո՛, զի ստանօր ոչ զմեռեալ՝ այլ զկենդանի հաւատոց են բանքս, որ ըստ աստուածաբանից կոչին հաւատք սիրով յաջողեալ, խմա՛ հաւատք սիրով կենդանացեալ «որ ինքնին իսկ միայնակ՝ ըստ սրբոյն Թովմայի Ագուինացւոյ՝ է առաքինութիւն»։ Հաւատք մեռեալ՝ «չեն առաքինութիւն»։ Համայն և այնպէս, ասէ սուրբն Թովմաս 'ի նմին տեղւոջ, այն իսկ պարգև է Աստուծոյ, և առաջինկայութիւն իւր 'ի հոգիս՝ երանութիւն իմն է։ Իսկ զկենդանի հաւատոց մարթ է ասել թէ արդարև ժառանգութիւն իցէ Աստուծոյ։ Հանգամանք հաւատոց՝ այն է հանգամանք 'ի սիրոյ յաջողեալ հաւատոց, են հանգամանքն զորմէ խօսի Քրիստոս յասելն. «Եթէ ոք զբանս իմ պահեսցէ, և Հայրն իմ սիրեսցէ զնա, և առ նա եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք [1]»։ Այս է ասելն զարձեալ 'ի խօսելն զանձնէ իւրմէ՝ թէ «Ձեմ ես միայն, զի Հայր ընդ իս է»։

1 Յովհ. ժԴ. 23։

Ուրեմն հաւատք ժառանգութիւն իցէ այնմ զոր տեսանեն միտք։

Ոչ ճշգրիտ իցէ ասել զայդ. զի միտք ոչ կարասցեն տեսանել զամենայն զոր հաւատք ժառանգեսցուցանեն։ Ընդարձակածաւալ է յոյժ ասպարէզ հաւատոց։ Սակայն ունին միտք և հաւատք՝ 'ի հանդիտամէտ մասին իւրեանց, զնոյն խոյր և նմանութիւն՝ զոր ունին ակն և ժառանգութիւն։

Առ այս է ասելն սրբոյն Պօղոսի թէ հաւատք հաստատութիւն են, և հաւատոյն իսկ զոր ոչն տեսանեմք։ «Հաւատք, ասէ, է յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին [1]»։ Սահմանս այս հաւատոց, ասէ սուրբն Թովմաս Ագուինացի, է ընտրելագոյնն և կատարելագոյն 'ի սահմանս տուեալս ցայսօր. քանզի սովաւ հասու լինիմք թէ հաւատք ընձեռեն և կարգեն 'ի մեզ զիրն ինքնին, զոր բանն՝ թերակատար նշմարէ արտաքոյ։ Յայս սակս ահա և ուղղափառ Եկեղեցի ուսուցանէ թէ չիք փրկութիւն առանց հաւատոց։ Ունել զհաւատս, խմա՛ զկենդանի հաւատս, է ունել յանձին զԱստուած. չունելն զայն, է զիրկ լինել յԱստուծոյ, թէպէտ և ծանիցեմք բանիւ զիւրն գոյութիւն։ Արդ յայտնի է ամենեին զի հոգւոյ զիրկ եղելոյ յԱստուծոյ, չիք հնար փրկութեան. մինչդեռ հաւատովք վաղ իսկ ունի զերախայրիս յաւիտենական կենաց, որպէս 'ի բանից Աւետարանին հաւաստի. «Որ հաւատայ՝ ընդունի զկեանս յաւիտենականս [2]»։ Եւ զայս այսպէս մեկնաբանէ սուրբն Թովմաս. «Հաւատք է վիճակ հոգւոյ՝ տուող մեզ զսկիզբն յաւիտենական կենաց [3]»։

1 Եբր. ԺԱ. 1։
2 Յովհ. Զ. 47։
3 Գ. Յօդ. 1։

Այլ մարթիցի՞ երբեք հոգւոյ զուրկ լինել յԱստուծոյ։ Ո՞չ ապաքէն ընդ ամենայն տեղիս է Աստուած։

Քաջ 'ի միտ առ, զի կրկին է՝ ըստ սրբոյն Թովմայի Աքուինացւոյ, առաջիկայութիւն Աստուծոյ. նախ առաջիկայութիւն հարկաւոր՝ ըստ իմիք բնական, որով 'ի ներքս 'ի մեզ է, իբրև հանրական արարիչ և կենդանացուցիչ մարմնոյ և մտաց. ապա դոյ միւս ևս առաջիկայութիւն Աստուծոյ, ազատ, բարոյական և անձնաւոր, որով բնակէ 'ի հոգիս մեր իբրև հայր և իբրև բարեկամ։ Առաջինն անհրաժեշտ է և բնական. իսկ զերկրորդն ո՛չ ապաքէն մարթ է կորուսանել և ստանալ վերստին։ Ո՞վ ոք ոչ գիտիցէ զի երկրորդն՝ կախեալ կայցէ զազատ սիրոյն Աստուծոյ որ առ մեզ, և զազատ սիրոյ մերոյ առ Աստուած. ազատ է սա և գերաբուն։

Չիցէ՞ արդեօք բնաւին հաւաստի թէ հոգւոց ոմանց չեն իրաւունք ասելոյ՝ «Չեմ ես միայն, զի Հայր իմ ընդ իս է [1]»։ Նա մանաւանդ ո՛չ արդեօք բազում այն է զի եմք մեք միայնակք և մեկուսացեալք 'ի խոր խաւար մեր և յանհաւատութիւն։ Սակայն են են և այլք որ կարեն գոչել, «Չեմ ես միայն». և սոքա են որ կրեն յանձինս՝ ըստ բանից սրբոյն Պօղոսի, զհոգին՝ որ աղաղակէ, «Աբբա՛ Հայր [2]»։

Ահաւասիկ որ ինչ են միտք բանիս Հաւատամք 'ի Հայր Աստուած։ Այս իմաստք են երից նախկին բանից Հանգանակին հաւատոյ։

1 Յովհ. Ը. 16։

2 Պօղ. Գաղատ. Դ. 6։

Դ

Ցուցանելոցդ ցայսվայր առն յայտնի երևի զի հաւատոց հարկ է տալ զԱստուծոյ՝ գէթ ընդ աղօտ, ծանօթութիւն ինչ խորին և ստոյգ, որպէս զԱստուած ինքնին յորմէ բղխեն։

Արդարև անյերկուանալի է այդ. վասն որոյ հաւատք, սակայն հաւատք կենդանի, են ստուգապէս իմացումն զԱստուծոյ՝ առաջիկայ 'ի հոգիս մեր սիրով [1]։ Զգան և ճանաչեն հաւատք զզօրութիւն բանիցս որ 'ի Հանգանակին. Աստուած՝ Հայր ամենակալ, արարիչ երկնի և երկրի։ Զգան և իմանան զԱստուած իբրև անպարագիծ, ինքնիշխան, ամենազօր և արարիչ, յորում բովանդակի իմաստ անսահման զօրութեան։

Եւ բանն ինքնին իմանայ և հաստատի ընծայեցուցանէ զայն։

Եւ կարի յիրաւունս. զի հաւատովք գոյութեան Աստուծոյ, ճշմարտին Աստուծոյ, անհունն Աստուծոյ, որ յաշխարհէ, ապաքէն զօրաւոր է յոյժ և իսպառ անաղարտելի։ Սակայն զհաւատսն զայս դուն ուրեք ոք 'ի միտ առնու առ պարզութեանն, և զօրութիւն նորա վրիպի բազում անգամ և 'ի մտաց իմաստնոց. որպէս զի և արք հանճարեղք՝ առանց հաւատոց, կորուսանեն յաճախ զզգայումըն անհունից և զզգացումն Աստուծոյ։ Եւ այս չէ շատ. ընդ կորուսանելն զզգացումն անհունից, զոյգ

« 1 Որդին Աստուծոյ եկն և ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն Աստուած »։ Թուղթ Յովհ. Առաք. Բ. Ե. 20։

նմին կորուսեալ լինի գիտակցութիւն ընդդիմակրութեան ընդ Աստուած և ընդ արարած. չիցէ Աստուած ընդ յաւիտենից, անհունն ընդ սահմանաւորի, անստեղծն ընդ եղելոյն: Եւ զի ոչ ևս այլ ճանաչեմք զԱստուած, և ոչ զանձինս իսկ գլխովին ճանաչեմք: Եւ ոչ ևս այլ ասեմք ընդ սրբոյն Օգոստինեայ՝ թէ «Ո՜հ, ծանեայց զքեզ Աստուած իմ՛ և ծանեայց զիս»: Ոչ ևս գիտեմք խոստել զանցաւորս, և ոչ ընդգրկել զյաւիտենականն: Անգիտակ եմք ատելութեան չարին և սիրոյ բարւոյն: Եւ գիտիցեմ արդեօք զինչ ընդհետ գայցէ այսպիսի պայմանի հոգւոց թուլացելոց 'ի հաւատս, և յորս միտք դանդաչեն 'ի զուր. զհետ դայ վատթար և անմիտ համայնաստուածութիւն:

Ասէ՛ զի՞նչ իցէ համայնաստուածութեան ստոյգն:

Համայնաստուածութիւն ուսումն է այնպիսի, և կամ լաւ ևս՝ այնպիսի վիճակ հոգւոյ, յոր կորուսեալ է զգացումն անհունից, և ընաջինջ բարձեալ խտիրն ընդ կատարեալ էակն և ընդ անկատար, ընդ անսահմանն և սահմանաւոր, ընդ Աստուած և ընդ արարած. համառօտ ասել՝ խտիրն ընդ բարին և ընդ չար: Որ յանձնապաստան եղեալ 'ի վերայ մոլար՝ այլ պերճապանծ ցուցակութեան, որով մեծամեծար հանճարք իսկ պատրեցան, առ ոչինչ դրէ զգիտակցութիւն և զբան բնական՝ հաստատելով թէ Աստուած իցէ ամենայն:

Զի՞նչ իցէ մարդոյ, ո՛ր և իցէ նա, հաստատել համարձակ թէ Աստուած իցէ ամենայն: Եւ զի՞նչ, միթէ և ես ինքնին Աստուած իցեմ:

Խոստովանիմ զի ոչ 'ի միտ առնում զխելն համայնաստուածութեան աւուրցս: Պնդել եթէ Աստուած իցեն ամենայնք, և զի ամենայն գործք կենաց անձնիւր անգործ կամ ազատ էից իցեն գործք աս-

տուածային կենաց. ասել թէ մի և եթ իցէ գոյութիւն՝ որ է Աստուած ինքնին, և մի և եթ կեանք՝ որ են կեանքն Աստուծոյ. թէ ամենայն գործ անխտիր յԱստուծոյ գայցեն, որոյ վասն չիք ինչ չար. և թէ չարն իցէ բարիք փոքրագոյն. թէ ոչ ևս գուցէ մոլորութիւն, և թէ ստութիւն հանգունատիպ իցէ ճշմարտութեան. իմանալ զայսոսիկ այսպէս, է դարձ առնել իմաստասիրական շաւղօք առ կռապաշտութիւն հեթանոսաց, որք պաշտօն մատուցանէին համագոյից, և ամենայն ախտից, և ամենայն աղետից, համօրէն ստութեանց և ամենազգի չարեաց: Համայն և այսպէս՝ են են համայնաստուածեանք:

Եւ զի՞նչ իմիջէն առնել թէ չարն իցէ բարիք փոքրագոյն: Սպանանել զհայր ուրուք, միթէ իցէն փոքրագոյն բարիք քան զոյն սպանանել:

Գրիչն [1] Որդուոցին իմաստասիրութեան մատենին ասէ՝ թէ Չարիքն են բարիք փոքրագոյն:

Պարտ և պատշաճ է առնել զայն անտեղի՛ առանց ինչ անիրաւելոյ, և ինքնին իսկ շատ երկրաչափականին իմաստից:

Եւ կարի յիրաւունս. և սակայն ոճս այս՝ որպէս և էն, միակ վարդապետութիւն է այժմու ժամանակիս, ընդդիմադրեալ ուղղափառ հաւատոց: Ուրեմն մարթ է ասել թէ թշնամին թևակոխեալ է յանտեղութիւն:

Այլ ո՞չ ապաքէն գոյ և այլ թշնամի. — անաստուածութիւնն ասեմ. և միթէ չէ՞ իսկ ինքնին թէ զարդիս քրիստոնէութիւն և իմաստասիրութիւն հասարակ թշնամիք են միմեանց:

1 Լամնէ:

Մոլար են բանքդ այդ յետին. մոլորութիւն հին-օրեայ, որով իմաստակութիւն ընդ իմաստասիրութեան չփոթի։

Ճշմարիտ իմաստասիրութիւն եղև կանխաբանութիւն Աւետարանին՝ առ 'ի մարդկանէ։ Ամենայն գերահանճար իմաստասէրք անխտիր աստուածապաշտք, և մարթ է ասել՝ ուղղակի կամ անուղղակի քրիստոնեայք կացին։ Իմաստասիրութիւն՝ վասն մեր է, իսկ իմաստակութիւն՝ ոխերիմ թշնամի է քրիստոնեական կրօնից և իմաստասիրութեան։

Իսկ անաստուածութիւն՝ է մին յերկեակ դիմաց համայնաստուածութեան. և մեծագոյնն է, և յարուցանէ աղմուկ յոյժ յամս յայսոսիկ։ Մոլորութիւն համայնաստուածութեան չէ 'ի ծայրայեղ պայմանի. իսկ անաստուածութիւն՝ է յետին ճիգն ջանից իմաստակաց, իմա՛ միտք յուրացութիւն հատեալ իսպառ, և է մոլորութիւն ամենեւին։

Այլ սակայն խտրութիւնս այս 'ի կրկնակ դէմս իւր, համայնաստուածութեան ասեմ և անաստուածութեան, 'ի բաց վտարեալ է զարգիս յիմաստասիրութենէ. և թէ զիա՞րդ՝ լուր։

Մեծ և յետին ճիգն համայնաստուածութեան և անաստուածութեան, որ յաւուրս ժամանակաց մերոց սկիզբն կալաւ 'ի Գերմանիա, մերկ անպատրուակ յանդիման կացոյց զարմատն ողջոյն և զսկզբնածայր ծագմանն 'ի հարկէ։ Չէ ինչ թաքուն սկիզբն իւր և արմատ՝ այլ աշխարհաքարոզ, և յայտնի երեւի լինել անտեղութիւն ծայրալիր, ծանուցեալ իւրովն սեփական բանիւ, այն է հակասութիւն ասացուածոց։

Զիմանամ զոր ասեմ։

Արդ յայտնութեամբ խօսեցայց։ Հակառակորդք մեր առ 'ի հաստատել զհամայնաստուածական անաստուածութիւն իւրեանց՝ հարկեցան ընդունել և ախոյեան հանդիսանալ, իբրու հիմն համարեալ ընծայութեան, թէ ընդդիմակք և հակասականք՝ հանգիտազօր են հանուր իմաստիւք, և ըստ մասնաւորին՝ գոյն և չգոյն նոյնք են ամենեւին. զոր և հաւաստեն ըստ սեփական բանից։ Եւ զոր ասեմս ոչ պատ 'ի պատ ինչ է այս։ Արդ հանգիտութիւն հակասականաց՝ է սեփական կնիք և եղանակ անտեղութեան. ապա ուրեմն զարգիս անաստուածեանք և համայնաստուածեանք խոստովանին և ընդունին զանտեղութիւնս զայս, ոչ թէ լռելեայն՝ այլ լու 'ի լու ամենեցուն իբրև զվարդապետութիւն իւրեանց։ Եւ չեն անկզիտացեալ տակաւ յայս պայման՝ պարտեալք 'ի մերոցս ընդդիմութեանց, այլ ինքեանք իւրովի խորամուխ լինին յայս անտեղութիւն. յորմէ 'ի վեր քերեմք թէ անձամբ զանձինս եղծանեն։ Ոչ կարէ ոք աւելի ոխերիմ հանդիսանալ ընդդէմ վարդապետութեան իմիք, քան յանտեղութիւն ածելով զնոյն։ Արդ յաւելից երկբորդել, զի ոչ միայն յանտեղութիւն հատեալ են, այլ և բեւեռեալք 'ի նմին։

Դժուարին է ինձ 'ի միտ առնուլ զբանն առ ցինելոյ իմ ասելոյ զիմաստասիրութիւն գերմանական. սակայն որ բաժին ինձ լուսաւորելոյ քան զամենայն, այս է՝ զի մոլորութիւնքս կրկնագգիք 'ի բնական բանէն եղծանին։ Բանն բնական չընկալաւ և ոչ ընկալցի բնաւ բէ Աստուած է ամենայն, և բէ՝ և ոչ մի ինչ չիցէ Աստուած։ Այլ բարեբաստ զանձն իմ համարիմ եթէ գիտացից զի անեղուն ընծայութիւնք բնական բանին ցուցանին զարգիս քաջայայտ չափ տրամաբանական և ուսումնական ձայն։

Ըստ իմոցս կարծեաց, Արիստոտէլ վաղ իսկ եղծ իմաստասիրապէս զհամայնաստուածութիւն և

զանաստուածութիւն, և ուժգնապէս իրաւախոհ կացոյց զբան ընական։ Ցիւրում կորովաբան ճառին՝ որ ընդդէմ իմաստակաց Հելլենացւոց, հեղինակք կացելոց գերմանական իմաստակաց, եցոյց հաւաստի թէ զրութիւն իւրեանց հարկ առնէր ընդունել ըզհանգիստութիւն հակառակաց, որ է ասել զանտեղութիւն։

Այլ քանզի մարթ էր իւրումն ցուցակութեան կալ մնալ անիմանալի, պատմութիւն՝ ուղղեալն 'ի վերին տեսչութենէ, յանձին կալեալ է յաւուրս մեր պարզել օր ըստ օրէ զայս ճշմարտութիւն, և յայտնի առնել ամենեցուն առ հասարակ։ Համայնաստուածութեան և անաստուածութեան ուսումն իւր հզօր, հմտական չքնաղ և ներկուռ իսկ 'ի բան, եթէ միայն չլինէր 'ի հիմն իւր խարխուլ, երևեցաւ առաջի աչաց մերոց, և գոգցես յական քթթել գկէս մասն Եւրոպիոյ զհետ իւր տարաւ։ Այլ աղէ զինչ իցէ հիմն նորա։ Հանգիստութիւն երկու ընդդէմ ուղիղ ըմբռնելոց, այսինքն հակառակաց, է հիմն ամենայն իրաց, և զի հանգիստութիւն հակառակաց՝ է օրէնք պատշաճական մտաց։ Հակիրճ ասել՝ համայնաստուածութիւն և անաստուածութիւն կամին յայտնապէս զի չնորհեսցի նոցա անտեղութիւնն՝ իբրև աւանդ և իբրև ոճ։

Յասացելոցս ցայս վայր մարթ է իմաստասիրել եթէ չեղև երբեք մոլորութիւն յայտնաբարբառ քան զնա, և որպէս զնա եղծեալ քանցեալ կարճնովին։ Արդ քանզի երկաքանչիւր մոլորութիւնքս բովանդակեն յինքեանս զայլ ամենայն խոտորութիւն, արդարև սպառասպուռ հերքումն նորին՝ է մեծապայծառ յաղթանակ մարդկային մտաց 'ի պատմութեան [1]։

1 Զայսցանէ ընդարձակագոյնս ճառեալ է իմ յերկրորդ գիրս Բնական արուեստի՝ որ կոչի Տրանսցենդենտալն համայնաստուածութեան։ Իսկ

Ե

Ի ձախ է մանր 'ի քնին առնուլ զայս ամենայն, յոր անձն ունիմ մնալ 'ի մօտոյ։ Այլ աղէ ասա ինձ, ընդէ՞ր համայնաստուածութիւն եկաց մինչ 'ի վերայ երկրի, և

մասնական ինչ ձեռնարկութիւնք Համայնաստուածութեան և Անաստուածութեան՝ որք երևեցան 'ի Գաղղիա յայսմ դարու, չեն արժանիք ուշոյ բայց վասն այնր եթէ զի յայտնի առնեն զանտեղութիւն մոլորութեանն՝ որում կան ջատագով։ Սակայն լաւ է տեսանել իւրովի իսկ աչօք զանզօրութիւն մոլորութեանս։ Դիպ եղև ինձ 'ի մատենի միում խորագրելոյ Արթէ Էմաթաֆիզիքն, 'ի քննութիւն առնուլ զձեռնարկ մի յայտնի անաստուածութեան, որ ոչ խոստովանի զինքն անաստուած, և որ նախադասութիւն է այս. « Է Աստուած, այլ ոչ գոյ։ Զունի ոչ զգոյութիւն, ոչ զգիտութիւն, ոչ զկամս, և ոչ զազատութիւն. է նա հանգոյն ուսումնական ճշմարտութեանց, որք իմանալի եթէ են »։ Այսմիկ ջատագով կացեալ մատենագրին, և ընդ նմին ասէ համարձակ եթէ չեմ ես անաստուած։ Առարկուածս այս քաջիկ բացայայտեալ է 'ի մատենին Բնագանցութեան կոչեցելոյ, զորոյ սկզբունս յառաջագոյն յայտ յանդիման ծանուցեալ էր իմ 'ի գիրս Արթէ Էմաթաֆիզիքն, որում և Պ. Ֆարոյ Տնօրօղօքան Հանդէսն 1860 ամին 'ի մի դեկտեմբեր ամսեան, պաշտպան եկաց յոյժ, յայս աւարտելով զբան իւր, թէ՝ հեղինակն առարկուածոյս յաղթ և համարձակ առնէ զվերջին բան առարկուածոյն իւրոյ, ինքնին խանգարեաց զնոյն։ Ձոխագոյնս ճառեալ է իմ զայսոցիկ խնդրոց 'ի մատենին որ կոչի Իմաթաֆիզիք և Բնագանցութիւն, զոր ժամ առաջի առնել ընթերցանելեացս իբրև նախապահեստ ոճ հանրական՝ ընդդէմ յետին ձեռնարկութեանց անաստուածութեան և իմաստակութեան։

Մատեանն Լամընէի յորջորջեալն Օրթոդոքս Էմաթաֆիզիքն, է փորձ իմն համայնաստուածութեան. և ահա այսոքիկ են հիմունք ընծայութեանց նորա։ « Աստուած ոչ արար զաշխարհս յոչնչէ. ոչինչն ոչ յառաջագայի յոչնչէ, ըստ հինաւուրց առածին, Յոչնչէ ոչ ինչ. և այս առած է բանի և մտաց։ Ուրեմն ոչ կարաց Աստուած տալ զգոյն այնմ որ չգոյր. բայց ինքն միայն՝ էր յաւիտենական. ուրեմն նա՝ միայն է, զի ոչ մի ինչ եղև արդ, և ամենայն ինչ Աստուած է։

« Եթէ դիցուք արարչութիւն ինչ այսու իմաստիւք զի Աստուած՝ որ ոչ կարաց առնել զէքս յոչնչէ, կարացեալ իցէ առնել զայնս յինքե-

փայլեցաւ ընդ ամենայն ժամանակս պերճապայծառ բանականութեամբ և խորախորհուրդ բնազանցութեամբ, մինչև խոչ ընկել և կրծկելն ամենայն գերածայրեալ մըտաց, թող զկից և կամ զեօրն արս գերահանճարս:

նէ, չհետ գայ թէ նոքին յաստուածային բնութենէ իցեն. ապա ուրեմն մի եւեթ է էութիւն, և ամենայն ինչ է Աստուած:

« Իւ դարձեալ, մի՛տ դիր, ասէ Լամընէ. զի եթէ Աստուծոյ հաստեալ էր զարարածս որիշ յիւրմէ, չհետ գայր զի բովանդակութիւն արարածոց մեծագոյն լինէր քան զյառաջն՝ յետ արարչութեան. հնարաւոր լինէր յաւելուլ ինչ 'ի հարկաւոր, յաւիտենական և յանհուն էն, որ է անտեղի. զի յանհունն և ոչ մի ինչ յաւելեալ լինի. ամենայն մեծութիւն՝ յոր մարթ է յաւելուլ ինչ, է սահմանաւոր: Ուրեմն չիք ինչ այլ՝ բաց յԱստուծոյ, և ամենայն Աստուած է »:

Հաւաստիք ընծայութեանցս այսոցիկ իբրև հաստատեալ թուին 'ի վերին երեսս 'ի վերայ ուսումնական առածից, այս է. Ով ինչ ոչ յառաջագոյն յումեքէ, և թէ Ով է հնար յաւելուլ ինչ յանհունն. այլ սակայն մանաւանդ հիմնեալք են 'ի վերայ ազխտութեան նախնական ամենապարզ կանոնաց ուսումնականին:

Աղէ զկարդ համայնաստուածեանք, դեռ այնոքիկ որք ընդդիմադրեն մեզ հանդոյն Լամընէի առարկուածս դրահաշուականս, զորս 'ի վեր անդր յիշեցի, չառնեն ինչ փոյթ գիտելոյ զոր և պարապոզք ուսումնականին հաւատարիմ առնեն թէ ոչ ինչ յառաջ գայ յոչնչէ, և թէ՝ օրինակ իմն, Ալրդ բազմապատկեալ որպիսի և իցէ յոչնաթիւ թէ՝ քանակաւ, ոչ բնաւ 'ի վեր բերցէ այլ արդիւնս՝ քան թէ զԱլրդ: Ապա ուրեմն՝ ըստ ուսումնական և ըստ այլ ամենայն տեսութեան, ոչինչ ոչ յառաջածագի յոչնչէ:

Սակայն գոյ և անհրաժեշտ խոստումն ինչ այսմ կանոնի, իմա զմիակ դէպսն՝ յորում Ալրդ ընդ անհունք բազմապատկի. արդիւնք բազմապատկութեանն յայնժամ փոխանակ ոչինչ լինելոյ, է թանալ սահմանաւոր՝ փոքր կամ մեծ, որպէս և կամիցի ոք: Արդիւնքն Ալրդի բազմապատկեալ անհունք, առաջի առնէ զամենայն հնարաւոր մեծութիւնս, և կամ զանսահման աստիճան մեծութեանց:

Իսկ ըստ առածին՝ թէ Ոչ հնար յաւելուլ ինչ յանհունն, հնարաւոր դոլ մանաւանդ ասեմք զկնովին զարարչութիւն: Քանզի 'ի դրահաշուականէն գիտեմք, թէ Անհունն՝ յաւելեալ և թանձրացեալ սրբոյ և մեծ լուսոյ օտ յոյն՝ հաստատ է ճշգրիտ անհունն: Ուրեմն ստեղծաւորեալքն յետոյ հունաւոր կամ սահմանաւոր արարածք, ոչ մի ինչ յաւելուլն յԱստուած. և այսմ վկայեն Ս. Գիրք ասելով. Գործովքն իմ, ով Տէր, Էբրև ոչ ինչ է տեղի ին. (Ըստ լատ. թարգմ.). իսկ ըստ մեզ. Եւ բոլոր արարածոց իմոց որոց ոչ ինչ է տեղի իմ. Սաղմ. ԼԸ. 6:

Պատասխանի բանիցդ այս է, զի համայնաստուածութիւն՝ քան զայլ ամենայն մոլորութիւնս, ունի զծագումն իւր, 'ի մեծէ և 'ի խորաքնին իմն ճըշմարտութենէ, որ չլացուցանէ զաչս խօթամտաց. և է այն եղծանելն և վատթարել զգեղեցկահրաշ իմաստ անհնութեան՝ որ է ընդ ամենայն տեղիս: Ճըշմարտութիւնն՝ զոր եղծեալ թիւրեաց համայնաստուածութիւն, բացայայտեալ է յայսոսիկ խորախորհուրդ բանս սրբոյն Պօղոսի, թէ «Նովաւ կեամք և

Եւ զայս այսպէս քրիստոսական կրօնք եւեթ ուսուցանեն՝ թէ Ոչ ոք 'ի սահմանաւոր արարածոց, ոչ մի ինչ սահմանաւոր զօրութիւն՝ որչափ և մեծ իցէ, ոչ կարէ 'ի գոյ ածել փոքրագոյն ինչ հիւլէ: Այլ Աստուած, Էն անսահման, կարէ զամենայն առնել յոչնչէ:

Եւ 'ի դրահաշուի այնպիսի հայեցողութիւնք գոն՝ որ համապատշաճ են հանդիտաբար մերոյս աստուածաբանական վարդապետութեան որ զարարչութենէ: Եւ կամ այսպէս ասել, ուսումնական ձև աստուածաբանական վարդապետութեան մերոյ ճշմարիտ է: Մի՛ ասեր թէ չէ հնար զկրօնս երկրաչափութեամբ հաւաստել. գիտեմ քաջ և ես. այլ մարթ է 'ի բաց հերքել երկրաչափութեամբ զառարկութիւնս 'ի վեր բերեալս յերկրաչափականէն: — Սակայն 'ի վերայ այսոցիկ ամենայնի զարմանալեանց է կուրութիւնն ծայրայեղ՝ որով լոյսն յաւիտենական պատուհասէ զարս հանճարեղս, զանարգուս լուսոյն, որք և զձայն գիտակցութեան հեղձամղձուկ արարեալ, մեծաբարբառ քարոզեն՝ թէ Ամենայն Աստուած իցէ, և կամ չգուցէ բնաւին Աստուած:

Ոմն ոք առ 'ի հաստատել եթէ Աստուած է ամենայն, և թէ՝ մի եւեթ է գոյութիւն, ակիզբն առնէ հատանել զսահման գոյութեան. « Որ է հիմն հանրական և հանդիտազօր ամենայն էից եթէ սահմանաւորացս և եթէ անսահմանից ». զայս այսպէս Լամընէ: Ջորմէ յուզի խնդիրն՝ առաջի առնէ նա յայսմ սահմանի, և չհաւաստէ և ոչ ինչ: Կրկպակ տրամաբանական արդարև արժանի դարովանաց յաշակերտէ ումեք:

Ա՛յլ ոք՝ առ 'ի հաստատել թէ Աստուած չէ իսկական, այլ իմանալի լոկ, դնէ իբրև առած, առանց ինչ ցուցակութեան, զայս նախադասութիւն. Ամենայն գոյացութիւնք են անցաւոր էին երևոյթ, որ և այս իմաստակութիւն է: Ի միջին դարու, յորում արդարև հմուտ էին մարդիկ Տրամախոհութեան կարևորագոյն արուեստին, կորուսելոյ զարդիս, տրամախոհքս այսպիսիք չիք տարակոյս զի յառաջին բանս իւրեանց բանտարգել լինէին:

շարժիմք և եմք [1] »։ Եւ զայս ուսուցանէ վարդապետութիւն հաւատոյս՝ թէ Աստուած է որ տայ մեզ զգոյութիւն, զկեանս և զշարժումն ։ Ամենայն մարմին յԱստուած է, կեայ և շարժի յԱստուած, որպէս բնական արարածք, նոյնպէս և էակք ազատք և մտաւորք ։

Այսոքիկ երկաքանչիւր կարգք արարածոց նշանակեալ են 'ի Հանգանակին Առաքելոց բանիւքս՝ ԵՐԿԻՆՔ և ԵՐԿԻՐ, որք ըստ մեկնութեան Նիկիական Հանգանակին՝ նշանակեն զերևելի և զաներևոյթ արարածս ։ Բառս ԵՐԿԻՐ՝ ըստ չորրորդ Լատերանեան տիեզերական ժողովոյն, ցուցանէ զմիահամուռ երևելի էքս, իսկ ԵՐԿԻՆՔ՝ զաներևոյթսն ։

Արդ երկեակ արարչական բնութիւնքս, և կամ երկեակ աշխարհքս, զերևելին ասեմ և զաներևոյթ, երկաքանչիւրն կեան յԱստուած, են յԱստուած, որպէս նա 'ի նոսա ։ Եւ յաւիտենական աղէտք հոգւոց և սրտից՝ է անգիտանալն զնա և մոռանալ յաւէրժ ։

Այլ ո՛չ ապաքէն և ուղղափառք իսկ 'ի մոռացօնս արկանեն զայս հիմնական ճշմարտութիւն՝ զհանրական և զկարևոր առաջնակայութիւնն առնել Աստուծոյ յամենայնի. և զայս ճշմարտութիւն կամք են համայնատարածութեան, ըստ անելոյ աշակերտաց իւրոց, զարթուցանել 'ի միտս մարդկան ։

Հաւատամ ինձ զի ուղղափառ կրօնք և ոչ զմի ինչ 'ի մոռացօնս արկանեն. իսկ համայնաստուածութիւն՝ ոչ միայն ցնորք իմն է, այլ և թմբրութիւն խորին ։

Աղէ՛ բացցուք ոչ զսուրբն Պօղոս, ոչ զսուրբն Օգոստինոս և ոչ զմեծամեծ քրիստոսակրօն իմաս-

[1] Գործք Առաք. ժէ. 28 ։

տասէրս, այլ զմի 'ի մերոց արդի մատենից, զոր օրինակ զՀայրն Ներվէոյ զՅիսուսեան, որ երկասիրութիւն ընտիր՝ ընդել է մեզ յոյժ և մի յառաջնորդաց մերոց. և ահա ընթեռնում 'ի նմա. « Աստուած՝ զօրհանապազ տայ քեզ զանձն իւր 'ի ձեռն արարածոց իւրոց, որոց հաղորդեալ է զէութիւն, զկեանս և զբովանդակ անձնիւր զօրութիւնս ։ Սովորեցիր ուրեմն տեսանել միշտ զԱստուած յարարածս, քանզի և է իսկ 'ի նոսա. վասն որոյ և տալով չափ զարարածս իւր, տայ քեզ զանձն գլխովին ։ Է նա յարարածս իւր՝ նախ իւրովն էութեամբ, որ մերձ է առաւել առ նոսայն էութիւն՝ քան զհոգի քո առ մարմինդ ։ Է 'ի նոսա իւրով զօրութեամբ, զի ոչ միայն տայ նոցա զզօրութիւն գործելոյ, այլ և գործէ ինքնին առաւել քան զնոսա, գործելով իբրև սկզբնահայր պատճառ. այնպէս զի Աստուած է որ լուսաւոր առնէ զքեզ արեգականբ՝ քան զարեգակն ինքնին. նա է որ ջեռուցանէ հրով՝ քան զհուրն գլխովին, և նա է որ սնուցանէ զքեզ՝ քան զկերակուրս ինքնին ։ Հուսկ յետոյ՝ է 'ի նոսա բարութեամբ իւրով և տեսչութեամբ, վարելով զարարածս, ծառայեցուցանելով զնոսա 'ի պէտս քո, ուղղելով զամենայն գործս նոցա առ քեզ և վասն քո. եթէ տայցէ զլոյս արեգական, տայ վասն զքեզ ջեռուցանելոյ. եթէ տայցէ զքաղցր ճաշակ կերակրոց, տայ զի զքեզ սնուսցէ »։

Արդարև գիտել գիտեմք զայս, որպէս տեսանես. առաջիկայ է Աստուած 'ի լոյսն՝ առաւել քան զլոյսն ինքնին. սոյնպէս և յամենայն զօրութիւնս բնութեան, ջերմութեան ասեմ և ելեկտրութեան, 'ի մագնիտականն ասեմ և 'ի ձգողական, առաջիկայ է Աստուած առաւել քան զմարմինս որք արդիւնաւորեն զնոսին ։ Զայս աւասիկ ուսուցանեմք մեք. այլ ոչ

ասեմք համգոյն համայնաստուածից թէ ծգողութիւն, լոյսն և ջերմութիւն՝ են Աստուած, և թէ ծգողութիւն Հայր իցէ, լոյսն՝ Որդի, և ջերմութիւն՝ Հոգին սուրբ։

Այլ ասեմք թէ լոյսն՝ արդիւնք է առաջիկայութեան Աստուծոյ, արգասիք ազդման Աստուծոյ 'ի մարմինն, որ զայն այնպէս ընծայէ. սոյնպէս իմա և զամենայն զօրութեանց բնութեան։

Արդարև զայս այսպէս գիտեմք մեք, իսկ հոգիք սուրբք տեսանեն և յանձին զգան զԱստուած 'ի լոյսն, 'ի ճաշակելիս, յամենայն զգացմունս, յամենայն շարժմունս և յամենայն տպաւորութիւնս կենաց։ «Երանի՜ այնոցիկ, ասէ Աւետարանն՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»։ Տեսանեն զԱստուած յերևելի իրս, ըստ սրբոյն Պօղոսի, որ ասէ. «Աներևոյթք նորա (Աստուծոյ) իսկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա [1]»։

Վասն որոյ և այրն մեծարգոյ՝ խիկաշնորհ և խոբախորհուրդ հանճարն Օլիէ, ասէ. «Ամենայն արարածք են իբրև խորհուրդք սրբազանք, և կամ իբրև երևելի կեղևանք աներևութին Աստուծոյ ընդ նոքօք քօղարկելոյ [2]»։

1 Հռովմ. Ա. 20։

2 Օլիէ. Նախադրունք քրիստոնէական կենաց և առաքինութեանց. գլ. Ե. հատուած Բ։

Զ

Ի միտ առնում զի Հայր աշխարհիս կենդանի առնէ զհամօրէն բնական արարածս, և տայ նոցա զամենայն շարժմունս և զզօրութիւնս. այլ միթէ նոյնպէս և զմտաւոր և զազատ էակս. ոչ ապաքէն պատերազմող իցէ այս ազատութեան մտաց։ Այդ՝ զինչ ասիցէ ուղղափառ աստուածաբանութիւն. իշխիցէ՞ նա արդեօք դիմագրաւել և ընդ այս կնճիռն, և անցանել անվտանգ։

Ուղղափառ աստուածաբանութիւն 'ի մէջ ածէ զխնդիրն և լուծանէ։ Եւ նախ քան զամենայն, Քրիստոս ասէ. «Առանց իմ ոչ ինչ կարէք առնել [1]». և սուրբն Պօղոս. «Աստուած է որ յաջողէ 'ի մեզ զկամելն և զառնելն [2]»։ Եւ այլուր. «Իբր ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրև 'ի մէնջ [3]»։

Որ խորհին՝ ասէ Պասկալ, խորհի զի տեսանէ յայնժամ զԱստուած։ — Մալլպրանշ եկեաց յայսմ ճշմարտութեան, սակայն անցեալ յոյժ ըստ չափ. և Ֆենելոն այսպէս գոչէ 'ի գիրս իւր Յաղագս գոյութեան Աստուծոյ. «Ո՛վ միտք, միտք, չիցեն ինքնին իսկ Աստուած, զոր ես խնդրեմ»։

Այսպէս ուրեմն ըստ այսմ ոչ ևս մարդ է որ խորհի. մարդ ըստ վարդապետութեանս ըստ այսմիկ և ոչ մի ինչ գործէ, այլ զամենայնն Աստուած առնէ. և կնճիռն խնդրոյն ոչ լուծանի։

1 Յովհ. ԺԵ. 5։

2 Փիլիպ. գլ. Բ. 13։

3 Բ. Կորնթ. գլ. Գ. 5։

Սուրբն Թովմաս Աքուինացի լուծանէ զայն պարզ և ժեկին. «Ամենայն գործ իմանալի, ասէ նա, սկիզբն առնու 'ի մտաց՝ յորում է, իբրև յերկրորդ պատճառէ, այլ յԱստուծոյ՝ որպէս յառաջին պատճառէ»։

Այսպէս առ միտս մեր է այդ. և արդարև խել 'ի խորհելս մերում, Աստուած և միտք մեր գործակից են միմեանց, և իմանամ թէ զինչ իցէ մտորութիւն, զամ մի խոկամտում եղեալ զի յայս աղօտական տեսութեան Աստուծոյ, և մերս խառնի տկարութիւն և ցնորումն մըտաց, տեսութիւն մեր միշտ սահմանափակ և մասնական, և հաւանութիւնքս յախուռն և անխորհուրդ։ Այլ զինչ ասացուք զինքնիշխան կամացս. շարժմունք նորա և ընտրութիւնք միթէ յԱստուծո՞յ իցեն. ապա ուրեմն մարդ ոչ ևս է ինքնիշխան։

Այո՛, շարժութիւնք կամաց մերոց յԱստուծոյ են, զոր օրինակ և ամենայն շարժումն յորպիսի և իցէ կարգի։ «Աստուած՝ ասէ սուրբն Թովմաս Աքուինացի, գործէ յամենայն գործողս»։ Ուրեմն և 'ի կամս ևս։ Գործէ 'ի կամս որպէս պատճառ առաջին, տըւեալ զնախ կին զդրդումն։ Այլ մարդ ինքնիշխան գոլով, կամս զին վարի զդրդմամբն, և զշարժումնն փոխակերպէ։ Եթէ զոն մինքենայք որք այլակերպեն զառընկալեալ շարժութիւնն, կամ փոխեն զզարձագարձ շարժումն 'ի թաւալականն, և կամ զուղիղն՝ 'ի խոտորնակ, և կամ զորպիսի և իցէ շարժումն՝ վարեն 'ի հակառակն. ո՞րչափ առաւել կարիցեն առնել զնոյն ինքնիշխան կամք մարդոյ։ Ո՞չ ապաքէն զոր ամենայն իւրաքանչիւր ոք 'ի մէնջ փոփոխէ զաստուածային ազդմունս 'ի սուտ և յախտակիր շարժութիւնս, զազդումն արիութեան՝ 'ի ցասմնական զօրութիւն, զխանդակաթ վառումն սրտի՝ յանձնասիրութիւն, զսէրն

աղնուագութ՝ 'ի չարախտավատ կիրս, զամենայն ախորժակս՝ 'ի մարմնասիրութիւն, և զյաւիտենական փառաց պասքումն՝ յամբարտաւանութիւն և 'ի փառասիրութիւն։ Ո՞չ ապաքէն սմին նման և 'ի սուրբ Գիրս ընթեռնումք՝ եթէ «Ոգի Տեառն թիւրեցաւ ընդ թիւրս[1]». թէ «Զպարգևս Աստուծոյ 'ի ցանկութիւնս մեր մաշեմք[2]». և Երեմիաս աղաղակէ. «Որ կենդանի առնէ զմեզ Քրիստոս Բանն, գերեալ է ընդ անօրէնութեամբք մերովք[3]»։

Աստուած տայ զկեանս, և տայ մեզ զայն իւրովն առընթեր գոլով, իսկ մեք չարաչար վարիմք նովաւ, հանգոյն տնկոցն որ զբարութիւն արեգական փոխարկեն 'ի թոյն։

Աքանչելին սուրբն Թովմաս Աքուինացի զայս վարդապետութիւն այսպէս հաւաստաբանէ. «Աստուած ազդէ յազնկամի ազատութիւնն, տալով այնմիկ զզօրութիւն գործելոյ, և ազատութիւնն ինքնակամ գործէ Աստուծով՝ որ ազդէն 'ի նմա. այլ ընտրութիւնն և վախճան գործոյն յինքնօրէն ազատութեան կախեալ կայ»։

Իմանամ զայս. այլ որպիսի խորախորհուրդ գաղտնիք՝ բարոյական պայքարումն այս ընդ Աստուած և ընդ կամս. պայքարումն արդարև նորահրաշ, յորում մարդ յաղթական կանգնի 'ի վերայ Աստուծոյ։

Խոստովանիմ և ես զի է այս խորհուրդ անքնին. այլ ահաւասիկ պատճառք խորհրդոյս։

Աստուած սէր է. և կամեցաւ առնել զարարածս կարողս սիրելոյ զԱստուած։ Առ 'ի սիրել՝ պարտ է լի-

1 Սաղմ. ծէ. 27. (Ըստ լատ. թարգմ.)։
2 Խնդրէք... զի անդէն 'ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք. Յակ. Դ. 3։
3 Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս, պատեցան զնովաւ յապականութեան իւրեանց. Ողբ. Դ. 20։

նել ինքնիշխան։ Մէր ազատ է և կամ ոչ. եթէ պիտոյ էր սէր առ աշխարհ, ապա պէտք էին յաշխարհի էք ազատք։ Առանց ազատութեան, արարչագործութիւնն լինէր բնական, անբարբառ, անգործ և անզգայ, և ոչ բարոյական կամ իմանալի. արարչութիւն առանց ազատութեան՝ լինէր անսիրտ, անմիտ, անգութ, վասն որոյ և վարկպարազի իմն և անդեղեայ։

Ապա ուրեմն պէտք էին ազատութեան։

Սակայն զի՞նչ իցէ ազատութիւն։ Ազատութիւն՝ է ճշմարիտ և անսահման զօրութիւն կամելոյ կամ չկամելոյ, սիրելոյ կամ չսիրելոյ, սիրելոյ և կամ ատելոյ։ Ի յաղթանակելն Աստուծոյ 'ի հարկէ և յոչ կամս մեր, ազատութիւն եղծեալ ապականի։ Այլ ազատ եմք մեք. իշխանութիւն ունիմք ասել առ Աստուած՝ այո՛ կամ ո՛չ։ Այնպիսի է ազատութիւնն մարդկեղէն սրտի, — և քանզի զամ մի է, այնպիսի պարտի լինել, — զի կարէ 'ի բաց մերժել ցյաւիտենական ժամանակաց զսիրտն Աստուծոյ։ Տիեզերական ժողովն Տրիտենդեան սահմանեաց իբր վարդապետութիւն հաւատոց՝ թէ կարէ մարդ միշտ ընդդէմ կալ Աստուծոյ և 'ի բաց մերժել զշնորհս նորա։ Առանց այսր չլինէր մարդս ազատ, և ժողովն 'ի սահմանել կայր զազատութիւն ընդդէմ ճակատագրական աղանդոյն Լուտերի։

Այո՛ արդարև ընթանամք աներկիւղ ընդ մէջ երկուց ծայրայեղ եզերացս, որք են ըստ սրբոյն Օգոստինոսի, «Սէր անձանց մերոց մինչև ցարհամարհանս Աստուծոյ, և սէր Աստուծոյ մինչև ցանարգանս անձանց մերոց»։

Այսպիսի է ուրեմն մեծութիւն ազատիշխան արարչութեան որ եղ 'ի ձեռաց Աստուծոյ։ Ծնողն մարդկութեան շատ իսկ սիրեաց 'ի ստեղծագործելն

զմեզ, զխտելով չափ զի զսէր մեր զարթուցանէր՝ առանց կարելոյ զրաւել հանապազօր։

Է

Ո՜հ, որպիսի խորհուրդ՝ խորհուրդս այս արարչութեան։

Արդարև խորհուրդ գեղեցիկ, սքանչելիք մեծահրաշ, յոր պարտ է մտախորհ լինել։

Յանդիման առաջի աչաց մերոց կան սքանչելիքս այս, և մեք ոչ տեսանեմք. ընդ որ շատ իսկ էր զոգցես հայել՝ զի եղիցուք աստուածապաշտք ճշմարիտ։ Եւ հարկ է խոստովան լինել զի բարգաւաճանք գիտութեանց՝ ինքնին ակն յայտնի յաչս մեր երևեցուցանելով զհանդէսն արարչագործութեան, և հաւատարիմ առնելով 'ի ստուար էջս իւրեանց զգիրս Ծննդոց, նպաստամատոյց յոյժ եղեն մարդկայինս մտաց։ Լսեա երբեմն զբարբանջ ուրուք որ ասէ. «Եթէ յարուցանէր Աստուած զմեռեալ ոք աղօթիւք Եկեղեցւոյ՝ որ խրատու ինձ լինի՝ հաւատայի արդեօք»։ Արդ ահա ինչ մի, որ թէպէտ չհամարիցին սքանչելիք իսկապէս, սակայն արժանահաւատ ինձ գործէ զամենայն սքանչելիս. ապաքէն գործ գերահրաշ քան զյարութիւն մեռելոյ, և իբրև զգոյութիւն մեր ստոյգ և հաւաստի։

Ածիցես արդեօք զմտաւ ընդ ժամանակս ժամանակս զօրն զայն և զժամ, յորում մարդ՝ որ ոչ գոյր յերէկն և յեռանդն 'ի վերայ երկրի, կարգեցաւ անդ յԱստուծոյ։ Աղէ մի՛ մոռանար, զի համայնաստուածական վաղեմին վարդապետութիւն մշտնջենաւոր և

յաւիտենական գոլոյ աշխարհիս՝ եղծեալ է ուսումնապէս. և ստոյգ է ամենևին, իբրև տեսանելի աչաց և հաւաստեալ ուսումնօրէն, զի ոչ միայն երկիրս համօրէն ծածկեալ էր ընդ ջրով և 'ի հուր վառեալ բովանդակ, այլ և աշխարհագունտս այս, աստեղք մօտաւորք և լուսատուն մեր արեգակն՝ ամպանման իմն էին։ Կէտ մի ամպեղինիս, յետ հրաշանշան փոփոխմանց և յանկարծածագ և շանթաձիգ շարժմանց, եղև մոլորակն՝ յոր բնակիմքս։ Էր երբեմն արդարև զի երկիրս մեր հրահալելի ևեթ էր և որձաքար. և այլ երբեմն արդարև զի աշխարհս մեր՝ թէպէտ և բնակեալ և սերմանեալ, այլ անխօս էր և անբանաւոր. ոչ գոյին խօսք 'ի վերայ երկրի՝ չև հաստեալ գոլով մարդոյս 'ի նմա։ Արդ եղև օր մի արեգակնային հանդոյն աւուրցն առաջնոց, — և այսօրինակ ամենայն անհնարին է թէ չիցեն լեալ, — օր մի՝ որոյ հաւաստեալ է երբն և ծանօթ Աստուծոյ, և ոչ անչափապէս հեռի յառաջիկայ օրէս. եղև և ժամ մի ճշգրտապէս հանդունատիպ այժմեան ժամուցս մերոց, յորում մարդ՝ որ չգոյր 'ի վերայ երկրի, գտաւ ապա անդանօր։ Եւ ո՞վ ոք եդ զնա այդրէն։ Դի՛ր թէ 'ի ներքոյ ձուոյ հաստատեալ եկաց անդ, կամ ուղղորդ յոտին, և կամ հաստեալ յարբունս այրութեան և զգօնամիտ, նոյն են սքանչելիքն ամենևին. քանզի ո՞ ոք թխեաց զձուն և ջամբեաց զնունդն առաջին։ Տեսանեմք աստանօր յայտնապէս, աղէ միտ դիր քաջ, տեսանեմք աստանօր իբր յանդիման աչաց, զիջանելն Աստուծոյ 'ի կէտ մի երկրիս, և անդանօր զ' 'ի գոյ ածելն յոչնչէ, միով բանիւ, և ինքնիշխան ազդմամբ անսահման իւրումն զօրութեան, զարարած ոք ամենևին նոր, անզուգական և որոյ չգոն նախորդք. զբնութիւն իմն ասեմ այլազգ զլխովին 'ի նա-

խագոյ բնութեանց. զմարդն ազատ, բանաւոր, ճոխացեալ սիրով և բանիւ, որ բանայ զաչս իւր, խորհի և Հայր իմ, ասէ ցաներևոյթն։

Եւ զի՞նչ իցէ ասել զհիմնաւորայլ սքանչելեացս։ Ցորմէ հետէ գիտակ եմ այսմիկ, — որում դու իսկ ինքնին իցես գիտակ, եթէ առնուս 'ի միտ զբանքս —, անմարթ է ինձ դլալ դադարել 'ի ճառելոյ զմեծասքանչ հրաշիցս 'ի դէպ և 'ի ճահ. որ նորահրաշ է արդարև քան զյարութիւն մեռելոյ, ստոյգ՝ զօրէն գոյութեան մարդոյ 'ի վերայ երկրի, հանապազորդեան և մօտաւոր՝ յետ միանգամ լինելոյն. և ընդ այս մանաւանդ հիացեալ զարմանամ թէ զիա՞րդ ոչ 'ի հաւատս ածէ նա զաշխարհ համօրէն։

Քանզի տեսանեմք զԱստուած արարիչ, տեսանեմք զնորայն ինքնիշխան և զյանկարծահաս միջամուխն լինել, յեղափոխելով զարարչագործութիւն իւր, անհասանելի սլացմամբ, 'ի միոյ յայլ հանգամանս. տեսանեմք զԱստուած կենդանի, առաջիկայ՝ իւրովն անհուն զօրութեամբ և անքնին իմաստութեամբ. տեսանեմք զհայր ոք սիրելի և բարերար, որ հայի 'ի մեզ, առաջնորդէ և ազդէ, և հանդոյն առասպելեալ արքային, որոյ՝ յեռանդն աշխարհի, այսինքն՝ յաւուրս այլակերպութեան էիցս, հարկ եղև զի առաջնորդեսցէ ինքնին որդւոյ իւրում, պնդեալ զայն 'ի գաւառն իշխանութեան իւրոյ, կամ մանաւանդ 'ի սիրտ իւր.

Ինքնին 'ի ծոց իւր կրելով։

Ապա ուրեմն դառնալ առ Աստուած, խնդրել զնա սրտիւ և ձեռօք, յարել 'ի նա, անսալ և սիրել, լինել բարեպաշտօն և երկիւղած մեծաբորբոք սիրով, քարոզել զնա յամենայն զօրութենէ լի ուրախու-

թեամբ և զմայլմամբ, առ 'ի սթափել զմարդիկ յապաշնորհ հիքութենէ իւրեանց և 'ի կուրութենէ՝ է միայն ուղիղ և ճշմարիտ, և այլն ամենայն սուտ է, պատերազմող մոլաց և աններելի։

Այս է ահա միտք առաջին բանից Նշանակին հաւատոյ Հաւատամ 'ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Բ

Մարդեղութիւն. — Աստուածութիւն Յիսուսի Քրիստոսի.

« Հաւատամ 'ի մի Տէր Յիսուս
« Քրիստոս »։

Ա

Ընդունեցիմ և խոստովանեցիմ իբրև զքեզ՝ առանց իմիք երկմտելոյ, զառաջին մասն Հանգանակի ուղղափառ հաւատոց. Հաւատամ 'ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի։ Սակայն այսու ոչ համարիմ զանձն իմ քրիստոնեայ։ Լինել քրիստոնեայ՝ է հաւատալ յաստուածութիւն Յիսուսի Քրիստոսի. աւագին նշանակն։

Եւ խոստովանիմ ինքնին թէ կարևոր է ինձ նշանս այս. քանզի եթէ քրիստոնէութիւն սուտ է, եթէ Յիսուս Քրիստոս խաբեբայ կամ խելագար ոք է, կեանքս մեր անեղծուած իմն իցէ, և աշխարհ՝ լոկ բանին վլոյլերի, այպանումն չարաղէտ։ Եթէ Յիսուս Քրիստոս՝ Աստուած է, և քրիստոնէութիւն՝ ճշմարիտ, այլ յայլմէ չինեմ ես. 'ի մահաբեր վհատութեանց՝ վերաբերիմ յետանցն ջերմաջերմ, և հաւանայ է յայնժամ վճիռն թէ զինչ իցէ կեա նպատակի կենաց իմոց, որպէս և աշխարհի։ Հաստատեաս 'ի հոգիս զհաւատս աստուածութեան Յիսուսի Քրիստոսի, և Եւրոպէ

ողջոյն 'ի վաղիւ անդր դարձցի յուղղափառութիւն, և քաղաքաժողով միաբանութիւն մարդկան զգեցցի այնպիսի իմն զօրութիւն բարգաւաճանաց և միութեան, որպիսի ինչ չէ կարող ոք պարզել նմա։ Հաստատեսցի Եւրոպէ 'ի վերայ ճշմարիտ հիման Աւետարանի, և ուր ուրեմն դիմեսցուք 'ի ստանալ և 'ի շուաշորել զաշխարհ համօրէն. ընթասցուք յազատութիւն նորին, որ իբրև զգերեզման Քրիստոսի 'ի գերութեան կայ մինչև 'ի ձեռս անհաւատից։ Վարեսցի աշխարհ ըստ Աւետարանի, և զանձն անտի չահեսցի խաղաղութեան, արդարութեան և սիրոյ։

Կրկին դարք ոգորմանց, ասէր Շադօպրիան, կարևորք են մեզ առ 'ի դառնալոյ վերստին յԱւետարանն, որպէս 'ի հիմն քաղաքաժողով մարդկան։ «Ի վերայ հիման քրիստոսական կրօնից, գրէր նա յամին 1847, պարտ և պատշաճ է միաանգամ բարեդարդել հինաւուրցն մարդկութեան, յետ միոյ կամ երկուց դարուց, այնմ՝ որ զարդիս խաթարեալ աւերի»։ Մարթ էր մեզ վերծանել 'ի յօքնամեայ դարուց աղետից, եթէ կամեցեալ էաք հայել և նկատել 'ի հանդիպոյ զքրիստոսական կրօնս և ընդունել զհաւատս՝ զոր տայ պայծառ և անվրէպ ճշմարտութիւն նորին առ նա ինքն մերձեցելոց։

Այլ ևս տեսանել ևեթ խնդրեմ. ահա հայիմ ես, ցոյց ինձ եթէ Յիսուս Քրիստոս իցէ Աստուած։

Ահն ունիմ ցուցանել քեզ զայն։ Հայեաց ուրեմն աչօքդ սրտի և մտացդ։

Սիրես դու զԱստուած։ Հաւատաս զի Աստուած՝ հայրն ամենակարող, հայր 'ի մեզ յամենեսին յամենայն ժամ, և տածէ զմարդկութիւն ըստ Գրոց սրբոց, որպէս զարծուի՝ զբոյն ձագուց իւրոց. հաւատաս այսմիկ։

Ի գործս արարչութեան իւր ակներև տեսեր

զԱստուած իջեալ 'ի մի կէտ երկրի, կարգել անդանօր զմարդն առաջին, առնուլ զնա 'ի ծոց իւր, և անուցանել ինքնին միայնակ։ Գամ մի տեսեալ զայս, մարթ իցէ քեզ, որ զինչ և եղիցի, լինել անհաւատ։

Արդ մօտ ես մատիր հայել և տեսանել որ զինչ անցք անցին յանհունս յառաջանալ արարչութեան, որ 'ի գոյ էած զմարդ, և եմոյծ յաշխարհ անգործ և անխօս՝ հոգի մի ազատ և բանաւոր։ Ահա որ ինչ եղեն։

Ի վեր ամբարձ Աստուած զէս չափով միով, և մերձեցոյց առ ինքն միով աստիճանաւ։

Արդ 'ի միտ առ զի պատմութիւն արարչագործութեան բովանդակի յայս բան Քրիստոսի՝ զոր ասաց զանձնէն, և զոր 'ի մի իմաստ բանի՝ արարչութիւն համագոյից կարաց ասել յառաջնմէ օրէ անտի եղելութեանն. «Ելանեմ ես առ Հայր իմ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր»։

Լուր աղէ զմեկնութիւն բանիցս։ Տեսանեմք մեք ակն յայտնի գնտակս ձիւնաքատակ լուսաւորաց յերկինս. բոլորովք աշխարհաց, յորս մտաւորքն լինին իմաստունք, զի տակաւ տակաւ առնուն զկերպարանս բնակաւէտ աշխարհի։

Այսպէս իմն եղեն և վերեւք մերումս երկրի։ Եւ նա յառաջակարգ միգէն, եւ նա 'ի հրոյ և 'ի ջրոյ առ 'ի լինել հիմն ամրութեան կենաց։

Էր անդ յայնժամ անգործն միայն նիւթ, և պէտք էին նորոգատուր նպաստից արարչագործ ամենակարողութեանն առ 'ի տնկել 'ի վերայ խոպանուտ ապառաժին զառաջին բողբոջն բուսական։

Զինչ էր նորաստեղծս այս արարչութիւն, և զինչ կարգն բուսական։ Երկրորդ իմն բնութիւն, յաւելեալ յառաջինն, մարմնաւորեալ 'ի նիւթն ան-

գործ, և պարուրեալ 'ի սկզբնականն արարչութիւն։ Գեղ զալար, ծաղիկ, կաղնի, և ամենայն մարմին շնչաւոր այսր կարգի, նոր իմն բնութիւնք են 'ի նախնումն բնութեան և կրկին բնութիւնք 'ի մին ևեթ։

Անդ յայնժամ կենսունակ էր արարչութիւնն, այլ անշարժ և անզգայ։ Աստուած չափ մի ևս ամբառնայ զնա դարձեալ։

Նոր իմն ձիր պարգևէ երկրի, ազգս էակաց շարժունս և զգայունս։ Ո՜վ սքանչելեացս. պարուրէ նոյնպէս և զնոր սերմանիսս և մարմնաւորէ զնոսա 'ի նախագոյակն արարչութեան։ Արարածքս այսոքիկ ունին մարմին երկրաւոր, հանքային, և կեանք իմն բուսական՝ որ ընդմտանէ և լինի նորոգ կենաց, որ է կեանք զգայուն, շարժուն և շնչաւոր։ Մէն մի 'ի նորոգ արարածոցս այսոցիկ 'ի միակ էութեան իւրում կրկին բնութիւնս պարագրէ, իմա՛ զշնչաւորն և զբուսական. և վերջինս այս՝ բովանդակէ յինքեան զբնութիւն հանքային։

Այլ սակայն հարկ է բնութեան առաւել 'ի վեր ամբառնալ։

Աստուած՝ արարչութեանն մեծազօր զօրութեամբ պարագրելով 'ի մարմին մարդկային զնախակարգեալ արարչագործութիւնսն բովանդակ և զամենայն կարգս կենաց, 'ի մի զօդէ զստորին և զանխօս աշխարհն համօրէն՝ ընդ նորոյ էակին, որ ատակն է իբրև զԱստուած, ազատութեան, իմաստութեան, բանի և սիրոյ։ Եւ բնութիւն մարդկային, պատկերն Աստուծոյ, առնու մարմին 'ի ծոցի յառաջընթացն արարչութեան, լուսափայլեալ նորոգ կենօք ըստ ամենայնի։

Մարմին շնչաւոր, հոգի բանաւոր և ազատ, կրկին բնութիւնք 'ի մին ևեթ, այս է մարդն ամենևին,

Ահաւադիկ կատար արարչութեան։ Արարչութիւն ոչ անցանէ անդր քան զմիտս և զսէր։

Աստուած ևեթ 'ի վեր է քան զամենայն։

Արդ Աստուծոյ կամք եղեն վերամբառնալ զարարչութիւնն մինչև առ ինքն. և ասէ ցնա. Ե՛կ արդ մինչև առ իս։ Ամբարձիր առ Աստուած։

Նա ինքն Աստուած 'ի ծայրագոյն յայսմ պահու, 'ի նկատեալ ժամուն յինքենէ 'ի ժամանակի, — զոր օրինակ սահմանեալ էր 'ի միջոցի և 'ի ժամանակի զժամն և զտեղի գալստեան առաջին մարդոյն, — առնու ասեմ Աստուած 'ի ձեռս յայսմ պահու զարարածս համօրէն, այսինքն է զմարդն՝ և նովաւ զայլն ամենայն. և որպէս զառաջինն 'ի մի յօդեաց զանգործ հանածոյն ընդ բուսական զօրութեան, և ապա զկենդանի՝ այլ զանշարժ և զանզգայ բնութիւնս ընդ շնչաւոր արբանեակս մարդոյ, և ապա ուրեմն զշնչաւոր՝ այլ զհամր, զգերի և զաչացու բնութիւնն ընդ իմացականութեամբ և ազատութեամբ ճոխացեալ մարդոյն, այսպէս առնու Աստուած գերաբուն իմն հրաշալեօք զմարդ և յօդէ ընդ ինքեան, առ 'ի յաւարտ ածել, ասէ սուրբն Թովմաս Ագուինացի, զպարունակն, և առ 'ի զծագեալն յիւրմէ յինքն վերաբերել։ Առնու Աստուած զսահմանաւոր բնութիւնս և յօդէ ընդ անսահմանելոյն, թէպէտ և վիհ անջրպետ կայցէ ընդ երկուս բնութիւնս։ Արարած նորաքանչ տեսանի 'ի վերայ երկրի, կրելով 'ի միութեան անձին իւրոյ երկուս բնութիւնս՝ զաստուածայինն և զմարդկայինն, զբաժանեալսն անսահմանութեամբ. և Նախ այս կոչի Աստուած ընդ մեզ, Աստուած և մարդ։ Եւ անձն նորա՝ է Աստուած, զոր օրինակ և մարդն՝ է մարդ։

Ահաւասիկ խորհուրդն մարդեղութեան։

Եւ առ ինչ ազդէ այս զմիտս քո։ Գիտութիւն

և իմաստասիրութիւն ունիցի՞ն ինչ առել ընդդէմ հնարաւորութեան վարդապետութեանս մեծի: Ուսումն գիտութեան և իմաստասիրութիւն՝ որք զարդիս թմբրեալ ընդարմանան զիւրով և հեշտեաւ 'ի նիրհ բազմաստուածութեան, յայնմ՝ որ ասէն թէ ամենայն ինչ Աստուած է, չիցէ՞ մարթ թէ զարթնուցուն և ասիցեն. «Ահաւասիկ ճշմարիտն. ոչ Աստուած է ամենայն, այլ ամենայնի մարթ է միաւորել ընդ Աստուծոյ. և թէ կարող է Աստուած մարմնաւորել 'ի մարդ, զոր օրինակ մարմնաւորեացն զհոգի մարդոյ յառաջնաստեղծն արարչութեան[1]»:

Կարէ մարմնանալ, և ես հրաւէր կարդամ աստանօր որոյ և է ուսումնասէր բանագիտութեան յառաջ մատչել և ցուցանել թէ մարմնաւորել 'ի մարդումն չիցէ հնար Աստուծոյ, որ անդիմաճառելին է ամենեւին:

Կարէր, այո. այլ կամեցաւ արդեօք: Առ ինձ կամեցաւ. և ո՞վ որ ցուցցէ ինձ հաւաստի թէ կամեցաւ:

Արդ ասացից քեզ մի ըստ միոջէ:

Բ

Այլ եւս քան զայսոսիկ թող ինձ առաջի առնել քեզ այլ ինչ դժուարութիւն: Միթէ վարդապետութիւն քո այս չիցէ՞ յոյժ յարդարեալ ըստ մտաց այժմեան դարուս՝ հա-

1 Յայտնի է ամենեքին զի վիհ մեծ է ընդ երկուս ծայրս բաղդատութեանս: Այլ 'ի հաւատոց է, թէ՝ «Որպէս 'ի բանաւոր հոգւոյ և 'ի մարմնոյ մի է մարդ, այսպէս յԱստուծոյ և 'ի մարդոյ մի է Քրիստոս»:

կառակ նախնեաց: Հինաւուրցն աստուածաբանութիւն զայս ա՞յսպէս արդեօք իմանայր:

Անշուշտ լեր և աներկմիտ զի ոչ գոն երկեակ աստուածաբանութիւնք: Այլ զարդիս բանաւոր մեկնութիւնք աստուածաբանականին՝ նորոց ուսմանց արգասիք համարեալ են և այժմեան հանճարոյ, իբր այն թէ յոգն և 'ի թիկունս հասանիցէ կոյր և զառամեալ վարդապետականին գիտութեան: Եւ խառնումն այս արդի ուսմանց ընդ հինաւուրց վարդապետութեան՝ կոչի Նոր–քրիստոնէութիւն:

Ընդ այս ահա խիթամ և ես:

Եւ մի՞թէ կարծիցես թէ իցեն կանխաճառեալքս առ յինէն:

Բայց, զի չանկան երբեք յառաջ քան զմեր աւուրս 'ի միտս ուրուք խորհուրդք այսպիսիք:

Եւ սակայն զոր ասացի՝ բովանդակ Թովմասինեայ է և սրբոյն Թովմայի Ագուինացւոյ, սրբոյն Օգոստինեայ, սրբոյն Աթանասի և սրբոյն Կիւրղի: Սուրբն Աթանաս՝ հանդոյն Նիկիական ժողովոյն և առաքելական դասուն՝ է գրիչ միոյ յերից Հանգանակաց հաւատոյ, որովք վարի Եկեղեցի: Սուրբն Օգոստինոս՝ առաջին է 'ի Հարս Եկեղեցւոյ. սուրբն Թովմաս Ագուինացի՝ առաջինն յաստուածաբանս և մեծ վարդապետ միջին դարու. և 'ի վերջոյ Թովմասինոս՝ մատենագիր եօթն և տասներորդ դարու, որոյ երկասիրութիւն զոգցես բովանդակութիւն է բանից Հարց Եկեղեցւոյ, 'ի մի ձուլեալ ձեռամբ առնն հանճարեղի:

Զարմանք կալցեն զիս մեծապէս երբ զիարդ գտանիցին ամենայն բանք քոյին 'ի մատենագիրս յայսոսիկ: Ո՞չ ապաքէն ուսուցին միշտ երբ մարդեղութիւն անանկեալ ինչ էր ամենեքին և կամաւոր, գերաբուն և անհամեմատ.

և սակայն ենթակայն դու 'ի նմա ազգ ինն պատշաճութեան և տեղական արարչութեան, արգասիք ինն միտման որ ըստ հարկի, համայն առել՝ բոլորակ մի ատարտեալ և որում պարտ էր ատարտից առ սկզբնաւորեալ ընծայել։ Համեմատեն ընդ միութեան հոգւոյ ընդ մարմնոյ զմիութիւն Աստուծոյ ընդ մարդոյ 'ի մարդեղութեան։ Եւ ոչ մի ինչ յայտնեն թուի ինձ թէ իցէ ուղղափառական։

Այնու՝ զի դնես 'ի բերան իմ բանս այնպիսիս զոր իմ չիք ասացեալ. և երկրորդ անգամ՝ քանզի անգիտանաս որ ինչ ուղղափառապէս է, և կամ ոչ։ Ես ոչ ասացի նախ՝ թէ մարդեղութիւնն արարչութիւն իմն իցէ տեղական, որ է թանձր հեռեւսխոյլութիւն։ Դարձեալ՝ թիւր է և մոլորութիւն ընդդէմ հաւատոց համարել զմարդեղութիւն որպէս արդիւնք իմն միտման ըստ հարկի։ Մարդեղութիւնն՝ գերաբուն է ամենևին, նորասքանչ հրաշալիք ինքնաջոժար սիրոյն Աստուծոյ, անքնին և անհամեմատ խորհուրդ. անհամեմատ իբրև զԱստուած՝ զի ոչ մի ինչ հաւասարի նմա, և զի ամենայնք՝ յանհունս զանազանին 'ի նմանէ։ Այլ անհամեմատն Աստուած՝ կամի գալ 'ի համեմատութիւն ընդ մարդոյս, զի 'ի պատկեր իւր ստեղծեալ է զնա։ Ըստ այսմ սուրբն Աթանաս 'ի Հանգանակին իւրում, որ ոչ ևս է իւր՝ այլ Եկեղեցւոյ գլխովին, համեմատէ զմիութիւնն Աստուծոյ ընդ մարդոյ 'ի մարդեղութեան՝ ընդ միութեան հոգւոյ և մարմնոյ։

«Զոր օրինակ մարդ 'ի բանաւոր հոգւոյ և 'ի մարմնոյ է, նոյնպէս և Քրիստոս յԱստուծոյ և 'ի մարդոյ»։

Սուրբն Կիւրեղ լուսաւորեալ յաստուածուստ'ի խնդիրս յայսոսիկ՝ ասէ. «Միութիւնն Աստուծոյ ընդ մարդոյ 'ի Քրիստոս Յիսուս՝ մարթի համեմատիլ ընդ միութեան մարդկային հոգւոյ ընդ մարմնոյ»։

Եւ սուրբն Օգոստինոս ասէ. «Ա՞յժ զի՞նչ իցէ մարդ. հոգի մարմնազգած։ Զի՞նչ իցէ Քրիստոս. Բանն Աստուծոյ ունող զմարդկութիւն»։

Այլ աստուածաբանութիւն անդրագոյն ևս նըկըրտի։ — Թովմասինոս ցուցանէ զմիութիւն հոգւոյ ընդ մարմնոյ, և կամ զմիութիւն այլասեռ բնութեանց՝ գոլ որպէս հանրական օրէնք էից. և ըստ այսմ օրինակի բնութիւն բուսական՝ միանայ ընդ հանքային բնութեան, և բնութիւն կենդանական ընդ բուսականին, և բնութիւն բանաւոր ընդ կենդանականին։ Մեծիմաստ աստուածաբանն տեսանէ 'ի յաջորդական միաւորմունս էից զհանրական օրէնս աշխարհի, և յայսոսիկ օրէնս՝ նկատէ զպատկեր մարդեղութեան։ Ի բովանդակ գլուխ մի բանից յաստուածաբանական վարդապետութեան իւրում խօսի 'ի վերայ այսր համեմատութեան, յորմէ՝ որպէս ասէն՝ յորդաբուղխ իմն լոյս ծաւալի 'ի վարդապետութիւն մարդեղութեան, զիւրիմաց ընծայելով զնոյն։ Աչաւասիկ խորագիր այնր գլխոյ. «Ճառիս այսու լուծանի կրճիմն բովանդակ խնդրոյս, թէ որով օրինակաւ միանայցեն բարձրագոյն բնութիւնք ընդ ստորնագունից՝ թէ և իցեն կատարեալք, և թէ որպէս միջամուխ լինիցին 'ի նոսա առ 'ի ամբառնալ զայնոսիկ և ևս, և թէ զիա՞րդ ձգիցեն 'ի միութիւն ընդ ինքեանս»։

Արդարև զարմանալի են այս բանք։ Բայց տեսանեն ինքեան զի ըստ այսց ասացուածոց մարդեղութիւն է վերջին կարգ վերնոյ ըստ կարգի արարչութեան։

Ո՛հ, կարի է մոլորութիւնդ. որպէս թէ ասէիր զանհունն՝ լինել վերջին սահման 'ի կարգս վերելից թուոց։ Անհունն ոչ խառնի բնաւ ընդ կարգս թուոց, թէպէտ վերաճեցուն կարգք թուոց անդր ձգտել

թուիցին, մարթ է թուոց աճել միշտ՝ ոչ թէ միայն առանց հասանելոյ, այլ և ոչ իսկ մերձենալով յանհունն։ Համայն և այնպէս՝ տեսանեն միտք մարդոյ յանսահման աճեցող մեծութեան անդ պատկեր իմն սահմանաւոր, որ աննմանութեամբն՝ որպէս ոչինչ ընդհատ և նմանակերպութեամբն, տայ զգաղափար անսահմանին։ Այսպէս ահա պատկեր իւրոց բնութեան՝ մարթի ամբառնալ զմեզ առ իմացմունս գերբնական ճշմարտութեանց՝ յետ միանգամ տուեալ լինելոյ մեզ այնոցիկ։

Իսկ սուրբն Թովմաս Ագուինացի մինչև աստուածային իմն պատշաճութիւն իսկ գտանէ 'ի խորհուրդն մարդեղութեան։

«Մարդ, ասէ, գոլով վերջին վախճան արարչութեան, 'ի դէպ էր և ճահ զի յօդեսցի ընդ նախկին պատճառն համագոյից, առ 'ի լրումն ածել անթերի բոլորակաւս այսու զկատարելութիւն գործոցն Աստուծոյ»։ Աստուած մարդեղութեամբ, այն է՝ ազատ ամենևին և աստուածայինն գործով, ածէ առ ինքն զոր ելն յինքենէ 'ի ձեռն արարչութեան, գործով ասեմ աստուածայնով, ազատ եղելովն ամենևին։

Այլ միութիւնս այս կարէր լինել այլազգ քան զգերագոյն միութիւնն։ Արդ ըստ սրբոյն Թովմայի դարձեալ 'ի ճահ էր զի միութիւնս լիցի գերագոյն։ «Աստուած՝ բարութիւն գոլով անսահման, ասէ, վայել էր նմա հաղորդիլ ընդ արարածս գերբնապէս, որպէս եղև 'ի խորհուրդն մարդեղութեան[1]»։

1 Եղև վայելուչ Աստուծոյ, գոլով բարութիւն անեզր, գերագոյն խոնարհաւ հաղորդել զանձն արարածոց, որ և կատարեցաւ 'ի գործն մարդեղութեան։

Սակայն վայելուչ է յաղագս բարութեան իւրոյ հաղորդելն զանձն այլոց։ Ուստի վասն ծայրագոյն բարի գոլոյն՝ 'ի ճահ է զի ծայրագոյն խոնարհաւ հաղորդեսցէ զանձն արարածոց, զոր արար լնուլ,

Եւ քանզի սահմանեալ էր 'ի յաւիտենից վճիռ մարդեղութեան, վայելուչ էր զի Բանն Աստուծոյ մարդասցի։ «Ամենապատշաճ էր զի Բանն Աստուծոյ մարմնասցի, քանզի ինքն է միտք հաստիչ և օրինակ բովանդակ արարչութեան։ Զոր օրինակ թերակատար և մասնական նմանութիւնն արարածոց ընդ այսր օրինակի, հաստատէ զնոսա յազգս իւրեանց, այլ 'ի շարժական պայմանի, նոյնպէս պատշաճ էր և 'ի ճահ զի ոչ մասնական եւեթ՝ այլ անձնական միութեամբ Բանին ընդ արարածս, արարչութիւնն նորոգեսցի և բարձրասցի 'ի յաւէրժական և յանփոփոխ կատարելութիւն»։

Սակայն ահաւասիկ դարմանաքանչ բովանդակութիւն վարդապետութեան խորհրդոյն մարդեղութեան, առեալ 'ի Հանգանակէ սրբոյն Աթանասի, որ է՝ յաւելում դարձեալ ասել, նշանակ հաւատոց ուղղափառ Եկեղեցւոյ, բացայայտիչ նիկիական Հանգանակին, որպէս և սա՝ պարզէ զՀանգանակն Առաքելոց։

«Ճշմարիտ հաւատք հաստատեալ են 'ի խոստովանել՝ թէ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ, է Աստուած և մարդ»։

«Աստուած է՝ ծնեալ 'ի յաւիտենից, յէութենէ Հօր։ Մարդ է՝ ծնեալ 'ի բնութենէ մօր 'ի ժամանակի»։

«Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, ունելով մարմին մարդկային և հոգի բանաւոր»։

«Աստուածութեամբ իւրով հաւասար Հօր, այլ ստորին քան զՀայր մարդկութեամբն»։

այնու՝ զի «զստեղծեալն բնութիւն այնպէս իմն միացոյց ընդ իւր՝ զի մի անձն եղև յերից, 'ի Բանէն, 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ», որպէս ասէ սուրբն Օգոստինոս։ — Ս. Թովմ. Ագուինացի։

«Թէպէտ և Աստուած և մարդ, այլ ոչ է երկու, այլ մի Քրիստոս»:

«Մի է, ոչ փոփոխութեամբ աստուածութեան 'ի մարմին, այլ մանաւանդ յաւելմամբ մարդկութեան յԱստուած»:

«Մի է, ոչ շփոթմամբ բնութեանց, այլ միութեամբ անձին»:

«Քանզի զոր օրինակ հոգի բանաւոր և մարմին են մի մարդ, նոյնպէս Աստուած և մարդ՝ է մի Քրիստոս»:

Այսպէս ուրեմն ըստ Թովմասինոսի, սրբոյն Թովմայի Ագուինացւոյ, սրբոյն Օգոստինեայ, սրբոյն Կիւրղի և ըստ սրբոյն Աթանասի, մարդեղութիւնն յիրաւի գերաբուն իմն սքանչելիք է ինքնիշխան բարութեան Աստուծոյ. և ընդ նմին գեղեցիկ է հրաշս այս, լուսաւոր, և վայելչութեամբ յոյժ գերազանց: Բարութիւնն անպայման կամի յօդել ընդ արարածոյն իւրոյ գերագոյն միութեամբ. կամի ամբառնալ զարարած իւր մինչև առ ինքն զլխովին. կամի փակել զշրջանն զարմանահրաշ, որ յԱստուծոյ առ արարածս դիմէ, ոչնչութեամբքն իւրեանց հանդերձ, և յարարածոց առ Աստուած դարձ առնէ, թէպէտ և գուցեն անդունդք անսահմանին: Եւ միութիւնս այս հիասքանչ նկարեալ էր կանխաւ յարարչութեան: Արարչութիւն պատկեր իմն է մարդեղութեան: Եւ զինչ օտարոտի կայցէ արդարև, եթէ աշխարհս որ վասն մարդեղութեան եւեթ արարաւ, ըստ սրբոյն Փրանկիսկոսի Սալեզացւոյ, իցէ ինքնին շարայարութիւն իմն շարժուն պատկերաց խորհրդոյն յաւիտենականի. պատկերաց՝ որ տակաւ լուսաւորին, թէպէտ և անկատարք միշտ և սահմանափակք:

Գ

Արդ աղաչեմ զքեզ, յառաջ մատո՛ զբանս: Ետուր ինձ ծանօթս ինչ զխորհրդոյ մարդեղութեանն, որ առ ինքն ձգէ զմիտս, առանց շփոթեցանելոյ: Հնարաւոր է խորհուրդն մարդեղութեան. չգտանեմ և ոչ մի ինչ պատճառ ուսումնական առ 'ի մերժելոյ զայն: Աստուած կարէր առնուլ մարմին 'ի մարդն: Այլ կամեցա՞ւ արդեօք, և ընդէ՞ր:

Եւ ընդէ՞ր արդեօք կամեցաւ: Ցոյց ած զհաւատամքն Նիկիական. Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից ... ՄԱՐՄՆԱՑԱՒ, ՄԱՐԴԱՑԱՒ: Վասն զմեզ սիրելոյն եղև մարդ: Ի խօսելս մեր զայսր սիրոյ 'ի ճառին որ Յաղագս Փրկագործութեան, խօսեսցուք եթէ ո՛ր եղև շարժիչն մեծ առ այս սէր:

Պարտ է աստանօր հայել սրտիւ առ 'ի զօլ խենլամուտ: Ազէ 'ի յուշ ած զվերջին քաղցր ողջոյնս Քրիստոսի առ գլուխն Եկեղեցւոյ իւրոյ. Սիրե՞ս զիս, Պետրէ: Զնոյն և մեք հարցանեմք ցքեզ. Սիրե՞ս: Եթէ կամիս 'ի վերայ հասանել խորհրդոցն Աստուծոյ՝ պարտիս սիրել: «Են են՝ ասէ Բասքալ, և սրտի պատճառք իւրայինք, զորս միտք ոչ ճանաչեն»:

Եթէ սիրես՝ 'ի միտ առնուս թէ Աստուած սէր է, և մարդ կարող 'ի սիրել: Արդ կարծիցես արդեօք զի Աստուած և մարդ սիրեսցեն զմիմեանս յաւէրժաբար առանց ընդ միմեանս յօդելոյ:

Արդարև ոչ: Սակայն ո՞չ արդեօք միացեալ իցէ Աստուած ընդ մարդոյս և ընդ բնութեանն՝ էութեամբ իւրով, կարողութեամբ և իւրովն տնօրէնութեամբ:

Անշուշտ է զոր ասեսդ. այլ բնականս այս միութիւն կցորդութեամբ կենաց, չէ բնաւ ծայրագոյն աստիճան միութեան 'ի վեր քան զամենայն, զոր չգիտեմ խսկ թէ իցէ՞ մարթ կոչել միութիւն։ Զօրութիւնն Աստուծոյ և շունչ ընդմիտանէր յամենայն արարածս և բղխէր զկեանս, այլ ոչ մի մարմին կարէր ասել առ Աստուած. Մի եմք մեք։ ՅԱստուածամարդն՝ Մի եմք մեք, ասէ բնութիւն մարդկային։

Զայս 'ի միտ առ զի Աստուած մեր, որ սէր է գլխովին, ոչ կամեցաւ կալ յաւէրժաբար առաջի մարդոյ՝ որ կարողն է սիրոյ, առանց միանալոյ ընդ արարածոյն խրսում գերագոյն միութեամբ։ Հայրն Աստուած ոչ կամեցաւ զի միութիւնս այս մնասցէ 'ի հնարաւորութեան և չելցէ երբեք 'ի գլուխ։ Արարչութեան թուի ինձ այսպէս բարբառեալ 'ի յաւիտենից առ Աստուած. «Ո՛վ Հայր, 'ի վեր թեւակոխեմ հանապազօր, այլ ոչ երբեք ժամանեմ առ քեզ. անբաւութիւն կայ միշտ 'ի միջի մերում»։ Հաճեցաւ Աստուած զի կատարեսցին յաւէրժական պաղատանք արարածոց առ ինքն հնազանդելոց և ուղերձելոց մօք և սիրով, աղօթք և պաղատանք տուեալք ինքնին առ 'ի յԱստուծոյ։ «Իմաստասէր ոք ասէր. Եմ եմ և ես էակ սահմանաւոր, անցական և թերակատար, որ ձգտիմ և անձկամ անդուլ անդադար առ լաւագոյն և առ մեծագոյն ինչ զոր չեմ»։ Եւ ինչս այս՝ է անհունն, որ է Աստուած։ Այո՛ արդարև 'ի խնդիր է մարդս և աշխարհս ընդ նմա։ Ճանապարհորդք եմք հետամուտք անհնոյն. քանզի նժդեհք եմք և պանդուխտք հեռի յԱստուծոյ, ըստ սրբոյն Պօղոսի։

Զի՞նչ իցէ աղէ՞ հանրական հառաչումնս այս էից, զորմէ դարձեալ խօսի այլուր սուրբն Պօղոս յասելն. «Ամենայն արարածք հեծեն և երկնեն մինչև ցայժմ,

որդեգրութեան ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ[1]»։ Այս ամենայն՝ է պատուէր տուեալ յԱստուծոյ աշխարհի առ 'ի խնդրել, քանզի կամի զի գտցուք։ Զի՞նչ կամիցի մարդկութիւն և զի՞նչ հոգիս մեր, յագել անդ նմին Աստուծոյ. տացուք վկայութիւն անկեղծօրէն։ Կամի հոգիս մեր ժառանգել զանբաւութիւն, զզօրութիւն ասեմ և զմեծութիւն, զգեղեցկութիւն, զիմաստութիւն և զմշտնջենաւոր փառս. պայտսիկ խնդրեն ամենայն սիրտք՝ չև չիջեալք։ Այլ մարդկային բնութիւն ժառանգիցէ՞ արդեօք զանհունն իւրովանն զօրութեամբ։ Եւ ոչ միով իւիք օրինակաւ, այնու՝ զի 'ի խնդիր է նմին։ Մա՞րթ իցէ լինել նմա անհուն և անսահման։ Ոչ. քանզի ներհակականք են այս բանք. զի սահմանաւորի իմիք չմարթի լինել անսահման։ Եւ արդ զի՞նչ կամիցի ուրեմն։ Ժառանգել զանհունն, որ չէ լինել անհուն։ Ժառանգել զանհունն՝ է առնուլ յանձն զաղբիւրն անսահման կենաց, աճելով ցանգ անդր քան զամենայն սահման և զփափագ։

Եւ ահա զայս չունի մարդ յինքեան, և զայն զայս խնդրէ նա. զոր Աւետարանն ասէ, «Ունել կեանս յանձին; ժառանգել զկեանս յաւիտենականս»։

Եւ Յիսուս Քրիստոս ասաց. Եթէ ոչ միաւորեսջիք ընդ իս՝ ոչ ունիք կեանս յանձինս. այլ եթէ ոք միաւորեսցի ընդ իս՝ ժառանգեսցէ զկեանս յաւիտենականս։

Եւ ըստ այսմ ուսուցանէ աստուածաբանութիւն, թէ աստուածանայ մարդ կցորդակցութեամբ։ Եւ Յիսուս Քրիստոս երկրորդեաց զհինաւուրց աստուածային բան. «Ես ասացի թէ աստուածք իցէք»։

1 Հռովմ. Ը. 22։

Բնութիւն մարդկային մինչև 'ի վեր առ Աստուած ամբառնայ, աստուածանայ, և բարձրանայ 'ի վիճակ գերաբուն, 'ի վիճակ ասեմ աննման ամենևին այնմ յոր ծնանիմք, և աննման մերումս իսկ բնութեան:

Այսորիկ պատճառք ոչ միայն թուին իմն 'ի սրտէ բղխեալք, այլ միանգամայն ուղղախոհք և ուսումնականք: Եւ թուիմ տեսանել զխորհուրդն մարդեղութեան շղթայեալ ընդ արարչութեան, և ցուցես իմն յառաջ եկեալ յայժմու պայմանէ մարդկեղէնս բնութեան: Սակայն ո՞չ ապաքէն իբրու զմեծ իմն և աններելի մոլորութիւն զայս 'ի բաց մերժեցեր:

Եւ կարի յիրաւունս: Աստանօր բնաւ և ոչ մի ինչ յառաջագայի և կամ զօդի տրամաբանապէս, և ոչ մի ինչ համարելի է իբր 'ի հարկէ: Զի բնաւ ըստ հարկի մարդկայնոյ բնութեան յօդիլ ընդ աստուածայնումն գերահրաշ միութեամբ: Եւ երկրորդ անգամ՝ քանզի գերաբուն միութիւնս այս ընդ Աստուած պարգևեալ է մարդոյ յազատ բարութենէն Աստուծոյ, վասն որոյ չէ ընդ հարկաւ մարդեղութիւն և կամ գերաբուն միութիւն Աստուծոյ ընդ մարդկան: Բնաւ անբանադատ են այս ամենայն, և մարթ իսկ էր թէ չլինէին: Եւ զայս հաւատարիմ առնէ աստուածաբանութիւն, յորժամ հնարաւոր ծանուցանէ զվիճակ պարզ բնութեան, յորում բնութիւն մարդկային կարէր միաւորիլ ընդ Աստուած բնական ճանաչմամբ, և սիրով բնականաւ՝ բարգաւաճելով նորին տակաւ: Այլ զոր կամեցայս քեզ ցուցանել՝ է մեծասքանչ գեղեցկութիւն այնր զոր կամեցաւ Աստուած: Կամ եղև նմա միանալ ընդ մարդկային բնութեան բարձրագոյն միութեամբ, և հաստեաց զմեզ առ այս. կամեցաւ զայս կէտ և յայտնեաց 'ի սկզբանէ աշխարհի: Ի սոյն պատրաստէ, և 'ի սոյն կոչէ զազգս և զհոգիս

պատմութեամբ եղելոց և ներքին ազդեցութեամբք: Եւ արդարև ստեղծաւ մարդ՝ որպէս վարդապետեն հաւատք մեր, 'ի պայմանի գերաբուն միութեան ընդ Աստուծոյ: Վասն այսորիկ մարթ է ասել, թէ՝

Մարդ՝ է աստուած անկեալ, զերկինս ուշաբերող:

Եւ յայսմանէ եռանդն այն մեծ և ուժգին, մեծամեծ իղձքն այնորիկ մարդկայնոյ բնութեան, զորս չէր հընար մարդոյ բնաւ երկնել 'ի մտի, եթէ չէր Աստուծոյ՝ ազատ բարութեամբ իւրով և նախակարգեալ օրինօքն ազդեալ նմա: Այլ զի տուան փառաւորութիւնքս այսոքիկ՝ ասեմ ընդ հրեշտակային Վարդապետին, աստուածային գեղեցկութեամբ լի լինել զայնոսիկ. և թէ՝ գերագոյն առաւելագանցութիւն բարութեան՝ Աստուծոյ միայնոյ է վայելուչ. «Գոլով Աստուած բարութիւն անսահման, վայել էր նմա յօդել ընդ արարածս իւր գերաբուն միութեամբ, որ 'ի խորհուրդն մարդեղութեան էառ զլրումն»:

Իմանամ զոր ասես. այլ հարցից աստանօր հանգոյն վարդապետին որ ասէր ցՅիսուս՝ Զիարդ մարթ իցէ այսմ լինել:

Եւ ես տաց պատասխանի նովին բանիւք Յիսուսի. «Ոչ ոք յերկինս ել, եթէ ոչ որ էջն յերկնից[1]»: «Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս[2]»: Այս ինքն է, զի իջանէ Աստուած առ 'ի լնուլ զգերաբուն միութիւն Աստուծոյ ընդ արարածն. մարմնանայ 'ի մարդկային բնութեան, և ապա առնու և բարձրացուցանէ զամենայն մարդ արդեամբք մարդեղութեան իւրոյ:

Արդարև զինչ կամիցիս ասել բանիւքս. Աստուած մարմնացաւ 'ի մարդկային բնութեան: Ո՞չ ապաքէն Բանն

1 Յովհ. Գ. 13: 2 Յովհ. ԺԲ. 32:

մարմնացաւ 'ի մարդ ոք սոսկ և առանձինն Յիսուս ա-նուն։

Ո՛ն, զգոյշ լեր։ Աստուած ոչ մարմնացաւ 'ի մարդկեղէն անձին, ոչ 'ի միում և ոչ յամենեսին։ Աստուած էառ զբնութիւն մարդկային, և ոչ զանձն սոսկ միոյ ուրուք մարդոյ։ Էառ զմարմին, զհոգի, զկամս, զմիտս և զբան մարդկային, այլ ոչ և զան-ձնաւորութիւն մարդկային։ Անձնաւորութիւն Քրիս-տոսի՝ է ինքն Աստուած. բնութիւն երկու՝ մարդկային և աստուածային 'ի մի միայն անձն, որ է նոյն անձն միածնի Որդւոյն Աստուծոյ, անձն աստուածային և ոչ մարդկային. աւադիկ Քրիստոսն։ Զոր օրինակ և ես, անձն եմ մարդկային, զգեցեալ մարմին կենդանի, կենդանի բնութեամբ՝ որպէս ասի յատկապէս, միա-ցեալ ընդ մարդկային բնութեան. անձն՝ ես իսկ եմ, որ եմ մարդ ոք, և ոչ այս ոք անձն կենդանի. այս-պէս և 'ի բուսական կարգի. յատկադէմն՝ է բոյս, թէ-պէտ և ունիցի յինքեան և զհանքային բնութիւն։ Բանն Աստուած էառ զբնութիւն մարդկային, անձնա-ւորեալ յաստուածային անձին իւրում[1]։

Վասն որոյ հարցումն իմն այսպիսի, թէ ո՞վ ոք իցէ առանձնաւորութիւնս այս արտաքոյ օրինաց, արժանի գտեալ ընդունել յինքեան զշնորհ մարդանալոյն Աս-տուծոյ, 'ի բաց մերժեալ է 'ի մերմէ վարդապետու-թենէս. մարդկութիւն Քրիստոսի չիք 'ի միջի, և իմանալի է միայն 'ի պատճառս և արդեամբ մարդե-ղութեան խորհրդոյն։

1 Աստուած էառ զմարդկային բնութիւն, ոչ զառանձնականն՝ այլ զընդհանուր (Ս. Գրիգոր Նիւսացի)։ Ըստ աստուածաբանական բար-բառոյ ասեմք. Էառ զբնութիւն մարդկային՝ ըստ այնմ որ յանձնաւո-րականն գտանի։

Յառաջ մատո՛ զբանդ։ Ադէ, զի՞նչ այդ իւրաքան-չիւր կարիցէ 'ի վեր ամբառնալ 'ի վիճակ գերագոյն, որ տայ ինքեան զաղբիւրն անսահման կենաց, և բարձրա-ցուցանէ 'ի վախճան ընձից իւրոց, Որոյ վասն ասես դու, մարմնացաւ Աստուած 'ի մարդկային բնութիւն։ Արդ ասա ինձ օն, որո՞վ օրինակաւ Աստուած մարմնացեալ ձգէ առ ինքն զմարդկային անձնաւորութիւնս և զայդ այդ իւրաքանչիւր։

Ո՛չ արդեօք գործ է արարչութեան՝ որ 'ի վեր ե-լանէ, և իւրաքանչիւր հոգւոյ՝ որ անձկան և վերամ-բառնան, ո՛չ ապաքէն գործ է ասեմ հասանել առ Աստուած և զօդիլ ընդ նմա։ Վասն այսորիկ Աս-տուած մարմնանալովն՝ առնէ զանձն գիւրամատոյց, զգալի, երևելի և մարդակերպ։ Լինի իբրև զմի 'ի մէնջ. առնու զյօդուոր բարբառ մեր, զսիրտ մեր և զբան, զարիւն և զմարմին, զպէտս մեր և զտկարու-թիւնս, զնեղութիւնս, զմահ և զամենայն ինչ բաց 'ի մեղաց, առ 'ի այլակերպել յինքեան զամենայն։ Ընկ-ճի բնութիւն մարդկային փոխակերպեալ և վերա-ծնեալ 'ի նմա։ Եւ զի բնութիւնս այս նուաճի 'ի նմա, կարող է այր իւրաքանչիւր, ազատ իմն գործառնու-թեամբ՝ որ ոչ 'ի վեր է քան զկար իւր, հաղորդակից լինել այլակերպման և վերածնութեան։

Տակաւին ոչ 'ի մէտ առնում զբանդ. բայց արդեօք կամիցիս վարդապետել զայդ իմն փոխարկումն և զհա-ղորդութիւն աստուածային մարմնաւորական զօրութեան, որ սկիզբն կալեալ 'ի Քրիստոսէ, բանզի որդի մարդոյ է, ծաւալի ընդ բովանդակ բնութիւն մարդկային և ընդ ամե-նայն ոք. ասիցեն ոմն և գերագոյն, որում իւրաքանչիւր ոք թէ կամիցի կարող է լինել հաղորդակից։

Այս իսկ է զոր և մեք ասեմք այլովք լուսաւոյն և առաւել լուսաւոյն, պայծառ և անթերի բանիւք։

Ասեմք՝ թէ Քրիստոս յետ չարչարանաց իւրոց և յաղթութեանն փառաւորեցաւ, և եմուտ 'ի փառս իւր, և հեղեալ սփռէ 'ի վերայ մարդկան զհոգի Աստուծոյ՝ որ նորոգէն զերեսս երկրի:

Միթէ ոչ կարէր Աստուած նախ քան զմարմնանալն հեղուլ զհոգի իւր 'ի վերայ մարդկան:

Զիք ինչ յայդմիկ դժուարին, քանզի չիք ժամանակ առաջի Աստուծոյ. կարող է Աստուած սփռել զհոգի իւր յամենայն ժամ: Հոգին սուրբ՝ որ է Աստուած ինքնին 'ի գլխովին, առաջի կայ յամենայն ժամ և ընդ ամենայն տեղիս: Մեզ անմարթ է մեզէն խելամուտ լինել և կամ խորհել իսկ զնմանէ. և մարդեղութեամբ Բանին, անցելովն կամ առաջիկայիւ, բնութիւնս մարդկային լինի արժանի այսմ պարգևի: Խորհուրդս այս գործէր 'ի հանդերձելումն, 'ի մօտաւորն և յանցելումն[1]. այլ սակայն միշտ վաստակք և չարչարանք, յաղթութիւն և փառաւորութիւն Քրիստոսի են որ շնորհեն մեզ զՀոգին սուրբ[2]:

Բնութիւն մարդկային ուսանի 'ի Քրիստոսէ ըզգենուլ զհոգին Աստուծոյ, և վերստին ծնանիլ 'ի նմա, առ որ չէր կարող առանց Քրիստոսի: Նա ինքն է սկզբնածայր, անդրանկածնունդ այսր նորոյ կարգի, Հայր հանդերձելոյ աշխարհի, համառօտ ասել՝ Պատճառն: Արդ պատճառին 'ի միջի գոլով մարթին հետևութիւնքն յառաջ գալ. գամ մի եկեալ յաշխարհ Նախահօրն, կարեն ծնանիլ 'ի նմանէ այլ մարդիկ:

Ծնանի ուրեմն Քրիստոս հոգեպէս զայլ մարդիկ

1 Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս: Եբր. ԺԳ 8: — Քրիստոս գայ միշտ, ասէ Թովմասինոս:

2 Զի չև էր Հոգի, քանզի Յիսուս չև էր փառաւորեալ: Յովհ. Է. 39:

վասն զերաշխարհի, առ աստուածային և յաւիտենական կեանս: Եւ ասեմք՝ թէ յամենայն ժամ է ընդ մեզ և գործէ, և յորդորէ զհոգիս ամենայն մարդոյ արթուն լինել. քննէ զերիկամունս սրտից մերոց, լուսաւորէ զխորս մտացս, օրհնէ և շօշափէ զմարմինս մեր, և շնորհէ բազմաց 'ի մարդկանէ, որպէս երբեմն սրբոյն Յովհաննու, յենուլ արդարև 'ի սիրտ իւր և ննջել 'ի վերայ լանջաց իւրոց:

Կարծիցես եթէ չառնուցումք անտի զզօրութիւն որում կարօտիմքս:

Կամիմ՝ վասն զի կամիս դու, ասէ սէրն: Կարեմ՝ վասն զի դու կարող ես: Հաւատամ՝ քանզի գիտես դու. և գիտացից՝ զի հաւատացի քեզ, որ զամենայն գիտես: Միտք իմ զլոյս քո ընդունին, ո՛վ տէր իմ, և բաբախէ սիրտ իմ ընդ քոյումդ, եղբայր, սուրբ իմն տրոփմամբ, յաւիտենական՝ հանրական և անարատ սիրոյ: — Այո՛ արդարև, տայ պատասխանի եղբայրս մեր. զամենայն զոր ունիմ տաց քեզ: Ես 'ի քեզ և դու յիս. մի եմք մեք: — Այո՛, յաւելու հոգի, ընդ սրբոյն Պօղոսի, այսուհետև ոչ ես՝ այլ կենդանի ես յիս դու, ո՛վ Յիսուս: Սակայն կրկնէ Յիսուս. Կամիս դու՝ քանզի և ես կամիմ. և ես նոյնպէս կամիմ՝ վասն զի դու կամիս: Ես զկամս քո առնեմ: Զամենայն զոր խնդրիցես յինէն, տացէ և արասցէ քեզ Աստուած:

Վասն որոյ մարմնանայ Աստուած զի նուաճեսցէ, ածցէ վերստին 'ի ծնունդ և բարձրացուսցէ զբնութիւն մարդկային, և ապա կեցցէ յայր այր, որպէս ոստ պատուաստեալ ազատ սիրովն Աստուծոյ, և ընկալեալ ազատ սիրով և ընտրութեամբ իւրաքանչիւր հոգւոց, որոց մարթ է մնալ յանընտել բընութեան իւրեանց, և կամ մտանել կցորդութեամբ 'ի բնութիւնն աստուածային:

Իմանամ աղէ, և սիրտ քո իցէ խելամուտ։ Այսուքիկ են ահա պատճառքն՝ զորոց ասէ Բասքալ. «Են են և սրտի պատճառք իւրայինք՝ զորս միտք ոչ ճանաչեն»։ Այլ վեհանճար միտք ճանաչեն զայնոսիկ։ Բասքալ զթերատ մնաց ևեթ զայս այսպէս իմանալ։

Դ

Իմանամ. արդարև վարդապետութիւնս այս վսեմ է և սիրային, և չքնաղ իմն իմանալի։ Այլ տես զի չեմք տակաւին 'ի բան խնդրոյս. Միթէ նկն յարդիւնս իմանալիս այս։ Այս իսկ է խնդիրն։ Երբ նկն յարդիւնս, ընդէր իցէ մեզ տակաւին 'ի խնդիր լինել նմին։

Ցաւէ ինձ ասել զոր հարկիմ՝ թէ վասն այնորիկ զի ոչ խնդրեմք։

Եւ զիա՞րդ։

Եւ դու, եղբայր իմ, առ որ խօսիմս, միթէ եղեա՞լ իցես յաճախ 'ի խնդիր։ Ո՞չ արդեօք մերժեցեր իսկ թերևս ըստ բազմաց օրինի, անտես արարեալ զառեալն 'ի ձեռս քո 'ի տիս մանկութեան։ Եթէ շատ խնդրեցեր՝ վկայեմ զի 'ի թուոյ սակաւուցն ես. իսկ եթէ չելեր 'ի խնդիր, ընդէ՞ր ընդ չգտանելդ զարմանաս։ Ո՞չ ապաքէն նախամեծար արարեալ է քո մինչև ցայժմ զաշխարհ զգալի և զկիրս՝ քան զճշմարտութիւն։

Կամիցիս ունկն դնել ինձ 'ի պահուս մինչև ցաւարտ բանիցս մտադրութեամբ սրտի և մտաց, համառօտ հետազօտութեանս ասեմ, որ գուցէ առաջին իցէ 'ի կեանս քո, թերևս և վերջին. քանզի դիւրին է գտանել որ ինչ 'ի ձեռս մեր է և առաջի աչաց մե-

րոց, և բազում այն է՝ զի առանց գիտելոյս 'ի խորս հոգւոյս գտանի։

Լուր ապա։

Եկա՞ց արդեօք Յիսուս Քրիստոս։ Ընդ այս չկարես երկմտել, և յանդգնագոյնք իսկ սկեպտիկեանք ոչ իշխեն մերժել զպատմականս ճշմարտութիւն թէ եղեալ իցէ ոք Յիսուս անուն։ Իցէ՞ ինչ կեղակարծ պատմութիւն նորին։ Եկեա՞ց արդեօք յաղքատութեան՝ թէ 'ի ճոխութեան։ Թագաւո՞ր եղև Հրէաստանի՝ թէ հիւսն 'ի Նազարէթ։ Ուսա՞ց արդեօք զվարդապետութիւնն՝ որ կոչի քրիստոնէութիւն։ Մեռա՞ւ արդեօք 'ի վերայ խաչի։ Մեղապա՞րտ ոք էր՝ թէ մեծ և իմաստուն քան զամենայն մարդ։ Չիք ընդ այսոսիկ երկմըտել հաւաստեաւ. և որպէս կարի գեղեցիկս ասէ Ռուսսոյ, Գործք Սոկրատայ, զորոց ոչ ոք երկբայի, չեն այնպէս հաւաստարմացեալք՝ որպէս Քրիստոսին Յիսուսի։

Եւ այս իսկ աներկբայ է, զի Քրիստոսի եղեն աշակերտք, և Առաքեալք իւր՝ արք խոշորք և առանց դպրութեան, 'ի սուղ ժամանակի մեծապէս և հզօրեղապէս այլափոխեցին զաշխարհ, որպիսի ոչ երբեք էր եղեալ 'ի վերայ երկրի։ Արդ չիք արդիւնք առանց պատճառի. ստութիւն կամ պատրանք չեղեն երբեք մեծագոյն զօրութիւնք աշխարհի, որոյ վարիչ են խնամքն Աստուծոյ։

Որպէ՞ս կարող եղեն Առաքեալք, չասեմ յեղափոխել միայն զաշխարհ ամենայն, այլ պատճառել 'ի նմա այլայլութիւն և յեղյեղումն մեծ յոյժ, կամ մանաւանդ զմիայնն յեղյեղումն բարոյական, ընտանի, բանաւոր և կրօնական. զմիակ յեղյեղումն արդիւնաբեր և խորարմատ՝ զոր տեսեալ իցեն երբեք ազգք մարդկան։

Ահա քեզ որպէսն։

Պետրոս՝ ձկնորսն և նաւավար, իջանէ յաւուր միում 'ի քաղաքամէջն, շուրջ պատեալ 'ի հարիւր եղբարց իւրոց որ 'ի Գալիլէէ, և յաշակերտաց իւրոց հարիւրաւորաց, և առ ժողովուրդն խառնեալ բարբառի և ասէ. Ո՞չ ապաքէն տեսիք դուք զՅիսուս խաչեալ. ո՞չ ապաքէն տեսիք զնա մեռեալ. ո՞չ ապաքէն տեսիք զխոցումն սրտի նորա և զհոսումն արեան և ջրոյ։ Արդ 'ի վերայ այսոցիկ ամենայնի տեսաք մեք զնա յարուցեալ, մեք ամենեքին։ «Զայս Յիսուս յարոյց Աստուած, որում ամենեքին մեք վկայ եմք [1]»։

Եւ յայլում աւուր սկիզբն արարեալ աւետարանել զայն՝ յաւելու. «Զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր, և ետ նմա յայտնի լինել. ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս՝ յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ, որք և կերաք և արբաք ընդ նմա յետ յարութեան նորա 'ի մեռելոց [2]»։

Զմի և զնոյն բան հինգ հարիւր եղբարքն կըրկնէին ասելով. Տեսաք մեք զնա։

Եւ զի՞նչ զհետ գայր սմին։ Զի յաւուր միում անձինք երեք հազարք յաւելան յաշակերտսն [3]. և 'ի միում աւուր եղև թիւ մարդկան իբրև հազարաց հնգից [4]։

Զկնի ապա և սուրբն Պօղոս գրէր առ Կորնթացիս. «Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն իմ՝ զոր աւետարանեցի ձեզ,... թէ և Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց, և զի թաղեցաւ, թէ և յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց. և թէ երևե-

1 Գործք Առաք. Բ. 32։
2 Անդ. Ժ. 40, 41։
3 Անդ. Բ. 41։
4 Անդ. Դ. 4։

ցաւ Կեփայի և ապա երկոտասանիցն. ապա երևեցաւ աւելի ևս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն, յորոց բազումք կան մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին. և ապա երևեցաւ Յակոբայ. ապա Առաքելոցն ամենեցուն։ Հուսկ յետոյ քան զամենեսին՝ իբրև անարգի միոջ երևեցաւ և ինձ [1]»։

Խելամուտ լեր բանիցս, զի սուրբն Պօղոս է որ խօսին. ինձ իսկ գլխովին, ասէ, երևեցաւ, 'ի վաւերական, անդիմամարտ և յանդիմադրելի թղթի ուրեք, զորոյ ունիմք զբնագիր։

Անագան քան զնա գրեաց և սուրբն Յովհաննէս. «Եւ էր երեկոյ 'ի միաշաբաթւոջ աւուրն, և դրօքն փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրէից. եկն Յիսուս և եկաց 'ի մէջ նոցա և ասէ ցնոսա. Ողջոյն ընդ ձեզ։

«Իբրև զայս ասաց, եցոյց նոցա զձեռս և զկողսն իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր։ Ասէ ցնոսա դարձեալ. Ողջոյն ընդ ձեզ. որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ։

«Եւ զայս իբրև ասաց, փչեաց 'ի նոսա և ասէ. Առէք Հոգի սուրբ.

«Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի։

«Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝ անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա յորժամ եկն Յիսուս։

«Ասէին ցնա այլ աշակերտքն, եթէ Տեսաք զՏէր. և նա ասէ ցնոսա. Եթէ ոչ տեսից 'ի ձեռս նորա զնշան բևեռացն, և արկից զմատունս իմ 'ի տեղիս բևեռացն, և մխեցից զձեռս իմ 'ի կողս նորա, ոչ հաւատամ։

1 Ա. Կորնթ. ԺԵ. 1—8։

«Եւ յետ ութ աւուր դարձեալ էին 'ի ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք, եկաց 'ի մէջ և ասէ. Ողջոյն ընդ ձեզ։

«Ապա ասէ ցԹովմաս. Բեր զմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ. և բեր զձեռն քո, և մխեա 'ի կողս իմ. և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։

«Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնա. Տէր իմ և Աստուած իմ։

«Ասէ ցնա Յիսուս. Այդ զի տեսեր զիս և հաւատացեր. երանի՜ որոց ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն[1]»։

Այսպէս խօսէին և գրէին սուրբն Պետրոս, սուրբն Պօղոս, սուրբն Յովհաննէս և այլ Առաքեալք, հանդերձ հինգ հարիւր աշակերտօքն որք տեսին զնա. յորոց մին 'ի մէջ այլոց սուրբն Իգնատիոս Անտիոքացի գրէ այսպէս. «Տեսի ես զնա կենդանի 'ի մարմնի իւրում յետ յարութեան իւրոյ»։

Արդ քանզի տեսեալ էին, վասն այնորիկ յինքեանս ձգէին զմարդիկ խմբովին. և քանզի աշխարհ ձգեցաւ 'ի նոսա՝ ապա ուրեմն տեսին։ Ապա ուրեմն յարեաւ Քրիստոս և յաղթեաց մահու. ապա ուրեմն սա է նա որ գալոցն է, որ ընձեռէ մեզ կեանս անթերի, յաւերժական, անմահ և անսահման։ Ապա ուրեմն նա ինքն է Աստուածն մարդ։

1 Յովհ. ի. 19—29։

Ե

Ոչ ուրանամ զի զօրութիւն վկայութեանցս կցորդեալ ընդ արդեանց յառաջ եկելոց, զոր առաջի աչացս ունիմ, հաւաստիք են մեծ յոյժ։

Այո՛, հզօր են ամենեքին հաւաստիք ընծայութեանցս, և միթէ կարիցեմ պատասխանի ինչ տալ առ այս։

Ոչ։ Այլ բերեալ գերմանական գիտութեան իցէ ինչ պատասխանի. և գուցէ եղծեալ իսկ իցէ զխովին քննադատութեամբ իւրով զբովանդակ բանս գրոց՝ զորս 'ի մէջ ածեմ։

Այժմ, ներեա՛ ինձ ժամիկ ընդ կոյտս մոլորութեանցդ 'ի սուղ բանս քո բովանդակեալս։ Ընթերցիր, աղաչեմ, առ այս զգիրս իմ որ կոչին Իմաստակք և Բանադատութիւն։

Նախ պարտ է գիտել զի ուսումն գերմանական կրկնազգի է։ Են քաջահմուտ մեկնիչք սուրբ Գրոց 'ի բանականաց որք մերժեն զվաւերականութիւն իւրք իւրք մասանց Աստուածաշունչ մատենից. և են դարձեալ հմուտ մեկնիչք նոյնպէս գերմանացիք, ուղղափառք կամ նորադաւանք՝ որք հաստատեն զվաւերականութիւն այնոցիկ։ Եւ վերջինքս այսօրիկ իմաստունք են և բանիբունք՝ չասացից թէ և առաւել, որպէս զառաջինսն։ Յայս վայր ուրեմն չիք ամենևին ինչ եղծեալ։

Երկրորդ անգամ, նոքին իսկ մեկնիչք բանականք ոչ մերժեն զվաւերականութիւն և զստուգութիւն ամենայն գրոց Նորոյ Կտակարանին։ Ի մէջ ածի քեզ

զԱւետարան սրբոյն Յովհաննու, զԳործս Առաքելոց և զԹուղթ սրբոյն Պօղոսի առ Կորնթացիս։ Ցայսցիկ երեցունց գրոց միայն զԱւետարանէ սրբոյն Յովհաննու խնդիրք յուզին 'ի քանի մի յուսահատ բանականաց։ Սակայն Պ. Էվալտ, որ և ինքն 'ի բանականաց է, այր հմտագոյն քան զամենեսեան 'ի հակառակորդս մեր, խօսելով զԱւետարանէն սրբոյն Յովհաննու այսպէս բարբառի. «Գործ զարմանաքանչ, պարզ և յայտնի ամենայն ուղիղ մտաց է Աւետարանն սրբոյն Յովհաննու, և չիք տարակոյս զի շարագրեալ իցէ 'ի սիրելոյն աշակերտէն Քրիստոսի... և մարթ է հաստատել հաւաստեաւ՝ թէ չիք ինչ 'ի բովանդակ հնութեան մատեան ինչ, որոյ վաւերականութիւն իցէ ստուգագոյն քան զսորայս[1]»։ Ահաւասիկ ուրեմն յետ քննադատութեան Սթրաուսայ, որ մերժէր ինքնին զԱւետարան սրբոյն Յովհաննու, իմաստնագոյնք 'ի հակառակորդաց մերոց դառնան յայտ յանդիման ցուցանել և հաւաստել, թէ գլխաւորն յԱւետարանս մեր, վաւերական է ամենայն ստուգութեամբ քան զբովանդակ հին հեթանոսական կամ զայլ մատեանս։ Եւ կամ լաւ ևս ասել՝ զի ոչ միայն «Գործք Սոկրատայ», զոր օրինակ կարի քաջ ասացաւ, այլ և ամենայն գործք հնոյ աշխարհի, «զորոց ոչ ոք երկբայի, չեն այնպէս հաւաստիք՝ որպէս զՅիսուսին Քրիստոսի[2]»։

1 Զվաւերականութիւն Աւետարանի սրբոյն Ղուկայ, Պ. Էվալտ ոչ ինչ նուազ յայտնի համարի. «Չիք և ոչ մի ինչ պատճառք, ասէ, երկբայելոյ ընդ այն»։ Եւ է «նոյնպէս անդիմադրելի զի և Գործք Առաքելոցն 'ի սրբոյն Ղուկայ գրեալ իցեն»։ Պ. Էվալտ ոչ բնաւ մերժէ և զայլ երկու Աւետարանս։ Ոչ ընդունի զայժմեան Եղանակաւորութիւն Աւետարանին Մատթէի, այլ ցուցանէ թէ իրաւամբ ըստ գլխաւոր մասին համարեալ է այն լինել սրբոյն Մատթէի։

2 Ինքնին Սթրաուս յետ առաջնոյ քննադատութեան իւրոյ՝ որով

Արդ խելամուտ լեր այսոցիկ. ահա հաստահիմն վկայութիւնք, որովք իրաւամբ պարտ է հաւատալ ամենայնի որ չիցէ պատերազմող մտաց։ Այլ զի՞նչ դնի առաջի քո 'ի հաւատալ։ Ինչ մի՝ որում պարտ էր ակն ունել եթէ չգոյր իսկ ինքնին 'ի պատմութեան. այս է՝ յաղթումն մահու և յարութիւն։

Լսես կարգ իմն նորոց իրաց, լսես զնոր դաշն մարդոյ ընդ Աստուծոյ, զգալուստ աստուածային լուսոյն 'ի մէջ խաւարելոցս՝, զմահ պարտեալ, զյաղթութիւն կենաց և զյարութիւն, երևելի առհաւատչեայ անմահութեան և երախայրիք անհնոյն, որում

մերժէր զԱւետարան սրբոյն Յովհաննու, 'ի միտ էառ եթէ յոյժ ըստ չափ վարեալ էր տարակուսանօք։ Այլ չկարաց նա իմանալ զի քննողական բանադատութիւն Դուպինկեան վարժարանին չմարթի իւիք լինել պատգամ. քանզի ըստ Պ. Էվալտի՝ որում յանհնարիցն է հակառակել յայսմիկ, Դուպինկեան վարժարանն «համարեալ է իբրև անարգանք և նախատինք գերմանական գիտութեան...»։ Պ. Էվալտ բազում ինչ պարզաբանէ բանիւքս որ զկնի. «Եթէ Շելլինկ և Հէկէլ այլուր և ոչ 'ի չարաշուք որմունս Դուպինկեան համալսարանին դաստիարակեալ էին՝ Գերմանիա թերևս ազատ լեալ էր յեօթանասուն ամաց հետէ ըստ մեծի մասին 'ի դառնաշէտ մոլորութեանց իւրոց։ Ո՞չ ապաքէն լուլի և բուռն բարգաւաճանք անաստուածեան վարժարանաց՝ որ 'ի Դուպինկ և այլուր, յայտնի ցուցակութիւնք իցեն տկարութեան և խոտորութեան բողոքական ուսմանց և աւետարանական կենաց 'ի մեզ 'ի վեր երևելոց»։

Իսկ առ օտարոտի վարդապետս՝ որոց մարթ է տակաւին երկբայել ընդ Աւետարան սրբոյն Յովհաննու, Պ. Էվալտ համարձակ գոչէ. «Ցեռսամիտ ոք ևեթ կարիցէ երկբայել ընդ այն»։ Ածի 'ի մէջ զվկայութիւնս զայս, զի ըստ իմոցս կարծեաց՝ ոչ թշնամանական է, այլ գիտնական։ Ապաքէն ուրանալ այսպէս զքրիստոնէական հաւատս, ընդ որ դողացաւ յայնժամ Գերմանիա և ապա Եւրոպէ ողջոյն, ոչ այլ ինչ էր՝ բայց պատշաճել զՀէկէլական իմաստակութիւնն առ պատմութիւն։ Սանձարձակ քննադատութիւն, ժխտումն սպառսպուռ և հանրական, նոյնութիւն էին ընդ ոչէին, նոյնութիւն հակասականաց, առանձս այսոքիկ ասեմ՝ վիժածք յիմարութեան, յառաջ բերին արգիւնս 'ի միտս գերմանացւոց բազմաց, այն է՝ զյիմարութիւն ուսումնական։ Յորմէ բղխեցին 'ի վեր ելին բիւրազգի զառանցանք և ծիւաղանք, զորս 'ի դէպ է կոչել ճշգրէն յիմարաբանութիւն...

անձկայ ամենայն հոգի մարդկային։ Այսօրիկ են զորս լսես նորալուրս. եւ այսոցիկ առեմ պարտ իսկ էր քեզ ակն ունել յապայս՝ եթէ չէին 'ի պատմութեան։

Ո՞չ ապաքէն այս էր որում նկատեալ ակն ունէր մարդկայինս ազգ, զոր օրինակ նախածանօթ լեալ ակն ունի ամենայն հոգի՝ եթէ չիցէ մեռեալ։

Այո՛, արդարեւ աշխարհ համօրէն ակն ունէր մարմնանալոյ Բանին Աստուծոյ։

Որպէս ազգ մի հիւսիսաբնակ ընդ բեւեռային վեցամսեայ մութ գիշերաւ կեայ յուսով հանդերձելոյ լուսոյն, զնէ զաստեղս կանխաքարոզս, եւ խայտայ ցնծութեամբ այն ինչ յառաջընթաց նշանք ազդ առնեն նմա զերեւումն արեգական. ըստ այսմ օրինակի արդարեւ աշխարհ ակն ունէր, իրազգած լինէր յառաջնմէ եւ քննաբանէր. եւ լի բերկրութեամբ ցնծացաւ բովանդակօրէն 'ի պահու գալստեանն Քրիստոսի։ Մարդկութիւն ընդ խաւարաւ յոգնահոլով դարուց բարոյական աշխարհի կայր մնայր իբրումն արեգական։ Ի ճենաց մինչեւ 'ի հիւսիսաբնակ տոհմն գերմանիկս մերոյս Եւրոպայ ակն կալեալ մնային ամենեքին. եւ չէր եւ ոչ մի ժողովուրդ որ լուռ կայր եւ չասէր՝ թէ Գալոց է։

Վիրգիլիոս, Տակիտոս, Սուետոնիոս, Պլուտարքոս եւ այլք բազումք, ոմանք նախ քան զծնունդ Քրիստոսի, եւ այլք յետ ծննդեանն, պատմեն մեզ զայսոսիկ աւանդութիւնս առանց հասու լինելոյ։ Պատմութիւն ամենայն ազգաց տայ մեզ առ այս նշանս ճշգրիտս, որք զարմանալիք են 'ի լրութեանն եւ 'ի միութեան։ Եւ զիա՞րդ ոչ. ո՞վ կարասցէ յուրաստ կալ եթէ կայցէ 'ի ծոց ազգի մարդկան կարողութիւն մարգարէանալոյ, որ խօսի յորժամ ազդէ նմա Աստուած։ Այլ զի՞նչ իցէ ասել եւ զԵբրայական մար-

գարէութենէ։ Ժողովուրդս այս՝ որ եղեւ յայտնապէս սիրտ մարդկութեան եւ հզօր քան զամենայն տոհմս ազանց, մարգարէացաւ միաձայն որպէս զմի այր։ Կեանք իւր, օրէնքն, կրօնք, պատճառք լինելութեան իւրոյ եւ պատմութիւն իւր՝ ակնկալութիւնք էին Մեսիային։ Եւ որ աւելի է քան զայսոսիկ՝ տեսանեմք ակն յայտնի զի ժամանակն, տեղին, հանգամանք գալըստեան, մահու, յարութեան եւ առաքելութեան Քրիստոսի կանխաւ գրեցան 'ի գիրս Հրէից։

Մարգարէք գրեցին զՄեսիայէն՝ եթէ Աստուած էր երեւալ 'ի յաւիտենից 'ի ծոցոյ Հօր եւ որդի մարդոյ, Աստուած ընդ մեզ. թէ՝ ծնցի 'ի կուսէ 'ի Բեթղեհէմ, 'ի կըրտսերագոյն գեղջն Յուդայ. եւ թէ՝ ծնցի 'ի ժամանակս երկրորդի տաճարի, 'ի ժամանակին զոր նշանակէ Դանիէլ յայտնի բանիւք. «Թուեցին զամէն, ասէ Պօղոս, եւ անհնարին է թէ որ ոչ ծանիցէ զնա, բայց եթէ իցէ կուրացեալ»։ Նկարագրեցան եւ դէմք նորա բարոյականք. Մի աղաղակեսցէ եւ մի վիճեսցի, եւ մի ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա. զեղէգն ջախջախեալ մի բեկցէ, եւ զպատրոյգն առկայծեալ մի շիջուսցէ։ Այլ հանցէ 'ի ճշմարտութիւն զիրաւունս. ծագեսցէ՝ եւ մի խորտակեսցի. մինչեւ դիցէ յերկիր զդատաստան[1]։

Ազգ առնեն զգածուն եւ զփառաւոր յաղթութիւն թագաւորին աղքատի, խաղաղարարի եւ փրկչի՝ որ մտանէ 'ի քաղաքն Երուսաղէմ հեծեալ 'ի վերայ իշոյ։

Նկարագրեն առաւել քան զառաւել զչարչարանս նորա եւ զմահ. Մատնեսցի, վաճառեսցի երեսուն արծաթոյ, 'ի մահ վարեսցի իբրեւ զգառն, ձեռք եւ ոտք նորա բեւեռեսցին, բաժանեսցին հանդերձք նորա, վիճակս

1 Ես. ԽԲ. 2—4։

արկցեն 'ի վերայ պատմուճանի նորա և արբուցեն նմա զլեղի և զքացախ։ Դանիէլ նշանակէ ևս ճշգրտիւ զժամանակն, 'ի ծանուցանելն իւրում յայտնաբարբառ թէ սպանցի Քրիստոս։ Եւ յետ մահուս այս յաչս իւր անկանին կործանումն Երուսաղեմի և աւեր Տաճարին։

Ոչինչ ընդհատ կանխածանօթ առնեն մարգարէք և զարդիւնս գալստեան նորա. տեսանեն զթագաւորութիւն Որդւոյ մարդոյ, որ է ակնկալութիւն հեթանոսաց և առաջնորդ ժողովրդեան, որոյ իշխանութիւն ոչ անցցէ յազգ այլ, և թագաւորութեան նորա մի լիցի վախճան, և թագաւորութիւն նորա լիցի արդարութիւն։ Տեսանեն զնա զարթուցանել զյիշատակ Աստուծոյ յամենայն ազգս 'ի վերայ երկրի և կոչել նախ զաղքատս, ժողովել զամենայն ազգս 'ի մի ժողովուրդ, որ ընկալցի զանուն նոր և զքահանայութիւն նոր և զվիճակ յաւիտենական։

Վկայութիւնքս չեն արհամարհք, այլ 'ի զարմացումն կրթեն զիս մանաւանդ նմանակցութեամբ իւրեանց։ Բայց են այսոքիկ և հատուածք խօսից, քաղեալք աստուստ անտուստ 'ի մարգարէից և 'ի սաղմոսաց, զորս աստուածաբանութիւնք կցկցէ։ Կամիմ տեսանել բնագիր ինչ մարգարէական անընդհատ՝ որ պատկերացէ արդարև զՔրիստոս։

Չէ ինչ դժուարին յառաջ բերել քեզ զմին յայնցանէ. առեալ զաղափարեցից արդ զյիսներորդ երրորդ գլուխն Եսայեայ բովանդակ. լուր եթէ զիարդ եօթն հարիւր ամօք յառաջ պատմէ մարգարէն յունկն Հրէից զպատմութիւն հանդերձելոյ Մեսիային, անարգեալ ինքնին իսկ 'ի նոցունց՝ որք ակն կալեալ մընային նմա։

1. «Ո՞ հաւատաց լրոյ մերում, և բազուկ Տեառն ում յայտնեցաւ։

2. «Պատմեցաք առաջի նորա իբրև զմանուկ, իբրև զարմատ 'ի ծարաւուտ երկրէ. ոչ գոյր նորա տեսիլ և ոչ փառք. տեսաք մեք զնա, և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն.

3. «Այլ տեսիլ նորա անարգ՝ նուաղեալ քան զամենայն որդւոց մարդկան։ Այր մի 'ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց. զի դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ և ոչ ինչ համարեցաւ։

4. «Նա զմեղս մեր բառնայ և վասն մեր չարչարի, և մեք համարեցաք զնա 'ի ցաւս և 'ի հարուածս և 'ի չարչարանս իբրև յԱստուծոյ։

5. «Բայց նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա, և նորա վիրօքն բժշկեցաք։

6. «Ամենեքեան իբրև ոչխարք մոլորեալք. այր 'ի ճանապարհի իւրում մոլորեցաւ, և Տէր մատնեաց զնա առ մեղս մեր. և նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր։

7. «Իբրև ոչխար 'ի սպանդ վարեցաւ, և իբրև որոջ առաջի կտրչի անմռունչ կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր։

8. «Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ, և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի բառնան յերկրէ կեանք նորա, յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ 'ի մահ վարեցաւ։

9. «Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նորա, և զմեծամեծս փոխանակ մահու նորա. զի անօրէնութիւն ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բերան նորա.

10. «Եւ Տէր կամի սրբել զնա 'ի վիրաց անտի։ Եթէ տայցէք զվասն մեղացն, անձինք ձեր տեսցեն

զաւակ երկայնակեաց. և կամի Տէր 'ի ձեռն նորա բառնալ 'ի ցաւոց անձին նորա,

11. «Ցուցանել նմա լոյս և ստեղծուլ իմաստութեամբ, արդարացուցանել զարդարն՝ որ մատղիւրն ծառայեաց բազմաց, և զմեղս նոցա նա վերացուսցէ:

12. «Վասն այնորիկ նա ժառանգեսցէ զբազումս, և զաւար հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի 'ի մահ մատնեցաւ անձն նորա, և ընդ անօրէնս համարեցաւ. և նա զմեղս բազմաց վերացոյց և վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ»:

Եւ զի՞նչ ընդ մարգարէութիւնս այս ասիցես:

Ասեմ թէ այսորիկ անշուշտ գրեալ իցեն յետ անցիցն անցելոց:

Աղնի՜ւ. ոչ անակնկալ ինչ էր ինձ պատասխանիդ: Արդ չմնայ քեզ այլ քան տեղեկանալ 'ի Հրէից, որք ծածկեն զգլուխս զայս ընդ քօղով, թէ հնա՞ր ինչ էր արդեօք քրիստոնէից յաւելուլ զգլուխ մի բովանդակ 'ի գիրսն Եսայեայ: Եւ ասասցեն քեզ նոքա եթէ քրիստոնէից չեղև երբեք հնարաւոր յաւելուլ ոչ թէ գլուխ մի ողջոյն, այլ և ոչ բառ մի կամ նշանակէտ յԵսայի, և կամ յոր և է մասունս Հնոյ Կտակարանին. քանզի Հրէայք ցրուեալք ընդ բովանդակ աշխարհ, տանելով 'ի միասին և զգիրս իւրեանց՝ 'ի բազում դարուց հետէ 'ի բերան առեալ գիտէին, ոչ միայն զբովանդակ շարայարութիւն մատենին, այլ և կարի քաջ զհամարս գլխոց, զտողս, զբառս, զտառս, զնշանակէտս և զկէտս բովանդակեալս 'ի բնագրին:

Ոչ ոք կարաց յաւելուլ կամ ջնջել և ոչ կէտ մի յեբրայական բնագրէն:

Եթէ այդպէս իցէ՝ վկայեմ զի աստուածաշունչ է մարգարէութիւն այս Եսայեայ:

Զ

Արդ երկրորդել աղաչեմ համառօտիւ զասացեալսդ:

Այս է՝ հաւատամ ամենայն հաւաստի եղելոց: Նախ զի մարդանալն Աստուծոյ չէ յանկարծելեաց ինչ, և զի ազգ մարդկային ակն ունէր այնմիկ: Եւ աստուածաբանութիւն իսկ Հնդկաց, եթէ ասել ինչ պէտք իցեն, գրեաթէ հաստատեալ կայ 'ի վերայ այսր հիման: Իսկ ազգն հրէական, սիրտ մարդկային սերընդոց, մանրապատում մարգարէացաւ զնոյն: Գիտութիւն և իմաստասիրութիւն աւուրցս չկարեն ասել և ոչ բան մի ընդդէմ հնարաւորութեան աստուածային անցիցս: Եւ 'ի վերայ այսոցիկ՝ տես զհամայնատիեզերարարչութիւնն որ 'ի վեր ելանէ առ հայր իւր. 'ի վեր ելանէ՝ քանզի Աստուած ամբառնայ զնա առ ինքն կարգ ըստ կարգէ՝ ամենակարող հաստիչ զօրութեամբ իւրով, և գեղայօրէն նորանոր պարգևօք, որ անհամեմատ առաւելութեամբ անցանեն զանցանեն միշտ զառաջնովք: Հուսկ յետոյ գնէ Հայրն աշխարհի 'ի ծոց արարչութեան՝ իբրև աւարտումն սահմանի զազատն և զմտաւոր արարած, զկարողն սիրելոյ: Արարածս այս՝ զոր օրինակ և այլք ամենայն, միացեալ ընդ Աստուծոյ կեան և ազևորին յԱստուած: Սակայն կայ մնայ և այլ եղանակ գերագոյն միութեան, որ մարթի լինել ընդ արարած և ընդ Աստուած, որ կոչի միութիւն անձնաւորական և մարդեղութիւն. միութիւն՝ որով իմանի միանալ Աստուծոյ ընդ մարդոյ, որպէս հոգի միաւորեալ ընդ մարմնոյ և լի-

նի մի[1]։ Եւ ընդէ՞ր իցէ կարծել եթէ յաճախագութ զեղումն անստեղծ սիրոյն և պաղատանք սիրոյն ըստեղծականի, ազդելոյն առ 'ի յԱստուծոյ՝ ոչ անցանիցեն երբեք ընդ անջրպետն անդնդոցս։

Հարցանեմ առ քեզ երկրորդ անգամ. Հաւատաս յԱստուած ճշմարտապէս։ Տեսանես զնա տածել զաշխարհ հայեցուածովք իւրովք և սիրով, գրգալով ընդ մարդկութիւն որպէս արծուի 'ի բոյն ձագուց իւրոց։ Տեսանես զի կարգեաց զմարդ յաւուր միում 'ի կէտ մի երկրիս, անակնկալ եղանակաւ, որ անցանէ զանցանէ զամենայն սքանչելեօք։ Տեսանես զմեզ զամենեսեան, զաշխարհ և զամենայն մարդ շուրջ պատեալ 'ի սիրոյն և 'ի տեսչութենէ խնամոցն հրաշալեօք և գերաբուն իրօք։ Ապա ուրեմն մինչ ոչ կարես 'ի միտ առնուլ զժամանակն նոր, զնորն ամանակ արարչութեան, յորում հեղու Հայր 'ի վերայ երկրի զհանդերձեալ պարգեւն, որ զարմանաքանչ ևս լինելոց է և 'ի վեր քան զամենայն։ Զիա՞րդ ոչ զխտիցես յուսալ զի ուր ուրեմն գալոց է ժամն զի յետ միանգամ տալոյն զամենայն՝ տացէ և զանձն իւր։ Ցիրաւի զի՞նչ ինչ կարէր տալ նոր և զարմանահրաշ մեզ, և անյագուրդ սրտից մերոց, որում ոչ ինչ է ամենայնն, մեզ՝ որ ծարաւիքս եմք անհնոյն։ Պէտս ունիմք մեք անձին նորա։ Ուրեմն մարմնաւորութիւն անսահմանին 'ի սահմանաւորն, և Աստուծոյ 'ի մարդկութեան, մարթելի էր և ակն ունելի, և գիտեմք զի ամենայն ազգք ակն կալան նմին, զոր օրինակ յուսայ և ակն ունի ամենայն հոգի։ Ապա թէ ոչ՝ պարտ

[1] Յայտնի է յոյժ զի հեռի է այս 'ի կատարեալ նմանութենէ ըստ ամենայն իմաստից. չկամիմ այլ ինչ ասել՝ եթէ ոչ զհանգանակն հաւատոյ բան. «Որպէս հոգի բանաւոր և մարմին՝ մի մարդ է, այսպէս Աստուած և մարդ՝ մի Քրիստոս է»։

է հանդոյն Հրէից ակն ունել տակաւին Մեսիային. և ուղիղ են բանք նոցա, զի՝ եթէ չև ևս է եկեալ Մեսիայն, պարտի գալ։

Այլ տեսանեմք աչօք մերովք 'ի պատմութեան, 'ի մթին և 'ի թախծագին դէպս անցելոյ աշխարհի զկէտ մի որ շողշողէ հանդոյն աստեղ 'ի մէջ ամպոց. Տեսաք զատողն նորա։ Այս է պատմութիւն այնորիկ որոյ անուն կոչի Աստուած և մարդ։ Վկայք անթուելիք՝ որք զճոխութիւն արհամարհեն և զհաճոյս ընդկեանս, ասեն՝ թէ յարուցեալ տեսաք զնա՝ որ յանդիման ամենեցուն մեռաւ։ Շօշափեցաք զնա, ասեն, կերաք և արբաք ընդ նմա յետ յարութեան նորա 'ի գերեզմանէն։ Զանձինս 'ի մահ տան վասն վկայ լինելոյ նմին, և ձգեն զհետ իւրեանց, անյեղյեղուկ հաւանութեամբ մտաց իւրեանց, զհռովմէականն պետութիւն և զբոլոր աշխարհ՝ զծանօթն առ նախնեօք. յորմէ 'ի վեր երեւի միայնն յեղափոխութիւն մեծ և արգասաւոր, որոյ շառաւիղք են, կամ եղիցին այլքն ամենայն։ Նախ քան զՔրիստոս եղծեալ և խաթարեալ էր ամենայն, յետ Քրիստոսի զարգացումն և բարգաւաճանք յամենայնի։ Աստի 'ի վեր բերի բարեկարգութիւն՝ իշխող համօրէն աշխարհի, և որում 'ի ներքոյ կայ արդ երկիրս ամենայն. որ յետ ութ և տասն և աւելի դարուց առոյգ է ամենեւին, և որով արդ հազիւ սկսեալ եմք վարել այժմիկ։ Վարդապետութիւն խաչելոյն Քրիստոսի, խոնարհին և աղքատի, սիրողին և մինչեւ ցմահ նուիրելոյն, չիք երկբայել զի գերահրաշ ճշմարտութիւն է բարոյական առաջի մարդկային սրտի. և առաջի մտաց մարդկան՝ ամենայն գերածայրեալ հանճար ունի իւր առաջնորդ զվարդապետութիւն Քրիստոսի։

Նա մանաւանդ յայտնի է 'ի ժամուս ըստ պատ-

մութեան աշխարհիս զի փրկեսցի աշխարհ՝ եթէ կայցէ մնայցէ 'ի քրիստոնէութեան և կամ եթէ դարձցի վերստին 'ի նոյն, և զի կորիցէ՝ եթէ անհաւատութիւն զաչացու ընկճեսցէ զնա ընդ իւրով իշխանութեամբ։ Եւ զուցէն ինչ ընդ այս երկբայանք[1]։

1 Յօրէ յորմէ հրատարակեցաւ մատեանս մինչև ցարդ անհնարին և հանրաքարոզ ճգամբ յաւելաւ Թիւր վարդապետութիւնն ընդդէմ աստուածութեան Քրիստոսի։ Եւ 'ի Գաղղիա իսկ եմուտ [illegible] [illegible], կամ մանաւանդ այն՝ զոր բազումք 'ի գերմանացւոց [illegible] [illegible] [illegible] անուանակոչեն։ Զվաւթար մատենէն Ռընանայ են բանքս, որոյ ընդդէմ ելին գրութիւնք անթիւ 'ի պատասխանի, զորս արժան է ընթեռնուլ. 'ի սոցուն սակի է համառօտ գիր եպիսկոպոսին Կրընոպլի, որպէս և Նիմայ, մատենիկն Ֆրէփէլ քահանայի, մատեանն Նիկոլայ, և այլքն ըստ ընտրոյ ընթերցանելեաց։ Իսկ գլխահար երկասիրութիւն Մէյնան քահանայի, ցուցանէ պարզապէս դատապարտեալ զ[illegible] [illegible] առաջի գիտութեան՝ յամենայն գերմանական վարժարանս բանականաց։ Եթէ կամիցի ոք ընթեռնուլ և զպատասխանին իմ յորջորջեալ [illegible] և [illegible], որ անցան ելեալ 'ի լոյս՝ օգտեցաւ յայլոց, ընթերցցի նախ զ[illegible] [illegible], ապա զ[illegible] [illegible], և ապա զբովանդակ մատեանն։ Ի միտ առնուցու նախ թէ որչափ իցէ ուսումն և գիտութիւն Ռընանայ, և ապա թէ որչափ գիտուն իցեն և այլ անաստուածք և այժմեան իմաստակք, և ծանիցէ զնոսա բովանդակապէս։ Ուսցի պաշտպանել անձին և այլոց ընդդէմ անհեթեթ մոլորական ճիւաղիս։ Ի միտ առնուցու զի սապատակ մի այդպիսի՝ անզօր և ալանդակ յայտնապէս, յաղթանակ մեծ է վասն ճշմարտութեան։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Գ

Երրորդութիւն.

« Հաւատամ և 'ի սուրբ
« Հոգին »։

Ա

Յասելն զհանգանակն Առաքելոց ուշ եդիր անշուշտ զի կազմի այն յերից մասանց։ Նախ սկիզբն առնու բանիւքս այսոքիւք. Հաւատամ յԱստուած Հայր, երկրորդ՝ Հաւատամ 'ի Յիսուս Քրիստոս յՈրդին միածին, և երրորդ՝ Հաւատամ 'ի սուրբ Հոգին։ Բաժանումն այս համազուգի ընդ հիմնական դաւանութեանս մերոյ, որ զընութենէն Աստուծոյ. զխորհրդոյ ասեմ Երրորդութեան, որոյ հաւատք՝ առաւել քան զամենայն՝ 'ի բանից Քրիստոսի յառաջ գան. «Երթայք ուսուցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։

Ի խօսելս զխորհրդոյս, ոչ ջանահնար եղէց արդարացուցանել առաջի քո զբան և կամ զիր։ Այժմիկ խնլամուտ եմք թէ զոգցես ամենայն ինչ խորհուրդ է վասն մեր. և զիջեալ եմք 'ի խորխտանալոյ ընդ զատողութիւնս մտաց մերոց, քան որչափ ոչ հարիւր ամօք յառաջ։ Զի որպէս բարւոք յոյժ ասացաւ.

«Դատողութիւն մտաց պատրեաց զմարդիկ համօրէն. և զայս յիշելով չվստահիմք ընդ միտս մեր»։ Բազումք եկեալք 'ի զգաստութիւն՝ չկարծեն այլ ևս զանձինս ներկուռ իմաստասէրս առաւել քան զԼէյպնից, որ երկասիրեաց ճառ մի այսպիսի խորագրով. Անհնաւորք Երրորդութեանն հաւատանալ նորոգ և տրամաբանական ընծայութեամբ. և 'ի միտ առնումք զոր ասէրն ինքնին Լէյպնից ճառելով զխորհրդոց Երրորդութեան և Մարդեղութեան. «Թէ չէ պարտ խնդրել ծանօթութիւնս կատարեալս, որ ոչ ունիցին ինչ անլուծանելի. քանզի նոքին իսկ զգալի յատկութիւնք՝ որպիսի են ջերմութիւն, լոյս և համ, չմարթին մեզ ընծայել ծանօթութիւնս այնպիսիս»։

Արդար է զոր ասես. այլ ես խորհր. մեծ տեսանեմ ընդ խորութիւնն անհասանելի և ընդ նախապաշարութիւնս ինչ մտքին, արդարև պատերազմող մնաց։ Այսպիսի իմն թուի ինձ լինել խորհուրդն Երրորդութեան։

Թո՛ղ ինձ 'ի մէջ ածել առ այս գլխաւոր ինչ աշակերտութեան իմոյ։ Գիտես զի 'ի վարժարանի անդ զոն ամք իմն հասակի՝ յորում աշակերտն խուզէ ընծայութիւնս առ 'ի ընդվայր հարկանել զկրօնս։ Հետազօտէի և ես՝ որպէս զայլս, զգինարան ութ և տասներորդի դարուն։ Ոչ մոռացօնք լինին ինձ բնաւ օրն և ժամ, յորում գտի յերկասիրութիւնս Պոփլէրի զպատճառաբանութիւնս զայս. «Մին առնէ երեք, և երեքն՝ մի. աՀաւասիկ քրիստոնէական համարողութիւն. հաւատա՛ այսմ և ունիցիս զկեանս յաւիտենականս»։ Դատաւճիռ թուեցաւ ինձ այս, և հաւատք իմ խոտորեցան 'ի դաւանութենէ Երրորդութեան։

Զգիտէի ես յայնժամ այլ ինչ 'ի համարողութենէ՝ բայց զյաւելումն միայն։

Սակայն ասացեալ է՝ թէ Գիտութիւն զուգնաքեայ խոտորեցուցանէ 'ի կրօնից, իսկ կատարեալն՝ ածէ 'ի նոյն։

Ապա յետ աւուրց հարկ եղև ինձ ուսանել զբազմապատկութիւն։

Արդ բազմապատկութիւնն ցուցանէ մեզ եթէ միութիւնն բազմապատկեալ ինքեամբ՝ տայ միշտ ըզնոյն միութիւն։ Մի բազմապատկեալ միով՝ առնէ մի։ Մի բազմապատկեալ միով և բոլորն դարձեալ բազմապատկեալ միով՝ առնեն ցանգ մի։ Այնպէս զի եթէ 'ի յաւելման՝ միութիւնն առեալ երիցս որպէս մասն՝ տայ ամբողջ իմն, այս ինքն է երեք, 'ի բազմապատկութեան միութիւնն առեալ երիցս որպէս արտադրիչ՝ տայ ամբողջ իմն կամ արդիւնք, որ է մի։ Արդ ընդէ՞ր իցէ համեմատել զխորհուրդն Երրորդութեան ընդ յաւելման և ոչ ընդ բազմապատկութեան։

Ոչ այսու անշուշտ եղեր դու հաւատացեալ։

Արդարև, ոչ. վաղ իսկ ասացեալ էի զհաւատս մեծազօր ցուցակութեամբք։ Հաւատք գայ և գնայ ըստ այնմ զի հոգին կիրառութեամբ բարոյական ազատութեան իւրոյ՝ հեռանայ 'ի լուսոյն և կամ հուպ մատչի առ այն, ըստ ասից Աւետարանին։ Պատճառաբանութիւնք 'ի հաստատութիւն կամ 'ի մերժումն նորին ըստ սովորական օրինի գան յետոյ։ Եթէ դու յամառեալ կաս՝ թէ յաւելուածն խոտորեցուցանէ 'ի հաւատոց, ես ընդդէմ տակաւին թէ բազմապատկութիւն ածէ 'ի հաւատս։

Այդպէս իցէ. այլ ո՞չ ապաքէն հաւատք քո և դաւանութիւն ուսուցանեն քեզ Հայր՝ Աստուած է, Որդին Աստուած է, և Հոգին սուրբ՝ Աստուած է. և քեզ երեքին են մի Աստուած. և այլազգ. քեզ երեքին՝ են մի, և մին երեք։

Քա՛ւ, մի՛ լիցի. անկանիս 'ի խաղ բառից Պաւ-Փլէրի։ Դու դնես 'ի մտի թէ Հայր, Որդի և Հոգի ուրոյն ուրոյն Աստուածք իցեն, ապա յաւելեալ յի-րեարս, ասես՝ անա երեք Աստուածք։ Եւ այսպէս տաս մեզ ասել. Երեք Աստուածք են մի ևեթ Աստուած. և երեք անձինք՝ են մի անձն ևեթ։ Այսանօր հակասու-թիւն գոյ եզերաց և անտեղութիւն չօշափելի։ Պարտ էր տրամախոհութեան՝ առանց այլոց ուսմանց, մեր-ժել զայսոնի վրիպակդ։ Իսկ զոր ասեմքս մեք այս է, թէ՝ Գոն երեք աստուածային անձինք 'ի միութեան անդ աստուածային բնութեան։ Տրամաբանութիւն չգը-տանէ ինչ յայսմիկ արժանի ստգտանաց. պարտի նա միտ եդեալ ասել. Կախեալ կայ այս ընչանակութենէ բառիցս Աստուած և անձն։ Եւ օրինակի աղագաւ, չիցէ՞ ապաքէն ճշմարիտ, զի գոյ բազմաւորութիւն մարդ-կային անձանց 'ի միութեան մարդկեղէն բնութեան։

Այո՛ անտրկբայ. բայց քանի՛ տարօրինակ կշռադա-տութիւն։

Սրբոյն Թովմայի Աքուինացւոյ է բանս, և լու-ծանէ լիովին զարտաքին դժուարութիւն խնդրոյս. «Յորժամ ասեմք զԵրրորդութիւն 'ի միութեան, ա-սէ սուրբն Թովմաս, ոչ մուծանեմք դյոլովութիւն թուական յիսկութիւն միութեան, այլ Թուեմք զան-ձինս՝ որք 'ի միութեան անդ աստուածային բնու-թեան, որպէս Թուիցէ ոք զբազմաւորութիւն անձանց նոյնասեռ բնութեան միճակելոց»։

Այսպէս ուրեմն վարդապետութիւն հաւատոց մերոց ոչ խմանայ զմիութիւն և զԵրրորդութիւն Աս-տուծոյ միով և նոյնաբուն իմաստիւք և ընդ նովիմբ պայմանաւ վերաբերութեան, որ է անտեղի. այլ վարդապետէ զԵրրորդութիւն՝ ըստ վերաբերութեան անձանց, և զմիութիւն՝ ըստ վերաբերութեան բնու-թեան, զոր և տրամաբանութիւն չգիտէ մերժել։

Թող այդպէս իցէ. բայց անբաւնի առնես դու այսու միայն զարտաքին ձև վարդապետութեանդ, և հաստատես իմն, բեկեալ ընդ զանազան պայմանօք վերաբերութեան, զհամագոյակցութիւն միութեան և բազմաւորութեան։

Ընդ այդ չիք երկբայութիւն. և այսպէս հարկ է զի իցէ. և այնպէս իսկ են ամենայն էք և գաղափարք, և 'ի վեր քան զամենայն Աստուած, որ է բուն էու-թիւն և կեանք գերագոյն։

Ըստ չափու որով գիտութիւն վերլուծանէ զէս և զգաղափարս՝ յերևան ածէ առաւել քան զառաւել զզարմանալի համագոյակցութիւնն զանազանութեան 'ի պարզութեան, և զբազմաւորութիւնն 'ի միու-թեան. և գտանի զօգցես միշտ, զի հիմնական զանա-զանութիւնն և բնական բազմաւորութիւնն որ 'ի մը-տաւորական կամ 'ի կենդանական միութեան՝ է արդարև երրորդութիւն։ Պարտ էին հասու լինել միտք, եթէ զգաստք էին և ձեռնհասք բնազանցակա-նին, կամ գէթ համեմատելոյ ինչ ինչ 'ի բազմազան գիտութեանց, զբարբառս զայս անդստին 'ի վաղ ժամանակաց քարոզեալ 'ի Գերմանիա, թէ «Ժամ է արդ զի գաղափարն Երրորդութեան անցցէ յու-սումն գիտութեան»։

Խօսեցաք սակաւ մի յառաջ զուսողական միու-թենէ, որ ինքեամբ բազմապատկեալ՝ յառաջ բերէ ցանգ զմիութիւն։ Եւ որ մտադիր ուշոյ է արժանի՝ այս է, զի միութիւն զատեալ և ոչ ինքեամբ բազմապատ-կեալ, եթէ յաւելիցէ ոք զնշանակութիւն նորա երկրա-չափական, ոչ ընծայէ բնաւ զմարմինն, զհաստատուն ինչ, այլ զգիծն, զիր ինչ վերացեալ։ Եւ ոչ իսկ միու-թիւնն բազմապատկեալ ինքեամբ, այս ինքն է՝ ա-ռեալ երկիցս որպէս արտադրիչ, յառաջ բերէ զմար-մին, այլ զմակերևակն, զիր ինչ վերացեալ։ Սակայն

միութիւնն կալեալ երից իբրև արտադրիչ առաջի առնէ զմարմինն ինքնին, զթանձրացեալն, զիր ինչ իսկական։ Բազմապատկեա զերրակի յառաջածութիւնդ այդ դարձեալ միութեամբ, գործողութիւնս այս յաւելու և ոչ ինչ յերկրաչափական նշանակութեան։ Այնպէս զի միութիւն երից առեալ՝ որպէս արտադրիչ, ոչ աւելի և ոչ նուազ, ընծայէ զմիութիւնն երկրաչափական, իրական և հաստատուն։

Պատճառ այսորիկ է ունելն միջոցին եռակի չափմունս։

Այժ. սակայն վասն էր ունի միջոցն երիս չափմունս։ Ըստ իմում կարծեաց, որպէս ուսուցանէ և աստուածաբանութիւն, քանզի ամենայն ինչ յինքեան բերէ ցոյցս ինչ ամենասուրբ Երրորդութեան։ Ահաւասիկ կնիք Աստուծոյ 'ի վերայ խորին խորհրդոյս զոր Միջոց [1] վերաձայնեմք։

[1] Գաղափարն երկրաչափական կիտի՝ դուն ուրեք ածի զմտաւ. չըհաճին ընդ այն երկրաչափք, և սրտմտին մինչ տեսանեն զի կամիմք մուծանել զընազանցութիւն 'ի մէջ երկրաչափութեան, և կամ փոխադարձաբար։ Այլ կարի յայտ անիրաւին, զի ոչ ոք առնլէ զնոսա յայս աշխատութիւն. բայց և ինքեանք մի՛ արգելուցուն զընազանցագէտս 'ի ձեռնարկէս, յոր կան հունձք մեծ 'ի շահել։ Մտախոհ լեալ է իմ երբեք երբեք եթէ ընդէր վասն երկրաչափական կիտոյն չմարթիցի առել՝ թէ կէտն երկրաչափական՝ պարզ է, սակայն չէ միշտ միայնակ. Թէպէտ և ամենևին պարզ՝ այլ յաճախ բազմապատիկ։ Մի՛ ասասցուք եթէ յորժամ բազում կէտք են 'ի միում, ոչ են կէտք զանազանք, այլ մի ևեթ, յորում ոչ գտանին ինչ ինչ զանազանելիք. մոլորական է այդ։ Կենդրոն բոլորակին՝ կէտ մի է միայն, արդարև պարզ՝ անտարած և անմասն. այլ իսկապէս պարունակէ յինքեան երկու կէտ։ Քանզի բոլորակին եղեալ կոր գիծ ըստ երկրորդ աստիճանի, ունի 'ի բնէ երկուս վառարանս։ Վառարանքս այսոքիկ՝ զգալապէս զանազանին և բաժանին, 'ի Թերագիծ, 'ի զուգորդ և 'ի չափազանցագիծ, որք նմանատիպք են բոլորակին. 'ի բոլորակի այսոքիկ երկոքին կէտք զուգընթանան 'ի կենդրոն, և կրկին են 'ի միում։ Վասն որոյ յորժամ տառական հաշուագիտութեամբ խնդրեմք զտեղի կենդրոնի բոլորակի իբր՝ 'ի յայտ գան կրկին լուծմունք, զանազանեալք յիրերաց ————ելոյն կամ ————ոյն նշանախեցիւք։ Ուրեմն միջակէտն բոլորակին՝ է կէտ կրկնակի։ Ցերկրաչափութեան՝ գոն կէտք

Ընդէ՞ր է դարձեալ զի բնաբանութիւնն՝ տարրալուծելով զճառագայթ արեգական, գտանէ հաւաստեաւ, զի բովանդակի այն յերիս ճառագայթս, զորս կարեմք ունել առանձին առանձին. այսինքն է՝ զճառագայթ մի տարրաբանական զօրութեան, առանց լուսոյ և ջերմութեան. և ճառագայթ մի այլ լուսոյ, առանց ջերմութեան և տարրաբանական ազդեցութեան. և զճառագայթ մի ջերմութեան՝ առանց տարրաբանական ազդեցութեան և լուսոյ։ Այնպէս զի՝ զոր ինչ աստուածաբանութիւն ասէ զԱստուծոյ, զնոյնս բնաբանութիւնն կարէ հաստատել զլուսոյ, Երրորդութիւն զօրութեանց, ամենայնիւ զանազանեալք, 'ի միութեան լուսոյ։ Ընդէ՞ր, ասէ՛, ամենայն զօրութիւնք բնութեան՝ ձգեալ բերին յերիս յայսոսիկ զօրութիւնս, որք իսկապէս ոչ այլ ինչ են՝ բայց եթէ մի։ Ընդէր եօթն երանգք ճառագայթից լուսոյ տարբաղադրեալք հա-

երկպատիկ, եռապատիկ և բազմապատիկ, որք իբրև զմաթեմատիկական կէտս անբաժանելիք են և անտարածք։ Վերլուծութիւնն անհունորդական, այսպէս յորջորջեալ 'ի գտողէն զայն 'ի Լէյպնիցէ, վերլուծանէ զկէտն՝ որ է իր պարզ, 'ի սահմանելույն՝ յանսահմանն թեակոխելով, զոր «Վերլուծութիւն անբաժանելեաց կամ անհունորդականաց», ասէ Լէյպնից։

Արդ վերլուծութիւնն անհունորդական զի՞նչ ասէ զկէտն, զոր՝ եթէ ներեսջիք ինձ, կոչեցից յայսմ վայրի հ————ն կէտ, որ ոչ գծային ինչ կէտ է և ոչ մակարդակային, այլ սկիզբն և կամ անսահմանելի տարր հաստատնոյ, և որ համակշիռ է միջոցին լի եղելոյ։ Անհունորդական վերլուծութիւնն՝ կարէ և պարտի առդնել զհաստատուն կէտն որպէս ունակ երից տարերց, երից ուղղութեանց և երից գծային կիտի՝ յորոց իւրաքանչիւրն իսկոյն 'ի վեր երևի 'ի մին յերից տարածութեանց միջոցի։ Վասն այսորիկ անհունորդական տարազն հաստատուն տարեր, կամ կիտին՝ որ է սկզբնածայր հաստատնոյ, է տարազ իմն որ պարունակէ երիս արտադրիչս. մին՝ այն որ հայի առ բարձրութիւն, միւսն՝ յերկայնութիւն, և այլ միւսն՝ 'ի խորութիւն, և երեք կէտք 'ի միում։ Ահաւասիկ երկրաչափականն կէտ, որ համեմատական է առ բոլոր միջոցն։ Եւ կնիք բանիցս այս է՝ զի եռապատկութիւնս այս ցուցանէ զի միջոցն ունի արդարև երիս չափմունս։ Բայց՝ հարցանեմ դարձեալ 'ի վերջոյ, զի՞նչ է պատճառն զի միջոցն ունի երիս դիրս չափման։

մառօտին յերիս գոյնս, յառաջինն ասեմ՝, յերրորդն և 'ի հինգերորդն, և նոքին յառաջ բերեն զայլ ամենայն երանգս: Վասն էր եօթն խազք երաժշտականք յենուն նոյնպէս յերիս գլխաւորսն ևեթ, 'որք վերբերեալք յառաջինն անդ՝ յօրինեն զաշնակաւորութիւն կատարեալ, և են՝ հանգունատիպ գունոյ՝ առաջինն, երրորդն և հինգերորդն: Վասն էր չարաբանութիւնն վերլուծեալ յԱրիստոտելեայ՝ կազմիցի անվրէպ յերից նախադասութեանց, որք ոչ աւելի ինչ 'ի վեր բերեն քան զմի, միայն թէ պատճառաբանութիւնն իցէ ճշմարիտ: Եւ առ իմէ՛ նախադասութիւնն նոյնպէս յերից եղերաց կազմի, որք յառաջ ածեն զմի ինչ, եթէ նախադասութիւնն ճշմարիտ իցէ: Վասն էր գործարանաւոր կեանք ունին հաւաստեաւ երիս գործողութիւնս իսկականս, որոց 'ի համակրութենէն և 'ի միութենէն յառաջ գայ քաջողջութիւն: Առ ինչ աղէ, հանրական օրէնքս այս միութեան 'ի զանազանութեան, և զանազանութեանն 'ի միութեան բնադրոշմ իցէ ճշմարտին և գեղեցկին՝ 'ի ճառախօսութեան ասեմ և յերաժշտութեան, 'ի թատերգութեան, 'ի ճարտարապետութեան, և 'ի մէջ տոհմային կենաց և 'ի կեանս գործարանաց: Համառօտ ասել. զիարդ և գիւտն այն մեծ յոյժ մարդկեղէնս մտաց, գիտելոյ զճշգրիտ ձև աստեղաբանականն աշխարհի, և զօրէնս նորա, գոնեա պատմաբանօրէն նկատեալ, յառաջ գայ 'ի խորհրդածութենէ աստի Քէփլերի, թէ երկինք և հոլովմունք նորին պարտին բերել հետք ինչ և նշմարանք խորհրդոյ Երրորդութեան, նշմարանք՝ զոր Քէփլէր ջանահնար լինի ցուցանել 'ի փոքրիկ գլուխ մի գրոց, խորագրեալ. Յաղագս ստուերակերպ ճշմարտելոյ զԵրրորդութիւն 'ի շրջանս պարունակի:

Ո՛չ ապաքէն այսպէս իցէ ամենայն զոր ասացի, այնու՝ զի դրոշմեաց Աստուած զկնիք իւր 'ի գործս իւր, և զհրաշակերտս իւր ամենայն՝ նշանակեաց անուամբ իւրով, այսինքն է՝ հետովք ինչ նմանութեան ընդ ինքեան:

Բ

Զարմանալի են նմանութիւնքս, այլ զմիտս դիւրահաւանս միայն կարեն հաւանեցուցանել:

Զորս ածի 'ի մէջ, չև միջամտելս լեալ 'ի հաւատոյս վարդապետութեան, այսոքիկ չեն ամենևին բաւական. սակայն յառաջ քան զխորամուխ լինելս 'ի նոյն, կամիմ՝ առաջի առնել քեզ զնոյն իսկ զվարդապետութիւնն 'ի վաւերական ձև բանի:

Եւ նախ քան զամենայն մանր միտ եդեալ ընթերցցուք զՀանգանակ սրբոյն Աթանասի:

Ահաւասիկ վարդապետութիւն Երրորդութեան դաւանեալն յԵկեղեցւոջ.

«Այս են ուղղափառ հաւատք, պաշտեմք զմի միայն Աստուած յԵրրորդութեան. և զԵրրորդութիւնն՝ 'ի միութեան.

«Առանց շփոթելոյ զանձինս և առանց բաժանելոյ զգոյութիւն:

«Քանզի այլ է անձն Հօր, այլ անձն Որդւոյ, և այլ է անձն սուրբ Հոգւոյն:

«Սակայն Հայր, Որդի և սուրբ Հոգի՝ ունին զմի և զնոյն աստուածութիւն, զմի հաւասար փառս, և զմի յաւիտենական մեծվայելչութիւն:

«Որ ինչ է Հայր, են նոյնպէս Որդին և Հոգին սուրբ։

«Անեղ է Հայր, անեղ է Որդի, անեղ է սուրբ Հոգի։

«Անսահման է Հայր, անսահման է Որդի, անսահման և սուրբ Հոգի։

«Հայր՝ է յաւիտենական, յաւիտենական է Որդի, յաւիտենական և սուրբ Հոգի։

«Եւ սակայն ոչ են երեք յաւիտենականք, այլ մի միայն յաւիտենական։

«Ոչ են երեք անսահմանք, այլ մի ևեթ անսահման։

«Ոչ են երեք անեղք, այլ մի միայն անեղ։

«Ըստ նմին օրինակի ամենակարող է Հայր, ամենակարող է Որդի, ամենակարող է և սուրբ Հոգի։

«Համայն և այնպէս ոչ են երեք ամենակարողք, այլ մի միայն ամենակարող։

«Ըստ նմին օրինակի Հայր՝ Աստուած է, Աստուած է և Որդի, Աստուած է և սուրբ Հոգի։

«Սակայն ոչ են երեք Աստուածք, այլ մի միայն Աստուած։

«Հայր՝ Տէր է, Որդի՝ Տէր է, Տէր է և սուրբ Հոգի։

«Այլ ոչ են երեք Տեարք, այլ մի ևեթ Տէր։

«Զի եթէ ճշմարիտ և ուղիղ հաւատք մեր ստիպեն զմեզ ճանաչել զիւրաքանչիւրն յերից անձանց որպէս Տէր և Աստուած, նոյն ինքն արգելու մեզ նոյնպէս դաւանել երիս Տեարս և երիս Աստուածս։

«Հայր անարար է, անեղ և անծին։

«Որդի՝ 'ի Հօրէ միայն է, անեղ և անստեղծ, այլ ծնեալ։

«Հոգին սուրբ՝ է 'ի Հօրէ և յՈրդւոյ, ոչ եղեալ, ոչ ստեղծեալ, և ոչ ծնեալ, այլ ելեալ յերկոցունց։

«Մի միայն է Հայր, ոչ երեք. մի միայն Որդի, ոչ երեք. մի ևեթ է սուրբ Հոգի, ոչ երեք։

«Եւ յԵրրորդութեան աստ յայսմիկ չիք ամենևին ոչ առաջին և ոչ վերջին, ոչ ընաւ առաւել մեծ կամ առաւել փոքր. են երեք անձինք գլխովին հաւասարք և յաւիտենակիցք։

«Այնպէս զի, որպէս ասացաւ, վերապատուեմք զԵրրորդութիւնն 'ի Միութեան, և զՄիութիւնն յԵրրորդութեան»։

Առաջիկայ տաղս քաջիկ բովանդակէ զվարդապետութիւն Եկեղեցւոյ զդաւանութենէ Երրորդութեան։

Ո՛վ Երրորդութիւն
Միշտ երանական,
Ծածկեալ 'ի լոյս քո.
Դաւանեմք ըզքեզ
Հաւատամք, խոնարհեմք
Ի սէր կաթոգին։
Ո՛վ սուրբ սըրբոց Հայր,
Ո՛վ ծընեալ Որդի,
Աստուած յԱստուծոյ.
Ո՛վ կընիք սիրոյ՝
Զօդ երկուց Հոգի։
Զի զանձն իւր ողջոյն
Տեսանելով Հայր՝
Մըշտընջենակից
Ծընանի Որդի։
Եւ սէրն է Աստուած
Բըղխեալ 'ի նոցուն
Սիրոյ միմեանց։
ՅՈրդին՝ Հայր ողջոյն,
Եւ 'ի Հայր՝ Որդին

կայ միշտ բովանդակ.
Ի՛երկոքումբ Հոգին
Ի Հայր և յՈրդի,
Որ ինչ Հոգին սուրբ՝
Նոյնգունակ Որդին.
Եւ երկաքանչիւրն
Են նոյն միշտ ընդ Հօր:
Մի ճշմարտութիւն
Գերաբուն երրեակ.
Եւ երեքին Մեր
Միակ, գերաբուն:

Այս է ահաւասիկ վարդապետութիւն դաւանութեան մերոյ:

Գ

Ոչինչ աւելի քան զոր յառաջն իմանամ յառացելոցդ:

Սկիզբն արասցուք արդ պարզաբանել զիմաստ բանիս 'ի ձեռն նուիրական նմանութեան, զոր ըստ Ս. Գրոց՝ զոգցես ամենայն Հարք Եկեղեցւոյ, ամենայն աստուածաբանք և յոլովք 'ի քրիստոսակրօն կամ յայլակրօն իմաստասիրաց իսկ ցուցին և կամ բացայայտեցին:

Զհոգւոյս մերմէ են աստանօր բանքս, որ արարաւ 'ի պատկեր Աստուծոյ և 'ի պատկեր սուրբ Երրորդութեան. ճշմարտութիւն՝ զոր Պօսիւէ այսպէս առաջի առնէ. «Հոգի՝ Երրորդութիւն իմն է ստեղծական, զոր արար անստեղծն Երրորդութիւն ըստ պատկերի իւրում»:

Այժ, հոգի մարդկային, քան զոր ոչ այլ ինչ մե-

ծագոյն գիտեմք և նմանատիպ Աստուծոյ, ստեղծեալ 'ի պատկեր նորին իսկ Աստուծոյ, առաջի առնէ մեզ հաւաստեաւ զպատկեր Երրորդութեան:

Բայց գիտեմ եթէ ննջանաւ զաւանին 'ի մխոցեանն մարդկային հոգւոյ յոքնայոլով զանազանութիւնք և խորհուրդք, յառաջածագեալք յերից: Միակային այս ամենային աղօտ ինչ բուն ինձ միշտ և լուս քմաց ասելեբեալ: Զիք իմ տեսեալ ամենեւին ինչ մի ճշգրիտ և հաստատիմն 'ի խնդիրս այս:

Արդ հայեաց և տես առ անգամ մի ես: Զի՞նչ ինչ յաչս քո հարկանի 'ի խորհել անդ զմարդկային հոգւոյ: — Երկու ինչ, միտք և կամք: Իցէ՞ արդեօք բաժանումնս այս ըստ քմաց, եթէ բաժանումն բնական:

Ճշմարիտ է բաժանումնս:

Եթէ այդպէս իցէ, ուրեմն միտք և կամք տեսանին նախ: Այլ զի՞նչ կայցէ արդեօք 'ի ներքոյ և 'ի խորս երկաքանչիւր յայտնութեանցս:

Ի ներքոյ իսկապէս չիք այլ ինչ՝ բայց եթէ հոգին, գործութիւն իմն բաւական 'ի յառաջ ածել և 'ի կրել զգործս մտաց և կամաց:

Այդպէս է ամենևին. ահաւասիկ զտաք զերիս եղիրս, այսինքն է՝ զնոյն ինքն զհոգի, զսկիզբն ամենայնի. ԶՍԿԻԶԲՆ ՃՈԽԱՑԵԱԼ ԾՆՆԴԱԲԵՐ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ, և ապա՝ ԶՄԻՏՍ և ԶԿԱՄՍ, որք ծագին յայնմանէ: Սոյն այս նմանահանգէտ է Հօր՝, որ ելուզանէ զՈրդի և զՀոգի. զՈրդին՝ որ յորջորջի Բան, լոյս և իմաստութիւն. զսուրբ Հոգին՝ որ ասի կամք և սէր: Այս իսկ է ահա, զոր սուրբն Թովմաս անուանէ յԱստուած և 'ի հոգւոջ՝ ՍԿԻԶԲՆ ԲԱՆԻՆ ԵՒ ՍԻՐՈՅ. — ԵՒ ԲԱՆ — ԵՒ ՍԷՐ:

Այս ինչ հաւաստի է արդարև զի հոգիս մեր գոյ և գիտէ զգոլ իւր, և սիրէ զէութիւն իւր և զգի-

տակցութիւն էութեանն. ահա երրեակ դրական աստիճանք կենաց։

Ո՞չ ապաքէն մեկին է այս և պայծառ։ Արդ բաժանումն այս պարզ՝ է ճշդիւ ըստ տեսութեան Հարց Եկեղեցւոյ, սրբոյն Օգոստինոսի ասեմ և սրբոյն Թովմայի Աքուինացւոյ, Լէյպնիցի և Պոսիւէի։ Գերահանճար արքս այսոքիկ առ հասարակ միթէ հետևո՞ղք եղեն միմեանց և յանիմաստ ինչ մոլորեցին։

Միտ դիր սրբոյն Օգոստինոսի. «Պարտ է արարածովք կրթել 'ի խոկումն Արարչին և տեսանել այդրէն զԵրրորդութիւն[1]։

«Ի պատկեր Աստուծոյ ստեղծեալ եմք մեք, քանզի գոմք և ճանաչեմք զգոյն մեր, և զի սիրեմք զգիտակցութիւնս այս և զէութիւն[2]։

«Հոգի, բանականութիւն և սէր[3]...։ Տեսանեմք յայսմիկ ոչ զԵրրորդութիւն՝ որ է Աստուած, այլ զԵրրորդութիւն զպատկեր Աստուծոյ[4]։ Երեքին այսոքիկ ոչ կազմեն երիս կեանս՝ այլ զմի կեանս ևեթ. ոչ են երեք հոգիք, այլ մի ևեթ հոգի, մի էութիւն[5]»։

Լուր և զբանս սրբոյն Թովմայի Աքուինացւոյ. «Զանազանեմք մեք յանեղական Երրորդութեան ըզբանն՝ որ ելանէ, յայնմանէ՝ որ խօսին, և զսէրն՝ որ ելանէ յերկոցունց. այնօրինակ նկատեմք զբանաւոր էակն՝ որ յառաջ բերէ զբան 'ի ձեռն մտաց, և զսէր 'ի ձեռն կամաց։ Ուրեմն պատկեր իմն է այն, և հանգիտացումն տեսական՝ անեղն Երրորդութեան։ Քանզի

1 Սուրբ Օգոստ. Յաղագս Երրորդութեան. ԺԶ. 6։
2 Նոյնն. Յաղագս Քաղաքին Աստուծոյ. Ի. 26։
3 Նոյնն. Յաղագս Երրորդութեան. Թ. 4։
4 Նոյնն. Յաղագս Երրորդութեան. ԺԴ. 11։
5 Նոյնն. Յաղագս Երրորդութեան. ԺԴ. 8։

յայլ արարածս չգտանեմք ոչ զսկիզբն բանին, ոչ զբան և ոչ զսէր[1]»։

Եւ Պոսիւէ ասէ. «Եղականն Երրորդութիւն արարեալ 'ի հոգիս մեր առ 'ի յԱստուծոյ՝ ընծայէ մեզ զԵրրորդութիւն անեղական։ Եմք, իմանամք և կամիմք[2]»։

«Պատկեր Երրորդութեան սքանչելապէս բացայայտէ յարարածն բանական. հանգունատիպ Հօր՝ ունի զէութիւն, նման Որդւոյն՝ ունի զմիտս, և նման սուրբ Հոգւոյն՝ ունի յինքեան զսէր. ըստ նմանութեան Հօր, Որդւոյ և սուրբ Հոգւոյն բերէ նա յէութեան իւրում, յիմացութեան և 'ի սէր իւր զմի և զնոյն երջանկութիւն, և զմի և զնոյն կեանս[3]»։

Լէյպնից. «Քանզի ըստ արժան բաւականին չճանաչեմք մեք զբնութիւն համօրէն՝ չկարեմք հաւաստել թէ չիցէ և չկարիցէ գոլ գոյութիւն ինչ բացարձակ, յորում չբովանդակիցին բազում առընչակիցք...։ Սակայն առ 'ի հեշտընկալ առնել զայսոսիկ ծանօթութիւնս 'ի ձեռն նմանեաց, չգտանեմ յարարածս ինչ մի առաւել յայտարար՝ քան զխորհրդածութիւն մտաց, յորժամ մի և նոյն միտք՝ է ինքն ինքեան բուն առարկայ անմիջական, և գործէ ինքն յինքեան, խոկալով յիւր վերայ, և յոր գործէն։ Քանզի կրկնապատկութիւնս այս տայ զպատկեր և կամ զստուերագիծ երկուց առնչակից գոյացութեանց 'ի միում միայնում բացարձակ գոյացութեան, յայնմ ասեմ՝ որ իմանայ, և յայնմիկ՝ որ է իմացեալ. անձնիւրն յայսոցիկ՝ է գոյաւոր. անձնիւրն իրական, և փոխադարձ վերաբերութեամբ զանազանեալ, բայց կազմող զմի

1 Ս. Թովմ. Աք. Ատարկ. ԼԴ. 4։
2 Պոսիւէ. Զ. Վերելք ընդ սուրբ խորհուրդս։
3 Նոյնն. Է. Վերելք ընդ սուրբ խորհուրդս։

նեթ, և զմի և զնոյն գոյացութիւն գլխովին անձնաւորական: Երկուութիւնս այս՝ իբրև նշմարանք է աստուածային անձնաւորութեանց:

Սուրբ Գիրք Բան կոչելով զՈրդի, այսինքն է՝ Բան մտաւոր, թուին տալ մեզ իմանալ, թէ չիք ինչ առաւել գիպող 'ի պարզել զայսոսիկ՝ քան զնմանութիւն մտաւորական գործողութեանցս: Վասն այսորիկ Հարք ընծայեն զհամս առ սուրբ Հոգին, որպէս ընծայեն Որդւոյ՝ զիմացումն, և Հօր՝ զկարողութիւն. զանազանելով զկարել, զգիտել, և զկամել, և կամ՝ զՀայր, զԲան և զՍէր:

Դ

Համառօտիւք են նմանողութիւնքս այսոքիկ. և եթէ հոգիս մեր է պատկեր Աստուծոյ, յայտ է թէ պարտին զոյ յԱստուած ինչ ինչ համեմատիւք բազմաւոր և միաւոր եակցութեանս այսմիկ: Եւ սակայն քանի մեծ խտիր: Տեսանեմ առաւօտ բաժանումն երրեակ զօրութեանց և կամ կարողութեանց 'ի միութեան մարդկային անձին. և անդ՝ մի Աստուած յերիս անձինս, երեք անձինք 'ի միում պարզ էակի: Այնպէս զի բուն ինձ թէ գաղտնութիւն խորհրդոյն մնայ բովանդակապէս: Ընդ մէջ աստուածային Երրորդութեան՝ զոր ուսուցանեն ուղղափառ հաւատք, և ընդ եռապատկութիւնս այս հոգեկան կայ անչափելի անհուն:

Ասացեր, անհունն կայ անջրպետ 'ի մէջ երկոցուն, և գաղտնիք խորհրդոյն մնայ բովանդակապէս: Զայն զայս և ուսումն աստուածաբանութեան մերոյ վարդապետէ. որչափ և նմանութիւնս բազումս 'ի

մէջ բերիցեմք՝ այլ խորհրդաւորութիւնն մնայ բոլորովին. ճշմարտութիւն իմն է այս անվախճան, և խորք անյատակ լուսոյ: Թող լցցուք մեք լուսով մինչև ցարբենալ դարուց 'ի դարս, և տակաւին կացցեն մնասցեն խորքն և անդունդք բովանդակ:

Սակայն զինչ ջանաշնար լինիմք ցուցանել նմանութիւնս 'ի մէջ ածելով և ընծայութիւնս. զայն միայն՝ թէ չիք ինչ 'ի խորհրդեանս յայսմիկ ընդդիմամարտ մտաց:

Այլ թերևս մարթ իցէ յառաջել ոտնփոխս մի աւելի:

Եւ զինչ. կարծիցես թէ մարթ իցէ քեզ հաւատալ զճշմարիտն լինել խորհրդոյն:

Աստուածաբանք ոմանք, զոր օրինակ Հմուտն Մաստրոֆինի՝ որ հրատարակեաց 'ի Հռովմ ստուար երկասիրութիւն մի զԵրրորդութենէ, և ընծայեաց քաջանդամայպետին Պիոսի Է[Ը], հաստատէ թէ յետ ծանուցելոյ նախադասութեանն որ զխորհրդոյս՝ մարթ է հաւատալ զլինելն նախադասութեան ճշմարիտ: Եւ սովին իմաստիւք ասէր սուրբն Թովմաս Աքուինացի, զի զամ մի ծանուցեալ թէ զոյ Երրորդութիւն, գտանին այնուհետև փաստք բազումք 'ի հաստատութիւն նորին: Բայց ընծայութիւնն և հաւաստիք չէին յայժ զօրաւորք յաչս նորա: Մաստրոֆինի և այլք ոմանք խորհին զի յորժամ վարդապետական նախադասութիւնն ծանուցեալ իցէ, ճշգիւ գտակաւ ցուցանելի է ճշմարտութիւն նորին: Ցուցանի, ասեն, թէ Աստուած՝ է Երրորդութիւն, առանց կարելոյ զհրպեւն ցուցանել, որով խորհուրդն մնայ 'ի նմին պայմանի:

Արդ գրի զնովին 'ի վերայ կացից ցուցակութեանս:

Դոյզն ինչ բնազանցութեան պէտք են աստանօր.

կամիս ուրեմն վայրիկ մի ունկն մատուցանել բընազանցական բանից։

Մատիցուք 'ի փորձ։

Խելամուտ լեր առ այս զի գոյութեանն Աստուծոյ մեծագոյն իմաստասիրական ցուցակութիւնն, — որ մի է 'ի գլխաւոր գործոց մարդկային մտաց, և որ 'ի հրաշալեաց աշխարհի և 'ի գիտակցութենէս մերմէ հաստատէ զգոյութիւն Աստուծոյ, որ ամբառնայ աներկիւղ՝ առանց չարաբանութեան, այլ թռչանօք և գերազանցօրէն՝ 'ի տեսութենէ և 'ի գիտակցութենէ սահմանաւորին 'ի գոյութիւն անսահմանին, — գիտա զի սքանչելի ցուցակութիւնս այս զոր կարեմք յօրջորջել գործ և կամ իսկական յառաջխաղացութիւն տրամախոհական կենաց, չև է տակաւին պտղաբերեալ։ Աւաղ, զի կորուսաք զճառն Լէյպնիցի որ «Յաղագս անհնոյ գիտութեան», յորում անհունորդական հաշիւն՝ էր գլուխ մի բանից։ Արդ ցուցակութիւն գոյութեան Աստուծոյ՝ որ 'ի տեսութենէ և 'ի գիտակցութենէ սահմանաւորին հաստատէ զգոյութիւն անսահմանին, անշուշտ նշանաւոր գլուխ մի էր անսահմանական գիտութեանս այսորիկ մեծի։ Այլ այս ինչ ճշմարիտ է միշտ զի մաթէմատիկական յառաջխաղացութիւն ըստ անհունորդական հաշուի և յառաջխաղացութիւնն իմաստասիրաբար ցուցանելոյ զգոյութիւն Աստուծոյ՝ են մի և նոյն յառաջխաղացութիւնք ընդ կրկին ձևով. յառաջխաղացութիւն՝ որ է պարզապէս մի յերկուց կարևոր նախադասութեանց մարդկեղէն տրամախոհութեան, զոր բանն յամենայնի 'ի կիր արկանէ։

Յառաջխաղացութիւնս այս՝ է բովանդակ հիմն ցուցակութեան Կարդեսիոսի որ յաղագս գոյութեան Աստուծոյ, և բովանդակէ զայլս ամենեսին, որոյ ա-

հաւասիկ բովանդակ խոկութիւնն. Գոմ ես. ուրեմն գոյ էակ իմն կարևոր։ Ես էակ եմ անկատար և սահմանաւոր, որ ցանգ ձկտի և հառաչէ առ մեծագոյն ինչ և լաւագոյն քան զինքն. ուրեմն գոյ էակ մի կատարեալ և անսահման։

Այժ՛, կարեմք և պարտիմք իսկ յիրական անկատարէն և սահմանաւորէն, զոր տեսանեմք և որ գոյ՝ հետևեցուցանել զանսահմանն և զկատարեալն գաղափարական, զոր մտօք ըմբռնեմք։

Եւ զայս այսպէս առնէ միշտ բանն, ամենուրեք, բնականաբար կամ ուսումնաբար, զոր օրինակ և սիրտ, բանաստեղծութիւն և աղօթք, որպէս և երկրաչափութիւն։ Այսպէս առնէ և ողջոյն մարդկային հոգի համայն զօրութեամբ իւրով։

Սակայն քանզի միտք մարդկան տակաւին սակաւ յոյժ զարգացեալ են ցարդ, և զոգցես ոչ ոք՝ որպէս ասէ սուրբն Թովմաս, ճանաչէ զբովանդակ զօրութիւնս բանին, և քանզի, մանաւանդ որպէս յաւուրս մեր, կիսամտանեալ գիտութիւն կրճատեալ է զտրամաբանութիւն, խիթամք 'ի պարզ, արագ և յապահով զատաստանացս, զորս միտք հասարակաց որպէս բնական իմն բերմամբ յառաջ բերեն, և զեւ ոչ ոք համարձակեցաւ վերաբերել առ բնազանցութիւն՝ զամենամեծ և զարգասաւոր յառաջխաղացութիւն բանին։ Ջատանամք 'ի ցուցանելս թէ գոյ Աստուած, և սակաւք ոմանք 'ի խորհողաց զնոյն՝ իմացեալ են զկարևորութիւն և զճշգութիւն ցուցակութեանս։ Կարծեմ թէ 'ի դէպ իցէ վարել զյառաջխաղացութիւնս այս բնազանցական յամենայն մասունս իմաստասիրութեան, և յառաջխաղացութիւնս ածցէ այժ՛ յամենայնի առ Աստուած, առ 'ի ճանաչել զնա առաւել քան զառաւել, և վերադարձցի 'ի ծանօ-

թագուհէն Աստուծոյ՝ յամենայն արարածս, առ 'ի պայծառացուցանել զնոսա լուսով, առ 'ի խորամուխ լինել յայնս և 'ի նոսա գտանել վերստին զԱստուած։ Այսպէս է ստուգիւ արգասիք անհունորդական յառաջխաղացութեան յուսողականին, որ ամբառնայ յամենայն ծանուցեալ սահմանաւորէն առ անսահմանն անդր համապատշաճ. և իջանէ յանսահմանելւոյն 'ի սահմանաւորն ծանուցեալ, առ 'ի թափանցանել մինչև 'ի խորս նորա, և առ 'ի լնուլ զայն լուսով. զոր ուստեմն սահմանաւորին առանձինն չկարէ տալ։

Հաստատել յամենայն ծանուցեալ սահմանաւորէ անտի զգոյութիւն և զստուգութիւն համապատշաճ անսահմանին, անցանել 'ի միոջէ 'ի միւսն՝ 'ի բաց բառնալով զսահմանս, թևածել աներկիւղ մինչև 'ի գաղափարական սահման անդր միտութեանց և յօժարութեանց, այս է աւասիկ գործն բնազանցութեան կամ մակածութեան, որով հոգի և բան մարդկային գործեն կամովին, և զոր յաւուր միում գիտութիւն՝ զերծեալ 'ի կրճատ տրամաբանութեան կապանաց՝ 'ի վար արկցէ ընդ ամենայն տեղիս։ Արդ 'ի վերաբերել մերում առ բովանդակ սահմանաւոր բնութիւն, 'ի մեծագոյն երևոյթս նորին, զյառաջխաղացութիւն բնազանցութեան, ո՞ւր ժամանիցեմք արդեօք։

Գտանեմք նախ 'ի բովանդակ լրութեան բնութեան, ապա յամենայն կենդանական և բնական ամբողջութեան զանբացասելի համագոյութիւն միութեան և բազմաւորութեան։ Բայց ամենուրեք միութիւնն անկատար է, բաղադրեալ և բաժանելի, 'ի բաց առեալ զմիութիւն մարդկային անձին, որ պարզագոյն է քան զամենայն սահմանական էակս։ Սա-

կայն յամենայն սահմանական էս, հանգոյն միութեան՝ անկատար է զանազանութիւնն և բազմաւորութիւն։ Ամենայն բազմաւորութիւն, բովանդակ զանազանութիւն եղական՝ է իւիք միօրինակ, վեր 'ի վերոյ և անցական։ Ի բովանդակ բնութեան՝ ամենայն ինչ 'ի միասին շարժի, ամենայն՝ յեղյեղեալ փոխակերպի և չփոթի։ Չիք ինչ, գոգջիր, իսկապէս զանազանեալ՝ բայց 'ի բազմաւորութենէ մարդկային անձանց։ Զայս իմացեալ՝ ձգեա՛ զգաղափարս զայս միութեան յանհունն անդր, զորոյ մէն մի ամբողջութիւն յաշխարհիս յայսմիկ ընծայեցուցանէ քեզ ըզպատկեր իմն թերակատար, և ունիցիս զգաղափարն բացարձակ պարզութեան, համագոյականին ասեմ և միոյ էակի։

Ձգեա՛ յանհունս զգաղափարն զանազանութեան, զորոյ բազմաւորութիւն էից առաջի առնէ քեզ զպատկեր ինչ, և ունիցիս զկատարեալն զանազանութիւն, զզանազանութիւն յանձնէ յանձն, որ է գերածայրական զանազանութիւն։ Եւ ահա քեզ զանազանութիւնն անսահման, կարևոր և ամենապարզ անձնաւորութեանց։ Հուսկ ուրեմն, համարեա՛ բացարձակ և կատարեալ զհամագոյութիւն միութեան և բազմաւորութեան, համագոյութիւն՝ որ յաչս մեր հարկանի յամենայնի, և ունիցիս զբազմաւորութիւն անձանց 'ի պարզ և համագոյական միութեան։ Եւ ես, որպէս յամենայն ամբողջութիւնս՝ իսկական զանազանութիւնն երրակի է, և ամենայն ուրեք եռապատկութիւնս այս համազուգի միութեան, և մանաւանդ 'ի կարողութիւնս հոգւոյ և 'ի չափմունս միջոցի՝ ուր երրեակ զանազանութիւնս այս չկարէ լինել ըստ քմաց, անմարթ է մեզ չհաստատել զերրորդութիւն անձանց 'ի միու[illegible] բացարձակ միութեան անսահման էակի՝ որ է Աստուած։

Ե

Այսոքիկ ամենայն են չքնաղագիւտք, չքնաղափայլք և բանաւորք իսկ, զի այսպէս ասացից։ Պատճառաբանութիւնք քո ցրեն զկանխակալոյ կարծիս իմ, և դիպող պատասխանիք են ընդդիմադրութեանց Երրորդութեանն վարդապետութեան, և արդարև զօրեղագոյն են յոյժ։ Սակայն այս ամենայն չածեն զիս ՚ի լիովի հաւանութիւն եթէ Աստուած իցէ մի միայն Աստուած յերիս անձինս։

Ու կարի յիրաւունս։ Ընծայութիւնք չտան ունել հաւատս մարդոյ, և գուն ուրեք զստուգութիւն. մանաւանդ նուրբ, մանուածոյ, ուսումնական և բնազանցական ընծայութիւնք։ Զի որպէս ասէ Բասգալ, ցորչափ ոչ յանդիման աչաց նկատեմք իրաւէս յառաջիկայութեան զբովանդակ ընթացս պատճառաբանութեան, երկնչիմք մի՛ գուցէ ոչ ուղիղ պատճառաբանիցեմք։ Զի եթէ փոքրիկ օղն մի չղթայիս այսորիկ իցէ խմաստակական՝ լիցի թիւր համաբոլորն։ Վասն որոյ ճշմարիտ են ամենայն նախաճառեալ պատճառաբանութիւնքս, այլ ոչ ըմբերանիչ։

Այլ ահաւասիկ առաջադրութիւն մի պարզ, որ թուի ինձ յոյժ վճռական, և զոր հաւաստեաւ մեծ համարիմ և յաղթահարիչ։

Լուիցուք, ասէ։

Նախ քան զամենայն՝ Աստուած մի է. ո՛չ ապաքէն միութիւնն Աստուծոյ իցէ աներկբայ։

Անշուշտ է բանդ. միութիւնն Աստուծոյ՝ ճշմարտութիւն է հարկաւոր։

Ու կարի յիրաւունս։ Բայց Աստուած եղով մի ՚ի հարկէ, մա՞րթ ինչ է, եթէ իցէ Նա՝ որպէս ասացաւն, «առանձնակեաց որ աչընկէց՝ կեցով յանսահման ինքնասիրութեան»։ Պարտի ապա գոլ ՚ի միայնութեանս յայսմիկ ընկերութիւն ինչ, որպէս զի ասել սրբոյն Յովհաննու՝ թէ «Աստուած սէր է»։ Յոլովութիւն ՚ի միումն, է թուիչք սիրոյ ձգեալ յանհունս, և համարձակիմ ասել՝ սա այս է գաղափարականն բացարձակ. ապա սա այս է Աստուած։

Անուշիկ բացայայտ են այս բանք քան զառաջինսն։

Այո՛, սրտիւ առաւել քան թէ բանիւ ժամանեմք յաստուածայինս այս խորհուրդ։ Ժամանեմք ՚ի կենդանի հաւատս խորհրդոյս՝ եթէ ունիցիմք ՚ի սրտի զսէրն աստուածեղէն. զի յայնժամ կրեմք ՚ի մեզ զայն։ Ի զգալի աշխարհիս՝ տեսանեմք զհետս այսր խորհրդոյ. յաշխարհին իմանալեաց՝ տեսանեմք պատկեր իմն անկենդան, զոր տրամախոհութիւն մըտաց պարզէ հանդէպ աչաց մերոց մի ըստ միոջէ։ Յաշխարհն սիրոյ՝ կրեմք զայն ՚ի մեզ։ Ու աստանօր գտանեմք մեզ առաջնորդ զնոյն ինքն զՔրիստոս։

Ահաւասիկ զոր ասէ Քրիստոս զերից աստուածային անձանց և զբնակութենէ նոցա ՚ի մեզ։ Միտ դիք ուշիւ, զի մէն մի բանք՝ վառարան իմն են լուսոյ, և բովանդակ բանք չքնաղ ասացուածոյս՝ մի ինչ են ըստ իմիք, քանզի ամփոփեն ամենեքեան զմի և զնոյն իմաստ։

«Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք. և ես աղաչեցից զՀԱՅՐ, և ԱՅԼ ՄԽԻԹԱՐԻՉ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ՚ի յաւիտեան։

«ԶՀՈԳԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի։

« Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ։

« Փոքր մեւս ես, և աշխարհս ոչ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք։

« Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ԵՍ Ի ՀՕՐ ԻՄՈՒՄ, և դուք յիս, և ես 'ի ձեզ։

« Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի ՀՕՐԷ իմմէ. և ԵՍ սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս։

« Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին. Տէր, զի՞ եղև՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և ՀԱՅՐ ԻՄ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք։

« Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ ՀՕՐՆ՝ որ առաքեացն զիս։

« Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզս եմ։

« Իսկ մխիթարիչն ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ՝ ԶՈՐ ԱՌԱՔԵՍՑԷ ՀԱՅՐ ՅԱՆՈՒՆ ԻՄ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ ձեզ զամենայն որ ինչ ասացի ձեզ[1] »։

Ո՞վ գեղեցիկ բանիցս։

Զկարեմք ըստ բաւականին խորամուխ լինել յանգուգական բանքս. չիք մեր ըստ պատշաճ բաւականի լոյս մտաց, չունիմք ըստ արժանւոյն սէր 'ի սիրտս մեր, առ 'ի նկատել զոր տեսանեն պայծառագոյն և սիրավառեալ հոգիք։

Աստուածային վարդապետն 'ի խօսելն իւրում աստանօր՝ ոչ դրոշմել ջանայ 'ի միտս զձև բանի, այլ

1 Յովհ. ԺԴ. 15։

պատմէ զկեանս ամենասուրբ Երրորդութեան 'ի հոգիս և 'ի մէջ նոցուն։

Տեսանեմս զհաւասարութիւնս զայս, զընկերակցութիւնս զայս և զմիաբանական կեանս զայս Հօր, Որդւոյ և Հոգւոյ, և զկենդանի և զյաւերժական պարբերութիւն 'ի միոյն առ միւսն. են և կեան միաբանաբար. աղաչին, բարեբանին, լսելի լինին, ներշնչին, առաքին[1] և ընդունին միաբանաբար զհպատակութիւն. յայտնին միմեամբք, 'ի միասին կամին, 'ի միասին ասեն զմի և զնոյն բան, և սիրեն միաբանաբար։ Ի միասին տեսանին որոց սիրենն, և անտեսանելիք են ոչ սիրողաց։

Բնակակից են 'ի միասին յայնոսիկ որք սիրեն զմի յիրեանց, և 'ի սիրողս ևեթ հանգչին։

Յորժամ սիրեմք զԲանն մարմնացեալ՝ ընդելանիմք. և իբրև ընդելանիմք՝ Հայր սիրէ զմեզ, Որդին յայտնէ զՀայր, և յայտնէ զանձն իսկ իւր. Բանն աղաչէ զՀայր. Հայր առաքէ զՀոգին յանուն Որդւոյ, և Հոգին կենդանացուցանէ և արդասաւորէ 'ի մեզ զամենայն բանս Որդւոյ, որք են միանգամայն բանք Հօր։

Յայնժամ կեամք, և կեալս՝ ճանաչեմք զայն որ կեայն, այսինքն է զԱստուած 'ի յաւիտենական միաբանութեան. ճանաչեմք, վասն զի կրեմք զնա յանձինս մեր։ Այս է կեալն. և կեալն՝ է լինել որպէս զԱստուած և ընդ Աստուծոյ, որ է կեանք՝ բազմաւորութիւն 'ի միոջ։

Եթէ ոք սիրէ զիս, ասէ Յիսուս, (դառնամ վերըստին 'ի բնագիրն առ 'ի բարւոք խորհել 'ի նոյն), ես աղաչեցից զՀայր, և Հայր իմ այլ մխիթարիչ առա-

1 Յայտնի է թէ անմարթ է ասել զՀօրէ առաքիլ, որպէս և սուրբն Թովմաս Ակուինացի խորհրդածէ։

քեսցէ յանուն իմ, զսուրբ Հոգի։ Հայր իմ լիցի 'ի նոսա, որք սիրեն զիս. ես աղաչեցից, և սուրբ Հոգին բնակեսցէ, այլ ոչ 'ի նոսա՝ որք ոչն սիրեն։ Ես 'ի Հայր, և Հայր յիս է։ Հոգին սուրբ եկաւորի 'ի Հօրէ՝ առաքեալ առ 'ի նմանէ, և յինէն՝ զի յանուն իմ գայ ըստ աղաչանաց իմոց։ Ի միասին բնակեմք 'ի հոգւոջ որ սիրէ, 'ի հոգւոջ որ կեայ։ Հոգին սուրբ յիշեցուցանէ զբանս իմ, որպէս ես տամ զբանս Հօր։ Հայր իմ առաքէ զիս. ես և Հայր իմ առաքեմք զսուրբ Հոգին։ Ի Հօրէ իմմէ ելանեմք ես և Հոգին. Հայր իմ առաքէ զմեզ առ նոսա՝ որք սիրենն, և է անդ ընդ մեզ. ես յայտնեմ զանձն իմ նոցա, և յայտնելովս զիս՝ յայտնեմ զՀայր, և Հոգին սուրբ նորոգէ 'ի սիրտս զյայտնութիւնս զայս։

Արդ միտ դիր այսմիկ. Քրիստոս 'ի խօսելն իւրում առ մարդիկ՝ ասէ. Դուք յիս էք, և ես 'ի ձեզ. Համեմատէ զանձն իւր որպէս մարդ ընդ այլ մարդկան, և ցուցանէ հաւասարութիւն ինչ 'ի համեմատութեանս յայսմիկ մի լինելութեան։ Այլուր, ասէ, 'ի խօսելն զմարդկանէ առ Հայր. «Զի իցեն մի, Հայր իմ, որպէս և մեք մի եմք»։

Վերջին բանքս այսորիկ բացայայտ նմանութիւն են՝ ելեալ 'ի բերանոյ նորին իսկ Յիսուսի Քրիստոսի։ Համեմատէ Քրիստոս զմիութիւն հոգւոյ բազմաց ընդ միութեան անձանց ամենասուրբ Երրորդութեան։ Նմանեցուցանէ զընկերակցութիւն սրտից՝ յաւիտենից և համագոյական ընկերակցութեան։

Սա այս է գլխովին սիրտն Քրիստոնէութեան. «Հայր իմ, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք»։

Այսպէս ուրեմն, հաւատա աներկմիտ, զի եթէ սիրէաք մեք, եթէ ընթանայաք 'ի կէտ անդր իմանալի

ընկերակցութեան՝ սիրոյ ասեմ և միութեան, եթէ սիրէաք զԱստուած և զեղբարս մեր, հաւատայաք Երրորդութեան, հաւատայաք 'ի բազմաւորութիւն անձանց և սրտից 'ի միութեան, բարձեալ բերելով 'ի մեզ զկրկին պատկերս և զիսկութիւն խորհրդոյս։

Եւ նախ զիսկութիւն. քանզի Աստուած՝ Հայր, Որդի և սուրբ Հոգի լինէին 'ի մեզ. և ապա կրկին պատկերքն, յորոց մին՝ առանձնակ իմն է միշտ և անարգասաւոր, և զորմէ չասաց ինչ բնաւ Քրիստոս. որ և մեք իսկ եմք, բան մեր և կամք։ Իսկ միւսն՝ կենդանի է, բազմաւոր և աշխոյժ, զորմէ խօսի Քրիստոս. և է ընկերակցութիւնն և բազմաւորութիւն հոգւոց, առ որս հոգիս մեր հոլաւորի սիրով և հաղորդութեամբ։

Ա՛ռ իմէ՞ իցէ անգիտանալ տակաւին թէ հոգիք մերձաւորին, ազգին, զգան և թափ անցանեն 'ի ծագաց աշխարհի մինչ 'ի ծագս, զոր օրինակ ասէ Ֆենելոն. և զի մեծագոյն և նախկին բանք Առաքելոյն, թէ (հաւատացելոց) «էր սիրտ և անձն մի», ճշմարտութիւն է երկնային և պաշտելի, հանգոյն վերջին ուխտական բանից Քրիստոսի. «Զի իցեն մի, որպէս և մեք մի եմք»։ — Բա՛րէ, սուղեալքս 'ի խաւարի և յարգելան անձնասիրութեան՝ տառապիմք առանձնակք. չտեսանեմք, չիմանամք և չզգամք ինչ բնաւ յայլոց սրտից։ Միայնակք կամք, և սակայն գերիք։ Անապատացեալք՝ և չունիմք իսկ զազատութիւն անապատի։ Գերի եմք. քանզի միտք այլոց և կամք չկարեն խորամուխ լինել յիմս, և չկարելս ես իմ թափ անցանել յայլոց միտս, կաշկանդեն զիս ըստ ամենայնի, իբր անհամար կապանօք և անխզելի շղթայիւք, մինչեւ ես ոչ այլ ինչ եմ վասն այլոց՝ ամենայն կամօքս և խորհրդովս իմով, բայց կրճիմն՝ կա-

պանք և հակառակութիւն։ Գերի եմք մեք, և սակայն կամք միայնակք։ Միայնակ եմ ես, թէպէտ կապեալ 'ի շղթայս հակառակութեան և ընդդիմութեան այլոց ուրուք. քանզի միայն զօրութիւն խիստ զգամ յեզերայրն իմ և մարմին անթափանց, ընդ որ 'ի ներքս չէ ինձ հնար տեսանել զնա, և ոչ իսկ կարեմ տեսանել 'ի նմանէ։

Եւ այսպէս առանձնութեամբ, միտ գիր, զոգցես չքաւորին անձնաւորութիւնքս մեր։ Եւ քանզի ոչ եմք մեք մի, հազիւ իմն զամք։ Իւրաքանչիւր ոք 'ի մէնջ զուգնաքեայ ինչ է, առ 'ի չլինելոյ մեր 'ի միասին։ Սակաւք ոմանք են անձինք մարդկայինք։ Գտանեմք 'ի վերայ երկրի արս ունայնացեալս ամենեին և 'ի սպառ ոչինչ եղեալս առ քակտելոյն 'ի միմեանց։ Սակաւաթիւ են մարդիկ, զի վայրավատին է մարդկութիւն։ Որպէս զի առաւել յոքնախումբ լինել էր մարդկան, և մեզ յոյժ բազմաթիւ, եթէ ձեռնհաս էաք լինել մի։

Միութիւնն ուրեմն, միութիւն ասեմ յաղագս ոգիս, յառաջ բերէ զթիւ համարոյ, և թիւն յառաջ ածէ զմիութիւն։

Հոգիք՝ պարզ են, և են կէտք աշխարհին իմանալեաց, և զգալիս իսկ երկրաչափութիւն ինքնին քաջ գիտէ՝ զի 'ի յոքնաթիւ յոյժ կիտից մարթի կազմել զմի կէտ։

Եւ արդ զայս ազգ միութեան՝ որ ոչ է առանձնութիւն, զայս ազգ յոլովութեան՝ որ չէ բաժանումն, սուրբն Թովմաս Աքուինացի վերաձայնէ միութիւն և բազմութիւն բնազանցական. և ըստ Պոսիւէի՝ «Միութիւն և յոլովութիւն չեն այնպէս ներհակայինք՝ որպէս մեքս կարծեմք»։ Եւ այս իսկ է որ տայ ուրոյն Հիլարիոսի պիկտաւացւոյ ասել. «Աստուած մեր չէ միայնակ՝ թէպէտ և մի իցէ»։

Ջրհեղ խմն է այս, և կամնի հաւատալ։

Կամիս չափել գործնական առ 'ի ժաման լինել 'ի հաւատս ամենասուրբ Երրորդութեան։

Այո՛։

Բարի է բանդ. արա ուրեմն որպէս ասեն Գիրք սուրբք. ՔԱՋԱԼԵՐԵԱՑ, ԼԵՐ ԱՅՐ ԶՕՐՈՒԹԵԱՆ։ Զօրացիր, իշխեա անձին քում, արա զբարին զոր ճանաչեսդ, լեր անվեհեր, գործօն, ժուժկալ և զգաստ։ «Ուսիր գործել և կրել արութեամբ», որպէս ասէին Հռովմայեցիք։ Յայնժամ կեցցէ անձն քո որ չգոյր՝ եթէ օրէն իցէ ասել. կեցցէ նա, և 'ի նմա կեցցեն պատկեր և արգասիք Հօր։ Կեցցէ անձն քո, քանզի լիցին 'ի նմա գործք կենդանիք և արարուածք ազատք։ Ձիգն քո և փոյթ՝ եռուն հոգւոյ քում տարագ իմն անձնաւոր էութեան, յորմէ թափուր էր կանխաւ։ Ջանիւ և արութեամբ լինիցիս մարդ. և այս է զոր կամի Աստուած։ Կամի զի մարդս ինքնին իւրովի իցէ իւիք որպէս զԱստուած։

Եւ իբրև կեցցէ անձն քո՝ տեսանիցես անդէն զծագումն մեծի լուսոյն 'ի քեզ, որով խաւար թափեցին քեզ կեանք քո անցեալ։ «Լոյսն իմաստութեան ոչ ծագեցաւ 'ի նոսա». ասեն սուրբ Գիրք, խօսելով զարանց անօրինաց։ Եւ ահաւասիկ ծագեսցէ արեգակն 'ի վերայ քո։

Եւ լոյս այս ոչ իցէ փայլիւն անիծապարտ, զորմէ ասէ Պօղոս՝ «Վա՜յ գիտութեան՝ որ ամուլ է և ոչ բերէ 'ի սիրել, և մատնտու լինի անձին»։ Լոյս քո՝ կենդանաւէտ եղիցի։ Ի զօրութենէ և 'ի լուսոյ քումմէ եղցէ զօրէն Հոգւոյն Աստուծոյ հուրն սուրբ, սէրն Աստուծոյ և եղբարց քոց։ Խելամուտ լինիցիս կենաց, վաստակոց և մահուն Քրիստոսի, և ընկալցիս զհոգի նորա յանձին քում, փոխակերպեալ 'ի պատկեր Աստուծոյ։

Ոչ ես լիցիս միայնակ 'ի սէր այսպիսի, այլ մըտցես 'ի սուրբ հաղորդութիւն ուղղափառ Եկեղեցւոյ, 'ի համագումար ժողովն Աստուծոյ և յընկերակցութիւն հոգւոց՝ որք միաձոյլ են 'ի սէր և 'ի հաղորդակցութիւն: Ոչ ես եղիցիս վայրավատին, այլ միացեալ ընդ եղբարս քո, և մի ընդ յոլովից, որպէս մի են անձինքն աստուածայինք:

Եւ յորժամ ոչ ես եղիցիս անձն մի միակ՝ այլ բազմաւոր, կարծիցես թէ Աստուած ինքնին ոչ բնակեսցէ 'ի քեզ: « Ամէն ասեմ ձեզ, ասէ Յիսուս Քրիստոս, յորժամ երկու կամ երեք 'ի ձէնջ իցեն ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա »: Այո, Աստուած ինքնին բնակեսցէ 'ի քեզ, և անձն քո բարձեալ բերիցէ զնա հանգոյն հրավառ հայելեաց, որք յարեգակն կոյս շրջեալք՝ դրոշմեն յինքեանս զիսկական պատկեր աստեղն որ կենդանի առնէ զաշխարհ:

Այսօրինակ ուրեմն կրեմք 'ի մեզ երկուս պատկերս, և զբուն խոկութիւն յաւիտենական խորհրդոյն՝ որում հաւատամքս:

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Դ

Փրկագործութիւն.

> *« Ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով: Որով էառ մարմին, հոգի, միտք, և զամենայն որ ինչ է 'ի մարդ. Ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս՝ նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, 'ի դատել զկենդանիս և զմեռեալս »:*

Ա

Զամենայն զոր ինձն ասացեր 'ի միտ առի. հաստատեմ հաստատուն միտօք 'ի Հայրն ամենակալ և յամենարարն, յարարիչն աշխարհիս և մարդկան: Յաւելից ես ասել թէ իմացայ զոր ինչ պարտ է խորհել զմարմնաւորութենէ Բանին: Հաւատամ զի կարող է Աստուած մինչև առ ինքն ամբառնալ զարարած իւր, և անսահման բարութեամբ իւրով միաւորիլ ընդ նմա հրաշափառ միութեամբ: Ընդունիմ զի միութիւն այս է անձնաւոր, բնութենական, և կոչի Մարդեղութիւն. Եւ հնարաւոր է ըստ այնմ զոր ուղղափառ աստուածաբանութիւն ուսուցանէ: Զայն զայս ասեմ և զԵրրորդութենէ, որոյ 'ի հաստատութիւն 'ի մէջ ածեալ ընծայութիւնք՝ հզօրագոյնք են քան

զառարկութիւնս։ Համայն և այսպէս չունիմ հաւատս, չեն յիս բնաւ հաւատք։ Աղէ եկ 'ի հանդէս, առնուլ զփորձ իրիս, եթէ կամք իցեն քո, 'ի վերայ հարիւրոց և կամ բիւրուց արանց, որք չունին հաւատս. քանզի արդեօք 'ի նոցանէ այսու վարդապետութեամբ 'ի հաւատս ածիցես։

Արդարև յոյժ սակաւս։

Եւ ընդէ՞ր իցէ այս, եթէ 'ի հոգւոց անկանիցի է բնու-թեանն առ ճշմարտութիւն, և զոր առնոյ իցեն ճըշմարիտ։

Գիտեմ զի Տերտուղիանոս ասէր, թէ «Հոգին քրիստոնեայ է 'ի բնէ», այլ Յիսուս Քրիստոս ասաց ևս, թէ «Որ գչար գործէ՝ ատեայ զլոյս». և Պօսիւէի է քարոզ մի մակագրեալ, «Յաղագս ատելոյ մարդկան զճշմարտութիւն»։ Տեսանեմս թէ քանի խոչ և խութք ընդ առաջ ելանեն քրիստոնէակրօն ճշմարտութեան, թէպէտ 'ի բնէ քրիստոնեայ իցէ հոգի, այսինքն է՝ դիմող ուղղակի առ քրիստոսական կրօնս, յետ միանգամ 'ի ճանապարհս ճշմարտութեան մտանելոյ։

Հաւատք Յիսուսի Քրիստոսի ծնանին 'ի հոգիս, որպէս Քրիստոս ծնաւ յաշխարհի։ Յղացաւ Հոգւով սրբով, ծնաւ 'ի Մարիամայ կուսէն։ Այսպէս և ճըշմարիտ լոյս՝ հաւատք կենդանի, Բանն Աստուած ասեմ զոր ժառանգեմք, ոչ այլով իւիք յղանայ 'ի սիրտ սուրբ, բայց գործակցութեամբ Հոգւոյն սրբոյ. «Երանի որ սուրբ են սրտիւք, ասէ յԱւետարանին, զի նոքա զԱստուած տեսցեն»։

Գիտակ եմ այդ, և աներկբայ իսկ է զի ոճիրք՝ ախտք և ամենայն վատթարութիւնք, մեծամեծ օժանդակք են անհաւատութեան և արգելիչք կրօնից։ Այլ ընդէ՞ր իցէ զի և սիրտք անաղարտք և անպարսաւք, և միտք անձկակա-

րօտք լուսոյ՝ տակաւին վարանեալ երկմտին զքրիստոնէական կրօնից, և կամ ընդդէմ իսկ եղանեն նմին։

Քաջ 'ի միտ առ զոր ասեմս. ես ասեմ թէ ամենայն սիրտ մաքուր և անարատ՝ է քրիստոնեայ. չէք բացառութիւն ինչ հնարաւոր յիրիս յայսմիկ և ոչ մի։ Սակայն յաւելում ասել զի և այնոքիկ զորս անաստուածս կոչեմք, և որք թերևս զանձինս իսկ այնպիսիս համարին, ունին դէթ մեղս ինչ։

Եւ զո՞ր։

Զայն՝ զոր մեքս կոչեմք մեղք սկզբնական. և զոր ամենայն մարդ կրէ յինքեան զմեղս զայս, և կամ զհետս նորա։

Անիմանալի է այս, և ժտիմ իսկ ասել՝ պատերազմող մտաց։ Որ ինչ զարդ ասացեր՝ մարթին լինել, և յօժարիմ իսկ 'ի նոյն. այլ առաջիկայս՝ մեծ գայթակղութեան է։ Հաւատարիմ իմն առնիցես զանիրաւութիւն առ յԱստուծոյ. կամիս զի ընկալայց զայս վարդապետութիւն, թէ մարդ՝ չար ծնանիցի, յորմէ բացէ 'ի բաց զարշիմ մերժիմ 'ի բովանդակ զօրութենէ սրտիս։

Մի, եղբայր իմ, մի՛ զդատաստանդ փութայեր մինչև լուեալ։ Միթէ և իմ չիցէ՞ սիրտ քոյուդ համգիտակ. և ամենայն քրիստոնեայք, որ իբրև զհրեշտակս կացին յերկրի, ո՞չ ապաքէն վրէժխնդիրք էին իբրև զքեզ արդարութեանն Աստուծոյ և պայմանին եղբարց իւրեանց։

Արդ կա՛լ 'ի մտի նախ քան զամենայն, զի սկզբնական մեղք հաւատոյ են և վարդապետութիւն Եկեղեցւոյ։

Միթէ կեղակարծ ինչ իցէ զի ամենեքեան անձնասէրք ծնանիմք. զայս դու իսկ յինքնին իբրև զիս քաջ տեսանես, որպէս և այր այր իւրաքանչիւր։

Հաւատարիմ է բանդ։

Արդ անձնասիրութիւնս՝ յորում ծնանիմք, յօժարութիւնս ասեմ առ չարն, առ անիրաւութիւն, ունի զիւր պատճառս. և զայս պատճառ կոչեմք մեք մեղք սկզբնական[1]:

Պարզեսցուք ապա զիմաստ բանիս, և ծանուսցուք զպատճառն. և ահա նախ կայ առաջի մեր ինչ մի, անձնասիրութիւնն ասեմ որով ծնանիմք:

Կայ մնայ արդ միաբանել զգործն ընդ արդարութեան Աստուծոյ. և անշուշտ լեր զի յաջողեսցուք յայսմիկ, քանզի գործն առաջի աչաց մերոց կայ, և արդարութիւնն Աստուծոյ՝ կանխաւ քաջ ցուցաւ. հետ գայ ուրեմն եթէ գոյ միաբանութիւն յայսոսիկ, թէպէտ և ոք ոչ տեսանիցէ:

Յապուշ զմիտս իմ կրթեա. թող ինձ խորամուխ լինել 'ի սոյն: Ասեմ ուրեմն թէ մեղքն սկզբնական 'ի հետս իւր և կամ 'ի զգալի արդիւնս իցէ անձնասիրութիւն որով ծնանիմք:

Այո՛. և զայս ինքնին Բասքալ կարի քաջ բացայայտէ յասելն. «Անիրաւ ծնանիմք. զի այր իւրաքանչիւր առ անձն իւր ձգտի: Ընդդէմ է այս՝ ամենայն կարգի. պարտ է առ հանրականն բերիլ. և յօժարութիւն առ անձն՝ է սկիզբն ամենայն անկարգու-

[1] Սուրբն Թովմաս յԱռաջարկութիւնս իւր 'ի վերայ սկզբնական մեղաց (1, 2, 81, 82, 83, 84) հաստատէ ըստ սուրբ Գրոց, եթէ «արմատ ամենայն չարեաց՝ է ցանկութիւն, և ամբարշտութիւն՝ է սկիզբն ամենայն մեղաց»: Ապա հաստատէ թէ այսոքիկ կրկին արմատք յանձնասիրութիւն յանգին: Իսկ վասն սկզբնական մեղաց ասէ, թէ անկարգ սէրն այն անձին կամ անսանձ ցանկութիւնն որ 'ի մեզ է, և որ զօրինօք բանի անցանէ, է ընդդէմ բնութեան մարդոյ, և ահա այս է ցանկութիւնն զոր սկզբնական մեղք արկեալ են 'ի մեզ: Ուրեմն ցանկութիւնն է հետեւութիւն կամ արդիւնք սկզբնական մեղաց: Ըստ դպրոցական բանից՝ ցանկութիւնն այնպէս համեմատի ընդ սկզբնական մեղաց՝ որպէս նիւթն ընդ տեսակին:

թեան և 'ի պատերազմի, և յօրէնս քաղաքականս և 'ի տնտեսութեան:

«Որ ոք ոչ ատիցէ յինքեան զանձնասիրութիւնն զայն և զբնական բերումն, որ նախամեծար զանձն քան զայլս ջանայ առնել, է զաչացու յոյժ. զի չիք ինչ քան զայն ընդդէմ արդարութեան և ճշմարտութեան: Սուտ է թէ արժանի իցեմք գեր 'ի վերոյ լինել ամենեցուն, և անիրաւ է և անհնարին ժամանել յայն, քանզի ամենեքեան զնոյն խնդրեն: Ուրեմն քաջայայտ է զի յանիրաւութեան եմք ծնեալք, յորմէ ոչ կարեմք մեզէն զերծ լինել. և սակայն պարտ է զի զերծցուք:

«Եւ արդ չիք և ոչ մի կրօնք բաց 'ի քրիստոսական կրօնից, որ վարդապետեալ իցէ մեզ լինել այսմիկ, և թէ 'ի նմին ծնեալ իցեմք, և զի հարկ իցէ մեզ ընդդէմ կալ սմին. և ոչ իսկ ընդ միտ ածեալ տալ մեզ դեղ դարմանոյն»:

Ապա ուրեմն վարդապետութիւն սկզբնական մեղաց չէ վէմ գայթակղութեան՝ որոց կամք իցեն ըզքրիստոսական կրօնս ընդգրկել. և այս արդարև անընդդիմամարտ հաւաստիք են ճշմարտութեան կրօնիցս:

Ստոյգ է և ճշմարիտ զի ամենեքեան այպանելի իմն անձնասիրութեամբ ծնանիմք և անհեթեթ ամբարշտութեամբ: Ծնանիմք անկակից անօրէնութեամբ, որ է պատճառ ամենայն չարեաց մերոց. Քրիստոսական հաւատք եւեթ մատնանիշ առնեն զչարն և զուպարայաղթ լինին ընդ նմին:

Զեր իմ բանս խորհեալ զբնածին անձնասիրութենէ. ճշմարիտ է զոր ասեմ. ծնանիմք ամենեքին առ հասարակ միտեալք առ անձինս մեր, և ընդդիմադարձք առ Աստուած և առ եղբարս:

Խելամուտ լիցուք ուրեմն զի ծնանիմք 'ի պայմանի, յորում՝ ըստ բանից սրբոյն Օգոստինոսի՝ այնչափ սիրեմք մեք զմեզ՝ մինչև արհամարհել զԱստուած և զամենայն իսկ գլխովին։ Առ այս ահա ձկտիմք։ Կամք մեր ծնանին 'ի նմանակերպ պայմանի աչացս, որ բնաւորապէս տեսանեն զաշխարհըս, զկամարս երկնից և զեզերս ծովուց, իմա՝ զերկինս և զերկիր՝ 'ի ձև բոլորշի, որոյ կենդրոն է ակն մեր։ Այսպէս և միտք մեր յիրաւի տեսանել տեսանեն զաշխարհս կարգեալ 'ի ձև բոլորշի շուրջ զմեօք, և կամք մեր կամին զի իցեն այնպէս յերիւրեալք։ Վասն իւրաքանչիւր ուրուք 'ի մէնջ անձն իւր՝ է կենդրոն աշխարհի։ Աշխարհ՝ ես ինքնին իսկ եմ. աւադիկ զանխուլն մտածութիւն ամենայն մարդոյ։ Եւ բազում այն է զի սիրել կարծողաց՝ չէք այլ ինչ սէր՝ բայց անձնասիրութիւն երկուց որ ասէ. Աշխարհ մեք իսկ եմք ինքնին, երկոքեանս մեք։

Այս է վիճակ մարդկեղէն սրտի. 'ի բնածին անձնասիրութեան կամք մեք արդ. և այս է այժմեան պայման կամաց մերոց։ Իսկ բան մտաց՝ որ արագ առ արագ ուղղէ զբնական ցնորս ազդելեաց, և խելամուտ առնէ զմեզ զի չէ ակն կենդրոն համադոյից, բանն ասեմ, նաև յիմաստասիրական հետազօտութիւնս իւր, բազում անգամ ընդ քարշ անեալ ձգի առ օտարոտի խոտորութիւնս արտաքոյ կենդրոնի, յանձնասիրական ցնորից սրտի։ Ո՞ րք ոչ գիտիցէ զի համայնաստուածութիւն, կարի յոյժ ընդել իմաստասիրական դարուց, բովանդակէ յինքեան զխորին անձնասիրութիւն, որ ասէ, բամ՝ Աշխարհ ես իսկ եմ ինքնին։ Իցէ՞ ոք անգիտակ զի մին 'ի գերմանական վերջին դրութեանց, յոր ազդեցութիւն տակաւին չէ առկայծեալ 'ի սպառ, և՞ բորբոքէ վարդապետութիւնս վատ-

շուէրս, ընդունի իբրև ճշմարիտ զայս բան անհեթեթ, թէ՝ Աշխարհ ես իսկ եմ գլխովին։ Եւ այս է որ կոչի բնազանցական անձնաւորութիւն։

Ոչ առաւելագունից ինչ են բանքդ զանձնաւորութենէ մարդկեղէն սրտի։

Այլ, ասէ, զի՞նչ իցէ պատճառ հաւատիցս։ Ոչ եթէ Աստուած հաստէ զմեզ այսօրինակ[1]. և միտք իմ՝ չգտանեն այլ ինչ մեկնութիւն հնարաւոր քան զուղղափառ վարդապետութեանն։ Տեսանեմ աչօք բացօք զի ախտք և խօթութիւնք հօր՝ անձամբ անձին պատճառեալք ազատօրէն, անցանեն թշուառաբար յորդիս իւր յազգէ յազգ։ Յորմէ իմաստասիրեմք զի մերս բնածին ախտ՝ ընտանին ասեմ անձնասիրութիւն, է ժառանգութիւն հայրենի։ Եւ քանզի գործն հաւաստի է, անմարթ է ապա զի գուցէ ամին այլ պատճառ։ Սակայն յաւելից ասել զի փոխադրութիւնս այս ըստ օրինաց մարդկային միութեան է[2]։ Մարդկութեան զօդցես մի եւեթ է սիրտ, մի եւեթ հոգի, մի եւեթ մարմին։ Եւ հրաշալի միութիւնս այս, թէպէտ լի անձնասիրութեամբ և մեղօք, ընծայէ զմեզ 'ի կեանս, այլ տայ և տառապեալ հաւատացումն 'ի տրիտուր, զոր տեսցուք այլուր։

Այս ուրեմն լսեր քոց բանից անօրէնութեամբ ծնանիմք, զոգցես ընկղուզեալք 'ի չարիս. և ոչ տեսանես զի այսու անիրաւիս առ մարդ։ Համակցութ նմք՝ այլ ազատք. ամենայն որ մարդ է, որ զանձնէ նկր պարտի համարս տալ։ Եւ զայս այսպէս ուսուցանենն մեզ, և ինքնին իսկ

1 Ընդ միտ ած զբան սրբոյն Թովմայի 'ի վեր անդր յիշատակեալ. « Գոյ այս 'ի մարդն հակառակ բնութեան իւրոյ, և այսպէս է ցանկութիւն սկզբնական մեղաց »։

2 « Ամենայն մարդիկ որ ծնանիցին յԱդամայ ; մարթին համարել իբրև զմի մարդ »... ասէ սուրբն Թովմաս։

Աւետարանն, և բոլոր իսկ կրօնն ընծայութեան, երբ 'ի բաց թողլու զգլուխն որ յաղագս սկզբնական մեղաց։

Ճշմարիտ է ամենևին զոր ասեսդ. մարդս՝ է մարդ իւրովն ազատութեամբ, և յաւելում ասել՝ փորձն իւրումն ազատութեան։ Արդ փորձ ազատութեան՝ է ինքնին պայքարումն ընդդէմ չարին որ 'ի մեզ։ Արդ ծնանիմք մեք 'ի պատերազմի. և միթէ անիրաւ ինչ իցէ այս։ Սկզբնական մեղք՝ արդարև տան մեզ ծնանել 'ի պատերազմիս յայսմիկ, որ ըստ ամենայնի՝ եթէ այսպէս և եթէ այնպէս, անհրաժեշտ էր և կարևոր։ Թոյլ տայ Աստուած զի 'ի չարիս ծնանիցիմք, յանձնասիրութեան զլխովին, կապեալք կաշկանդեալք 'ի սատանայէ՝ զոր այր իւրաքանչիւր կարէ և պարտի իսկ խնդամաց առնել, եթէ ոչ անդստին 'ի մանկութենէ, իբրև զհերակլէս, այլ գէթ միանգամ յընթացս կենաց իւրոց։ Կարևոր է փորձ հանդիսին. և իցէ՞ ինչ չար զի անդստին 'ի խանձարրոց անտի սկսանիցի։ Սկսանի, աղէ՛ քաջ 'ի միտ առ, ընդ ակամբ և 'ի ներքոյ աջոյ Բարձրելոյն։ Եւ ո՞չ արդեօք ինքնին լաւ համարիցի վասն աղածրի զօրութեանց մերոց ոչ ղարդանալ մեզ 'ի տես և ոչ մի եւեթ օր 'ի խաղաղութեան և հեռի 'ի թշնամւոյն. այն զի բաստ մեծ է նուաղն որերոյ ծնանիլ յամպրոպս մրրկաց և 'ի նմին մարդել զիւրն մանկութիւն։

Այո. այլ աղէ՛ զինչ իցեն յաւիտենական տանջանքն պատրաստեալք այնմ որ 'ի չարն ծնանիցի, և 'ի ծնանելն 'ի նմին մեռանիցի, որ և ոչ զփորձ եւս պատերազմի, և ոչ մեղս ինչ կամաւորս գործեաց, զի չեղև նմին ժամանակ։ Վարդապետութիւն այդ հայհոյութիւն է ընդդէմ Աստուծոյ, քաւ լիցի հաւանել նմին։

Միախորհ եմ ընդ քեզ. վարդապետութիւնդ այդ՝ չէ ամենևին 'ի դէպ իմոյս հաւատոյ։ Հաւատքն

իմ ոչ ուսուցանեն ինձ զի տանջանք յաւիտենականք պատրաստեալ իցեն որոյ մեղս ինչ կամաւորս չիցէ գործեալ։ «Բարութիւնն Աստուծոյ, ըստ աստուածաբանութեան, ոչ հանդուրժէ՝ զի տանջեսցի որ յաւիտենական տանջանօք, եթէ չիցէ մեղուցեալ մեղս ինչ կամաւորս։ Զհակառակն սորին հաստատել՝ է ընդդէմ յայտնի վարդապետութեան Եկեղեցւոյ[1]»։ Զինչ ասէ մեզ սուրբն Թովմաս Ագուինացի զյաւիտենական վիճակէ մանկանց անկնունք ննջեցելոց. «Միաւորեալ են ընդ Աստուծոյ, ասէ, հաղորդութեամբ բնական բարեաց. վայելեն զԱստուած բնական ծանօթութեամբ և սիրով[2]»։

Ի յակձիռս կրբես զիս բանիւքդ։

Եւ յիրաւի, զի համարիս որպէս զայլս բազումս ունել ուղղափառ Եկեղեցւոյ զվարդապետութիւն որ ոչ իւր ինչ է։

Երբ այդ այդպէս իցէ, ոչ եւս տեսանեմ անիրաւութիւն և ոչ մի 'ի վարդապետութեան սկզբնական մեղաց։ Այլ աղէ՛ ասա ինձ, զիա՞րդ ուղղափառ աստուածաբանութիւն 'ի միտ առնու և ուսուցանէ զպատերազմն ազատ կամաց ընդ անձնասիրութեան և ընդ չարին։ Զինչ իցեն պայմանք պատերազմիս և զինչ հնարք յաղթութեան։

Աւասիկ քեզ։ Կեանքս ողջոյն տուեալ մարդոյս առ 'ի յԱստուծոյ՝ է ժամանակն յաղթական լինելոյ։ Մարդ՝ ընտրէ յամենայն աւուրս և 'ի բովանդակ կեանս իւր, զմի յերկուց վերջին ծայրից ըստ սրբոյն Օգոստինոսի. այս է՝ կամ զսէր անձին մինչև յարհա-

1 Բերոնէ։

2 Սուրբն Թովմաս յամենայն գիրս իւր առաջի առնէ մեզ, թէ վասն սկզբնական մեղաց չէք պատիժ մորմոքման, այլ զրկումն եւեթ գերբնական երանութեան։

մարհանս Աստուծոյ և եղբարց իւրոց. և կամ զսէր Աստուծոյ և եղբարց իւրոց մինչև ցարհամարհանս անձին: Կեայ մարդս 'ի մէջ կրկին յօժարամտութեանցս այսոցիկ, և ընտիր առնէ 'ի նոսա 'ի կեանս իւրում:

Այս մարդն զեռածին, պատեալ և պարագրեալ յանձնասիրութենէ. ծնանի հանդոյն կաղնոյ փակեալ ընդ կեղևով. կեղևն անձնասիրութիւնն է: Բայց մարդս բողբոջ է ինքնիշխան. կարէ եթէ կամի մեռանել 'ի բողբոջին իւրում ընդ կեղևովքն, և կարող է եթէ կամիցի վերաբերիլ 'ի կեանս:

Այս մարդն իբրև սերմն ինչ արկեալ 'ի վերայ երկրի: Այլ Աստուած որ ծաղէ, ըստ Աւետարանին, զարեգակն իւր, և ցօղէ զանձրև իւր 'ի վերայ չարաց և՝ բարեաց, ծագէ զարեգակն իւր և ցօղէ զանձրև և 'ի վերայ սերմանս այս, և բանայ զայն և կամ շարժէ 'ի բանիլ: Ի նմա է և խնամէ զնա. իսկ նա դեգեւ, և սեռն աղատութեամբ իւրով վարանի ընդ անձնասիրութիւն և ընդ սէր: Արդ 'ի միջոյ ամենայն մարդկան՝ որովք սերմանեալ է երկիր, ոմանք չկամին ունել զկեանս Աստուծոյ, և կամ յետ ընդունելոյ մերժեն զայն, և լինին իբրև գմլժած. այլք ընդունին զայն, և ըստ Աւետարանին՝ ծնանին յԱստուծոյ:

Կամիցիս, աղէ, զայսոսիկ բացայայտել ինձ մեկին առանց այլաբանութեանց:

Մտադիր և յօժարակամ: Բովանդակ կեանք՝ են գոգցես անվախճան իմն դրդումն սիրոյ ընդդէմ անձնասիրութեան: Եւ է այս գործ Աստուծոյ, որ կամի սիրելի առնել զանձն, ընդդէմ սրտի՝ որ նախ զանձն իւր սիրէ. «Աստուծոյ կամք են,ասէր Տիկինն Սեվինիէ, զի զսիրտ մեր տացուք նմա, և մեք ոչ կամիմք տանել զայս. ահա կրճիմն բովանդակ»: Մէն մի բա-

բախիւն մերումս սրտի, — և զոր ասեմս ճշմարիտ է ամենայնիւ և հաւաստի, — է շարժումն Աստուծոյ որ կամի ստանալ զսիրտս, և շարժումն մարդոյ որ կորզէ զայն: Ամենայն զգացումն, ամենայն յոյզք սրտի, ամենայն տեսիլ, ամենայն կիրք, փափագ կամ երկիւղ, ուրախութիւն կամ նեղութիւն, համառօտ ասել՝ կեանքս համայն իւրովն պայմանօք, է անդուլ և անվերջ յաճախութիւն խնամոց Աստուծոյ առ 'ի ձգել զմեզ 'ի սէր իւր: Տեսաք զի Աստուած՝ է յամենայն խորհուրդս մեր, յամենայն զգացմունս և 'ի շարժմունս, 'ի լոյսն ընական և յիմանալի որ լուսաւորէն զմեզ, յարեգակն, յամենայն արարածս, յոգս զոր շնչեմք, 'ի բուրմունս և 'ի մարմինս որով կերակրիմք: Յամենայն արարածս յայսոսիկ, 'ի ներքոյ ամենայն ձևոց՝ զոր մի ումն 'ի սրբոց վարդապետաց խորհուրդս բնականս կոչէ, և զարձեալ այլ ամենայն ձևովք և պզնեցութեամբք՝ զորոց չեն բանքս ատանոր, զոյ հասանէ Աստուած և բաղխէ զսիրտ մարդոյ զօր ամենայն բիւրիցս, առ 'ի զարթուցանել 'ի նմա զգիտակցութիւն կենաց, որ է Աստուած և ես: Այլ հոգին՝ փոխանակ պատասխանի տալոյ յիւրաքանչիւր նուագի՝ Աստուած իմ, Աստուած իմ, զաչացու և անմիտ գոլով կրկնէ և երեքկնէ անդադար զիւրն դժպհի, անպտուղ և զնոյնաձայն վանգս. Ես, ես:

Աւասիկ պատմութիւն հոգւոյ: Այսպէս ուրեմն կեայ նա ընդդէմ կալով միշտ, մինչև կարծրանալ սալանալ և մինչև խպառ անբուժօրէն անզգայանալ առ կենսաւէտ գործն Աստուծոյ, առ որ չիք արդարև հնարաւորութիւն, բայց 'ի յետին պահու կենաց. և կամ մինչև 'ի բարեպատեհ ժամն, յորում ընտրութեամբ ազատ կամաց իւրոց, օժանդակեալ 'ի շնոր-

հայ, ասիցէ. «Այո՛ Տէր իմ, աւասիկ եմ. դու ես Հայր իմ, Տէր և Աստուած իմ, քեզ հնազանդիմ. եղիցի ինձ ըստ բանի քում»:

Զայս ևեթ վայրկեան խնդրէ Աստուած, առ վայր մի զպարտումն անձնասիրութեան, զմի ևեթ ամբիծ վայրկեան, որ թողցէ նմա հեղուլ 'ի մեզ զՀոգի սուրբ: Յայնժամ Բանն յղացեալ Հոգւովն սրբով 'ի մեզ, յայնմ ամբիծ վայրկենի կենացս, առնէ զմեզ որդիս Աստուծոյ:

Եւ այս է աՀա վերածնութիւն:

Եւ զինչ իցէ ուրեմն մկրտութեան, խորհուրդն վերածնութեան:

Տեսցուք յիւրում տեղւոջ: Եւ 'ի վերածնութեան հոգւոց մերոց գիտելի միշտ ինչ մի հանգոյն այնմ որ գիտաւ աշխարհի 'ի մարմնանալն Քրիստոսի. «Յղացաւ Հոգւով սրբով, և ծնաւ 'ի Մարիամայ կուսէն»:

Իմանամ զոր ասեմ. պարտիմք ամենեքեան արժ-մարանել զբանս մեծի և քաղցր խոստովանութեան՝ յայտնարանելոյ 'ի Մարիամայ կուսէն, որոյ արգանդն կուսական յղացաւ զԱստուած: Յորժամ հրեշտակն Աստուծոյ աւետեաց մեզ, — և միթէ ամենայն ազդեցութիւնք կենաց չիցեն հրեշտակք Աստուծոյ, — հոգիս մեր պատասխանէ. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն, Եղիցի ինձ ըստ բանի քում»: Յայնժամ Բանն բնակէ 'ի հոգւոջ. Յղացաւ Հոգւով սրբով և ծնաւ 'ի Մարիամայ կուսէն:

Այդպէս է ամենեքին. և Մարիամ՝ արարածն անարատ, ծաղող աշխարհի գլոյս յաւիտենական, է խոստովանութիւն իմն հասարակային: Սակայն ոչ միայն խոստովանութիւն է Մարիամ, այլ և ինքնին արդիւնաւորութիւն:

Արդ՝ զինչ իցէ կոյսն Մարիամ:

Այժմ ասացից:

Բ

Աւասիկ քեզ:

Մարդկութիւն համօրէն մի ևեթ ազգ է, մի ևեթ ըովանդակութիւն. որ թէպէտ և 'ի բազմաց կազմեալ, այլ առաջի Աստուծոյ է իբրև զմի սիրտ, իբրև մի հոգի և մի մարմին: Յորժամ ըովանդակ զանգուածս մարդկութեան ապականեցաւ 'ի չարէն, և խորասոյզ խարդաւանեցաւ յանձնասիրութիւն և 'ի յորձանս ցանկութեան, հաճեցաւ Աստուած պահել պահպանել զմի և եթ կէտ, զմի միայն ծիլ, որպէս զի յաւուր միում կիտովս այսու մացէ ինքն 'ի զանգուածս մեր: Կէտս այս անարատ և նախապահեալ, է կուսական կէտն հոգւոց աշխարհի, և կէտս այս՝ է հոգի մի, ինքնին կոյսն Մարիամ:

Ոչ քաջ 'ի վերայ հասանեմ առանձին շնորհիս այսմ եղելոյ առ մի ոք յամենեցուն:

Առանձնաշնորհութիւնս առ մի և եթ հոգի, է առանձնաշնորհութիւն վասն ամենեցուն առ հասարակ: Աստուած՝ առ 'ի բորբոքել յաւուր միում 'ի մարդկութեան, որ երթայրն և չիջանէր յանձնասիրութեան, զհուր սուրբ սիրոյ, հաճեցաւ ասեմ Աստուած պահել 'ի նմա իբրև զկայծ ինչ ընդ մոխրով. և պահեաց Աստուած զսիրտ՝ առ 'ի զերծուցանել միանգամայն զըովանդակն և զողջ մարմին:

Մարիամ է սիրտ ազգի մարդկութեան:

Մի 'ի մեռացօնս արկցուք ըստ, զի մարդկութիւն ողջ ըովանդակ է մի ևեթ մարմին. և զոր օրինակ ամենայն մարմնոյ՝ այսպէս և մարդկութեան պարտ է զի իցէ սիրտ: Սիրտ մարդկութեան՝ է հո-

զին Մարիամու։ Հոգիս այս՝ որ զերծ գտաւ ՚ի սկզբնական մեղաց, եղև վասն աշխարհի բոլորոյ նորոյ կենաց։

Բազում ինչ ունիմ ասել զայսմանէ. այլ կամիցիս արդեօք լսել նմանութիւնս ինչ, որ թէպէտ ՚ի վերին երևս օտար յոյժ ՚ի բանախօսութենէս թուիցին, այլ զխորհուրդս մտացս քաջայայտ ծանուսցեն։

Լուայց մտադիր։

Նախ՝ ինչ մի ՚ի մէջ արկից յաստղաբաշխականէն։ Ամենայն նիւթ աշխարհաց, զորս կերպարան և ունիցի, և ծրջափ ցիր և ցան իցէ, է միշտ մի ամբողջ և բովանդակ, ունելով զկենդրոն ծանրութեան հաստատակայ։ Աներկմիտ եմք ընդ այս՝ զի դոյ կենդրոն ծանրութեան բնական տիեզերացս, և կենդրոնս այս ծանրութեան՝ առ բովանդակ զանգուածովս, է միշտ ՚ի հարկէ անշարժ։ Ամենայն պարունակք երկնից զնովաւ թաւալին, ամենայն աստեղք և ամենայն բոյլք աստեղաց կատարեն զշրջանս իւրեանց զանշարժուն կիտիւս շուրջանակի։ Եւ ոչ արդեօք յամենայն գիշերի երևի մեզ պատկեր սորին, յորժամ տեսանեմք զմիակ անշարժ աստղն հիւսիսային ՚ի մէջ աստեղաց հոլովելոց։ Արդ աներկմիտ լեր յառաջնմէ, զի ամենայն մեծամեծ պատկերք բնութեան, որպէս և փոքունք իսկ, պատկերք են մտածութեան իրիք. ապա թէ ոչ՝ անհանճար ինչ լինէր արարչութիւն, և սին և թափուր բանաստեղծութիւնն Աստուծոյ։

Արդ որպէս դոյ կենդրոն ծանրութեան բնական տիեզերացս, զմեքենականն ասեմ կէտ հաստատութեան աստեղաց, անշարժ ամենեքին՝ և ուսումնական անշարժութեամբ, ՚ի մէջ ամենայն շարժմանց և ամե-

նայն այլայլութեանց, զոր կարէ կրել նիւթն համագոմից շուրջ զկիտիւս՝ զոր մեծանուն ոք աստեղագէտ Աթոռ Աստուծոյ կոչէ, և զորով ամենայն աստեղք թաւալին շուրջանակի. այսպէս դոյ և կէտ մի, կենդրոն ծանրութեան բարոյական տիեզերացս, զերկնայինն ասեմ կէտ հաստատութեան հոգւոց, անշարժ և անարատ ամենեքին ՚ի մէջ խռովութեանց և այլայլութեանց չարին և մոլորութեան։ Կէտս այս՝ է կէտն կուսական հոգւոյ աշխարհի, զոր սուրբ Գիրք կոչեն Աթոռ Աստուծոյ, և կին պատկեալ աստեղօք։

Եթէ նմանութիւնքս չիցեն տաղտուկք լսելեացդ, ածից ՚ի մէջ և զայլս։

Ահա կամ ՚ի լսել։

Աւասիկ ուրեմն և ինչ մի ՚ի ծանօթութենէ մարդկային մտաց։ Կարծիցեմս արդեօք զի մարդկային միտք սխալական իցեն զլխովին և կամ ամենեին անսխալ։ Քա՛ւ ՚ի քէն խորհուրդ այսպիսի։ Սպրդելով իմն ընդմտանէ մոլորութիւն ՚ի միտս մեր և ՚ի կարողութիւնս. համայն և այնպէս սուրբն Թովմաս Աքուինացի և Պօսիւէ, թող զայլս, ուսուցանեն թէ ՚ի խորս մտաց դոյ ներգործութիւն մի նախնական և կենդրոնային՝ որ ոչ վրիպի բնաւ։ «Անդանօր, ասէ սուրբն Թովմաս, ոչ մտանէ մոլորութիւն». և Պօսիւէ գոչէ ՚ի հառաչանս իւր որ ՚ի վերայ սուրբ խորհրդոց. «Ո՛վ հոգի, մատո՛ ունկն ՚ի խորս հոգւոյդ, և մի՛ մատուսցես ունկն ուր ցնորք պատրանաց են, այլ ՚ի զարերայն՝ յորում սուրբ և պարզ խորհուրդք ժողովին, և ճշմարտութեան և եթ ձայն լսելի լինի»։ Զարերայս այս՝ զորմէ խօսի Պօսիւէ, կէտս այս՝ յոր փայլի ճշմարտութիւն, կուսական կէտն է մտաց։

Այդպէս իցէ։

Սմին նման է և կամքս մեր։ Ինքնիշխան ազատու-

թիւն մարդոյս յանկածութեան իւրում միթէ բարձեալ իցէ խաւարն՝ եթէ մնացեալ լոյսն: Երկոքին իսկ այսոքիկ չեն ճշմարիտք: Ապա ուրեմն զնոյն պարտ է իմանալ և զինքնիշխան ազատութենէ, զոր ինչ ասացաք զմտաց. իբր կայծ իմն է ընդ մոխրով. կայ մնայ 'ի խորս եղծեալ կամաց մերոց՝ որ և պատեալ է յանձնասիրութենէ. 'ի խորս ասեմ ազատութեանս մերոյ՝ որ ընկճեալ է յաղթելեաց և 'ի սիրոյ անձին, կայ մնայ այն՝ դարիրայ մի սուրբ և ճշմարիտ ազատութեան: Կէտս այս ազատ՝ կուսական կէտն է մերոցս կամաց:

Այսպէս և բովանդակ մարդկութիւն ունի զիւրն կէտ կուսական, որ է ինքնին կոյսն Մարիամ: Աստուծոյ պահեալ պահպանեալ էր զդարիրայս զայս, զանարատ տապանակն ասեմ ուխտի 'ի մէջ մեղապարտ մարդկութեան: Ի խորս վատթարեալ մարդկութեան կայր մնայր նեարդ կամ մանրաթել ինչ ողջ անարատ, պահեալ յԱստուծոյ ընդդէմ չարին:

Եւ ահաւասիկ այս է կոյսն Մարիամ:

Դ

Այսպէս ուրեմն անարատ ծնեալ է Մարիամ. անարատ էր անդստին 'ի ժամ յղութեանն, և եկաց անարատ: Եղև մայր Աստուծոյ մարդացելոյ, որդւոյ իւրոյ միածնի, մնալով միշտ կոյս:

Արդարև յոյժ դժուարին է հաւատս ընծայել տարօրինակ խորհրդոյս, ուստի և մարդկային անուն յղութեան, ներգործութեամբ նոր Աստուծոյ:

Զարմանամ ես ընդ տարակուսանդ: Մոռացար ուրեմն զոր տեսերդ. տեսեր աչօք իսկ քոյովք 'ի խորհելդ զարարչութենէ աշխարհիս, — և այս ստուգութիւն է անժխտելի, — տեսեր զի Աստուած ինքնին հաստատէր 'ի մի ևեթ կէտ երկրի զմարդն՝ զգործ ձեռաց իւրոց, անհայր, անմայր, արարչագործ կամօք իւրովք. համառօտ ասել՝ չեղև նախաստեղծին ոչ հայր և ոչ մայր: Ո՞չ ապաքէն այս այսպէս իցէ: Եւ արդ զինչ քան զայս պարզագոյն և ընդունելի մտաց՝ եթէ Աստուծոյ ինքնին սերմնարկեալ իցէ լոկ հոգւով իւրով զերկրորդն Ադամ, յարգանդ մօր կուսական:

Մոռանամք միշտ 'ի խորհուրդս, 'ի դժուարութիւնս և 'ի զիմադրութիւնս մեր, թէ Աստուած՝ հայր մեր է ամենակալ:

Այլ ըմբռնելի՞ ինչ իցէ մտաց անունս ՄԱՅՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

Եւ ոչ մի ինչ կրճիմն տեսանեմ աստանօր: Կարծիցես արդեօք զի ասելս Մայր Աստուծոյ ունիցի ասել արարչագործող Աստուծոյ: Բազումք 'ի բաց մեր-

ժեն զբանս վասն այսր պատճառի։ Այլ մայր ուրուք ոչ հատէ զմարդն, ոչ զհոգի նորա և ոչ զմարմին. մարդն՝ յԱստուծոյ պարգևեալ է, և մայր կերպարանէ զմարմին նորա՝ առանց իսկ գիտելոյն։ Այսու իմաստիւք կոչեմք մայր Աստուծոյ զնա՝ որ ինքնին ետ զմարմին Բանին Աստուծոյ 'ի մարմնանալն յաշխարհի։

Եթէ ընդունիմք զխորհուրդն մարդեղութեան, անժխտելի է և ասացուածս այս։

Թուի ինձ եթէ 'ի ճահ է աստանօր 'ի յուշ ածել զի Քրիստոս ինքնին կոչէ մայր իւր, — այլով ճշմարտագոյն և մեծ յոյժ իմաստիւք, — զհոգի՝ որ հնազանդութեամբն յղանայ զԱստուած. «Որ առնիցէ զկամս Հօր իմոյ, որ յերկինսն է, ասէ Յիսուս, նա է իմ եղբայր և քոյր և մայր [1] »։

Մարիամ՝ ըստ այսորիկ իսկ իմաստից, եղև մայր Աստուծոյ քան զայլ ամենայն արարածս. սրբութիւն կատարեալ և խոնարհութիւն ամենակատար կրկին ուղղութիւնք են Մարեմայ։ Եւ այսոքիկ երկոքին առաքինութիւնք, կրկին ընդդիմակք են անձնասիրութեան՝ որ է ամբարտաւանութիւն և մարմնասիրութիւն, և են երկեակ պայմանք անհուն սիրոյ՝ որ է Աստուած. և այս է զոր մի ոմն 'ի նախնեաց ասէր. «Խոնարհութիւն՝ է սննդակ սիրոյ, և սրբութիւն՝ պահապան խոնարհութեան»։ Աստուած, որ է սէր, 'ի սուրբս և 'ի խոնարհս բնակէ. կամի ծնանիլ 'ի նոսա, և անդ 'ի նոսին յայտնի առնել զաստուածային կեանս։ Մարիամ խոնարհ և սուրբ գոլով կատարելապէս, իբր այն թէ ած ձգեաց իմն յերկիր զմարմնաւորութիւն Բանին։

1 Մատթ. ԺԲ. 50։

Ըստ այսմ ուրեմն զկոյսն Մարիամ գործակից առնեմք փրկագործութեան։

Չիք երկմտել ընդ այդ. և արդար է զոր ասէ սուրբն Բեռնարդոս. «Ապաքէն մարդ ոք և կին ոք չարիս ահագինս գործեցին մեզ, այլ շնորհք Աստուծոյ, զի և մարդ ոք և կին ոք զամենայն անդրէն 'ի նոյն հաստատեցին։... Արդարև շատ իսկ էր Քրիստոս, զի ամենայն լիութիւն մեր 'ի նմանէ են. այլ ոչ էր բարւոք վասն մեր՝ նաև ըստ այսմ մնաց, մարդոյն միայն լինել. 'ի դէպ էր զի և երկաքանչիւրն ըստ ազգի իւրեանց վաստակեսցին 'ի վերականգնումն մեր»։

Մարիամ յանձին բերէր զկողմն մարդկային փրկագործութեան. իսկ Յիսուս Քրիստոս զաստուածայրականն, զաստուածայինն ասեմ և զմարդկային միանգամայն։

Յասացելոցս յայտնապէս 'ի միտ առցես եթէ քանի՞ անհիմն են կշտամբանք այնոցիկ, զոր ածեն յաճախ ընդդէմ ուղղափառ Եկեղեցւոյ, իբր այն թէ զեղծանիցիմք պաշտամամբ Մարիամու։ Այնքան ըստ չափ վարէք դուք՝ ասեն, զպաշտօն Մարիամու, մինչև բնաջինջ առնել գոգցես զպաշտօն Աստուծոյ. և թուի իմն զկոյսն Մարիամ առնել ձեզ երբեմն դրօշեալ ինչ և Աստուած։ Արդ նախ զայս գիտցուք հիմն, զի ընդ կոյսն Մարիամ և ընդ Յիսուս Քրիստոս զայ խտիր՝ որ ինչ ընդ արարիչն և ընդ արարած, զանհունն ասեմ։ Այլ զամ մի զոր ասացաքն հաստատեալ, եթէ Մարիամ՝ է կողմն մարդկային փրկագործութեան՝ ըստ նկատեալ իմաստից առ 'ի մէնջ, զիա՞րդ մարթիցի անդր քան զչափ պաշտօն մատուցանել նմա։ Ո՞չ ապաքէն տեսանեմք զի գոգցես զխաւար մասն 'ի փրկագործութեան՝ մարդկայինն է, այնու զի յետ

միանգամ մարդեղութեանն Քրիստոսի պարգևելոյ, միայն զմարդկայնոյն տակաւին յուզի խնդիր։ Առ 'ի փրկութիւն՝ մասնն աստուածային շնորհեալ է մեզ աներկեւան. մեր ազատ մասն մեր, զորմէ կախեալ կայ ամենայն։ Աստուած ոչ պակասի երբեք առ 'ի մէնջ, առաջնիկայ է միշտ, բաղխէ զդրան սրտի և ակնկալեալ սպասէ, կալով մնալով ազատ ընտրութեան մարդոյ. և փրկութիւնն՝ է յընտրութեանս յայսմիկ։ Ամենայն ինչ հաստատեալ է 'ի տալ զանձն Աստուծոյ ազատօրէն, իբրև զՄարիամ, և 'ի կոխելն ընդ ոտիւք զչարն, միանալով ընդ Աստուծոյ։

Վասն այսորիկ պաշտօն Մարիամու, և ջերմաջերմ սէր առ Կոյսն սուրբ, է պաշտօն առաքինութեան և մարդկային ազատութեան։ Ցուց լիցի քեզ զի բողոքականք 'ի մերժելն 'ի բաց զազատութիւն մարդկային, մերժեցին և զպաշտօն Մարիամու։

Առնուցո՞ւս արդեօք 'ի միտ յասացելոցս աստի, զի Մարիամ է միակ պատճառ ամենայն շնորհաց և դրան Երկնից, և թէ՝ զօդեալ ընդ Նմա՝ փրկիմք, և անջատեալ՝ կորնչիմք։ Եւ այս ճշմարիտ է և ստոյգ իբրև խորհրդակիր օրինակ և իբրև հաւատոյ եղելութիւն։ Իբրև խորհրդակիր օրինակ՝ Մարիամ է ստոյգ ուղղութիւն, ազատութիւն՝ ընդ ձեռամբ Աստուծոյ, և մարդկութիւն լցեալ յԱստուծոյ։ Լինել միացեալ ընդ Մարիամու, է եղծանել 'ի հոգւոջ մերում, զորէն Մարիամու, զամբարտաւանութիւն և զմարմնասիրութիւն, զկրկնակի դէմս անձնասիրութեան. է մտանել 'ի սէր և միանալ ընդ Աստուած։ Իսկ իբրև հաւատոյ իսկութիւն, Մարիամ էակ է կենդանի, անմահ, փառաւորեալ և այլակերպեալ յԱստուած, որ հայի 'ի մեզ, լսէ և սիրէ զմեզ։ Մայր է ամենայն մարդոյ, հսկէ 'ի վերայ մեր, առաւել քան

որչափ մայր իւրաքանչիւր ուրուք 'ի մէնջ չիցէ ողբ-նեալ 'ի յորրանս մեր։ Այո, որպէս զոյ Հայր հանրական, զոյ և Մայր հանրական. քանզի այլոց մարց մարթ է մեռանել, և Աստուած ոչ կամի զի և ոչ մի ոք զրկեսցի 'ի մօրէ։ Միաւորիլ ընդ մօր հոգւոց, ընդ դշխոյին Երկնից, ժառանգել է զԵրկինս։

Բովանդակեսցուք զբանս։ Վասն իւրաքանչիւր ուրուք 'ի մէնջ զոյ ազատ մասն առ 'ի փրկութիւն, որ է ընծայել զհաւանութիւն մտացս առ Աստուած։ Սմին նման պիտոյ էր վասն մարդեղութեան և փրկագործութեան հաւանութիւն ազգի մարդկան, և ահա զայն զայս վճարեաց Կոյսն սուրբ։ Հոգի Տեառն խնամէր զմարդկութիւն, և խնդրէր սրբել զնա առ 'ի առնել արդասաւոր. զի երկիր տացէ զպտուղ իւր, ըստ Գրոց սրբոց. այլ Բանն Աստուած ոչ մարմնացաւ, մինչև ոչ գտաւ 'ի վերայ երկրի մայր ոք որ կարաց կրել զԻնքն 'ի ծոցի իւրում։ Յայնժամ յղացաւ 'ի Հոգւոյն սրբոյ և ծնաւ 'ի Մարիամայ կուսէն։

Դ

Ասացի կանխաւ 'ի յառաջընթաց տրամախօսութեան մերում վասն մարդեղութեան եղեալ զաշխարհս, և այժմիկ ասեմ, զոր հաստատ կարծեաց մարդկան, վասն մերոյ փրկութեան զԲանն մարմնացեալ։

Ապաքէն ճշմարիտ են երկոքին միանգամայն։ Սուրբն Փրանկիսկոս Սալեզեան, յետ ցուցանելոյ յայտնապէս եթէ զիարդ վասն մարդեղութեան ստեղծաւ աշխարհս, ասէ 'ի վերայ. «Այլ մեղքն Ադամայ՝ փոխանակ յաղթելոյ աստուածային քաղցրութեան,

չարժեաց յորդորեաց զնոյն. և Բանն մարմնացաւ վասն փրկութեան աշխարհի»:

Սակայն զինչ իցէ փրկութիւն աշխարհի:

Ի եղծումն մեղաց, ազատօրէն դարձ մարդկային կամաց 'ի չարէն առ բարին, և նորոգումն մարդկեղէն բնութեան չիջելափառ եղելոյ 'ի չարէն:

Եւ զինչ հնարս 'ի կիր արկ Յիսուս յեղծումն չարին:

Զխոնարհութիւն, զհեզութիւն և զխաչ մինչ 'ի մահ:

Եւ առ ինչ զխոնարհութիւն, զհեզութիւն և զխաչ:

Քանզի չարն՝ անձնասիրութիւն է, և Քրիստոսի հարկ եղև զհակառակն անձնասիրութեան ընտրել ճանապարհ:

Արդ մեկնեա ինձ զայս, զոր իմանամ ընդ աղօտ:

Փրկիչն մեր Քրիստոս, առ 'ի բժշկել և փրկել զմեզ, առաջի առնէ զանձն իբրև օրինակ և փրկիչ:

Եւ նախ իբրև օրինակ մեզ: Որպիսի՞ պարտ էր լինել կենաց նորա 'ի մէջ մարդկան. զի՞նչ ինչ 'ի դէպ էր մարդացելոյն Աստուծոյ, օրինակին մերոյ և անդրանիկ եղբօր՝ գործել յաշխարհիս յայսմիկ: Այգէ զի՞նչ էր նշանակ կարգի հնոյ աշխարհի. Անձնասիրութիւն: Եւ զի՞նչ ունէր լինել նշանակ նորոյ աշխարհիս. Սէր, ուրացութիւն անձին: Եւ ահա օրինակն մեր զայս կամեցաւ ցուցանել մեզ յանձին:

Մի՛ մոռասցուք զի Քրիստոս Յիսուս է մարդ ճշմարիտ, ունելով զհոգի, զսիրտ և զարտասուս: Ահաւասիկ նա՝ յանդիման աշխարհի. հայր 'ի մարդկութիւն ոտնհար եղեալ 'ի ցաւոց, յախտից, 'ի մահուանէ և յանյուսութենէ: Արդարև եղբարք են իւր մարդիկ, և կանայքն այն՝ մայր իւր և քոյր. «Ահա եկի ես, ասէ, սիրեցեալքդ իմ, և կրեցից զամենայն վիշտս տառապանաց ձերոց. արբից զբաժակ ձեր բովանդակ, և արբից զայն մինչև ցմրուր, և մեռայց վասն ձեր»:

Ա՞րդ ինչ էր անդրանկի նորոյ կարգի մտանել յաշխարհ առնել աստուածաբար:

Ոչ:

Ահաւադիկ ուրեմն նա՝ ինքնայօժար ստանձնեալ զամենայն նեղութիւնս: Իցէ՞ արդեօք յայսմիկ պայմանի օրինակ մեր՝ թէ ոչ: Զի՞նչ պարտ էր առնել. Եղծանել զանձնասիրութիւն, զանձնասիրութիւն ասեմ՝ որ ընու զայլս նեղութեամբ, որպէս զի ինքն կացցէ 'ի վայելս: Իսկ Քրիստոս կամի զնեղութիւն, որպէս զի զամենայն տառապանս այլոց յինքն ստանձնեսցէ: Գայ և ունի զյետին տեղին. յանձն առնու զաղքատութիւն, զխոնարհութիւն, զնեղութիւն, զաշխատութիւնս, զպատերազմն վասն արդարութեան և վասն ճշմարտութեան, զչարչարանս, զտագնապ մահու և զնահատակութիւն խաչի: Եւ այսպէս աւասիկ օրինակ է նա արդարև մարդոյ. որոյ վասն և կարի իրաւամբ Պիղատոս 'ի ցուցանելն զնա ժողովրդեան արիւնաթաթաւ և փշովք պսակեալ՝ ասէ. «Ահա այրդ ցձեզ»:

Սակայն որպիսի՞ օրինակ. և իցէ՞ ինչ հնար նմանել նմա. զի 'ի վեր է այս քան զկար բնութեան:

Եւ արդարև իսկ անցանէ զանցանէ այս քան զկար բնութեան: Այլ սակայն, ասէ Քրիստոս. «Անհնարինքն առ 'ի մարդկանէ, հնարաւոր են առ 'ի յԱստուծոյ», և Քրիստոս՝ է մարդ և Աստուած. և ոչ միայն օրինակ է նա մեր, այլ և փրկիչ: Գայ իբրև զբժիշկ մարդկային բնութեան, իբրև սկիզբն և առբերող գերընական զօրութեան, տալով զայն 'ի մեզ:

Արդ ուխտիւք կամէի խելամուտ լինել քեզ,

թէ ապականեալ սրտից մերոց և թիւրելոյ բնութեանս դեղ և դարման՝ է չարչարելն. և զի խաչն՝ գործի է փրկագործութեան, որ խափանէ և վերածէ զանկումն մեր։

Սիրտ մեր վատթարացեալ դիմէ ճոխաճեմ յուրախութիւնս և 'ի հաճոյս. պարտ է ընթանալ 'ի չարչարանս և 'ի ցաւս։

Ոչ ընդունելի ինչ է զարդիս վարդապետութիւնդ այդ։

Այդպէս իցէ. այլ իցէ՞ ինչ 'ի մեզ հանճար՝ թէ ոչ. արդ ուշիւ 'ի միտ առ զոր ասել կայ ինձ առաջի։

Ո՞չ տեսանես զի անկումն հանապազորդեան է 'ի մեզ։ Անկումն [1], խակակից և յաւերժական կործանումն է ամենայն սրտից անձնասէր եղելոց։ ՅԱստուծոյ՝ յանձինս մեր վայրիջանեմք, և յաստուածային սիրոյ մարդկան՝ 'ի մեզ յանձինս եւեթ վայրաբերիմք. և զամ մի հասեալ անդ, և ևս 'ի խորս ստորաքարշիմք՝ 'ի հոգւոյ առ մարմին, 'ի մտաց առ ազդելիս, 'ի զգայնոց առ հեշտասէր ցանկութիւնս, խարդաւանեալք միշտ 'ի փափկիկ ուրախութեանց՝ յանհեթեթ բերկրութիւնս, 'ի մաքուր հաճոյից՝ յամօթականս անհնարինս, մինչև 'ի զմբրիլ և 'ի գետ թաւալիլ, յոր կամք մնամք խորասոյզք և թաւալագլորք։

Ահաւասիկ անկածութիւն, որ յամենայն սիրտս է և մերկապարանոց առաջի ամենայն աչաց տեսանի։ Այս է պատմութիւն անցից մարդկան և ժողովրդոց՝ յորս չիցէ կանգնեալ նշան խաչի։

Արդ եթէ այս է որ ասի ուրախութիւն՝ ես ասեմ թէ նեղութիւն առաւել արժէ քան զայն։ Ու-

1 Ոչ են բանքս աստանօր [illegible] առնլի։

րախութեան է քարշել 'ի վայր, իսկ նեղութիւն բերէ 'ի վեր։

Արդ Քրիստոս խաչիւ իւրով 'ի վեր ամբառնայ. ինքն միակ ուսուցանէ մարմնոյ, զգայնոց, հոգւոյ և սրտի զվերընծայումն։ Կանգնէ զմարդկային բնութիւն՝ զնուաճեալն յանձին իւրում, առ 'ի ամբառնալ զկեանս առ Աստուած, առ անհունն, փոխանակ 'ի ստոր 'ի ցնորս և յոչնչաքեայս իջանելոյ, առ սահմանաւորն ասեմ՝ որ միշտ վայրաբերի։ Ասէ. «Ելանեմ ես առ Հայր իմ և առ հայր ձեր, առ Աստուածն իմ և Աստուած ձեր». և դարձեալ. «Յորժամ բարձրացայց յերկրէ՝ զամենեսեան ձգեցից առ իս». և բարբառէր զայս, ասէ Աւետարանիչն, նշանակել կամելով զբարձրանալ իւր 'ի վերայ խաչի։

Հարկ 'ի վերայ կայ զի բնութիւն մարդկային փոփոխեսցի։ Այլ փոփոխիցի՞ արդեօք անչարչար։

Եւ ո՞վ որ ոչ տեսանիցէ զի նեղութիւն և չարչարանք աղ են երկրի. զի ուրացութիւն անձին՝ կէտ է հաստատութեան կենաց առ 'ի չքնաղացուցանել զմարդ, առ 'ի մաքրազարդել և անմահացուցանել։

Որոյ չիք նեղութեան զփորձ առեալ՝ զի՞նչ ինչ գիտիցէ, ասեն սուրբ Գիրք։ Լուր աղէ և զի՞նչ պուէտքն ասիցեն.

Դու յերկիր ես, ըզմարդ, աւա՜ղ...
Որ ոք ըզքեզ ոչ ճանաչէ, չգիտէ յաստեացս ինչ նա ըղնաւ...
Յածի զերկրաւըս թուլակի, առանց ինչ կեանըս վարելոյ,
Տարուբերի 'ի կենցաղումս իբրև ընդ օդս ամպախաղաց։

Ո՞չ ապաքէն և իմաստունք խելամուտ էին՝ զի իմաստութիւն յուրացութեան անձին և 'ի նեղութեան իցէ հաստատեալ։ Եւ զի՞նչ կամք էին Սոկրատայ ասել խորիմաստ բանիւքս այսոքիւք, թէ իմաստա-

սիրելի՛ է ուսումն մահու։ Պղատոն մեկնաբանէ զհանճարեղ զայս բան 'ի հաւաստի առնելն իւրում, եթէ մարդս հաստատեալ է միշտ և կաշկանդեալ 'ի ցնորս մտաց, 'ի հաճոյս սնոտեաց և 'ի խաբուսիկ անցս կենաց, ապիկար և անզօր առ 'ի վերաբերիլ 'ի սոյդ յաւիտենական և գերագոյն կեանս, եթէ ոչ զերծցէ զմեռանելն և զնուիրել զաւերեալթս կենաց՝ առ 'ի ստանալ զիւրն խոկութիւն։

Զոր Պղատոն ընդ աղօտ նշմարէ աստանօր՝ է զխոկելն ուսումն և գիտութիւն կենաց և մահու, զորմէ Քրիստոսի միայնոյ էր տալ. իմաստունք խօսեցան, այլ նա յարդիւնս ածի զնոյն։

Լուր զբանս Քրիստոսի, զվարս առեալ կենաց իւրոց. «Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա [1]»։

Իցէ՞ ինչ անհնարին առ 'ի միտ առնուլ զի նուիրումն առաջինւոյ՝ մասնական և ժամանակեան կենաց, իցէ պայման կարևոր վասն պատարուն և յաւերժական կենաց։ Որ ոք ոչ գիտիցէ ուրանալ զանձն՝ այնպիսին և ոչ կեալ գիտիցէ. վասն այսորիկ է զի մեք ոչ կեամք՝ այլ ակն ունիմք կելոյ։ Կեանքս մեր նուաղեալ են յունայնամիտ ցանկութենէ մարմնոյ, և փոխեալ իբրև 'ի կէտ մի ևեթ. 'ի կէտ մի որ անցանէ, և 'ի շիթ մի ջրոյ որ հոսի։ Կեամք մեք 'ի կեանս կէտ առ կէտ։ Կեանք մեր և միտք և սիրտ, 'ի մի ևեթ կէտ արթուն կան, և յայլն ամենայն ննջեն։ Ա՛ռ 'ի զրաւել զկէտն վերին երեսաց կենաց, որ յամենայն ժամ ածէ զմեզ 'ի մոլորութիւն, ոչ վերջանամք բնաւ 'ի բաց թողուլ զխորինն, զվայելն

1 Մատթ. ԺԶ. 25։ — Մարկ. Ը. 35։ — Ղուկ. Թ. 24։

և զբովանդակն։ Բնաւեալք յաւօրեայ դէպս անցից, անյուշք անցելոյն, և ոչ կանխատեսք հանդերձելոց, վատնեմք զկեանս մեր՝ փոխանակ 'ի մի ժողովելոյ։ Արդ ո՛վ տացէ մեզ ուրեմն զարուեստն աստուածային, որ բովանդակէ զկեանս ըստ իւրումն զօրութեան, ճշմարտութեան, խորութեան և միութեան։ Նուիրումն և ուրացութիւն անձին տացեն զայդ։ Ուրանալն զհամօրէն ամբողջութիւնս առաջինւոյ կենացս՝ է գիտութիւն կենաց։

Ուրացիր զաժամեան կիրսդ, զզգացումնդ առաջինւոյ, զհաճոյս մէն մի ժամու՝ որք ընդունայն պատահարք են աղցաւոր կենացս, և ժառանգեսցես ըզկեանս լիալիր, զխորինն, զմէջնակէտն և զհամագումար։ Ուրացիր և հա՛ն 'ի նուէր զվայրկենի կենացդ զյատուկ, զզգայական և զանձնասէր գիտակցութիւն, որ անդուլ անդադար անջատէ զզանազան տեսարանս նորին, և ցրուէ զամենայն զկէտս. ընկալ զցաւ և զուրացութիւն անձին՝ որ 'ի բաց քեցեսցեն զքեզ 'ի ցնորից մտաց և 'ի հրապուրիչ պատրուակաց, և ամբարձցեն յանցաւոր և 'ի մնացուն պայմանէ կենացդ, յինքնին իսկ 'ի սոյդ, հաստատուն և 'ի լիուլի կեանս։ Ուրացութիւն անձին ոչ եղծեալ անհետ առնէ զառանձին և զորիշ զօրութիւնս կենացդ՝ այլ 'ի մի ժողովէ զնոսա, զօդէ ընդ միմեանս, պահեալ պահպանէ և բովանդակէ զնոսա 'ի միութիւն։

Ահաւասիկ խորհուրդն խաչի. նուիրումն քրիստոնէական, մեռելութիւն և մահ 'ի Յիսուս Քրիստոս։ Եւ ահա այս է որ կոչի կեանք յարուցեալ։

Այո՛, խաչն և չարչարանք մարդացելոյն Աստուծոյ, նուիրումն ողջ բովանդակ, մեռանելն և չքանալ անձնասիրութեան ևեթ կարէին մուծանել 'ի մարդ-

կեղէն բնութիւնս զկեանս Աստուծոյ, զկեանս առեմ յարուցեալ, զանմահ և զանվախճան։

Նոր իմն թուի ինձ այս ամենայն, սակայն և ճշմարտութիւն ընդ այսու նշմարեմ յայտնի։

Եւ ես ոչ դադարեցայց երկրորդել, քանզի կարևոր է յոյժ զոր ասեմս. զօգնես ամենեքեան կոյր եմք այժմիկ և զաչացուք հանդոյն անբան կենդանեաց առ 'ի չտեսանել զայն։

Զի՞նչ իցէ, ասա ինձ, խորհուրդ բնակութեան աշխարհիս, որ համայն գեղ վայելչութեան, մեծութիւն ամենայն, և ամենայն բարութիւնք և բովանդակ հանդերձեալն յերաշխէպս իւր հաստատեալ կան։ Վէրք երկրի և փեռեկումն հարթարդակ երեսաց իւրոց և ծոցոյն՝ գործեալք ձեռամբն Աստուծոյ, են ծրագիծ բնակութեան երկրի, եղանակաւորումն պատմութեան կենաց, և հետք խորհրդոց Աստուծոյ վասն հանդերձելոյ աշխարհի։

Զի՞նչ գաղտնիք իցեն քնարի, զոր ճարտար որ առ խանդին խորտակէ և ապա անդրէն յօրինէ, և յայնժամ

Գըտանէ ձայն քաղցրհընչող
Ի խանգարեալ անդ քընարին։

Է այս խորհրդաւոր գաղտնիք բանաստեղծութեան, ասաց պուետ մի մեծանուն։ Ի նեղութեան ևեթ նուագէ հոգի,

Եւ մէն մի վէրք իւր անձնիւր
Հընչէն նըւագ զարմանաքանչ։

Եւ զի՞նչ խորհուրդ իցէ մեծի գիտութեան անսահմանին, այնմ՝ որ չգտանէ զօրէնս և զպատճառս սահմանելոյն, բայց եղծանելով զպատաճս և զսահմանս 'ի քննել անդ զանսահմանելին։

Զի՞նչ գաղտնիք իցեն ընկերահաշտ կենաց, որ 'ի պատերազմի, յաղքատութեան, 'ի նեղութեան և յուրացութեան անձին՝ մեծութեամբ ճոխանայ և ազնուանայ. իսկ յընչաւէտութեան և 'ի խաղաղութեան, յորժամ պակասիցին հոգիք զօրաւորք՝ որք գիտիցեն համբերատար լինել վշտաց, ընկճեալ տըկարանայ։ Գիտել զարծիլ և կրել քաջութեամբ, նշանագիր էր ժողովրդեանն՝ որ 'ի հնումն նշմարեաց ընդ աղօտ ինչ ինչ յընկերասէր մեծութենէ։

Զի՞նչ խորհուրդ իցէ մարդկեղէն սրտի, որ մեծն է և ազնիւ, նուիրեալ և խորին, յորժամ ունիցի երաշխէպս խորինս, և կամ վէրս ջերաջերմս՝ հանգոյն սրտին Յիսուսի։

Զի՞նչ խորհուրդ իցէ 'ի հոգիսն յայնոսիկ, որք աղօթեն և ասեն. Ոչ գտանեմ զԱստուած, մինչև ոչ դարձայց յոչինչ։

Եւ զի՞նչ խորհուրդ իցէ սիրոյն այնմիկ՝ որ տայր ասել սրբուհւոյն Թերեզայի, կրել կամ մեռանել։

Այսպէս ամենայն օրէնք են առաջիկայ կենացս։ Օրէնքս այս հաստատեալ են առ 'ի գտանել զճշմարիտն՝ նուիրելով զսուտն, զբարին՝ նուիրմամբ չարին, զսէր՝ եղծանելով զանձնասիրութիւն, զԱստուած և զեղբարս մեր՝ նուիրմամբ անձանցս իսկ գլխովին։ Եւ նուիրումն անձանց մերոց՝ զմահացուացս ասեմ, ընծայէ զմեզ առ Աստուած, և Աստուած դարձուցանէ զմեզ անդէն և անդ առ մեզ ինքեանս օրհնեալ և փառաւորեալ. և աւասիկ այս են կեանք։

Ուրեմն օրէնք առաջիկայ կենացս խաչն են, և ինքնին իսկ խաչն է զօրութիւն որ առաջնորդէ առ Աստուած և 'ի կեանս, ցաւալից և արինաթաթաւ եղանակաւ՝ եթէ այնպէս ինչ հարկ իցէ, եղծանելով զընածինս անձնասիրութիւն։

Ահաւասիկ արդիւնք փրկագործութեան:

Արդ իցես այժմիկ խելամուտ խորհրդոյ խաչին և չարչարանաց Քրիստոսի. առնուս 'ի միտ զմեռանել ազնուագունին յորդւոց 'ի մարդկանէ 'ի վերայ այսր արինազանդ խաչի վասն փրկութեան աշխարհի: Ահաւասիկ պատճառք չարչարանաց իւրոյ և խաչին, մեռանելոյն և յարութեանն:

Արդարև մեծ է վարդապետութիւնս այս, և յայտ իսկ է այն վսեմութիւն և անքննելի գեղեցկութիւն Աւետարանին:

Արդ բովանդակեսցուք զոր ինչ ասացաք ցարդ զփրկագործութենէ:

Ապաքէն հաւաստի է զի յանձնասիրութեան ծնանիմք. յայպանելի և յանհեթեթ ասեմ յանձնասիրութեան, արժանի ատելութեան և արհամարհանաց: Կրեմք մեք զանձնասիրութիւն անկակից յարեան մերում, 'ի միտս, 'ի սրտի, 'ի հոգւոջ և 'ի մարմնի: Եւ անդստին 'ի յղութենէ այսպիսիք ածիմք 'ի յերկիր. Անօրէնութեամբ յղացաք, ասեն Գիրք սուրբք: Այլ իցէ՞ այս արդեօք վիճակ մեր անձկալի, վիճակս ասեմ ողջին: Քաւ, մի՛ լիցի: Ապա ուրեմն կործանումն է այդ, և ըստ յատուկ ասացուածոյ՝ անկումն լսի: Սկզբնական մեղք ոչ այլով ինչ իմանալիք են մեզ՝ քան իսկական միութեամբ ազգի մարդկան, որ՝ ըստ բանից սրբոյն Պօղոսի, մի եւեթ մարմին է, և որում պարտի լինել յաշխարհին յաւիտենից մի սիրտ և մի հոգի: Սակայն չարս այս որ վարակին 'ի մեզ՝ փորձ իմն է, և հակառակորդ թշնամի՝ որում այր իւրաքանչիւր պարտի 'ի գլխի հարկանել և յաղթող լինել առ 'ի ստանալ զիւրն ազատութիւն: Բայց քանզի ոչ էր կամաւոր չարս այս յամենեսին, վասն որոյ չէր և բացարձակ: Գոյր՝ որպէս 'ի խորս

ամենայն սրտից և ամենայն մտաց, պաշտօն իմն առ յԱստուծոյ ընդդէմ չարին. գոյր սիրտ մի բովանդակ մարդկութեան, հոգի մի անարատ և կէտ մի կուսական, գաւիրայ և հասարակային կենդրոն անհուն պարունակի հոգւոց. և մարդկութիւն ողջ բովանդակ կարէր ասել հանգոյն մէն մի հոգւոց. Թողեալ է մեզ բոլորոջ ապաւանի: Կամէր Աստուած և պարտէր ընդ այս դուռն երկնային մտանել 'ի հոգիս:

Ըստ ժամանակին յորժամ կամեցաւ ած Աստուած յերկիր զպաշտօն ազգի մարդկութեան, ըզմիակ անարատ հոգին՝ զԿոյսն: Ապա Բանն խորհըրդով իմն, ընդ որոյ մեծութիւնն և ընդ իմաստս մտախոհ եղաք կանխաւ, մարմնացաւ 'ի յարգանդի Կուսին, և եղև որդի մարդոյ: Եղեալ իբրև զմի 'ի մէնջ և մասն համագոյակից ազգի մարդկութեան, ինքնին իսկ նմանեցուցանէ զանձն իւր խմորոյ, որ խառնեալ զբովանդակ զանգուածն խմորէ: Բանիւ իւրով, օրինակաւն և վարուք՝ ունի և դրդէ զկէտն ամփոփ իւրաքանչիւր հոգւոց, այսինքն է՝ զբոլորոջ բանին և զըստոյգն ազատութեան, որ կայ մնայ 'ի խորս հոգւոյ անշքացելոյ. և յաղթելն յանձն մարդկային ըստ բանի և ըստ ազատութեան, անդէն միանգամայն իսկակից ճառագայթիւք իւրումն զօրութեան, լուսոյն և սիրոյ, հակիրճ ասել՝ շնորհօք իւրովք և ամենազգի շնորհօքն, նորոգէ և բժշկէ զողջոյն բնութիւն մարդկային, զնուաճեալն և զայլակերպեալն յանձին իւրում. մաքրագործէ և սուրբ առնէ զթագաւն մասն կենաց, զներքինն ասեմ և զաղօտ մասն կենաց, յորում ոչ կարեմք և ոչ ինչ, և ոչ տեսանեմք ինչ ընդնաւ. Կեայ նա անդանօր, և ինքնին իւրովի գործէ 'ի մեզ զամենայն որ ինչ առանց մեր մարթի գործել 'ի ներքս 'ի մեզ: Կեայ 'ի մեզ, 'ի սիրողս իւր, — և սիրէ

նա զմեզ զամենեսին, — կեայ նա 'ի մեզ՝ զոր օրինակ
սիրտ մի սիրելաբար կեայ յայլում սրտի, և անդ-
նուաճէ զանձնասիրութիւն, ընծայելով հոգւոյ զմա-
հուն խրոյ ոգի. և ուսուցանելովն զմեռանել՝ բժշկէ
զբնութիւն մարդկային:

Ե

Ի միտ առնում զայս ամենայն, և զեղեցիկք են մը-
տածութիւնքս այսոքիկ: Այլ զիա՞րդ ոչ երկմտեցայց ըզ-
պատմական ստուգութենէ նոցա. յորժամ ակն յայտնի
տեսանեմ զի զալուստ փրկչին եղև յետ բիւրուց սերնդոց
անցանելոյ 'ի վերայ երկրի. և անդադրին 'ի զալստենէ
իւրմէ մինչև ցայժմ, կես մասն աշխարհի ոչ ծանեաւ զնա,
և յոլովք իսկ 'ի ծանուցելոց, բազում այն է զի ընդդէմ
կան նմա:

Զայսոսիկ ամենայն առից ես 'ի միտս 'ի յա-
ջորդ տրամախօսութեան մերում: Առ այժմ գիտուն
լիցի քեզ զի չարագործք միայն են, զկամակոր և
զանուղղայ չարագործս ասեմ, որ ընդդէմ կան նմա
մինչ խաչառ. Եւ կոչեմ ես անուղղայս զայնոսիկ՝
զորս և Աստուած ինքնին ոչ ուղղէ: Առ այսոքիկ,
աղէ, մի մոռանար զմասն հանգանակին որ ասէ.
«Եւ էջ 'ի դժոխս»:

Այսոցիկ բանից՝ էջ 'ի դժոխս, կրկին իմաստք
են, հանգոյն Աւետարանին. իմաստ պատմական և
իմաստ բարոյական:

Սուրբն Պետրոս ըստ պատմական իմաստից
խօսի յասելն. «Յիսուս Քրիստոս մի անգամ վասն
մեղաց 'ի վերայ մեր մեռաւ, զի զմեզ մերձեցուսցէ

առ Աստուած. զի թէպէտ և մեռաւ մարմնով, այլ
կենդանի է հոգւով: Որով և ոգւոցն որ էին 'ի բան-
տին՝ երթեալ քարոզեաց, երբեմն ապստամբե-
լոցն[1]»: Յորմէ յայտնի լինի, թէ Բանն մարմնացեալ
կարէր հասանել և յանցեալն և յապառնիկայն և 'ի
հանդերձեալն: Վասն որոյ ասէ սուրբն Պօղոս.
«Քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեանս».
«խողխողեալ աշխարհի զենեալ գառն», ասէ սուրբն
Յովհաննէս: «Տայ մարգարէից, ասէ մի ոմն 'ի սրբոց
Հարց, զզխտութիւն անցելոց»: «Քրիստոս, ասէ ոք
'ի մերոց գերահանճար աստուածաբանից[2], զայ
միշտ». և այսպէս մերկանայ զմիտս իւր. «Քրիս-
տոս առընթեր եկաց ցանգ այնոցիկ՝ որոց եղև մի
սիրտ, յորժամ ժամանակի և տեղւոջ և կեցեալ իցեն
նոքա: Այպա ուրեմն ծնաւ՝ չարչարեցաւ և յարեաւ
վասն ամենեցուն առ հասարակ, որոց խողխողեալ աշ-
խարհի մինչև 'ի վախճան գործեալ իցէ զիւրն ար-
դարութիւն. բայց ոչ վասն այնոցիկ՝ որոց տեսեալ
ակն յանդիման զիրեւելի խորհուրդս իւր սրբարարս,
և 'ի բաց հատին յայնցանէ զհոգիս իւրեանց:

Յորմէ իմաստասիրեմք զի փրկագործութեան՝ են
արգիւնք ազդելոյ և յանցեալն, մանաւանդ թէ ասել՝
զայ նմին զօրութիւն յաւիտենական, անանց, առանց
ապագայի և մշտնջենաւորապէս մօտաւոր:

Իսկ բարոյական միտք բանիս «Էջ 'ի դժոխս»,
այս են. Հոգի սրբոյ ուրուք, ասէ սուրբն Օգոստի-
նոս, երկինք են. որոյ վասն և հոգի մեղաւորաց՝ է
դժոխք: Այստ ուրեմն հարկ եղև Քրիստոսի իջանել,
և այս է մրուր բաժակին: Մեղապարտք, սիրտք՝ զի-

1 Ա. Պետր. Գլ. Գ. 18:
2 Թովմասինոս. Յաղագս ճոխութեան Քրիստոսի. Գլ. ԺԵ:

տողք միայն զառելութիւն, արք ափխնաուշոք, որդիք Կայենի, սիրով ժանտք և Թիւրք, վայրաքարշք առ անձնասիրութիւնս իւրեանց՝ փոխանակ 'ի վեր առլոյն երկնից ելանելոյ և յեռանդն այլոց հոգւոց, անօթքս այսրքիկ ցասման և դառնութեան, ծնունդք իժից, ըստ բանից Քրիստոսի, քակտիչք եղբայրագութ ընկերակցութեան, որդիք սատանայի, պատճառք պատերազմաց, ատելութեանց, արտասուաց, խազմից, բռնութեանց, գերութեան և անընդոստ կալոյ աշխարհի յանձնասիրութեան պայմանին, ասագին դժոխքն յոր պարտ էր Քրիստոսի իջանել, և որում պարտ էր նմա յաղթող լինել: Էջ անդանօր, և յաղթեաց՝ որպէս ասէ սուրբն Օգոստինոս, միոյ ևեթ մասին, այլ ոչ և միւսոյն: Հարկ էր զի իջցէ 'ի կենդանի դժոխս յայսոսիկ և յաղթահարեսցէ զնոսա, որպէս զի մի լիցին յաւիտենականք:

Մարտիր արդ, ո՜վ Յիսուս, ընդդէմ անվախճան մահուն որ մօտալուտ սպառնացեալ կայ մեղաւորաց. մտեալ 'ի դժոխս հոգւոց նոցա, առ 'ի փրկել զնոսա: Առաքեցար դու առ 'ի յաղթող լինել մահու և անօրինաց. մահու՝ որում կարող ես զօրութեամբ արարչագործ բազկի քո յաղթել, և անօրինաց՝ որք հզօրագոյն կրճիմն են քան զմահ, կրճիմն ինքնիշխան, զոր Աստուած ինքնին ոչ 'ի կոր կործանէ մինչև կամեցեալ իցէ նոցա:

Արդ անօրէն է ամենայն մարդ ըստ ընդաբոյս իւրումն անձնասիրութեան. այլ ընդ անկակից և ըննածին չարութիւնս այս 'ի գութ խանդաղատի յոյժ Քրիստոս. և զամենայն հէքս և զեղկելիս այսպիսիս, զկաշկանդեալս ընդ իւրեանցն մահաբեր անձնասիրութեամբ, զորս կոչէ Յիսուս սորուկս և աղքատս, հիւանդս, կաղս և կոյրս, խուլս և համերս, բորոտս

և մեռեալս, զայսոսիկ ասեմ սիրէ, և առ սիրոյն բժշկէ, և յարուցանէ մերձենալովն առ նոսա կենդանաւէտ սիրոյն զօրութեամբ: Իսկ վասն այլոց չարաց՝ չարաց ասեմ կամակորաց և գործօնէից՝ ասէ. «Հարցեն զիս և անարգեսցեն, և պատառեսցեն զսիրտ իմ, արբցեն զարիւն իմ և բժշկեսցին. 'ի սպառել կենաց իմոց՝ շունչ իմ 'ի վերայ նոցա ծաւալեսցի»:

Եւ անօրէնք իբրև 'ի բնաբոյս ազդմանէ դրոհ տան 'ի վերայ Քրիստոսի, և կամին խորտակել զնա մինչ իսպառ, և ամենակալն Տէր զօրութեանց թոյլ տայ նոցա առնել, ակն կալեալ զինաթափ լինելոյ նոցին, և գտանելոյ զբժշկութիւն արեամբն աստուածայնով:

Բայց դժուարին է յոյժ չարագործին լինել զինաթափ. զի ոչ միայն է նորա զէն՝ այլ և խայթոց հանգոյն իժի, այսինքն է՝ զէն մարմնակից, գործի չարութեան համադոյակից մտաց իւրոց և սրտի: Պարտ է նմա, առ 'ի վկանդիլ և կամ 'ի բժշկիլ, որ հանդիտազօր են միմեանց, պարտ է նմա ասեմ մխել և թողուլ զխայթոց իւր 'ի խայթուած մի. պիտոյ են նմա վէրք ինչ ջերաջերմ՝ յոր թափեսցէ զթոյն իւր բովանդակ, այլ միանգամայն վէրք բուժիչ՝ որ տացէ նմա զկեանս փոխանակ մահու: Հարկ է, որպէս ասէ Պօղոս, զի ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԱՆՑԱՆԻՑԷ Ի ՆԱ, 'ի Յիսուս ասեմ, և գեղեցկութիւն իւր 'ի մեզ: Ահաւասիկ պատճառք խաչելութեան Յիսուսի:

Այլ, ո՜վ խորհրդոյ ազատութեան. մարթին մարդիկ խոցել զսիրտն Յիսուսի և չգտանել զբժշկութիւն 'ի նմանէ յորժամ ոչն կամիցին. մարթին հեղուլ զամենայն զթոյնս յԱստուած և յեղբարս իրեանց, և միշտ ընդդէմ կալ զեղման սիրոյ՝ շնորհելոյն առ 'ի յԱստուծոյ. մարթին թողուլ զխայթոցն 'ի

սրտին Աստուծոյ, առանց զկեանս ստանալոյ։ Մեռանին յայնժամ և մեռանին զմահ յաւիտենական. զի ուրանօր կարասցէ գտանել զկեանս որ ոչն եգիտ և 'ի սրտին Աստուծոյ։

Ահաւադիկ տանջանքն յաւիտենականք։

Ո՛հ, և որպիսի՜ վարդապետութիւն. զայս այսպէս բերել կամիցի արդարութիւն, այլ զիա՞րդ և բարութիւնն Աստուծոյ, բարութիւն իւր անհուն և սէր։

Մի՛ մոռանար ընաւ, զի անհուն բարութիւնն Աստուծոյ առաջինն է և պարզագոյն 'ի մասունս հաւատոյ։ Հանգանակն հաւատոյ սկսանի Հայր դաւանելով զԱստուած. ապա ուրեմն ուղղափառ կրօնք՝ նախ քան զամենայն-կացուցանեն զսէր Աստուծոյ։

Սակայն հարցանեմ զքեզ, եթէ իցէ՞ հնար ուշիւ մանր նկատել զի զիարդ-ուպէտ գործելովս մերով ըստ ազնկամի ազատութեան բերիցիմք մեք 'ի մի և 'ի նոյն կէտ նպատակի։ Անհնարին է այս ինքնին իրովի։ Եւ զիա՞րդ. յորժամ հոգի՝ ընդ բոլանդակ աւուրս կրուեմն փորձոյ ընտրէ կամովին, ազատօրէն և կամակորութեամբ զճանապարհ անձնասիրութեան, զճանապարհն սնեմ հակառակ ճանապարհին կենաց. յորժամ սպառին փորձքն հնարաւորք, և առ մէն մի ճիգն որով կամի Աստուած պարգևել նմա կեանս, փոխարինէ նա զկամակոր պնդութիւնն 'ի մահու և զայլ իմն նորագգի վատթարութիւն, զի՞նչ առնել իցէ Աստուծոյ 'ի վերայ այսպիսւոյ գեհենի և դժոխոց։ Տեղի տուեալ հեռանալ, որպէս զի մի՛ լիցին անհուն դժոխք և տանջանք նորին. և յաւիտենական է միայն. ինքնին հոգին այն զատեցաւ զանձն իւր և անջատեցաւ անդարձ 'ի յաւիտենական կենաց։ Բայց, չէ՞ մարթ ընաւ լինել այլազգ։ Եւ արդարև, զրեաջիր եթէ ամենայն չարիքք և ամենայն կեանք զոգցես ըստ

կամաց ճակատագրին ածիցեն առ 'գերագոյն բարին. յայնժամ բարիք ամենայն և չարութիւնք լինիցին անխտիր. յայնժամ ոչ մի ինչ խտիր և զանազանութիւն կայցէ ընդ աշխատութիւն և ընդ ախտս, ընդ առաքինութիւն և ընդ մեղանս, ընդ անձնասիրութիւն և ընդ սէր, այլ համայն հանգիստազօրք լիցին միմեանց։ Եթէ ածիմք ամենայնիւ առ Աստուած ըստ անհրաժեշտ հարկի, ապա ոչ ինչ է ազատութիւն, զի յոչ ինչ է պիտանացու, և անհեթեթ իմն է աշխատն լինել, և պանդոյր մնաց իցէ առնելն ընտրութիւն. ինչ մի ևեթ կայ մնայ առնել յաշխարհի, նիրհել ընդ արեգական, և յորսայսեալ կալ մնալ 'ի վերայ երկրի ընդ լծով ազգելեաց։

Բարձ 'ի միջոյ զյաւիտենականութիւն պատժոյ, և աճա 'ի վեր ժայթքեսցես անարգել միահամուռ զամենայն վիժածս անաստուածութեան։

Ահասիկ փաստ և հաւաստիք զօրաւորք են այսորիկ, եթէ զիտիցես իմաստասիրել, որք ջատագով լինին ընդդիմակօք վարդապետութեան յաւիտենական լինելոյ պատժոյ։

Զգիտեմ զինչ տալ պատասխանի, և սակայն ոչ կարեմ առնել 'ի միտ եթէ զոգցես ամենայն մարդիկ 'ի մահ յաւիտենական սահմանեալ իցեն։

Եւ ո՞րք առաց քեզ զայդ. Մասիյոն արդեօք և քարոզ նորա որ 'ի վերայ սակաւաթիւ ընտրելոց։ Գիտասջիր քաջ զի ճառս այս Մասիյոնի չէ ինչ ճշգրիտ ըստ աստուածաբանութեան, և այնպէս ծանուցեալ 'ի բոլանդակ Եկեղեցւոյ։ Ճշմարտանութիւնք ինչ զանկաւութենէ ընտրելոց, որք զեռ ևս անզի զտանեն առ մեզ, արգելինք են յանեննեան վարդապետութեան։ Հռովմ ոչ այսպիսի ինչ առաջի արար ընաւ և կամ ընկալաւ, այլ մանաւանդ հակա-

ռակեցաւ միշտ նոցին. և յաւուրսն յորս Մասխյոն և այլք 'ի Գաղղիա յայս վտանգալից աւելադանցութիւնս Թեւակոխէին, ծիրանաւորն Աֆրոնատ 'ի Հըռովմ գոգցես իմն յընդհակառակս նոյին ջանահնար լինէր։

Այլ սակայն չէ այս Մանիքենի և Ցանսենեանց բան, այլ և Աւետարանին. յանձնարիցն է մերժել զոր ասեն, թէ «Բազում են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք»։

Արդարև այդ այդպէս է, այլ զի՞նչ կամիցի ասել ընտրեալն։

Ընտրեալն՝ նշանակէ փրկեալ. միթէ իցէ՞ ինչ դըժուար այլազգ իմանալ։

Ոչ կամիմ զքեզ տգէտ լինել զի Հայրն Պերիւյէր պարտաւորեցաւ վասն այդելոյն եթէ անհնար իցէ այլազգ իմանալ զբանդ. այլ ուրեմն մարթ է իմանալ այլազգ։ Միայն անտեղիտալի և անուղղայ չարագործք ևեթ են դատապարտեալք։ Քրիստոս ինքնին զմահ իւր վիրաբերէ առ այլս, մեռանի 'ի նոսա, և ընդ նոսին յառնէ։

Միթէ նոյն իցեն միտք վարդապետական բանին «Համբարձաւ յերկինս»։

Բարոյական իմաստն այդ է. այլ դոյ այնմիկ և իմաստ պատմական, ոչ ինչ ընդհատ ճշմարիտ։ Քրիստոս յետ յարութեան իւրոյ ասէ. «Ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր»։ Ցաւուր Համբարձման տեսին զնա Առաքեալք համբարձեալ յերկինս, առ 'ի բազմել արդարև 'ի վերայ գահուն իւրոյ, 'ի տեղի արարչութեան՝ կեդրոնագոյն քան զերկիր. և այս պարտի լինել տեղին այն զորմէ ասաց, «Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի... զի ուր եսն իցեմ և դուք անդ իցէք[1]»։

1 Յովհ. ԺԴ. 2. 3։

Եւ զի՞նչ կամիցին ասել բանքս «Նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր ամենակալի»։

Ակն յայտնի երեւի զի այլաբանական իմն է ասացուածս. որոյ իմաստն է, զի Քրիստոս՝ իբրև մարդ, ընկալաւ զառաջնականն զօրութիւն յետ Աստուծոյ. և ինքն իսկ ասէր զայս, թէ «Ամենայն ինչ տուաւ ինձ յերկինս և 'ի վերայ երկրի»։ Ցայնմհետէ մինչև ցայժմ Որդին մարդոյ գործէ արքայական զօրութեամբս այսուիկ, առ 'ի կերպարանափոխ առնել զընական և զբարոյական տիեզերս։ Լիցի մեզ այլուր ճառել զմեծահրաշ ճշմարտութենէս։

Ահա յաթոռոյ աստի գահուն դատէ և դատեսցէ, բաժանէ և բաժանեսցէ զբարին 'ի չարէ, և ըղլաւս 'ի վատթարաց։ Կամէր Աստուած զի մարդիկ դատեսցին յումեքէ 'ի հաւասարորդէ իւրեանց. «Եւ իշխանութիւն ունի դատաստան առնել, զի որդի մարդոյ է»։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ե

Եկեղեցի.

> « Հաւատամ 'ի սուրբ Հոգի. 'ի սուրբ յընդհանրական Եկեղեցի, և 'ի հաղորդութիւն սրբոց »։

Ա

Խօսեսցուք արդ զկաթողիկէ Եկեղեցւոյ։ Եթէ կարասցես տալ ինձ 'ի միտ առնուլ զկաթողիկէ Եկեղեցին և խօսել համառօտ զանսխալականութենէ նորա, նա մանաւանդ զառաւելս, եթէ ԱՐՏԱՔՈՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՉԻՔ ՓՐԿՈՒԹԻՒՆ, զարմանք կալցին զիս մեծապէս և չեղեց ինձ դժմիտ։ Քանզի եթէ այնպիսի ինչ իցէ ուղղափառ Եկեղեցի որպիսի համարի լինել զնոքն, արդարև չանաւէտ իցէ աշխարհի։

Ասեն ոմն ուրեմն. Եթէ ուղղափառութիւն ճշմարիտ իցէ, լուծեալ իցէ և առեղծուածն աշխարհի. և այս է միակ լուծումն հնարաւոր. այլ առաջ զի ուղղափառութիւն սուտ է, և առեղծուածն կայ մնայ անլուծանելի։

Այլազգ ամենևին խօսեցայց ես և ասացից. Եթէ ուղղափառական կրօնք ճշմարիտ են՝ լուծեալ է առեղծուածն աշխարհի. այս է միակ լուծումն հնա-

րաւոր. ապա ուրեմն ճշմարիտ են կրօնք ուղղափառականք։ Ցայս վախճան պարտ է հանգուցանել ըդբանս, եթէ չկամիցիմք գալ յեզրակացութիւն Վոլգեռի, թէ «Աշխարհս՝ է չար իմն խնդկատականք»։

Այլ անցցուք յառաջ։ Ցուցամ տալ քեզ 'ի միտ առնուլ բազում ինչ զուղղափառ Եկեղեցւոյ զօրս անգիտանաս։ Վայելչագեղ տեսիլ մօրս մերոյ Եկեղեցւոյ ծածկեալ կայ ընդ երկաթի զիմնօք, զարքնելոյ 'ի տգիտութենէ և 'ի մոլորահօղմ խաբէութենէ, զոր պատեալ զերեսօք նորին հային և ասեն. Անգեղեայ է՝ ամենևին։ Այլ ունկն մատո աղաչեմ բանիցս՝ զոր առաջի կայ ինձ ասել։

Եւ նախ առաջին հաւատամս 'ի հոգին Աստուծոյ, 'ի սուրբ Հոգին։

Արդարև հաւատալով հաւատամ ես յԱստուած և 'ի Հոգին նորա։

Կարծիցես արդեօք եթէ գուցէ ոք որ ոչ հնազանդիցի հոգւոյն Աստուծոյ։

Ասա ինձ նախ եթէ զինչ իցէ հնազանդիլ հոգւոյն Աստուծոյ։

Հոգին Աստուծոյ՝ է հոգին այն որ նորոգէ զհոգիս մեր, փոխելով զընածին անձնասիրութիւնս 'ի սէր Աստուծոյ և մարդկան։

Հաւատամ աներկմիտ զի զան մարդիկ որք հոգիաշունչ ազդմամբն Աստուծոյ փոխին 'ի բնածին անձնասիրութենէ իւրեանց 'ի սէր Աստուծոյ և մարդկան։

Արդ եթէ զոն երկուք ամանք յօդեալք այսու սիրով ընդ միմեանս և ընդ Աստուած, են երկոքին սոքա կաթողիկէ Եկեղեցի։

«Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ՝ անդ եմ ես 'ի մէջ նոցա [1]»։ Արդ այսոքիկ

[1] Մատթ. ժԸ. 20։

երկու կամ երեք անձինք՝ են Եկեղեցին ուղղափառ[1], զի ունին զհոգին հանրական, զհոգին Աստուծոյ, զհոգի՛ որ ջանայ յօդել զամենայն մարդիկ ընդ Աստուծոյ և յօրինել ժողով հանրական որդւոցն Աստուծոյ։ Գոն մարդիկ այսպիսիք, և անմարթ է թէ չլինիցին այսպիսիք։

Այս ուրեմն ուղղափառականն Եկեղեցի չէ այլ ինչ, բայց ժողով ևեթ արդարոց, սրբոց և որդւոցն Աստուծոյ։

Մի՛տ դիր։ Ճշմարիտ է զի ուղղափառ Եկեղեցի բովանդակ հաստատեալ է յորդիս Աստուծոյ և յանդրանիկն 'ի ծնունդս՝ 'ի Յիսուս Քրիստոս, առանց որոյ չլինէր Եկեղեցի։ Վասն որոյ և ժողով որդւոցն Աստուծոյ կոչի նոցա Եկեղեցւոյ։ Այլ Եկեղեցւոյ է հոգի, է և մարմին։ Գոյ Եկեղեցի երևելի, գոյ և Եկեղեցի աներևոյթ։ Նախ խօսեսցուք մեք զհոգւոյ Եկեղեցւոյ, և ապա զմարմնոյ։ Եւ հոգին Եկեղեցւոյ կազմեալ է յայնոցիկ որք փոխեցան հոգւովն Աստուծոյ. որոց փոխեցաւ հոգին, որպէս ասէ Աւետարանն. այսինքն է՝ որք փոխեցան 'ի ծառայութենէ անձնասիրութեան 'ի կերպարանս աստուածային սիրոյ. այսոքիկ ևեթ հոգիք՝ և ոչ ոք բաց 'ի սոցանէ, մասունք են հոգւոյն Եկեղեցւոյ։ Աստուածաբանական իմն է այս վարդապետութիւն. «Արդարք ամենայն՝ և միայն արդարք, են 'ի հոգւոջ Եկեղեցւոյ[2]»։

Արդ ստոյգ է կանխաւ յառաջնմէ, թէ պարտին լինել արդարք յեկեղեցւոջ, ապա թէ ոչ պարտ էր յուսահատ յուսալեկ լինել զմարդկութենէ։ Ապա ուրեմն գոյ Եկեղեցի մի ուղղափառական. զի՛ր թէ երևելի իցէ և կամ ոչ երևելի, սակայն գոյ։

1 Երեքին այսոքիկ էին յառաջնում աւուր՝ Յիսուս, կոյսն Մարիամ և սուրբն Յովսէփ։

2 Բէրրանէ։

իմանալ զայս։

Եթէ իմանաս՝ ապա դիւրեաւ 'ի միտ առնուցուս զառածս. Արտաքոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն։ Եթէ ճշմարիտ իցէ զի արդարք ևեթ՝ և ոչ այլ ոք, մասունք են հոգւոյն Եկեղեցւոյ, քաջայայտ է զի և որք արտաքոյ իցեն հոգւոյն Եկեղեցւոյ՝ ոչ կեան յարդարութեան։ Եւ 'ի վերայ այսորիկ՝ զիա՞րդ կարիցես ժխտել եթէ միաբանութիւնն յօդելոց ընդ միմեանս և ընդ Աստուած 'ի սէր և 'ի ճշմարտութիւն՝ իցէ ժողով անմահ։ Տես միով այսու տեսութեամբ զանխախտութիւն ուղղափառ Եկեղեցւոյ։

Այո, եթէ գուցէ արդարև ինչ մի անախտական 'ի վերայ երկրի, է ժողովս այս։ Այլ մա՞րդ ինչ իցէ ուրեք կամ ժողովոյ լինել անախտ 'ի վերայ երկրի։

Եղո՜ւկ. ինքնին իսկ ժողովք ազգի մարդկութեան անախտ պարտէին լինել. և իմաստասէրք որք ասացին՝ թէ «Ճշմարիտ է զոր միաձայնութ ամենայն մարդիկ խորհին», ունել ունէին իրաւունս՝ եթէ չգոյր չար 'ի վերայ երկրի։ Եւ զիա՞րդ. Բանն յաւիտենական լուսաւորէ իբրև զարեգակն զամենայն մարդ եկեալ յաշխարհ. յամենեսին է բան՝ որ գոյ յԱստուծոյ. Հոգին Աստուծոյ թևատարած հովանայ 'ի վերայ գլխոյ մարդկութեան, զոր օրինակ 'ի վերայ սերմնոց արարածականաց յառաջին աւուրն ծննդոց, և զոր ամենայն մարդիկ լուսաւորեալ լուսովս այսու տեսանեն՝ առ հասարակ զառանցա՞նք իցեն և պատրանք։ Այո, արդարև գոն զառանցանք և պատրանք. այլ յի՞նչ արդեօք. — 'ի սիրտս բաժանելոյ 'ի միութենէ, և 'ի բարս հերձուածողաց, 'ի չարամիտս՝ որք ոչ տեսանեն զլոյսն Աստուծոյ. բայց միայն ընդ հաստատակողմն ընաւոր անձնասիրութեան. որք գերեն՝ ըստ սրբոյն Պօղոսի, զճշմարտութիւնն Աստուծոյ, անիրաւ-

ւութեան։ Թողցուք 'ի բաց զսոսա, և մնասցեն հո-գիք մաքուրք կամ սրբեալք, և խոնարհք և միացեալք ընդ Աստուծոյ 'ի միութիւն ազգի մարդկան. միու-թիւն՝ հաստատեալ և պահպանեալ միայն 'ի Յիսուսէ Քրիստոսէ, որպէս տեսաք 'ի վերոյ։ Զոր հաւա-տանն և տեսանեն սոքա միաբան 'ի միասին և ընդ Յիսուսի Քրիստոսի, որ է գլուխ միշտ կենդանի ազ-գի մարդկան, ճշմարիտ է։ Մարթ է մեզ տակաւ ի-մանալ յայսմանէ նախ՝ թէ որպէս անսխալ է հոգին Եկեղեցւոյ, և ապա՝ թէ որպէս Եկեղեցին երևելի, որ կենդանի առնէ զհոգիս զայս, զյղացեալն հոգւովն Քրիստոսի որ է հոգի Աստուծոյ, իցէ անսխալ։

Սիրելի է ինձ հոգիս այս Եկեղեցւոյ, այլ պարտ է մեզ բերել յերևելին Եկեղեցի և 'ի նորին մարմին, և յայնժամ հարկ է մեզ 'ի բաց թողուլ զմտաւորականն։ Եւ նախ՝ կարևոր պէտք ինչ իցեն արդեօք լինել մասն մարմնոյ Եկեղեցւոյ առ 'ի լինել մասնակից հոգւոյ նորա։

Ոչ. մարթ է լինել 'ի հոգւոջ Եկեղեցւոյ՝ ա-ռանց լինելոյ 'ի մարմնի նորա. և երկրորդ անգամ՝ մարթ է լինել 'ի մարմնի Եկեղեցւոյ՝ առանց լինելոյ 'ի հոգւոջ նորա։ Սակայն ոչ եթէ անխտիր ինչ իցէ, որ-պէս տեսցուք յառաջիկայս, լինելն և կամ ոչ 'ի մար-մնի Եկեղեցւոջ. զորմէ ահա այսպէս բարբառի սուրբն Օգոստինոս. Գոյ Եկեղեցի ներքին, գոյ և արտաքին։ Բազումք թուին արտաքոյ Եկեղեցւոյ, և են 'ի միջի նորա. և բազումք թուին 'ի ներքոյ նորա, այլ են արտաքոյ։ Ես կամի ասել բանիւքս, թէ բազումք են 'ի մէջ երևելի կամ արտաքին Եկեղեցւոյ, և չեն յաներևոյթն և 'ի ներքին Եկեղեցւոջ. և են դարձեալ բազումք ար-տաքոյ երևելի Եկեղեցւոյ և գտանին յաներևոյթն։ Սուրբն Օգոստինոս բազում անգամ ճառէ զճշմարտու-թենէս. և ուրեք ասէ. Են հոգիք որք յԵկեղեցւոյ են, և

չեն յԵկեղեցւոյ. Են են յԵկեղեցւոջ սուտ քրիստո-նեայք. և 'ի մէջ ամբարշտաց, — այլ անշուշտ 'ի վերին երեսս ամբարիշտ եղելոց, — են որդիք Ե-կեղեցւոյ։ Մեղապարտք՝ մարմնով ևեթ են յԵկե-ղեցւոջ և ոչ նոյնպէս հոգւով. և այս պատճառի ամե-նայնիւ առածի աստուածաբանական վարդապետու-թեան մերոյ, թէ «Արդարք ամենայն, և միայն ար-դարք են 'ի հոգւոջ Եկեղեցւոյ»։

Բ

Համառօտիւ յոյժ մեկնեա ինձ զառածս. «Արտա-քոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն»։ Այնպէս ինձ թուի տակաւին ամենայն ասացելովքդ ցարդ՝ զի ամենեքին որք չիցեն առաքելական և հռոմէական ուղղափառք՝ որդիք դատապարտութեան են, ըստ վարդապետութեան Եկե-ղեցւոյ. զի դատապարտութեան որդիք են անթիւ ազգք արևելից, բովանդակ մեծ հերձուածն յունական, ամե-նայն նորաղանդք եւրոպացիք, ամենեքին սոսկ զորս տե-սանեմք աչօք մերովք զի կեան և մեռանին արտաքոյ ուղղափառ Եկեղեցւոյ։ Եւ միթէ իցէ՞ հնար այսմ այսպէս լինել։ Ո՞չ ապաքէն հակառակ իցեն ընդդէմ Աստուծոյ՝ վարդապետութիւն մի այսպիսի։

Անբերելի է վարդապետութիւնդ այդ, ոչ ուրա-նամ ինչ և ես։ Այլ ո՞ զայս այսպէս ուսուցանէ. քանզի ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութիւն այլազգ է ամենևին։

Եւ զիա՞րդ իմանաս։

Ըստ բանիցն։ Ուղղափառ Եկեղեցի դատապարտ առնէ, ասեն, զբազումս 'ի մարդկանէ. այլ ես ա-

սեմ, եթէ ուղղափառ Եկեղեցի դատապարտէ և ոչ զոք, ոչ զառանձին անձն ուրուք և ոչ զդաս ինչ մարդկան։

Եւ զիարդ. միթէ ո՞չ զոք դատապարտիցէ յաւէտ, երբ՝ Արտաքոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն։

Գիտիցես անշուշտ, — ապա թէ ոչ ազնուութիւնդ քո զուղղափառ վարդապետութենէ աւելի իցէ քան զոր կարծէիս, — գիտիցես ասեմ զի Եկեղեցին ուղղափառ մատնացոյց առնէ և ոչ զոք՝ ասելով. Այրս այս դատապարտեալ է։ Ցոր և է մեղս և մեղանիցի որք առաջի աչաց մերոց 'ի հերետիկոսութեան, յանհաւատութեան, յեղեռնագործութեան, յակն յայտնի հայհոյութեան, երբեք չասէ Եկեղեցի, և ոչ կարէ իսկ ասել. Այրս այս դատապարտեալ է։ Այլ ասէ՝ Ընդէտ եմ դատաստանին Աստուծոյ. որպէս զի ուղղափառ Եկեղեցի չէ դատապարտեալ և ոչ զոք 'ի մարդկանէ։

Նորայոյրս բարբառիս. և խիրամ մի գուցէ ոչ ուղիղ մեկնես ինձ զվարդապետութիւն քոյին Եկեղեցւոյ։

Գիտիցես արդեօք զպատասխանին սրբոյն Փրանկիսկոսի Սալեզացւոյ, առ որ հարցանէր ցնա զԼութերէ՝ եթէ իցէ՞ դատապարտեալ։ Եւ պատասխանի սուրբն Փրանկիսկոս Սալեզացի և ասէ. Ոչ գիտեմք մեք։ Ուղղափառ որք չկարէ այլազգ ինչ տալ պատասխանի։ Ցոյց զամբարիշտ որ մեծեղեան, զմեծագոյնն 'ի թշնամեաց Եկեղեցւոյ, և հարց ցԵկեղեցի, եթէ իցէ՞ սա անարգ և կամ դատապարտեալ. Եկեղեցի ասասցէ միշտ. Ոչ գիտեմ։ Չգտանիցես անշուշտ և ոչ զմի ևեթ քահանայ որ ասիցէ ցքեզ եթէ դատապարտեալ իցէ Վոլդէռ։ Բազումք անշուշտ ասասցեն. կարծեմ այնպէս իցէ։ Այլ ոչ որ ասասցէ.

Յանուն ուղղափառ հաւատոց հաստատեմ եթէ դատապարտեալ է Վոլդէռ։

Ի Հռոմ կայր քահանայ որ սրբանուն և սքանչելագործ. և չարագործ ոմն դատապարտեալ 'ի մահ վասն եղեռանց իւրոց, կայր անզեղջ և անապաշաւ և ոչ դադարէր 'ի հայհոյելոյ։ Ընդ երիս աւուրս մատեաւ առ նա սուրբն՝ զի այսպէս կոչէր զնա ժողովուրդն, թափեալ զամենայն ճիգն իւրոյ նախանձուն, և թախանձէր զնա չմեռանել անապաշաւ։ Անհնարին եղեն ամենայն ջանք նորա. և 'ի մերժել իւրում յելանելն և 'ի զհետ կրթիլ չարագործին 'ի տեղւոջն կառափման. «Ժողովուրդք, գոչեաց նա յայնժամ, եկայք տեսանել զանարգ որ և զդատապարտեալ»։ Արդ տես եթէ զինչ եղեն արդիւնք բանիցն։ Ցետ քառասուն ամաց 'ի վերայ անցանելոյ սկիզբն եղև քննութեան կարգելոյ 'ի դասս սրբոց զերանելիս զայս երէց։ Անժխտելիք էին սքանչելագործութիւնքն, այլ ընդդէմ առաջադրեցան սքանչելեացն՝ բանքն ասացեալք 'ի կառափման տեղւոջ զանզեղջ մեղաւորէն, և արգելու 'ի կարգելոյ 'ի դասս սրբոց. զի բանքն ոչ սրբոյ ումեք էին և վէրս իմն 'ի վերայ զնէին հաւատոյ։

Եւ յամենայնէ յայտնեցից ածեմ յառաջ, եթէ Եկեղեցին ուղղափառ ներողամիտ է քան զամենայն ժողովս երևեալս 'ի վերայ երկրի։

Աստուած տայ Եկեղեցւոյ կարողութիւն սահմանելոյ զոմանս 'ի ճշմարիտ բարեկամացն իւրոց՝ ըզսուրբս ասեմ, այլ ոչ ետ նմա ճանաչել և ոչ զմի զոք 'ի թշնամեաց իւրոց որոշակի։ Աստուած հայր է, զոր կարի իսկ մոռանամք. և ոչ ումեք 'ի մարդկանէ և ոչ նմին իսկ ուղղափառ Եկեղեցւոյ՝ խորհրդագգած հարսին իւրոյ, տայ գիտել զանարգութիւն և զամօթ յա-

ւիտենական միոյ ուրուք յորդւոց իւրոց, որպէս զի սիրեսցուք մեք զմիմեանս աստ յայսմ աշխարհի առանց ինչ խտրանաց։

Զի՞նչ ուրեմն եզրակացիցէ առաւել ահաւոր. Արտաքոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն։

Այս է նշանակութիւն նորա, թէ անմարթ է նոցա փրկիլ որ արտաքոյ Եկեղեցւոյ մնասցեն։ Եւ այս է հետեւութիւն իմն սահմանին աներեւոյթն Եկեղեցւոյ. զի Եկեղեցին աներեւոյթ՝ է ժողով արդարոց. և որ ոչ իցէ արդար, ոչ է 'ի նմա, և կայ 'ի չարն։ Ուսուցանէ դարձեալ առաւել այս ինչ մի կարի յոյժ կարեւոր, եթէ իւրաքանչիւր ուրուք վիճակ որոշի 'ի մահուն իւրում։

Կարեմ արդեօք յառաջ բերել ինձ զբան վարդապետութեան աստուածաբանից զայսմանէ։ Զինչ ինչ ուսուցանեն եկեղեցական վարժարանք զխնդրոյս։ Կամիմ տեսանել խնդիր իսկ այսօր առ 'ի հաւատոյ։

Մատեանն աստուածաբանութեան նորագոյն և առձեռն՝ սփռեալ գործիս ընդ ամենայն տեղիս, յամենայն եկեղեցական վարժարանս ընդ աշխարհ բովանդակ, է Բերրոնէին յիսուսեան՝ տեսական աստուածաբանութեան վարդապետի 'ի Հռոմ։ Եւ ահաւասիկ այս է մին յառաջարկութեանց իւրոց.

Որ ԻՒՐՈՎՆ ՅԱՆՑԱՆՕՔ մեռանիցի 'ի հերետիկոսութեան, 'ի հերձուածս և կամ յանհաւատութեան՝ ոչ կարէ փրկիլ. այսպէս՝ արտաքոյ Եկեղեցւոյ չիք փրկութիւն։

Ահա որպէս առ 'ի բնագրին՝ քանզի կամիս տեսանել աչօք քովք. Որ ոք ՅԱՆՑԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ փոխեսցի 'ի կենացս, 'ի հերետիկոսութեան, 'ի հերձուածս և կամ յանհաւատութեան, չկարէ ամենեւին փրկիլ. և կամ՝ արտաքոյ ուղղափառ Եկեղեցւոյ չիք նմա տեղի փրկութեան։ Քաջայայտ իցեն բանքս արդեօք։

Մատենագիրս այսպէս պարզաբանէ զիւրն առաջարկութիւն. «Ի բանից առաջարկութեանս կարի քաջ յայտնի լինի թէ զայնոցիկ են բանքս որ յանցանօք իւրեանց մեռանին 'ի հերետիկոսութեան, 'ի հերձուածս և կամ յանհաւատութեան, այսինքն է զայնոցիկ որք իսկապէս են արտաքոյ Եկեղեցւոյ. և ոչ զայնցանէ որք անյաղթելի տգիտութեամբ արտաքոյ են Եկեղեցւոյ. որք՝ օրինակ իմն, լեալք 'ի մանկութենէ մոլորութեամբ և կանխակալ կարծեօք, ոչ երկբային իսկ բնաւ եթէ իցեն 'ի հերետիկոսութեան կամ 'ի հերձուածս. և կամ եթէ զգայցեն ինչ տարակոյս, 'ի խոյզ և 'ի խնդիր լինին ճշմարտութեան ամենայն ճգամբ. զսոսա Աստուած եւեթ դատի, որ միայն ընդմտանէ 'ի խորս սրտից։ Բարութիւնն Աստուծոյ ոչ թոյլ տայ զի ոք վասն ակամայ ինչ մեղաց զյաւիտենականն կրեսցէ պատուհաս։ Հաստատել զընդդէմն այսոցիկ՝ հակառակել է վարդապետութեան Եկեղեցւոյ[1]։

Խոստովանիմ զի անգիտանայի իսպառ զոր ինչ ուսուցանեն ինձ վկայութիւնքս, և զի արդարև կարի վրիպակ էր զոր խորհեցայս մինչև ցարդ զուղղափառ խստութենէ։ Ի միտ առնում զաներեւոյթն Եկեղեցի. իմանամ և զհոգին Եկեղեցւոյ. Բովանդակ մարդկութեան պարտ էր ունել մի սիրտ և մի հոգի։ Այլ գան և մեղաւորք. լինին հերձուածք, և չարք են մնան 'ի նմա։ Լաւք յօդեալք 'ի մի ընդ միմեանս և ընդ Աստուած՝ են մի սիրտ և մի հոգի։ Հասարակային հոգիս այս յառաջ օրհնեալ և շնչեալ առ 'ի յԱստուծոյ՝ է հոգին ուղղափառ Եկեղեցւոյ։ Ամենայն որ անարատ իցէ ընդ բովանդակ երեսս երկրի՝ մասն է սորա։

1 Բերրոնէ. Ճառ 'ի վերայ ճշմարիտ կրօնից. Մասն Բ. Առաջարկութիւն ԺԱ։

Այո՛. և այսպէս առանց իրիք դժուարութեան մարթ է 'ի միտ առնուլ ըստ տեսութեանս այսմիկ զնշանս և զյատկութիւնս ուղղափառ Եկեղեցւոյ, որք են անպականելիութիւն և անխափանութիւն նորա. այսինքն՝ զի գոլով Աստուծոյ միշտ ընդ նմա՝ կայ նա մշտնջենաւորապէս 'ի ճշմարտութեան և 'ի կեանս։

Նա են նշանքն՝ չորեքին այսորիկ. միութիւն, սրբութիւն, ընդհանրականութիւն և առաքելականութիւն։ Յորոց երեք առաջինքն չունին ինչ պէտս մեկնութեան. իսկ առաքելականութիւնն բերէ յինքեան նախ զառաքելական հոգի, այս է հոգի ծաւալող ճշմարտութեան. և երկրորդ՝ զի այժմեան նորընտիր առաքեալք նորին օրինաւոր յաջորդք են առաջին Առաքելոց իւրոց։ Աստի 'ի միտ առնուլ է զանհնարին աղէտս հերձուածոց և հերետիկոսութեանց։

Զինչ իցեն հերձուած և հերետիկոսութիւն։

Զմտաւ ած զԵկեղեցի ըստ Առաքելոյն 'ի նմանութիւն ծառոյ, որոյ հայրն բոլորական՝ է ինքն Աստուած. ծառ կենդանի՝ որոյ պտուղք են հոգիք ամենայն։ Արդ գրեսջիր եթէ ոստ ինչ և պտուղ կամիցի կեալ առանձինն։ Այս է ահա հերձուած և կամ հերետիկոսութիւն։ Հերձուածն ոչ է եղծիչ վարդապետութեան իբրև զհերետիկոսութիւն՝ այլ զհոյն եւեթ վտարէ. իսկ հերետիկոսութիւն՝ խորտակէ զամենայն զյօդակապս շաղկապման ընդ բոլորին։ Հերձուածն ուրեմն է մասն չորացեալ 'ի վերայ հանրական մեծի ծառոյն՝ մնալով անդ առանց բեկման. այլ հերետիկոսութիւնն բեկեալ անկանի 'ի ծառոյ և ընդ երկիր թաւալեալ նեխի 'ի հեռաստ։

Անձնասիրութիւն՝ որ մտանել կամի 'ի խորս սրտից յօդելոց ընդ Աստուծոյ, որպէս որդն 'ի պտուղ դալար, անձնասիրութիւնն ասեմ խլէ զոր կարէն 'ի

ծառոյն սիրոյ և ճշմարտութեան, և է ոգի հերետիկոսութեան և հերձուածոց։

Գ

Բանն ասէաք, զի ոչ շատանան մարդիկ ցուցանելովն և տալով մեզ սիրել զհոգին Եկեղեցւոյ, և շուտափոյթ ճառագայթեցուցանելով 'ի վերայ սրտից մերոց՝ հանգոյն աստեղայից երկնից 'ի մխիթարանս մեզ, զգաղափարականն աներևոյթ Եկեղեցւոյ 'ի յերկիր։ Այո ինչ իցէ ունել Եկեղեցւոյ մարմին՝ որով չմնայ 'ի ձև հրեշտակի. ընդէ՞ր իցէ նմա ունել մարմին բանա՛ր՝ յոր կուտակին խառնին չարն և բարի, տկարութիւնք, հիւանդութիւնք և կիրք երկրաւորք։

Կարի յոյժ այլադգ են խորհուրդք իմ 'ի քոյոց։ Բանն մարմին եղև, և զխո՛րդ հոգւոյ Եկեղեցւոյ նուաստութիւն իցէ ունելն մարմին։ Աւ ինչ չիցէ նմա առել ունելով յինքեան զզաս ինչ զգալի մարդկան՝ Այս է մարմին իմ. որպէս Յիսուս՝ եթէ հնար ինչ իցէ համեմատել, տաց վասն սակաւ մի հացի։

Սակայն տես աղաչեմ զառակալի խառնուրդ կեղծաւորաց, պղծոց, մոլեռանդից, երկրպագարշից և ամբարտաւանից, որք չյանեն զամենայն զօրութիւն Որդւոյն Աստուծոյ յԵկեղեցւոջ։

Աղէ ուշիւ քննեսցուք։ Զինչ իցէ հոգի Եկեղեցւոյ. է ժողով հոգւոց մարդկան յորս Թագաւորէ Հոգին Աստուծոյ։ Հոգիքս որք առ հասարակ կամին և խորհին ըստ Աստուծոյ, յայտնի է զի կեան միաբան և սիրելական կենօք։ Հասարակային կեանքս այս հոգւոց որ կեան ըստ Աստուծոյ՝ կոչի Հաղորդութիւն

սրբոց. հաղորդութիւն՝ յորս են հոգիք մեռելոց և կենդանեաց: Այլ կենդանիք ունին մարմին. ապա ուրեմն հարկ է զի ունիցի Եկեղեցի մարմին. և պարտ է ասել մանաւանդ, եթէ մարմինս այս գոյ միանգամայն ընդ հոգւոյն, և կամ ըստ իմիք յառաջ քան զհոգի:

Այժմ այսպէս գոլով ըստ բնութեան իրաց, զի՞նչ ինչ առաւել պարտ էր առ յօրինել զմարմին երևելի Եկեղեցւոյ, որպէս տեսանեմքս մեք: Պարտ էր զի կենդանի մարդիկ միաբանէին 'ի միասին առ յօրինել ժողով մի երևելի: Բայց և այս իսկ լեալ էր կանխաւ: Չգոյր հարկ յօդաւորելոյ 'ի միասին, այլ բաւական էր չքամանիլն ևեթ: Արդարև Եկեղեցի զերդ բողբոջ մի ուռճասաղարթ երևեցաւ 'ի վերայ երկրի, շարժեալ 'ի միջէ միայնոյ, յառաջ եկեալ 'ի միոյ միայնոյ կէտէ և ստուարացեալ հանդոյն ծաւալամիլեառ ծառոյ: Քրիստոս, կոյսն Մարիամ և Առաքեալք՝ եղեն նորին ուղեղ երևելի. և զոր օրինակ տունկ՝ յօդոյ և յերկրէ առնու զաճումն իւր, որք կազմեն և ստուարացուցանեն զմարմին նորա, այսպէս և նախնական ուղեղ Եկեղեցւոյ առնոյր զիւրն 'ի մարդկանէ: Ի քթթել ական ամենայն հոգիք արդարք՝ որոց մարթ էր լսել զքարոզն, զեղան յԵկեղեցի հանդոյն առատաձիր հիւթոյ յորձանաց. և մարմինն Եկեղեցւոյ մեծացաւ 'ի վերայ երեսաց երկրի սքանչելահրաշ իմն արագութեամբ, և ցնծացաւ երկիրս ամենայն, որպէս ասեն Գիրք սուրբք[1]: Ոչ մի ինչ կարէ համեմատիլ, և ոչ իսկ ընդ աղօտ, ընդ պատմական այսմ մեծաքանչ անցից, ընդ հրա-

1 Հասարակաց ցնծացէ ցնծութեամբ ամենայն երկիր, Լերինք Սիոնի: Սաղմ. խէ. 3:

շափառ ծննդեան ասեմ ազատ ժողովոյս՝ հոգւով և մտօք յօդելոց 'ի միասին յարգարութիւն և 'ի ճշմարտութիւն:

«Եւ բազմութեան հաւատացելոց էր սիրտ և անձն մի[1]», զոր օրինակ ասեն Գործք Առաքելոց: Սուրբն Պօղոս և ևս յառաջէ և ասէ. «Նոյնպէս բազումքս մի մարմին եմք[2]»:

Այսպէս ահա յօրինեցաւ մարմինն ամենակատար:

Բայց զի՞նչ իցէ ապա և մեղաւորաց գտանիլն յԵկեղեցւոջ:

Լուր աղէ. «Ոչ է պիտոյ բժիշկ կարողաց այլ հիւանդաց[3]»: Որք եպերանս դնեն Եկեղեցւոյ վասն ունելոյ իւրոյ զմեղաւորս 'ի ծոց իւր, նման այնոցիկ են՝ որք կշտամբէին զՅիսուս Քրիստոս վասն՞ ընդ մեղաւորս ուտելոյն և ըմպելոյ. ընդ մաքսաւորս ասեմ և ընդ չարաբարոյս:

Մի՞ մոռանար, զի մեծն և գլխաւոր գործ Քրիստոսի է դառնալն մեղաւորաց յապաշխարութիւն: Ցանձն իւր առնու զապականեալ հոգիս առ 'ի բժշկել զնոսա: Եկեղեցի գործէ հանդոյն այնոցիկ սրբոց՝ որք ընդգրկեն զբորոտս և զհարեալսն ժանտ ախտիւ: Վասն այսորիկ և սուրբն Օգոստինոս 'ի Թուղթս իւր աւելի քան զերեսուն և չորս նուագս ուշիւ կրկնէ զայսոսիկ բանս. Պարտ է համբերել և զմեղաւորս իսկ յԵկեղեցւոջ, պարտ է համբերել. և համբերել պարտ է արտաքոյ և 'ի ներքոյ: Ո՞չ ապաքէն ասաց Յիսուս. «Մի՞ քաղել զորոմն»: Եւ նախ սաստեսցէ Առաքելոց որք կամէին խլուցանել զհուր յերկնից և սատա-

1 Գործք. Դ. 32:
2 Հռովմ. ԺԲ. 5:

3 Մատթ. Թ. 12:

կել զմեղաւորս՝ ասէր. «Ոչ գիտէք որոյ հոգւոյ էք դուք[1]»: Եկեղեցի ներողամիտ լինի մեղաւորաց. և քանզի յարեալ են 'ի մարմին Եկեղեցւոյ՝ որպէս ոստն չորացեալ 'ի բուն ծառոյ, է երբեք զի նոր իմն հիւթ եկեալ հասեալ և կենդանացուցանէ զնոսա: Հոգին Եկեղեցւոյ զուն գործէ անդադար սրբել և կենդանացուցանել և այլակերպել զմարմին իւր. և թէպէտ ճառագայթէ նա արտաքոյ ընդ ամենայն երկիր զանուշահոտութիւն իւր, սակայն և այնպէս հոգին Եկեղեցւոյ է մանաւանդ 'ի մարմնի իւրում, և լինել ընդ մարմնոյս ընդ այսմիկ՝ է բաստ անպայման:

Դ

Արդարև ներողամտութիւն այս՝ անտարբերական է: Այլ չասեմ ինչ զնզովից և զբանադրանաց, զատենն Հաւատաքննութեան և զխարոյկաց: Սովորութիւն Եկեղեցւոյ հակառակ ընդդէմ եկաց առածից սրբոյն Օգոստինոսի՝ որք ըստ Աւետարանին են ամենևին:

Նախ կարծի յամենեցուն առհասարակ՝ եթէ նզովք անէծս նշանակիցեն: Եկեղեցի ոչ երբեք անէծս կարդայ: Նզովք՝ զարտաքսումն յայտ առնեն և նոյն են ընդ բանադրանաց: Եկեղեցի կարի իսկ ներողամիտ լինի մեղաւորաց, և կուրացելոց, և տգիտաց: Այլ եթէ ոք հնարիցէ նմա, զինչ գտեալ գայցէ անդի. այս միայն զի Եկեղեցի գոլով ժողով իմն կամակար և ազատ, որ ոք ապստամբ լինի 'ի նմանէ՝ այն-

1 Ղուկ. Թ. 55:

պիսին ոչ ևս մասն լինի նորա: Յայնժամ յայտ առնէ Եկեղեցի, զի այն ոք այր ոչ ևս մասն է իւր, և հատանէ յայտնապէս որպէս անհարազատ եղբայր. և այս են բանադրանք: Միայն հարկ առնէ հեստելոցն իմաստութեամբ վարել և մի հակառակ բանի, և ստիպէ յետս կալ 'ի խորհրդոց, զի մի 'ի սրբապղծութիւն անկանիցին: Բանադրելոյն՝ որպէս մարթ էր չհեստել՝ մարթ է դարձեալ խոնարհել. և 'ի կամելն իւրում՝ կարէ մտանել 'ի ծոց Եկեղեցւոյ, այսինքն է՝ 'ի խոնարհելն զանձն իւր ընդ բարոյական և կրօնական պայմանօք և պատուհասիւքն եղելովք: Զինչ ինչ կայցէ յայսոսիկ որ չիցէ պարզ ամենևին, իրաւացի, պատշաճ, անհրաժեշտ և փրկաւէտ. փրկաւէտ վասն մարմնոյն Եկեղեցւոյ, որում չէ մարթ յինքն առնուլ զայնոսիկ՝ որոց չեն կամք լինել 'ի նմա. և փրկաւէտ վասն հեստելոյն՝ զոր արդար և անաչառ մերա կարէ լուսաւոր առնել և ուղղել:

Ատեանն սրբազննութեանց ոչ այլ ինչ էր իւրովի՝ բայց ատենականութիւն իմն եւեթ կարգեալ 'ի դիտել զգազանի ժողովս, որք խորհէին քակել զմարմին Եկեղեցւոյ: Ար ինչ իցէ լինել գազանի ժողովոց յազատ ժողովս ուրեք:

Այս ըստ այսմ արդարացուցանեն դու զատեանն Հաւատաքննութեանց և զխարոյկաց:

Բաժանեսցուք աղաչեմ զխնդիրս: Նախ զինչ մարթ իցէ ասել ընդդէմ եկեղեցական ատենականութեան, որ հաստատեալ է առ յերեւան ածել զսերմանս հերետիկոսութեանց և 'ի կրթել զազգս: Իրաւունք են՝ ոչ ինչ ընդհատ և պարզ, ժողովոյ իրիք զգուշանալ ամենուրեք և զօրհանապազ ածել զոյս 'ի վերայ ամենայն մասանց իւրոց: Իսկ խարոյկքն ասացեալք այլ ինչ են ամենևին: Ահաւասիկ զոր ասէ

սուրբն Օգոստինոս ընդդէմ պատժոց մահու, զորմէ խնդիր լինէր յաւէնի կայսեր վասն Դոնատեանց. «Ոչ ումեք արանց բարեաց յԵկեղեցւոջ հաճոյ թուի զի 'ի մահ դատեսցին հերետիկոսք[1]»:

Երկրորդ անգամ, ո՜վ որ ոչ գիտիցէ զմեծ վկայութիւն սրբոյն Մարտինոսի տուրոնեցւոյ և զգաւանութիւն բովանդակ Եկեղեցւոյ, այն ինչ զառաջինն փորձ փորձեաց չարիքս այս ընդ քօղով կրօնից պատրուակիլ: Սուրբն Մարտինոս բանադրեաց զառաջին եպիսկոպոսունս որք խնդրեցին զկառափն հերետիկոսաց. և եպիսկոպոսունքն այնոքիկ նզովեցան յԵկեղեցւոյ իբրև զհերձուած ինչ, զորոյ զանուն և գյօդուած 'ի չարս հերետիկոսաց է տեսանել, և կոչին Իթակեանք:

Կամիմ ինքնին տեսանել այսօր խնդիր զհատուածն որ գտանի 'ի Բառարանին հերետիկոսութեանց:

Ահաւասիկ այս է.

«ԻԹԱԿԵԱՆՔ. Անուն 'ի չորրորդում դարու յորդելոց ընդ Իթակոսի եպիսկոպոսին Սոսէբայ 'ի Սպանիա, առ 'ի վարել 'ի մահ զՊրիսկիլեանս և զհետեւողս նոցա: Գիտակ են ամենեքին զի Մաքսիմոս որ յայնժամ 'ի Սպանիա և 'ի Գաղղիա թագաւորէր՝ էր այր հարստահարող և բռնաւոր, լցեալ ողբամբք և աւելի վասն անգթութեանց իւրոց: Մարթ էր արդար լինել պատժոյ մահուն վճռելոյ 'ի վերայ Պրիսկիլեանց, այլ ոչ էր պատշաճ եպիսկոպոսաց հանել 'ի գլուխ զկատարումն գործոյն: Վասն որոյ Իթակոս և հետեւողք նորա եղեն աւելիք այլոց հայրապետաց և արանց բարեաց: Դատապարտեցան 'ի սրբոյն Ամբրոսիոսէ և 'ի Սիւրիկոսէ քահանայապետէ և 'ի ժողովոյ միոյ Տուրինոյ:

1 Թ. 715. բ:

«Կայսրն Մաքսիմոս 'ի զուր ստիպեաց զսուրբն Մարտինոս հաղորդել ընդ Իթակեան եպիսկոպոսունս, և ոչ կարաց ժաման լինել ըղձիցն: Ապա ժամանակաւ զիջաւ սուրբն առ 'ի ապրեցուցանել զկեանս ումանց. այլ յետոյ զղջացաւ: Իթակոս ուրեմն անկեալ յաթոռոյ յաքսորս տարագրեցաւ»:

Այնօրինակ զքահանայս՝ որք խնդրէին զգլուխս հերետիկոսաց, նզովեցին սուրբն Օգոստինոս, սուրբն Ամբրոսիոս, սուրբն Մարտինոս տուրոնեան, քահանայապետն Սիւրիկոս և առաջին ժողովն Տուրինաց[1]:

Զինչ յայնժամ եղև Եկեղեցւոյ:

Եւ ոչ մի ինչ: Այլ 'ի պետութեան յաւելաւ վարչութիւն ժողովրդոց և իշխանաց, որք զուն գործեցին հիմն դնել միութեան մեծամեծ պետութեանց Եւրոպայ. և առ 'ի կատարումն կամաց իւրեանց ջանահնար եղեն կորզել զիշխանութիւնս և զզօրութիւնս միութեան Եկեղեցւոյ, և բազում անգամ հերետիկոս հրատարակէին զեղեռնապարտ յանցաւորս պետութեան և բովանդակ միաբանութեան մարդկան: Ապա ուրեմն ժողով աշխարհիկ մարդկան պատասխանատու է խարուկաց: Այլ Եկեղեցի յամենայն ժամանակի զկանոն իւր պինդ կալաւ՝ զգարշիլն ասեմ յարենէ: Մինչ Լուդովիկոս ԺԴ. չարչարէր զնորաղանդս ընդդէմ կամաց Ֆենելոնի և Պոսիւէի, քահանայապետն Իննովկենտիոս ԺԱ. ետ գրել առ նա, թէ «Առաքելութիւն զինուք վառեալ առաքելոց չգործէր ինչ. և զի նորա այս ոճ և եղանակ ոչ էր լաւագոյն, զի Քրիստոս ոչ այսպէս վարեցաւ առ 'ի դարձուցանել

1 Տես 'ի կանոնագիտութեան Տէր Անդրէաս քահանայի, երկասիրութիւն գեղեցիկ յոյժ յաղագս Ատենի Հաստատութեան:

զաշխարհ 'ի քրիստոնէութիւն»։ Եկեղեցւոյ չէ մարթ մոռանալ զբան փրկչին որ առ աշակերտս իւր, յորժամ ասէինն. Տէր, կամիս զի ասասցուք և իջցէ հուր յերկնից և սատակեսցէ զնոսա որք ոչն կամին ընդունել զքեզ. պատասխանի ետ Յիսուս և ասէ. «Ոչ գիտէք որո՛յ հոգւոյ էք դուք»։ Բայց, աւա՜ղ, զի զբոտն ընդդէմ սմին յանցաւորք և կոյրք, յիշխանաց և 'ի ժողովրդոց, կամ 'ի քահանայից, և եղև գայթագղութիւն մեծ, և կրօնք 'ի խոր խոցեցան։

Տես, զի կայ յանապորոյն հոգւոյ ոմանց ոմանց 'ի մարդկանէ, յորդւոց Կայենի, ծարաւ իմն արեան, որք յամենայն բարուրս թեակոխեն առ 'ի թափել զարիւն, և յուզեն զխնդիրս, և պղծեն զայնոսիկ սպանութեամբ մարդկան։

Թելադրութիւն իմն է այս գժոխային, որ և ևս զարգացեալ 'ի հերձուած իմն վարչութեան, 'ի վարդապետութիւն կարգեաց զեղբայրասպանութիւն, և պատի եդ և դնէ ցայժմ իսկ նախատակաց և զխցաղանց եղբայրասպանութեան, մխելոց յարիւն այլոց։

Այդպէս իցէ. սակայն չխօսեցայք դեռ զիմին զԵկեղեցւոյ։ Մտածելու այս՝ զոր դու կատարելագոյն քան զամենայն մարմին համարիս, զինչ է կազմութիւն նորա։ Զինչ իցէ միաւորութիւն այս ինքնիշխան, դասակարգութիւն բաղկացու, կրկին դաս կղերականաց և ժողովրդոց, սահմանադրութիւն այս անշարժ։

Նախ, պնդեմ զի չէք յուղղափառ Եկեղեցւոջ և ոչ մի ինչ յասացելոցդ. և զի մարմին ուղղափառ Եկեղեցւոյ զկատարելագոյն տիպ ընկերական յօրինուածութեան մեզ առաջի առնէ։

Եւ սկսեալ նախ խօսել զկրկին դասուց մարդկան ասեմ. զի եթէ «ոչ հացիւ միայն կեցցէ մարդ՝

այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ», աստի զհետ գայ զի պէտք են միշտ 'ի մնունդ ազգի մարդկան յաշխարհի աստ երկու ազգք մշակաց, յորոց առաջինքն սերմանեն զհաց, և այլքն զբան։ Եւ աստի յայտմանէ քահանայք և ժողովուրդք, և կամ Եկեղեցի ուսուցիչ և Եկեղեցի ուսանող։ Այլ տես և զայս՝ որ մեծ իմն է և որով բառնին ամենայն բաղբաջք ցեղապետութեան, զի ամենայն որ ազատ է յընտրելն իւրում զմի կամ զմիւս աշխատութիւն, եթէ չիցէ իւր անդխաղ։

Միայն զի որովհետև յամենայն մարմնի՝ որոյ կատարեալ իցէ յօրինուածութիւն, «մէն մի անդամ, զոր օրինակ ասէ Պօղոս, պարտի գործել ամենայն զօրութեամբ ճգանց իւրոց», զհետ գայ ապա զի ոչ ումեք օրէն է ինքնիշխանութեամբ ուսուցանել և կամ գործել յԵկեղեցւոջ, եթէ ոչ օրինաւոր ձեռնադրութեամբ, առաքելութեամբ և հրեշտակութեամբ իշխանութեանն որ վարէ զամենայն։

Իսկ վարչութիւն Եկեղեցւոյ՝ յօդէ 'ի մի գերածայրագէս զկրկին պայման կատարեալ յօրինուածութեան, որ է բարձրագոյն աստիճան միութեան, լծորդեալ ընդ բարձրագոյն կարգի ազատութեան. զգուշանայ 'ի կրկին անպատեհութեանց զորս նշանակէ Բասքալ. «Միութիւնն որ չիցէ բազմութիւն՝ բռնաւորութիւն է. բազմութիւնն որ ոչ իցէ միութիւն՝ է խառնակութիւն»։ Միակ առաջնորդ որ ընտրեալ ցկեանս 'ի միջոյ քահանայից ընտրելոց 'ի միջոյ բովանդակ ժողովրդեան՝ զլուխ հանրական, զգեցեալ զառաջնական պատիւ և գերազանցութիւն 'ի վերայ բովանդակ Եկեղեցւոյ, տայ Եկեղեցւոյ միութիւն կատարեալ, անթերի կեդրոնաձգութիւն ամենայն գործոց, 'ի գլխաւոր իշխանութենէ աստի ծագումն առելոց։

Զի՞ք և չեղև ուրեք երբեք միութիւն հանգոյն մերումս միութեան։ Սակայն դոլով իսկ յԵկեղեցւոջ միակ և գլխաւոր կենդրոն, որոյ իշխանութիւնն միջամուխ լինի ընդ ամենայն, գոն և այլ կենդրոնք ընդ իշխանութեամբ նորա, որք նոյնպէս կոչին Եկեղեցիք, առ 'ի ցուցանել՝ զոր օրինակ ասէ Պօղոս, «զզարմանասքանչ հաւասարութիւն մասանց ընդ ամբողջին»։ Եկեղեցի իւրաքանչիւր ունի զիւրն կենդրոն, զիւր հովիւ՝ հաւասար հանրական հովուին քահանայութեամբն, զորոյ յանձին բերէ զլրութիւն։ Քահանայապետն եղբայր է եպիսկոպոսաց, և եպիսկոպոս է հանգոյն նոցա։ Իւրաքանչիւր կենդրոն մասնական, կամ իւրաքանչիւր Եկեղեցի ունի զամենայն իշխանութիւնս և զպայմանս կրօնական կենաց. վարի իւրովի՝ ընտրելով զպաշտօնեայս իւր, և ունի զլիակատար իշխանութիւն քահանայական ձեռնադրութեան, այսինքն է՝ զիշխանութիւն մշտնջենաւորման։ Եպիսկոպոսն ինքնին ըստ նախնի ծիսից ընտրեալ լինէր յԵկեղեցւոյ իւրմէ, 'ի ժողովրդոց և յեկեղեցականաց։ Ապա ժամանակաւ սկսաւ ընտրիլ 'ի տեղական իշխանութեանց գրեթէ ամենուրեք. և Քահանայապետն՝ կեդրոն միութեան, հաւանի, վաւերացուցանէ, և այլ եպիսկոպոսունք ձեռնադրեն զընտրեալն։

Եկեղեցիք, կենդրոնքս այսոքիկ ստորակարգեալք ընդ իշխանութեամբ ուղղափառ Եկեղեցւոյ, ունին և այլ կեդրոնս երկրորդ ստորակարգի, որք կենսալիրք են և ունողք բարձրագոյն իշխանութեանց։ Ստորակարգեալ կենդրոնքս իսկ այսոքիկ կոչին Եկեղեցիք, և առաջնորդք նոցա հովիւք՝ հանգոյն եպիսկոպոսաց և քահանայապետաց. նոյնպէս և իւրաքանչիւր քահանայ, օգնական կամ փոխանորդ հովուի, ունի զքահանայութիւն հանգոյն եպիսկոպոսի և

քահանայապետի, թէպէտ և ոչ լիապէս, և միանգամ ընկալեալ զնուիրակութիւն իւր՝ գործէ ազատօրէն։ Ի քահանայական գործս յԱստուծոյ մանաւանդ առնու առաւելապէս զիշխանութիւն իւր։

Գեղեցկայարմար է յօրինուածութիւնս, զոր ակն ունիմ եթէ ամենայն ազգք և ազինք ընկալցին յաւուր միում։ Ցայս բովանդակին ճշմարիտ պայմանք իշխանութեանն, որ ընդարձակիլ ունի ընդ բովանդակ աշխարհ, և կամի զի իւրաքանչիւր մասն մարմնոյ «ունիցի զկեանս և առաւել ևս ունիցի»։

Իցէ՞ ինչ հարկ ասել եթէ սահմանադրութիւնս այս կատարեալ նման է կարգի աստեղաց երկնից։ Այո՛, գոն յերկինս երեք կարգք կեդրոնից ստորակարգելոց, ունելով շարժումն առանձին, ազատ ամենեւին, և սակայն յօդեալք 'ի սերտագոյն միութիւն։

Ընկերհաշտութիւնք երկրաւորք չիմանան քաջ ցայսօր զազատութիւն և զմիութիւն, զոր օրինակ 'ի միտ առնու կարգաւորիչն աստեղաց և հոգին կացուցիչ Եկեղեցւոյ։ Կամ չիք 'ի նոսա միութիւն և կամ մուծանեն 'ի միութիւնն պետական ազօտ իմն նըշմարանս երից կեդրոնից ստորակարգելոց, այս է՝ զիշխանութիւն կեդրոնական, գաւառական և շինական։ Այլ կեդրոնական իշխանութիւն ունի ևեթ զկեանս և զշարժումն. երկուց ստորակարգեալ կեդրոնից չիք առանձին շարժումն, այլ հեռագրական իմն կենօք կեան նոքա։ Արդ միութիւնն որ չիցէ բազմութիւն՝ բռնակալութիւն է, ասաց Բասքալ։ Եւ սակայն միութիւն որ չիցէ բազմութիւն՝ ոչ բռնակալութիւն է ևեթ, այլ և առանձնութիւն, միայնութիւն իմն դատարկ, անպտղաբեր և ոգեսպառ. միութիւն իմն է մեռեալ։ Այնպէս զի միութիւնն ինքնին անձնասպան լինի 'ի բաց բառնալով զազատութիւն։

Զիք մեր ուրեմն, զոր օրինակ տեսանես իսկ, ոչ ցեղապետութիւն, ոչ բացարձակ ինքնակալութիւն, և ոչ մանուածոյ դասակարգութիւն, և է սահմանադրութիւնս մեր օրինակ՝ որում երկրաւոր սահմանադրութիւնք նմանեսցին յաւուր միում, իբրև այն ինչ ժողովուրդք կարողք լիցին հաւասարաւ ազատութեան և միութեան:

Այլ զինչ ասիցես զանշարժութենէ սահմանադրութեանց:

Եւ զի՞նչ իմանաս դու անշարժութիւն ասելով: Կամիցի՞ս արդեօք ասել եթէ մարմնոյն Եկեղեցւոյ պակասիցեն կեանք, շարժումն և զարգացումն. և կամ ամբաստա՞ն լինիս զհաստատութենէ վարդապետութեանց և զանքակտելի հաստատութենէ սահմանադրութեան մերոյ: Եթէ բարի է յօրինուածութիւնն և վարդապետութիւնն ճշմարիտ՝ տեսցեն ընդերկար սահմանադրութիւնն և վարդապետութիւն: Տևականութիւն նոցա ցուցանէ զգերազանցութիւն նոցին: Զիք մեր օրէնսդրութիւն փոփոխական և ոչ սահմանադրութիւն եղծանելի, որ պէտս ունիցի նորոգութեան 'ի շրջանս հնդետասան ամաց, իբրև զընկերութիւն ինչ վաստակաւոր որ 'ի խնդիր իցէ նմին և չիցէ դեռ ևս գտեալ:

Ճշմարիտ է արդարև զոր ասես: Այլ զոր տեսականութիւն վարդապետութեանց կոչես՝ յոյժ նման է մանու-խառնութեան: Զիք և ոչ մի 'ի կենդանեաց ազգի որում չիցէ ազգ ինչ զարգացման. և համայնք հաստատեալք 'ի հիմունս իւրեանց և 'ի նոյնութեան՝ յառաջանան և զարգանան:

Կարծիցես ուրեմն եթէ պակասիցի մեզ այս ազգ զարգացման, զորոյ ունիմք զվարդապետութիւնն և զփորձ:

Կամիմ նախ գիտել զվարդապետութիւն մերոյս զարգացման: Լո՛ւր Բերրոնէի, որ յիշատակէ և հաստատէ յաստուածաբանութեան իւրում զյաջորդ բանս սրբոյն Վինկենտի Լերինեան, որ գրէր 'ի հինգերորդում դարու, 1400 ամօք յառաջ:

«Այլ ասիցեն. չլինիցի՞ն ուրեմն բնաւ յԵկեղեցւոջ Քրիստոսի զարգացմունք: Այո՛ եղիցին և յոյժ իսկ մեծամեծք: Ո՞ր այն ոգի նախանձոտ մարդկան և թշնամեաց Աստուծոյ կամիցի արգելուլ զայն: Ունիցի Եկեղեցի զզարգացումն իւր, զարգացումն հաւատոյ՝ այլ ոչ զայլայլութիւն հաւատոյ: Զարգացմունք ամենայն իրաց հիմնեալ կան 'ի բարգաւաճման իւրեանց, պահելով զնոյնագոյ էութիւն. այլայլութիւնն՝ է անցք 'ի նոյնութենէ յայլ: Թողէք ուրեմն աճել զօրութեամբ, չքնաղութեամբ, ոչ միայն յայր իւրաքանչիւր՝ այլ յամենայնի, ոչ միայն յիւրաքանչիւր հոգւոջ՝ այլ 'ի բովանդակ Եկեղեցւոջ, դարուց 'ի դարս, կենաց 'ի կեանս, զհանճար, զգիտութիւն և զիմաստութիւն»:

«Այո՛, նախնի վարդապետութիւնք երկնաւոր իմաստասիրութեան պարտին ըստ յառաջել ժամանակաց զարգանալ, յղկիլ և աճիլ 'ի հանդէս, այլ ոչ երբեք այլակերպեսցին: Առաւել լուսաւորք, պայծառագոյնք և մեկինք ընծայեսցին, այլ պահեսցեն միշտ զնոյնութիւն իւրեանց, զլրութիւնն և զբովանդակութիւն»:

Ահա այս է վարդապետականն: Իսկ զգործնական զարգացմանէ կամելով խօսել՝ ասա ինձ զի՞նչ խորհիցիս զհանրական ժողովոց, զհանրական օրէնսդիր ժողովոց ասեմ, յորս վճիռք հաստանին յոքնաթիւ մարդկան՝ միացելոց ընդ Աստուծոյ: Ամենակարող է իշխանութիւն նոցա առ 'ի փոխել՝ յորժամ հարկն պահանջէ, զամենայն որ չիցէ ճշմարտութիւն անշարժելի:

Ե

Ի վերջոյ՝ լո՛ւր ուշի ուշով զպատմութիւնս հա-կիրճ։

Ցաւուր միում՝ 'ի միջավայրի բնակաւոր երկրիս, այր ոմն 'ի վախճան սրբանուէր սեղանոյն ելանէ եր-թալ 'ի մահ. և ուղերձեալ զմիտս իւր առ Աստուած, յանուն մարդկութեան սփռելոյ ընդ ամենայն երկիր և ընկղմելոյ 'ի խաւարի՝ յատելութեան և յուսահա-տութեան, խօսի առ աշխարհ զայսոսիկ բանս, որք դեռ ցայսօր հնչեն ընդ ամենայն երկիր։ Լո՛ւր, ո՛ն, մեծա-մեծար պատկառանօք, եղբայր իմ. և առ 'ի խելա-մուտ լինել աստուածային բարբառոյս, գիտա՛ զի բառս փառք՝ զոր սակաւ յոյժ 'ի միտ առնումք մեք, նշանակեն՝ ըստ աստուածային բանից, ճառագայ-թումն հանգոյն արեգական, ունելով յինքեան զջեր-մութիւն, զլոյս և զկեանս։

«Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա՛ զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ.

«Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր նմա, տացէ ըզ-կեանսն յաւիտենականս։

«Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զգործն կատա-րեցի՝ զոր ետուր ցիս զի արարից.

«Եւ այժմ փառաւորեա՛ զիս, Հայր, առ 'ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ 'ի քէն։

«Յայտնեցի զանուն քո մարդկան, զոր ետուր ինձ յաշխարհէ։...

«Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։

«Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս.

«Զի ամենեքին մի իցեն, որպէս դու Հայր յիս՝ և ես 'ի քեզ, զի և նոքա 'ի մեզ իցեն։

«Եւ ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս և մեք մի եմք։

«Ես 'ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի։

«Եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր։

«Հայր, զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր ես եմ, և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի։

«Հայր արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան՝ եթէ դու ա-ռաքեցեր զիս։

«Եւ ծանուցի նոցա զանուն քո և ծանուցից, զի սէրն զոր սիրեցեր զիս՝ 'ի նոսա իցէ, և ես 'ի նոսա[1]»։

Այսպէս խօսեցաւ Յիսուս։

Եւ այս եղեն առաջին տրոփմունք սրտին Եկե-ղեցւոյ։

Զայնն Քրիստոսի, և մանաւանդ ոգի նորա և փառք, այսինքն ճառագայթումն աստուածային սըր-տին իւրոյ՝ քան զարփենին զօրաւոր, ծաւալեցաւ և եգիտ ընդ մարդկութիւն համօրէն զմիջակէտ կենդրոն հոգւոյ առն առն իւրաքանչիւր՝ բարբառելով առ

1 Յովհ. ժէ. 1–26։

ճիղմ մանկութիւն, առ գերին սորուկ և առ կինն արհամարհ, առ աղքատն ընկեցիկ, առ վաստակեալ ստրկեանն, առ յափրացեալ եպիկուրեանն, և ամենայն արանց ըստ ազգս իւրեանց, լեզուս և երանգս. «Զարթիք, ասելով, որդիք Աստուծոյ, սիրեցէք զմիմեանս և 'ի մի յօդեցարուք: Եղերուք մի սիրտ և մի հոգի. մի մարմին էք ամենեքին և անդամք միմեանց: Եկայք առ Աստուած, եղբարք իմ, և առ իս՝ եղբայր ձեր անդրանիկ»:

Ընդ այս բարբառ ցնծացաւ մարդկութիւն, և գումարեալ ամենայն սիրտք սրբամաքուրք խոյացան հանդոյն կորեանց առիւծու առ նահատակութիւն առաքելութեան և կամ արեան:

Յայնմ պահու սիրտ ստացաւ մարդկութիւն, սիրտ հաւաստի և ընական, սիրտ միաձոյլ, արիւն հաղորդական, որոյ ծաւալասփիւռ սուրբ բղխմունք 'ի դրդել կան և 'ի կենդանի առնել զբովանդակ զանգուածն մարդկութեան մինչև 'ի վախճան:

Յաւուր յայնմիկ սէր նոր եմուտ յաշխարհ, և տուաւ հոգւոց կեալ 'ի միասին և ընդ Աստուած: Թնդիւնք սրտի ուրուք յայլ ոք փոխանցին. զօրութիւն և լաւութիւն սրտի միոյ անցանէ յայլ. հոգի մի սրբանայ՝ քանզի հոգի մի այլ սուրբ առնէ զանձն: Անձնիւր անդամք գործեն զօրութեամբ բոլորին:

Կենդրոնական սիրտն Քրիստոսի 'ի մի յօդէ փառաւոր, վառեալ և լուսափայլ ձգողութեամբ, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան: Անհետ առնէ զանջրպետս վասն սրտից ընդ իւր յօդելոց: Յայսմ կենդրոնի, ասէ Ֆենելոն, 'ի մի յօղին մարդիկ 'ի Ճենաց մինչ 'ի Պերու, և արք ամենայն ծագաց երկրի լինին մի ըստ կամաց իւրեանց:

Ապիմակք եմք մեք և կոյրք, զի անգիտանամք

զկեանս, զզօրութիւն և զմեծութիւն հոգւոց. անգիտանամք խոպառ փառսն Աստուծոյ, զայս ճառագայթումն Աստուծոյ, որ ցոլայ ընդ ամեղերս բովանդակ: Զեն ինչ անգէտ զի ամենայն ստեղք երկնից ձկտին և յօդին ընդ միմեանս և կեան հաստատուն լուսով և ձգողութեամբ. և զիարդ ոչ միաւորեսցին հոգիք յորժամ զարթուցէ և տացէ Աստուած զճառագայթարձակ փառս իւր: Զկտմունք աստեղաց առ իրեարս ոչ այլ ինչ են՝ բայց խուն ինչ նշանակ փոխադարձ ընդխառնման հոգւոց: Պարզ են հոգիք, և կէտք պարզք որչափ և շատ լցեն՝ մի են, ըստ երկրաչափութեան և երկնաչափութեան:

Ահա այս է վարդապետութիւն Հաղորդութեան սրբոց. հոգիք միաւորին յԱստուած, և երթան բնակեն միաբանք, ներքին իմն և առաւել քան զարտաքինն հաւաստի հիւրասիրութեամբ. բաժանեն յիւրեանս զգանձս և զզօրութիւնս իւրեանց, և ասեն՝ հանդոյն Քրիստոսի, ընդ անձն իւրեանց և ընդ Աստուած. Որ ինչ իմ է՝ այն քոյ է, և որ ինչ քոյ է՝ այն իմ է, և փառաւորեալ եմ յեղբարս իմ:

Այսու անթուելի զօրութեամբ միութեան մեծամեծ սրտից և միայն սրբամաքուր սրտից, միայն հզօրեղաց և յօդելոց ընդ Աստուծոյ, կարողութիւնք և փառք սրտից բարեաց բազմապատկեալք են առ 'ի յԱստուծոյ, անկարութիւն տկարագունից փոխեալ 'ի զօրութիւն, սիրտք չիջեալք՝ վառեալք 'ի մշտնջենաւոր կենդանութիւն. և ժողով բովանդակ մարդկութեան՝ դէթ բովանդակապէս առեալ 'ի միասին, ստիպի ընթանալ յամենայն գործս իւր, յարդարութիւն, 'ի լոյս և 'ի սէր, յընդհականակս զոչացու՝ յամառ և միշտ նորաբողբոջ իւրումն անձնասիրութեան:

Ահա սէրտ աշխարհիս և տրտմութիւնք նորա։

Դիմեսցեն, ո՛ն, ազգք և ազինք առ սէրտն աշխարհի՛ եթէ կամին գտանել զկեանս։

Եւ որ ոք հակառակեսցի սրտիս այսմիկ՝ Թափուր և ունայն կացցէ այսօր, և վաղիւն դարձցի 'ի փոշի։

Սէրտ աշխարհիս է ուղղափառականն Եկեղեցի։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Զ

Խորհուրդք. — Շնորհք.

« Հաւատամ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց »։

Ա

Թուի ինձ թէ վաղ իսկ խօսեցայք զթողութենէ մեղաց 'ի խօսելս մերում զմարդեղութենէ և զփրկագործութենէ.

Այդպէս է, այո՛։ Յարակից են միմեանց խնդիրքս այսոքիկ, բայց սա է իսկապէս խնդիրն մեծագոյն. Եւ իցէ փոխակերպել մարդոյ, և անցանել 'ի կենաց 'ի մահ, կամ յանձնասիրութենէ 'ի սէր։ Յայսմիկ հաստատեալ կայ ամենայն, վասն որոյ և մեք պարտիմք տակաւին խօսել զայսմանէ։

Իբրև եթող ելեք Քրիստոս զաշակերտս իւր, ասէ ցնոսա. Քարոզեցէք ընդ ամենայն աշխարհ զապաշխարութիւն և զթողութիւն մեղաց։

Աղէ՛ ածցուք 'ի յուշ զինչ մեղքն իցեն։

Մեղքն՝ գլխովին արգասիք են ինքնասիրութեան և սիրոյ անձին, թշնամանօք չափ ընդդէմ Աստուծոյ։ Մահ է այս հոգւոյ, — զի որ ոչն սիրէ՝ 'ի

մահու կայ, — այո, մահ է հոգւոյ՝ յորում ծնանիմք, կամ յոր գահավէժ անկանիմք։

Արդ զի՞նչ ապաշխարութիւնն իցէ։ Ապաշխարութիւն ըստ աւետարանական բնագրին և ըստ բառական իմաստից նշանակէ փոխակերպութիւն հոգեկան. որպէս զի ապաշխարութիւն և թողութիւն մեղաց և հոգեկան փոխակերպութիւնք՝ են ինչ մի նոյն։

Աստի 'ի մտի առնումք եթէ նախն և առաջին բանք Փրկչին ուղղեալք առ մարդկութիւն իցեն լեալ այսոքիկ. «Ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից[1]»։ Այս ինքն՝ Ո՛վ հոգիք վատթարացեալք, յայլակերպս լերուք. թողէք զծառայական կերպարանն անձնասիրութեան, առ 'ի զգենուլ զկերպարանն աստուածային սիրոյ։

Ուրեմն կարէ՞ մարդ փոխակերպիլ ինքնին։

Ոչ այդպէս ինչ կարծիցեն անշուշտ։ Ի փորձոյ գիտեմք զի ոչ փոխիմք. ընդ բովանդակ ընթացս կենաց ոչ յեղափոխին՝ ըստ սովորական պայմանի, և ոչ արտաքինքն անգամ երեւոյթք բարոյից։ Ախտն այն սեպհական՝ զոր ունէաք 'ի սրտի 'ի ծնանելս մերում, մնայ անդ մինչև ցօր վախճանի։ Նա՛ մանաւանդ արմատն ինքնասիրութեան, որ է մահաբեր ախտ հոգւոյ, ոչ ողջանայ բնաւ լոկ զօրութեամբ բանի և բարոյականին։ Մեռեալ է հոգի յանձնասիրութեան. և առ 'ի կենագործել զմեռեալս զայս՝ անսահման զօրութեան պէտք են, որպէս յարարչագործելն ինչ յոչնչէ։ Թողութիւն մեղաց և փոխակերպումն հոգւոյ՝ գործք են անսահման զօրութեան. զի մեղք՝ որպէս ասի, առաւել կրճիմ և արգել լինին Աստուծոյ՝ քան զոչնչութիւն։

1 Մատթ. գ. 2։

Արարչագործութիւն՝ պէտս ունէր անսահմանին. ևս և փրկագործութիւն կարօտի իմն այլում զօրութեան անսահմանի։

Սակայն 'ի թողութեան անդ մեղաց, որ փոխակերպութիւն է հոգւոյ, բաց յանսահմանէն և յաստուածակայս մասնէ՝ գոյ և մասն մարդկային։ Գո՛յ անդանօր գործ Աստուծոյ և գործ մարդոյ։ Աստուած գործէ և մարդս լինի գործակից։ Գո՛յ մասն աստուածային, գոյ և մասն մարդկային 'ի փրկագործութեան, կամ մանաւանդ՝ գոյ փրկագործութիւն ինքնին, և ապա ներգործութիւն նորին յանձնիւր հոգիս։

Տեսցուք նախ զգործն Աստուծոյ։

Աստուած՝ յաստուածական մասի անդ փրկագործութեան, գործէ 'ի մեզ առանց մեր, որպէս յարարչագործելն զմեզ։

Աստուած՝ 'ի թողուլն զմեղս մեր՝ է Յիսուս Քրիստոս։

«Գիտասջիք, ասէ Յիսուս, եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս[1]»։ Այլուր ասէ. «Եւ Հայր իշխանութիւն ետ նմա դատաստան առնել, և զի որդի մարդոյ է[2]»։

Զի՞նչ կամիցի ասել բանիւքս այսոքիւք «զի որդի մարդոյ է»։

Կամի ասել, թէ Բանն եղեալ որդի մարդոյ՝ ջընջեաց զմեղս 'ի մարդկային, հասարակաց, հանրական և յոչ անձնական բնութենէ անտի, զոր զգեցաւ անձն աստուածային. եղծ զմեղս պատուիրանաւ, և ունայնացոյց անթերի պատարագաւ իւրով զանձնասիրութիւն։

Յանձին իւրում փոխարկեաց իսկապէս զհոգի՝

1 Մատթ. թ. 6։ 2 Յովհ. ե. 27։

զմիտս և զմարմին մարդկային։ Ամենայն կարողութիւնք մեր և բովանդակ զօրութիւնք մեր սուրբ են ամենեքին, միացեալ յԱստուած և լցեալք Աստուծով, 'ի Քրիստոս Յիսուս, նա մանաւանդ ամենայն աստուածացեալ է 'ի նմա։

Յետ բոլորական գործոյս՝ կատարելոյ 'ի ձեռն մարդեղութեան, տայ Քրիստոս զմարմին իւր և զարիւն առ ամենայն մարդիկ, որպէս զի փոխակերպեսցին, և բարբառի բանս հրաշագանս և խորհրդականս այսպիսիս. «Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս [1]»։ Եւ տալով նոցա զմարմին իւր արտաքոյ, առաքէ 'ի նոսա և զհոգի իւր և զկեանս 'ի ներքուստ։ Առաքէ 'ի նոսա զսուրբ Հոգին սիրով իւրով և մտանջենական շարժմամբ իւրում սրտի։

Արդ աստուածային շարժութիւնքս սիրոյ և լուսոյ՝ որք զիմեն 'ի սրտէ աստի Քրիստոսի առ ամենայն սիրտ՝ են շնորհք, ներքին պարգև Աստուծոյ առ հոգի, առ 'ի համբառնալ զնա 'ի կեանսն յաւիտենից։

Եւ եղանակք վերաբերելոյ զհոգեղէն պարգևքս 'ի հոգիս ախտացեալս՝ զաչացուս և երկրաքարշս, են սուրբ խորհուրդք։

Այլ չէ պարտ իմանալ այսու՝ թէ ինքնին շնորհք անձեռնհաս լինին ազդել ուղղակի։

Եւ ահա ուրեմն գործն Աստուծոյ։

Իսկ ո՞ր այն իցէ գործ մարդոյ։

Ո՛ւնկն դիր. խոնարհ լինել, աղօթել, գիտել համբերել նեղութեանց առ 'ի փոխակերպիլ, և գիտել մեռանել սակս վերստին ծննդեան։ Գիտել մեռանել՝ այս իսկ է բարձրագոյն և շնորհաշուք հրահանգ կենաց։

1 Յովհ. Զ. 54։

Մի՛ ընդդիմարգել լինիր շնորհաց, օթևանս արա նմա, լեր հպատակ և համբեր, և պատուաստն աստուածային արմատանայ 'ի քեզ, և հոգին փոխակերպեալ՝ բերիցէ պտուղս, չասեմ պտուղս բնականս, վայրենիս և չիջելափառս, այլ երկնաւորս։

Եւ զարմանայ նա 'նդ նոր տերևսն և ընդ պտուղսն ոչ իւրայինս։

Սուրբն Պետրոս բովանդակէ զաղատ գործս մարդոյ յարարուածի անդ վերստին ծննդեան յերիս այսոսիկ. պահք, ողորմութիւն և աղօթք։

Պահքն՝ հաստատեալ կան 'ի պատուհասել և կամ 'ի վերածել յարգարութիւն զզգայութս մեր, որք դրունք են անձնասիրութեան։ Ողորմութիւնն՝ է կարեկցութիւն իմն գործօն, որ վարէ տանի զմեզ առ 'ի մէնջ առ եղբարս մեր։ Աղօթք՝ թևիցք են հոգւոյ, որ ամբառնան զմեզ առ Աստուած։

Առանց պահոց և ժուժկալութեան՝ կեայ մարդ յանքանաւոր կեանս, ընդարմացեալ և թմբրեալ զգայնովք, որ պատանք են մտաց և սրտի. ծանրակիր և գժնեայ պատեան, զոր պարտ է պատառել և կակղել յաղատ շարժմունս կենաց։ «Բովանդակ բնութիւն մարդկային ընդարմացեալ նիրհէ», ասէ Պօսիւէ. և այլուր գոչէ. «Քանի՛ք արդեօք իցեն 'ի մէնջ որ մեկնեսցին հեռանայցեն 'ի զանգուածոց մարմնոյ, և անջատեսցեն անտի զհոգիս իւրեանց»։

Զիա՞րդ կարասցէ մարդ սիրել զԱստուած առանց ողորմութեան, և կամ որ նոյն է ասել՝ առանց գործնապէս զգութ ունելոյ առ եղբարս իւր, «Որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, ասէ սուրբն Յով-

հաննէս, զԱստուած՝ զոր ոչն ետես, զիա՞րդ կարիցէ սիրել[1]»։

Ողորմութիւն իբրեւ խորհուրդ իմն է մեռելոց։ Ջի թէպէտեւ մեռեալ իցեմք, կարեմք միշտ տալ, գէթ նիւթապէս։ Տո՛ւր ուրեմն եղբօր քում անանկագոյնի քան զքեզ. հա՛ն նմա մասն ինչ փոքրիկ, թէպէտ և փոքր յոյժ իցէ. և փոքրիկ խոյս այս առ անձնասիրութիւն՝ բաւական լիցի յաճախ մտանելոյ 'ի քեզ Աստուծոյ, և զսիրտ քո բանալոյ։

Աղօթք՝ ծարդեալք ընդ պահս և ընդ ողորմութիւն, և զերծեալք 'ի ստուարապատ կեղեւանաց անձնասիրութեան՝ կարող են 'ի թեւս թեթեւս սլանալ և ելանել առ Աստուած։ Այն զի աղօթք՝ են կարեւոր հառաչանք և ձկտմունք հոգւոյ առ Աստուած, պիտանացուք յոյժ առ 'ի կեանս շնորհաց։ Դադարել յաղօթից՝ է կասել 'ի կենաց. աղօթելն վերստին՝ է կեալ վերստին։ Աղօթք՝ են վահան շնորհաց, և փոխադարձ պատասխանիք հոգւոյն՝ առ ընչմունս աստուածայինս։ Սա այս է աչս մասն մարդկային, ազատ մասն յաւիտենական կենաց։ Արդ որպէս կարող է Աստուած արարչագործել զմեզ առանց մեր, այլ ոչ կարէ փրկել զմեզ առանց մեր, ըստ սրբոյն Օգոստինոսի, նոյն օրինակ և խնդիրն կարի մեծ՝ կենաց և մահու վասն հոգւոց, է աղօթելն և կամ ոչ աղօթել։ Մարթ է լինել դատապարտեալ հանդերձ սուրբ խորհրդօք, ասեն աստուածաբանք, այլ աղօթիւք ոչ բնաւ. քանզի Աստուած կամի կեցուցանել զամենայն մարդ, և զի ամենեցուն որոց կամին փրկութիւն առ դուրս կայ, և աղօթելն՝ է հաւաստեաւ ցանկալ փրկութեան, է դնել զիղձս իւր առաջի Աստուծոյ և հայցել 'ի նմանէ զփրկութիւն։

1 Յովհ. Թուղթ Ա. Գլ. Դ. 20։

Որ ոք յառօրեայ զբաղմունս կենացն ոչ սկսանի զօրն և անցուցանէ զայն աղօթիւք առ Աստուած, որ 'ի միջի մերում է և տեսանէ և լսէ զամենայն, այնպիսին յետսամիտ ոք է։

Բ

Բովանդակ աստուածային ներգործութիւնս այս փոխակերպութեան հոգւոց, սքանչելապէս յանդիման կացուցեալ է և բովանդակեալ 'ի մեծահրաշն և յիսկական գործ ուղղադաւան պաշտաման, այն է 'ի սուրբ խորհուրդն պատարագի, որ սակաւուց յոյժ է քաջածանօթ։

Խորհուրդս այս՝ է նորոգութիւն անարիւն և մշտնջենաւոր պատարագին Յիսուսի Քրիստոսի. և որք յանդիման լինին պատարագի և միաւորին այնմիկ՝ հաղորդ լինին արժանեաց նորա։

Պատարագն՝ է գերապանծ պաշտօնն՝ որով կարեմք տալ զոյգ ընդ Քրիստոսի. «Երթամ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր[1]»։ Պատարագն՝ անցք իմն է 'ի չարէ առ բարին. 'ի բնութենէ՝ յԱստուած, 'ի սահմանաւորէն՝ առ անսահմանն։ Անցք իմն է յանդնդոց մեղաց 'ի սրբակերտեալն բնութիւն, և 'ի մարդկեղէն և 'ի սահմանաւոր բնութենէ՝ 'ի միութիւնն աստուածային և անսահման բնութեան։

Ահաւասիկ քեզ բովանդակ շարայարութիւն գործոց սուրբ պատարագին։

1 Յովհ. Ի. 17։

Նախ, 'ի սուրբ սեղանոյն և յառաջ քան զելանելն 'ի վեր, քահանայն յանուն Քրիստոսի, այսինքն է Քրիստոս ինքնին, միակ ճշմարիտ քահանայ, սրբէ զընութիւնս մարդկային, յինքն զայն առանձնեալ: Արկեալ զիւրեաւ զմարմին մեղաց և զապականեալ և զաղտեղեալ բնութեանս՝ 'ի վեր բարձրացուցանէ և սրբէ իւրական խոնարհութեամբն և խաչակիր լինելով. բաղխէ զկուրծս իւր իբրև զմեղաւոր. «քանզի անօրէնութիւնք մեր՝ անցանեն 'ի նա», որպէս ասէ Դաւիթ: Ապա ելանէ Քրիստոս, ամբառնայ 'ի վեր ընդ աստիճանս սեղանոյն, յետ հակիրճ աղօթից՝ յորում բարբառի առ Հայր իւր, ոչ լոկ որպէս որդի մարդոյ, այլ որպէս Աստուած: Ընծայէ Աստուծոյ զհացն և զգինի 'ի նշանակ առաջիկայ երկրաւոր և չափաւորեալ կենացս: Ապա, սահմանաւոր բնութեանս պատարագաւ փոխակերպէ զայն յինչ մի անսահման մեծութեան, այսինքն է 'ի մարմին և յարիւն, յորում կեայ Աստուած: Յետոյ զպատարագեալ՝ այլ զաստուածային մարմինս այս, որ մարմին իւր է, մատուցանէ առ մարդիկ, ասելով. «Առէք կերայք, այս է մարմին իմ. արբէք 'ի սմանէ, այս է արիւն իմ: Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ ունի զկեանս յաւիտենականս: Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա՝ ոչ ունիք կեանս յանձինս»:

Ահաւասիկ զոր առնէ Աստուած:

Իսկ զի՞նչ մարդկան պարտ և պատշաճ իցէ առնել առ սեղանովն: Պարտ է բաղխել զլանջս ընդ Քրիստոսի, և թոյլ տալ նմա որպէս յընթրիսն՝ զի լուացէ զփոշին մեղաց, զկառչեալն յոտս: Պարտ է ունել հանդէպ աչաց զաղէտս բնութեան իւրոյ, զառանձնաւոր մեղանս իւր, և զարշիլ մերժել 'ի նոյանէ, ըստ օրինակին Քրիստոսի, որ նախ բաղխէ ըզկուրծս իւր և ճանաչէ զանձն արժանի կորանաց և բարկութեան՝ վասն մեր, թէպէտ և իւրովի իցէ անմեղ ամենևին:

Նովաւ և առ 'ի նմանէ սրբեալ և ձգեալ մարդիկ՝ 'ի վեր ելանեն և հուպ մատչին 'ի սեղան անդր նուիրանաց և պատարագի: Սրբեալք՝ պարտին նուիրել զանձինս: Միացեալ մարդ ընդ անթերի պատարագին Քրիստոսի, որ միայն կարող է աստուածային զօրութեամբ և մարդկեղէն բնութեամբն խաղառ բնաջինջ առնել զինքնասիրութիւն 'ի մարդն, փոխակերպի նա 'ի Քրիստոս Յիսուս, որ կեայ 'ի նմա, և առ 'ի փոխակերպել զնա՝ առաքէ 'ի նմա 'ի սեղանոյ անտի զհոգին իւր, զշարժմունս սրտի իւրոյ, ըզբերմունս սիրոյն և զճառագայթս լուսոյն:

Մատուցանէ նմա զմարմին իւր և զարիւն, որք միացեալք են 'ի միասին, 'ի հոգին և յաստուածութիւն, որպէս պատուաստ իմն յաւիտենական, յորում հազորդին և կեան 'ի միասին Աստուած և մարդ, առ 'ի պտղաբերել պտուղս աստուածայինս և մարդկայինս: Քանզի զպտուղն՝ զորս արդիւնաբերէ 'ի մեզ արիւնն աստուածային ուխտի, նաև մեք իսկ արդիւնաբերեմք անձամբ անձին, զօրէն պատուատեալ ծառոյ՝ որ և 'ի պատուաստի անդ գործէ ինքնին: Պտուղքս այսպիսի ըստ Աստուծոյ՝ յառաջ գան առ 'ի նմանէ և յանհուն արժանեաց Քրիստոսի, այլ և առ 'ի մէնջ, և յարժանեաց մարդոյ, յորում խմորեալ զանգլին կեանքն Յիսուսի Քրիստոսի:

Ահաւասիկ սուրբ խորհուրդն պատարագի և պտուղք իւր:

Նախայն խնկախնկը իցեն արդեօք այսպիսի տօնենայն, եթէ միայն օրինակ և նմանութիւն:

Խոկականք են այսօրինակ ամենայն, միանգամայն և նմանութիւնք։ Հրաշափառ պաշտօնս այս լնու և կատարէ հաւատեաւ զամենայն զոր միանգամ օրինակէն, որպէս խորհուրդք ներգործեն զշնորհսն՝ որոց ենն նշանակիչք։

Լուր և զայս զպերճ խորհրդոյ պատարագին։ Ամենուրեք է Աստուած, և Յիսուս Քրիստոս՝ է նոյնպէս ամենայն ուրեք ուր և կամիցի։ Փառաւորեմք մեք առընթեր սեղանոյն․ Քրիստոս է 'ի միջի մերում բովանդակ էութեամբ իւրով։ Անգամօր, առանց միւսանգամ հեղլոյ զարիւն իւր, կատարէ զխնկական գործն յաւիտենական կենաց, զպատարագն սահմանաւորին՝ առ 'ի ժամանել յանսահմանն, և զպատարագն ժամանակաւոր՝ առ 'ի թեւակոխել 'ի յաւիտենականութիւն անդր․ և 'ի մատուցման զանձն իւր արկանէ՝ առ անցանել յայլս, և կատարէ զպատարագն ընութեան և սահմանաց նորա՝ առ 'ի գտանել զԱստուած։

Եւ հանապազորդեան պատարագս այս յաւէժաբար և յամենայն ժամու նորոգեալ ընդ ամենայն երեսս երկրի, է շարժմունք սրտին Քրիստոսի առ Աստուած։ Մարդկութիւն Քրիստոսի ամփոփի, խոնարհի, հրաժեշտ տայ յանձնէ, և յոչինչ դառնայ իւիք, որպէս զենլի 'ի մէն մի բարախմունս սրտին, առ օժանդակ լինելոյ մեզ մշտանորոգ գործովս այսուիկ յաւիտենական սրբութեան իւրոյ և միջնորդ սիրոյն առ Աստուած, առ 'ի բնաջինջ կորզել 'ի մէնջ զանձնասիրութիւն, որպէս զի ընկալցուք 'ի մեզ զԱստուած ինքնին։ Ոչ ապաքէն պարտիմք խելամուտ լինել, եթէ կեանք 'ի կողմանէ մարդոյ, կեանքն սանձ լիապատար և ճշմարիտ, նուէր ինքն է անընդհատ և միջնորդական պատա-

րագ ինքնին անձին, որում փոխարինի 'ի կողմանէ Աստուծոյ ուղխ ինքն անսպառ և յաւիտենական փառաց։ Ուրեմն միջնորդաւոր պատարագն Քրիստոսի՝ է նոյն ինքն շարժումն կենացն յաւիտենից։

Երբ արդարև այսօրիկ ամենայն մեծամեծաց բանք ճշմարիտ են, ոչ ապաքէն պարտեին առաւել ուշ ունել մարդիկ։ Գիտեմ բաց զի մեղուցուցին քահանային և չլինելն պատուասիրն առաջինաց նոցին, չեն բաւական 'ի դարձանել երբ ընդդեմնային ինքեան պաշտամունքս այսօրիկ։ Գիտեմ զի բնաւորեալ են մարդիկ ճանապարհորդել ընդ արահետս առանց ինչ զգալ լինելոյ զայլոցին։ Յանդիմանեալ ցուցին Աստուծոյ 'ի սիրտս չիցէ զարմանապահ հրաշալիք։ Ո՞վ որ խիրայ, և կամ խորհի 'ի այլն։ «Մի ասեր ինչ բնաւ գնոսա, ասէ Յեհովայն, զի չտեսանեն ինչ աճմնեսին և ոչ խորհին ինչ բնաւ»։ Եւ կարի յիրաւունս է զոր ասէն։ Հաւատ և այսպէս գտանին ոմանք, ոչ և սակաւք յոյժ բնավ, բորբոքեալք սրբոյ սիրովն Աստուծոյ և եղբարց իւրեանց․ և սոցա ապաքէն չէր արդեօք արժան զգալ և տեսանել զառաջինութիւնն Քրիստոսի, երբ հաւատովն ինքեան առաջինոյ։

Ճշմարիտ է ամենայն զոր ասեսդ։ Այժմ, ըստ սովորական օրինի պաշտօնեայն և ժողովուրդն յանդիմանակացք, 'ի ժամ պատարագին Քրիստոսի ունին որպէս դբօղ ինքն 'ի վերայ աչաց, դի մի տեսցեն և մի զգայցեն։ Այլ հոգիք սուրբք զգան յաճախ զառաջիկայ զօրն Քրիստոսի․ զի և ոմանք՝ ճչգիւ բարբառեալ, տեսին աչօք իսկ բացօք։

Զինչ խօսիս։

Զոր հաւատամ յամենայն սրտէ և մտաց։ Հաւատամ թէ Քրիստոս եղեալ խաչապէս 'ի սեղանի անդ, կարէ գոլ տեսանելի։ Չէ մարթ օրինակի աղագաւ յուրաստ լինել, եթէ սրբուհին Թերեզա չիցէ տե-

սեալ զՔրիստոս։ Ընթերցիր զոր գրէ նա զայսմանէ։ Նա և հաւատամ ես 'ի մասնաւորի, թէ երանելին Տէր Օլիէ, հիմնադիր սրբոյն Սուլպիկիոսի կղերանոցին, եւս 'ի սրբում սեղանի զՔրիստոս. և չունիմ թերահաւատ լինել զտեսութենէ բազմաց 'ի սրբոց։ Հաւատամ ըստ ամենայնի, եթէ սիրտ մարդացելոյն Աստուծոյ՝ թաթաղուն զեղուն սիրով եղբարց իւրոց, ընծայէ զանձն իւր առ Աստուած վասն նոցա 'ի նմին պահու, և թողու ապա 'ի վերայ սեղանոյ զմարմին իւր և զարիւն, պատուաստ յաւիտենական. և ճառագայթարձակ սփռէ զհոգին իւր 'ի վերայ ժողովրդոց, առ 'ի ձգել զնոսա առ ինքն և ասել. «Եկայք սիրեցեալքդ իմ, կերայք արբէք և արբեցարուք»։

Այս ուրեմն հաւատամ դու երկ հացն և գինին փոխին յԱստուած. վեր 'ի վայր շրջէ այս զամենայն գիտութիւն և գրեագանցութիւն։

Միտ դիր զոր ուսուցանեմքս մեք. հացն և գինին փոխեալ լինին 'ի մարմին և յարիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ասեմք ինչ արդեօք, եթէ հացն լինի Աստուած, այսինքն մարմնաւոր բնութիւն 'ի Յիսուս Քրիստոս՝ լինի բնութիւն աստուածային։ Ո՞չ ապաքէն մասն է հաւատոց, եթէ երկու բնութիւնք գոն 'ի Քրիստոս Յիսուս, բնութիւն աստուածական և բնութիւն մարդկային, և վերջինս այս՝ յինքն բովանդակէ զհոգի և զմարմին մարդկային։ Արդ եթէ հաւատոյ հաշուիմք զխորհուրդն մարմնաւորութեան, զի՞նչ լինէին հացն և գինին, որով սնաւ Յիսուս Քրիստոս 'ի վերայ երկրի։ Յանանջատ վայրկենի միում, 'ի խորհրդական կետի ասեմ և վայրկենի, որ հաստատեալն էր 'ի բնէ, հացն այն դադարէր 'ի հաց լինելոյն, փոխելով 'ի մարմին նորա և յա-

րիւն, որպէս լինի 'ի մարմինս մեր։ Չկարեմք մեք հասու լինել խորհրդական գոյացափոխութեանս, որպէս չիմանամք զյեղակարծ փոխարկումն կերակրոց յարիւն։ Սակայն ոչ այս և ոչ այն ստնանեն ինչ գիտութեան և բնագանցութեան։

Եւ երկրորդ անգամ՝ գոյ և այլ ցուցակութիւն սքանչելագործ զօրութեան սրբոյ պատարագին։

Եւ է այս արդիւնքն և արգասիք գոհութեան խորհրդոյն։ Չիք երկբայութիւն, զի հաղորդութիւն սուրբ՝ փոխէ յաճախ զգալի անառակութիւն ցանկութեան՝ յողջախոհութիւն, և զամբարտաւանութիւնն՝ 'ի ցածութիւն։ Արդ փոխել զանառակութիւնն յողջախոհութիւն և զամբարտաւանութիւնն 'ի խոնարհութիւն՝ է յոյժ առաւել դժուարին անշուշտ քան զփոխել հացին և գինւոյն 'ի մարմին և յարիւն։

Մեծահրաշ քան զամենայն սքանչելիս՝ է եղծանել յարարած ոք ազատական զամբարհաւաճութիւն և զզգայականութիւն, զերկրաքարշն ոգի՝ առ որ անկարող է ինքնին, զկրկին կերպարանս ասեմ անձնասիրութեան։

Գ

Լուսոյ աղէ առ 'ի քեզ միաւանգամ զփոխակերպու-թիւն հոգւոյ խնդիր, որպէս աստուածաբանականն իմանայ զդարձութիւն։ Ի՞ւ անցանէ հոգի 'ի չարէ առ բարին, և յանհաւատութենէ 'ի հաւատս։ Ո՞րպէս 'ի գլուխ եղանէ այն զոր դու հակիրճ և համառօտ բողոքիւն մեղաց և արդարացուցումն յորջորջես։

Ահաւասիկ քեզ։ Նախ զի լոյսն՝ որ լուսաւորէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ, կայ թևատարած 'ի վերայ ամենայն սրտից և մտաց, և անձինն ծանօթութեամբ և սիրով ընձեռէ նմա զսերմն թագուն, զբնականն և զկարևոր՝ ճանաչելոյ և սիրելոյ զԱստուած. զոր զգայ յանձին իւրում և տեսանէ մարդ, չատ է այն առ ամբաստանել զինքն առ Աստուած, ասէ սուրբն Պօղոս։ Սակայն մարդ, յաւելու նոյն ինքն Առաքեալն, բազում անգամ պահէ արդելական զճշմարտութիւնն աստուածեղէն՝ յանիրաւութեան անդ իւրում։ Սիրտ չարախտավարեալ՝ հեղձուցանէ զբնական սերմն սիրոյն Աստուծոյ 'ի սէր անձին իւրոյ։ Տուաւ նմա Աստուած, և նա չիջուցանէ զնա 'ի խորս սրտի իւրում. աղարտէ զխղճական կէտն օրինաց բնութեան, և այսպէս անկանի ընդ լծով ախտից, զգայարանաց և անարգել անձնասիրութեան, զոր սուրբն Պօղոս օրէնք հակառակ առձայնէ։ Յայնժամ 'ի դէպ ելանէ նմա առածն տէրունեան, եթէ՝ «Որ պչար գործէ՝ ատեայ զլոյս»։ Այսպիսին յայնժամ զգուրս ընդդէմ եդեալ է շնորհաց Քրիստոսի և հոգւոյն Աստուծոյ, և է անսպատասխանի, ըստ սըր-

բոյն Պօղոսի։ Այլ որ փառաւորէն զԱստուած 'ի ճանաչման իւրում, յաւելու Առաքեալն, այսինքն՝ որ մեծարէն և ջանաջնար լինի աճեցուցանել կամ գէթ չհեղձուցանել յանձին զներքին ծանօթութիւնն Աստուծոյ, զբնականն ասեմ և զկարևոր պարգևն, զոր ամենայն անձն 'ի բնէ բերէ յինքեան, այնպիսին ոչ ևս փակէ զաչս իւր ընդդէմ լուսոյն՝ որ 'ի վերուստ գայ և ասի գերբնական. հոգի նորա՝ կազմ է յընդունելութիւն շնորհաց, և շնորհաց՝ որ բաշխին ամենեցուն, և ընդմիտանեն անդր՝ ուր չգտանեն խոչընդոտս խափանարարս։ Որ ոք զհետ գնայ բանին, ասէ, սուրբն Թովմաս, տայ նմա Աստուած զշնորհս և բղխհաւատս։

Եւ ահա լոյր զկնարդն։

Աստուած՝ արկ 'ի խորս մարդկային հոգւոյ զսերմանս հաւատոյ, հանդունատիպ սերմանց անկելոց 'ի ծոց մայրենի, ասէ սուրբն Օգոստինոս։

Ի մէջ բերցուք զյատուկ բանս նորին. «Քանզի սկզբնաւորութիւնք հաւատոյ՝ նման են յղացմանց»․ և զպյսոսիկ բանս այսպէս մեկնաբանէ Ֆենելոն. «Յոյժ 'ի բացուստ է սկզբնաւորումն առ 'ի ժաման լինել հուպ ընդ հուպ 'ի հաւատս, որպէս զսերմն անկերպարան՝ որ սկիզբն է մանկան, ծնանելոյն յետ երկար ժամանակաց։ Խառնէ Աստուած զսկիզբն գերաշխարհիկ պարգևաց՝ ընդ նշխարեալ մնացուածս բարւոյ բնութեան. այնպէս զի մարդ՝ որ 'ի խորս էութեան իւրոյ ունի 'ի միասին զայնոսիկ, ոչ բաժանէ ամենևին, և տանի յինքեան խորհուրդ ինձ շնորհաց, զկնովին իսկ անզիտանալով»։ Վասն այսորիկ ասէր Տերտուղիանոս. Հոգի՝ քրիստոնեայ է 'ի բնէ. և սուրբն Հերոնիմոս ասէ. Չիք ոք որ ոչ բերիցէ յանձին 'ի ծնանել իւրում ինչ ինչ 'ի Քրիստոսէ։

Սակայն սուրբն Օգոստինոս ասէ, եթէ առ 'ի փրկութիւն չէ բաւական զի լիցեն սերմանքդ այգոքիկ, այլ պարտ է զի ծնցին և եկեսցեն 'ի լոյս։ Առ այս ծագէ Աստուած զարեգակն իւր, զշնորհս, 'ի վերայ չարաց և բարեաց։ Այլ չարք և սիրտք ախտացեալք՝ որ կեան յանհաւատութիւն անձնասիրութեան՝ չըտեսանեն և չառնուն 'ի միտ, և հեղձուցանեն կամ արմատախիլ առնեն զսերմանս հաւատոյ, զնկըրտեալն 'ի ծնանել։ Իսկ ամէն հակառակ սիրտք բարիք՝ ասէ Աւետարանն, են իբրև զարտորայ մի պարարտ. ընդունին զսերմն յերկիր բարւոք, որ բերէ զպտուղ. և ունին նոքա անդ 'ի սիրտս իւրեանց զկենդանի հաւատս. և հաւատս այս կենդանի՝ գործէ զարդարութիւն և զփոխակերպութիւն հոգւոյ։

Այս է ահա հանդէս փոխակերպութեան հոգւոյ։

Դ

Մնայ ինձ գիտել զարդիս ճշգիւ զատակաւ զինչ շնորհքն իցեն: Կարիցես խելամուտ առնել զիս քաջիկ առեղծուածոյս։

Վաղ իսկ ասացի եթէ են աստուածային շարժմունք և կամ տրոփմունք մեկնեալք 'ի սրտէն Քրիստոսի, որք առաքեն զՀոգի սուրբ յամենայն սիրտս։

Եւ զինչ իցեն արդ կանխաժաման շնորհք. զինչ բաւականն և գործունեայ շնորհք, և զինչ սրբարարն։

Ամենայն շնորհք՝ զառաջինն են կանխաժաման։ Հոգին սուրբ շարժէ և զարթուցանէ զամենայն սիրտ, և խնդրէ զի ընկալեալ լիցի 'ի ներքս։ Սա այս է ահա շնորհք կանխաժաման։

Սակայն մարդ, ասէ Ժողովն տրիտենդեան, ընդդէմ Բողոքականաց, կարէ միշտ ընդդէմ կալ շնորհաց։

Արդ որ ընդդէմ կայ շնորհաց՝ հակառակի այնմիկ շնորհաց՝ որ էր բաւական առ 'ի փրկութիւն։ Որ ոչն հակառակի նմա՝ առնու զփորձ հզօրագոյն ազդեցութեան նորա, և շնորհքն զեղեալ 'ի սիրտ նորա՝ սրբէ զնա։ Ահա իմաստք բանիդ, ընդ որ թելադիր լինիմ քեզ չամփոփիլ ամենեւին։

Եւ զինչ իցէ, աղէ, շնորհքն ինքն յինքեան։ Գոյացութիւն ինչ իցէ, եթէ հանգամանք իմն և կամ պայմանք հոգւոյ։ Աստուած իցէ՝ եթէ ոչ։

«Եթէ ոք զբանն իմ պահեսցէ, ասաց Քրիստոս, ես և Հայր իմ առ նա եկեսցուք և օթեւանս առ նմա արասցուք»։ Եւ սուրբն Թովմաս ագուինացի, աստի զհետ երեր, թէ «ի ձեռն սրբարար շնորհաց՝ բնակէ 'ի մեզ Երրորդութիւն»։ Վասն որոյ բուն շնորհքն ասացեալ, սրբարարն շնորհք՝ է անձնաւոր յանդիմանակացութիւն Աստուծոյ 'ի հոգւոջ. կամ թէ ախորժէ ոք, է արդասիք նորին իսկ անձնաւոր առաջիկայութեան Աստուծոյ 'ի հոգւոջ։

Զինչ իմանաս դու անձնաւոր առաջիկայութիւն Աստուծոյ ասելով:

Հաւատամք ամենեքին, եթէ ամենուրեք է Աստուած, և է ամենայն ուրեք իսկապէս. ապա ուրեմն է նոյնպէս և 'ի հոգիս։ Սակայն մի կարծիցես անշուշտ, եթէ նովին եղանակաւ հանգչիցի նա 'ի հոգիս սրբոց և յանձն չարարուեստից։ Վերջինս այս կարի 'ի բացեայ է առ 'ի նմանէ, ոչ եթէ խորոցիւ տեղեաց, քան լիցի՝ ասէ սուրբն Օգոստինոս, այլ խոտորմամբ կամացն. մինչդեռ առաջինն կեայ ընդ նմա ճանաչմամբ և սիրով։ Աստուած չէ հեղանիւթ ինչ անգործ,

և ըստ բերելոյ բաղդին՝ ծաւալեալ յընդարձակութեան միջոցի։ Ճշմարիտն Աստուած՝ է անձնաւոր. զիտէ, տեսանէ, սիրէ, կամի և ազատ է։ Արդ ազատ միութիւն հոգւոյն ընդ Աստուծոյ, միութիւն ընտրութեան և կամաց, ինքնակամ միութիւն և 'ի կողմանէ մարդոյ և 'ի կողմանէ Աստուծոյ՝ սոսի անձևաւոր առաջիկայութիւն։ Եւ ահա այս է վասն մարդոյ միակ շնորհաց կամ սրբարար շնորհք։

Կենդանաւէտ առաջիկայութիւնս այս Աստուծոյ՝ ընձեռէ հոգւոյ երիս մեծամեծ լաւութիւնս, զհաւատս, սահմ, զյոյս և զսէր. երեք աստուածային և գերաշխարհիկ զօրութիւնք՝ որք բարեզարդեն զհոգիս մեր ըստ պատկերի Աստուծոյ, և են արգասիք ճշմարիտ յանդիմանակացութեան երից աստուածային անձանց։

Սուրբն Պօղոս ասաց. «Զինչ՞ էն հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց հաստատութիւն [1]». քանզի արդարև, կենդանի հաւատք ունին զնոյն ինքն զյանդիմանակացութիւն Աստուծոյ, որ 'ի մեզ է, և խորամուխ առնէ զմեզ 'ի զօրութիւն իւր, 'ի լոյսն և 'ի սէր։ Այս է Աստուած անկեալ 'ի հոգիս մեր, ըստ սրբոյն Յովհաննու, և սակս այսորիկ ահա ընձեռեն մեզ հաւատք լոյս անսպառ և զօրութիւն անկշռելի։

[1] Եբր. ԺԱ. 1.

Ե

Յնկալմունս լինիմ այսմ վարդապետութեան շնորհաց։ Ակնածութ 'ի խորհուրդս սրբազանս։

Խորհուրդք ըստ կանխասաց բանիցս, են եղանակք ընդունելութեան գերբնական պարգևաց՝ որ են շնորհք, վասն մեռելոտի, ողջացու, ախտաւոր և զգայական ոգւոց։ Եւ եղանակքս այսորիկ՝ ունին մասն ինչ տեսանելի, զգալի և բնական։ Են նշանք զգալիք անտեսանելի շնորհաց, ունելով յինքեանս և փոխադրելով զշնորհսն՝ որոց նշանակիչք են։

Այս ամենայնիկ շրջուցանեն զիս մինչև կարի յոյժ։ Ի՞ւ խիք միջնորդք բնականք մարդկան ըմբռնել զշնորհս, որ է հոգի Աստուծոյ, կամ զեր ազդումն հոգւոյս այսորիկ։

Եւ որով իւիք արդեօք սերունդ մարմնաւոր ձեռնհաս լինի տալոյ կեանս և 'ի լոյս ածելոյ անձն այլ և միտք։

Զգիտեմ։

Որպէս ոչ ինչ ընդհատ և ես։ Այլ սակայն քանզի անշուշտ է այս՝ որ մեծագոյնն է ամենայն գործոց բնութեան, չկարեմ ես կանխաւ իբրև անհնարին քարոզել զգործունեայ զօրութիւն սրբազան խորհրդոց. որոց գոյ մասն ինչ զգալի, նիւթ և մարմին. այլ ձև հոգեկան է նոցա, ունելով զհոգի և զմիտս, որ է սըրբազան բան պաշտօնէին, և բան նորին իսկ Եկեղեցւոյ, և յիւրն նկատեալ՝ է նոյն ինքն յաւերժական ցոլացումն և կենդանարար սիրազեղ բարբառումն սրտին Յիսուսի Քրիստոսի։ Զինչ ապա վարէ գործ նիւթն խորհրդական յայսմ ամենայնի։ Զոր ինչ վա-

րէ բարբառն յօդաւոր՝ որ. է նիւթ արտաքին, առ. խորհրդովս մտաց, որ է ոգի. և զոր գործէ աջ հայրենի հանգուցեալ 'ի վերայ գլխոյ որդւոյն առ 'ի օրհնել։ Յորժամ հայր ոք յօրհնելն զորդի իւր դնէ ըղձեռս 'ի վերայ նորա, ոչ ոք ասիցէ. ԱՀա խմէ իցէ ձեռնս այս 'ի մէջ երկուց ոգեացս։

Հաւատարիմ և բանդ։ Սակայն օտարոտի իմն թուի զի արգասիք կրօնականք, այսինքն և՝ հակիրճ ասելով, իմացական և բարոյական արգասիք, յառաջ գայցեն 'ի հոգիս մեր բնական իմն ձևով և ճակատագրապէս, առանց ներգործութեան մտաց և ազատութեան։

Քա՛ւ, մի լիցի։ Գոյ անդ զուգընթացութիւն իմացականին և ազատութեան կամաց, թող միայն զմկըրտութիւն նորածին մանկանց, թէպէտ և յայնմ իսկ համարիմք իբրև կարևոր զուգընթացութիւն իմն բարոյական երաշխաւորութեան։

Այլ այս մի ինչ կարի յոյժ ստուգագոյն է, զի խորհուրդն գործէ 'ի մեզ առանց մեր, զեւս մեծամեծս քան զոր գիտեմք և իմանամք. և այս՝ հանրական պայման է կենաց։ Իբրև ստեղծանէ զմեզ Աստուած՝ չգիտեմք զխորհրդն, և անկարողք եմք ամենևին։ Ե՞րբ արդեօք մարմնաւոր կեանք՝ անթերի գործեցին 'ի սիրտս մեր զստեղծագործութիւն արեան և զայլն ամենայն. անկար եմք և չգիտեմք ինչ ընաւ։ Եւ յի՞նչ կարող՝ եմք մեք արդեօք երբ բանն ծնանի 'ի մեզ արտաքուստ՝ եթէ իցէ ասել, 'ի ձեռն յօդաւոր բարբառոյ։ Այնօրինակ և 'ի հեղուլն Աստուծոյ զշնորհս իւր 'ի հոգիս, զոյ յայնմիկ մասն ինչ ծածկեալ առ 'ի մէնջ, որ անցանէ զանցանէ ըստ միտս մեր։ Յամենայն 'ի կարգս էից զանխուլ է մասն ինչ կենաց, և յաճախ՝ առաւել արգասաւորն և պիտանացուն. արդ հաւաստի է զայս այսպէս իմանալ և զմտաց. « Բանն

ինքնին, ասաց Սենեկա, չէ լուսափայլ բոլորովին. և կարևորագոյն մասն նորին աղօտ է »։

Սմին նման և խորհուրդք սուրբք, խորհրդականք ծորակքս այսօրիկ շնորհաց, գործեն 'ի մեզ առանց մեր, և ինքեանք իւրովի գործեն զգործս իւրեանց։ Գործ իմն են նոքա 'ի վաղուց իսկ գործեալ. 'ի գործոյ գործելոյ, ըստ աստուածաբանութեան, զոր Պօղոսէ ասէ, գործ գործեալ։

Որով ընդունելի համարիմ, զի խորհուրդք ըստ իմիք խնկակից ունին ինքեանց զՆերողութիւն։

Եւ զինչ ներողութիւնքն իցեն։

Ներողութիւնն հաւաստի հանդէս է երաշխեաց։ Է հաղորդութիւն սրտից. է սիրան Քրիստոսի, որ հաստատէ զսիրտս ամենեցուն. սիրտն հզօրաց, որ զօրավիգն լինի տկարագունից, և հաստատութիւն տկարաց 'ի վերայ զօրաւորաց։ Է վերաբերումն զօրութեանց և արժանեաց, որք յառաջ գան բովանդակօրէն 'ի Քրիստոսէ։

Նու մ՞ք ամենք հակառակամարտք յարուցեալ կան ընդդէմ ներողութեանց։ Բողոքականք նորակրօնք, որք որպէս 'ի ճահ յոյժ խորհրդածէ Պօսիւէ, զբովանդակ գործն փրկագործութեան՝ մի միայն ներողութիւն համարին, մի գործ գործեալ առանց նախակարգ պայմանի գործոյ իրիք, առանց ազատ գործոյ և բարոյականի. մինչդեռ առ 'ի արժանի լինելոյ ներողութեան ըստ ուղղափառական մտաց՝ պարտ և պատշաճ է լինել մարդոյ 'ի կեանս շնորհաց, իւրովն ազատ ընտրութեամբ։

Ձ

Յանկայն դարձուցք անդրէն 'ի խորհուրդս սրբա-
րարս:

Փրկագործութեան գործ է յարուցանել զհոգիս թաղեալս 'ի քուն մահու, և զօրացուցանել զկենդանիս: Այսպէս ուրեմն տասցեալքն խորհուրդք մեռելոց և խորհուրդք կենդանեաց:

Մկրտութիւն և Ապաշխարութիւն յարուցանեն ըզմեռեալ հոգիս:

Խորհուրդն զոհութեան և ուխտի, կամ որ նոյն է՝ Հաղորդութիւնն սուրբ և Դրոշմ՝ կենագործեն զկենդանիս, պարգևելով նոցա զկեանս և զուժ. այսինքն զՈրդին Աստուած և զսուրբ Հոգին: Այս պարտ է զօրացուցանել զմարդ ընդդէմ մահու և առաջնորդել 'ի կեանս:

Վերջին օծումն մեղմէ զտագնապս մարմնաւոր մահուն հիւանդաց մերձ 'ի դրունս մահու հասելոց:

Ի վախճանի, Պսակն և կարգ զատանեն զանդամս եկեղեցւոյ յերկուս խականս դասս, ըստ ազատ ընտրութեան ամենեցուն. դաս մի սերող 'ի վերայ երկրի զնորանոր սերունդս մարդկան, և դաս այլ վերածնող զմարդիկ երկնից, զծնեալսն կանխաւ 'ի վերայ երկրի:

Մինչ մկրտութիւն իցէ 'ի հարկէ կարևոր առ փրկութիւն:

Այո, կարևոր է անհրաժեշտ:

Զերեմն դատապարտեն անխտիր զամենեսին որոց զգլխով չիցէ սրսկեալ ջուր մկրտութեան և ասացեալ բանքն ըստ սրբազրոշմ ձևոյ:

Մտաւնաս զոր ուսեալն իցես 'ի վարդապետարանի հաւատոցդ. չգիտիցես զի մկրտութեան երրեակ տեսակք են, և ամենեքին մի են. Մկրտութիւն ջրոյ, մկրտութիւն հոգւոյ (սիրոյ), և մկրտութիւն արեան: Եւ երեքեան սոքա մի են, ասէ սուրբն Յովհաննէս:

Ասացուք արդ յանհրաժեշտն հարկ Ապաշխարութեան, որ է Խոստովանութիւն մեղաց: Զինչ անա դու վասն նոցա, որք յետ յայտնապէս կեցոյ 'ի չարիս մեռանին 'ի մահացու մեղս, առանց խոստովանելոյ ըզմեղսն:

Եթէ մեռանին 'ի մահուչափ մեղս, մեռանին 'ի մահ յաւիտենական: Սակայն ով ծայրհեացի ասել, Ահա այրս այս մեռանի 'ի մահուչափ մեղս: Տեսանեմ զի յաճախ մտանես զվարդապետարան հաւատոյդ. չիցես ինչ ընաւ լուեալ զկատարեալ զզջմանէ: Կատարեալ զղջումն այն է, որ յինքն փակէ զհաւատս սէրն Աստուծոյ՝ և անդէն և անդ խորովի արդարացուցանէ զմարդ:

Ըստ վկայութեան տրիդենդեան ժողովոյն, անկատար զղջումն՝ է ազդումն 'ի մեզ արտաքոյ 'ի Հոգւոյն սրբոյ. կատարեալ զղջումն՝ է Հոգին սուրբ եկաւորեալ 'ի հոգւոջ: Ի վերջին յայսմ պայմանի՝ արդասիք ապաշխարութեան յառաջ գան, այսինքն է լինի թողութիւն մեղաց առանց իսկ խոստովանութեան:

Զայսոսիկ ասեմ, առ 'ի կարճել զամարդի բանս թշնամանաց այնոցիկ՝ որք լուտան այսօր ընդդէմ ուղղափառ Եկեղեցւոյ, ամբաստանելով զնա, իբր այն թէ դատապարտիցէ զամենայն մարդիկ, և մանաւանդ վասն իրաց, զկնովին անմասն եղելոց 'ի կամաց առն իւրաքանչիւր: Եկեղեցի՝ դատապարտէ

և ոչ զոք։ Առ 'ի մտանել 'ի կեանս, չիք տարակոյս թէ պարտ է լինել 'ի հոգւոջ ուղղափառ Եկեղեցւոյ. քանզի հոգիս այս՝ սահմանաւ ասացեալ՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակ կեանք հոգւոց, որք կեան յԱստուած։ Այլ մարթի երբեմն ումեք հաղորդ գտանիլ հոգւոյս այսմիկ Եկեղեցւոյ, առանց հաղորդակից լինելոյ մարմնոյ նորա, որպէս վաղ իսկ ասացաք։ Սակայն մի՛ մոռանար բնաւ, եթէ հոգին Եկեղեցւոյ մեծապէս 'ի մարմնի անդ իւրում է։ Եթէ միացեալ ես ընդ հոգւոյս ընդ այսմիկ, պատկառ կացցես հանդոյն այլոց եղբարց սրբազան մարմնոյ նորա. առնուցուս զախորժ հրահանգաց նորա՝ որչափ տաւել ծանիցես. քանզի սուրբ են այնոքիկ և հնչեալք առ 'ի յԱստուծոյ. որ անարգէ զայնոսիկ, անարգէ զայն զոր Աստուած հաստատեաց, և ոչ կեայ յԱստուած։ Եթէ սկիզբն առնես սիրելոյ զԱստուած, և յարիլ 'ի նա վարանական իմն կրօնիւք, անսա ինձ, երթ յԵկեղեցին ուղղափառ, և գտցես անդ հրահանգս ճշմարիտս, սուրբս, կենսաբեր և փրկաւէտ հրահանգս ըստ ամենայնի, մինչև 'ի մանրամասունս իւրեանց։

Իսկ զխոստովանութենէ դարձեալ խօսելով, ո՞վ ոք ոչ իմանայ զբարբառս զայս արդի Թատերական հանդիսի իրիք, յորում գոչէ դիւցազնուհին յանյուսութեան անդ պահուն, թէ «Կամէի ընդգրկել զուղղափառ կրօնս սակս խոստովանութեան խորհրդոյ»։

Վա՛յ և երջանիկ այնոքիկ՝ որոց յետ բազմայոլով ամօք տառապելոյ 'ի մոլորութիւնս և 'ի քարուականս ախտից՝ վերադառնան յաւազանս այս մկրտութեան հոգւոց և 'ի սրբարանս սրտի։ Զգալի արդասիք արձակման՝ է նորոգելն զսիրտ մեր։ Է՛, է իմ տեսեալ զսիրտս չիջեալս և զոգիս ցամաքեալս 'ի չարիս

պարագայց ամօք, գոչելով սուղ ինչ յետոյ զկնի ընդունելոյն զարձակումն 'ի մեղաց. Զգամ զի սիրտ մանկութեան իմոյ վերածնանի 'ի ծոցի իմում։

Հոգին մեռեալ էր և թափուր 'ի սիրոյ, և ծնանի դարձեալ. և սիրտ իրազգաց լինի միւսանգամ հիւթոյն գալստեան, և վերստին բերի յախորժս և 'ի թռիչս, զորս արկեալ էր 'ի մոռացօնս։

Է

Ասացեր ինձ զխորհրդոց մեռելոց. խօսեաց արդ զխորհրդոց կենդանեաց։

Այն ինչ վերանորոգին կեանք՝ առաջին գործ իւր է փափաք կենաց. սէրն՝ կամի սնանել. կեանք՝ կամին զաճումն զիսկութիւն իւրեանց։ Եւ այնպէս խօսակից լինի Քրիստոս յայնժամ ընդ հոգւոյս մերում՝ որպէս խօսեցաւ ընդ մեռեալ աղջկանն յետ յարուցանելոյն զնա։ Կոչէ զնա 'ի մահուանէ՝ ասելով. Արի՛, կաց, դուստր իմ. և ապա յաւելու. Տո՛ւք նմա ուտել։ Եւ որ եկն ինքնին առ 'ի պարգևել մեզ զկեանս, և պարգևել յաւէտաբար, մատուցանէ մեզ զհացն և զգինի. զհաց մարմնոյ իւրոյ, զբաժակն արեան իւրոյ, և զարիւն նորոյ և յաւիտենական ուխտին։ Որ ոչ ճաշակեաց զհացս զայս և զբաժակս, չընկալաւ նա յանձին զկեանս։ Եւ Քրիստոս հաստատուն առնէ զբան իւր. քանզի այնպիսին ընդունի երբեք երբեք և 'ի վերին երեսս հոգւոյ իւրոյ զշարժմունս ինչ կենաց. սակայն կեանք ոչ անցին թափ մինչև 'ի խորս, 'ի միջակէտ անդր հոգւոյն,

տառ 'ի « լինել աղբիւր ջրոյ բղխելոյ 'ի կեանսն յաւիտենականս[1] »:

Խորհուրդս այս է կենդրոն ուղղափառ կրօնից. ինքնին Աստուած, Աստուածն մարմնացեալ, ընթացուցանէ զարիւնն 'ի սրտէ իւրմէ՝ որպէս 'ի շնչերակաց, յամենայն մասունս մարմնոյ հանուրց 'ի մարդկանէ, որք կեան 'ի նմա:

Խորհուրդ Դրոշմին զարթուցանէ զհոգին սուրբ, զսերմանեալն 'ի հոգիս 'ի ձեռն մկրտութեան. բարգաւաճէ զհաւատս, և տայ մեզ անցանել 'ի մանկութենէ յարութիւն քրիստոնէական, և յանմեղութենէ՝ յիմաստութիւն և 'ի կորով:

Վերջին Օծումն խորհուրդ իմն է, որ զօրացուցանէ զմարդ ընդդէմ մահու, կամ տայ 'ի մերժել զայն, և կամ տայ 'ի մեռանել խաղաղութեամբ, և սրբէ զհոգի 'ի վայրկենի աճազին ուղևորութեանս:

« Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, ասէ սուրբն Յակոբոս, կոչեսցեն զերիցունս Եկեղեցւոյ, և արասցեն 'ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն, և աղօթքն հաւատովք՝ փրկեսցէ զաշխատեալն, և յարուսցէ զնա Տէր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ, թողցին նմա[2] »:

Ուսանիմք յԱւետարանէ սրբոյն Մարկոսի, եթէ « Առաքեալք օծանէին իւղով զբազում հիւանդս և բժշկէին զնոսա »:

Եւ վարդապետարան տրիտենդեան ժողովոյն ասէ. « Հաստատեալ է այս խորհուրդ, ոչ միայն 'ի բժշկութիւն հոգւոց, այլ և մարմնոց », յորժամ բարին հոգւոց պահանջիցէ զայն:

1 Յովհ. Դ. 14:
2. Յակ. Ե. 14. 15:

Եւ 'ի թերահաւատութենէ հիւանդին է, կամ պաշտօնէին և կամ առաջիկայից՝ չլինելն յաճախ բժշկութեան:

Հաւատամ այսմիկ:

Հաւատամ աներկմիտ. այլ և անշուշտ եմ ամենևին, թէ յոլովք 'ի մարդկանէ լքանեն զինքեանս 'ի ձեռս մահու, և զի որք առընթեր նոցա կան՝ թողուն զնոսա մեռանել: Ջերմեռանդն աղօթք հիւանդին և իւրայոցն 'ի խորոց սրտէ, և 'ի վեր քան զամենայն՝ աղօթքն Եկեղեցւոյ, աղօթք հոգւոյն հանրականի խնամելոյ 'ի ձեռն Քրիստոսի, աղօթքս այս առեալ վերաբերեալ առ հիւանդն 'ի ձեռն վերջին օծման, յորջորջելոյն Խորհուրդ հիւանդաց, յոլովակի շնորհել ունէին զբժշկութիւն հոգւոյ և մարմնոյ:

Իսկ մեք ոչ պաշտեմք արդ զվերջին օծումն, այլ վերաբերեմք լոկ առ զխակնացեալս. խնդրեմք զայն ուշիւ և դողութեամբ, որ փութացուցանէ ըզտագնապ և զօրահաս մահու:

Այն ինչ հասանէ 'ի վերայ քո ախտ գժնդակ, կոչեա զքահանայն առ 'ի բժշկել զհոգիդ նախ քան զամենայն. և հոգիդ բժշկեալ՝ օրհնեսցէ զմարմինդ, առանց իսկ սքանչելեաց: Իսկ գերբնական բժշկութիւնք հրաշագործեալք 'ի ձեռն խորհրդոյ վերջին օծման՝ յայտնի են ամենեցուն:

Վասն խորհրդոյ Պսակի՝ համառօտ եմ ընդ քեզ, զի եղծումն ազգատոհմի և գերդաստանի յառաջ ածէ զքակտումն քաղաքաժողով ընկերութեան մարդկան, և զի սուրբ է ամուսնութիւն:

Ասացից բան մի ևեթ հակիրճ և համառօտ. եթէ ուղղափառական սահմանադրութիւնք 'ի վերայ ամուսնութեան պահեալ լինէին յաշխարհի, ծնանէր աշխարհ 'ի նոր կեանս: Տոհմք հզօրագոյնք, և ես

վայելչագեղք և ազնիւք, քաջարիք և սրբամաքուրք լինելն զերեսս երկրի յետ ոչ բազում ինչ սերնդոց. և ցանկալին սէր և բարեկենդանութիւն մուտս գործէին ընդ յարկաւ ամենեցուն։ Զանցառութիւնք ուղղափառակրօն կանոնաց՝ որք հային 'ի կարգ ամուսնութեան, են կործանումն ազգի մարդկան. ընդ բռնաբարել զամ մի օրինաց կենաց՝ չիջանին առ հասարակ բարեկեցութիւն, հանճար, լաւութիւն և սէր։ Մոլորամիտ են ամենեքին մարքն այնոքիկ քրիստոնեայք, որք հարսնածեն զկոյս աղջկունս իւրեանց արանց՝ զորոց գիտեն իսկ յառաջնմէ, թէ չմարթին և չկամին ընդունել զմեծ խորհուրդն պսակի, և կամ ընդունել ունին 'ի մեռեալ հոգւոյ՝ զշնորհս կենդանեաց, առ 'ի կորուստ և 'ի պղծութիւն, կորուսանելով զանձինս իւրեանց և զընկերին, առ մեղսակից լինելոյ նմին։ Լաւ էր քեզ, ո՛վ մայրդ եղկելի, հանդերձել զատեր քում զպատանս մահու՝ քան զհանդերձանս հարսանեացն։

Արդ ահա հասաք 'ի խորհուրդն Կարգի։

Զխորհրդոյ Կարգի ոչ կարացից խօսել անխտրաբար, քանզի քահանայ եմ։

Ես յիրաւի, անճնարին է քեզ խօսել զքահանայութեան առանց ոգւոյ կողմնակցութեան։

Քա՛ւ, մի՛ լիցի։ Ի ձեռս քո յանձն առնեմ զքահանայն և զիս ինքնին. հա՛յր, և ապտակած տրա. հա՛յր զծնօտն իմ, և ես դարձուցից քեզ զմիւսն, և համարեսցի այս արդարութիւն։ Համեմատեալ ընդ երկնաւոր կոչման մերոյ՝ եմք մեք որդն երկրի. ունիմք զփականս գիտութեան, որպէս ասէ Աւետարանն, և ոչ մտանեմք. 'ի ձեռս մեր է դուռն երկնից, և 'ի ներքս ոչ մտանեմք, և քանի՛ցս չտամք թոյլ այլոց մտանել։ Քահանայն 'ի ձեռս իւր բարձեալ բերէ իսկապէս ըստ գոյացութեան՝ զաստուածային և զանսահման ճշմարտութիւնն, այլ չունի փոյթ առ իմանալ զնոյն։ Վա՜յ և երանի սակաւուց որք հակառակ այսմ կանոնի քաղաքավարին։

Ուղղափառակրօն քահանայն՝ եթէ կացցէ ըստ պարտուց իւրոց և ըստ պատշաճի, փոխեսցէ նա արդարև զողջոյն Եւրոպէ և զաշխարհ համօրէն 'ի կամըն իւրում։ Սակայն Երբ կամիցի արդեօք։

Բայց որ անպարտս առնէ զմեզ իւիք՝ այս է. զի միայն մեք եմք յիշխանաւորաց, որ խոստովան լինիմք։ Ուղղադաւան քահանայութիւն միայն է ժողովն, որ ճանաչէ զինքն, որ կոծէ զկուրծս իւր և ապաշաւէ. և այս է որ մշտատև գործէ զնա հանդոյն աշխարհի։ Անդստին 'ի Քրիստոսէ, 'ի յաւիտենական քահանայէն, որ հաճեցաւ կոչել «որդն երկրի և նախատինք մարդկան», և 'ի սրբոյն Պօղոսէ, որ ասէր «Մեք իբրև առակ նշաւակի եղաք ամենայն աշխարհի[1]». մինչև ցփոխանորդն Քրիստոսի Իննովկենտիոս Գ. որ 'ի բացման հանրական ժողովոյ իրիք զհասարակաւ միջին դարու, սկսանէր խօսել բանիւքս այսոքիւք. «Ամենայն ապականութիւնք ժողովրդոց, նախ քան զամենայն յուխտէ եկեղեցւոյ գան յառաջ». մինչև ցմեծափառն Պիոս Թ. որոյ նախկին ճառ բանից առ ժառանգաւորս իւր՝ է անաչառ խոստովանութիւն իմն ախտին եկեղեցւոյ. հակիրճ ասել, յամենայն ժամանակի հոգին Եկեղեցւոյ, որ է հոգի Աստուծոյ՝ ոչ դադարեցաւ տալ մեզ տեսել զչարն, որ 'ի միջի մերում։ Զգիտիցեն զի այսր աղագաւ ամի ամի ընդ ամենայն կողմն աշխարհիս ժողովին քահանայք յիւրաքանչիւր վիճակաց առ եպիսկոպոսին իւրեանց։

1 Ա. Կորն. Դ. 12

Այս Եկեղեցի է միակ ժողովն, որ խոստովան լինի զմեզս, որ միայն է ատակ ապաշխարութեան, կատարեալ զղջման և ընդունելոյ զարձակումն։ Եւ այսու գեր 'ի վերոյ է նա, թէպէտ և անդամք իւր իցեն հեգք և տկարք։

Եթէ գիտէին մարդիկ և 'ի միտ առնուին զինչ իցէ քահանայութիւն, յաճախէր յոյժ քահանայիցն գումար։

Անշուշտ եմ զի Աստուած քաղարկէ իմն և չափաւորէ զփաղփինս և զմեծվայելչութիւն ուղղափառ քահանայութեան. զի մի յանդգունք յոլովք խարդաւանեսցին բոցակիզուլ 'ի լոյս նորա։

Քահանայ՝ գործակից է Աստուծոյ. է առաքեալ Քրիստոսի, այսինքն՝ շնչերակ իմն է սրտի աշխարհիս, և ճառագայթ իմն բոցափայլ, լուսափիռ և սիրազեղ փառաց արեգականն աստուածայնոյ, առ 'ի սըրբել և արգասաւոր առնել զերկիր։

Սակայն կարի սակաւք են ճառագայթքն անխառնք, և յոյժ սակաւունք շնչերակքն կենդանաւէտք։ Նկատէր Յիսուս 'ի միում աւուրց զերեսս երկրի լցեալ 'ի մարդկանէ, «որք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու» նիրհելով 'ի քուն թանձրութեան, ընդարմացեալք, վատակարեկք, և ծանրացեալք մեղօք և 'ի ցաւս, ճնշեալք և ոտնահարք։ Եւ տեսեալ զգածու աստուածային իմն զթոյն զորովով, և ասէ. «Հայեցարուք ընդ արտորայս, զի սպիտակացեալ են և 'ի հունձս հասեալ։ Հունձք բազումք են, և մշակք՝ սակաւք. արդ աղաչեցէք զտէր հնձոց զի հանցէ մշակս 'ի հունձս իւր»։

Եւ զիա՞րդ տէրն հնձոց առաքէ մշակս 'ի հունձս իւր. և ընդէ՞ր չառաքէ առաւելապատիկ։

Լուր. եղև քեզ, եղբայր, առնել երբեք զլուսա-

ւորութիւն ներքին, յորում հոգին տեսանէ զինքն, և իմանայ յանկարծ զի չէր այլ ազմուկ, խառնակութիւն և հանապազօրեայ փոշին մրրկախառն։ Գիտիցես զսրբազան պահն զայնոսիկ, զորոց ասեն սուրբ Գիրք. «Վաղվաղակի եղև լռութիւն յերկինս որպէս կէս ժամու [1]»։ Եղև երբեք 'ի յերկինս հոգւոյդ լռութիւն որպէս զկէս ժամու։ Զինչ տեսեր յայնժամ 'ի քեզ բովանդակ, ընդ խաղաղաւէտ և թափանցիկ լուսովն։ Տեսեր 'ի սրտիդ զբողբոջս կամ զհարուածս անարժան և նողկալի կրից. և 'ի խորս մտացդ զհետս անարգ և գռեհ զգայութեանց, աւանց լուսոյ և կարգաց. զկանխակալոյ կարծիս, զխօսս, զոճս ցրտինս և զնշմարանս հեռաւութեանց բանաւորական արուեստի, որք տեղի տան հանդոյն ստուերաց ընդ դոյզն ինչ երկրայութեամբ, զոր օրինակ տեղի տան ստուերք գժոխոց 'ի ներքոյ սրոյ կենսակիր զխեցազին։

Զինչ իցէ այս ամենայն, առէ հոգի ընդ տեսանելն զայնոսիկ։ Եւ ո՞վ էք դուք ցնորքդ խօլականք. հաստատ՝ չէք դուք բարութիւն և ոչ ճշմարտութիւն։

Յայնժամ զգալի լինի 'ի հոգւոջ թախծութիւն իմն մեծ և ներքին ամայութիւն։ Արհաւիրս ածեն ամենայն ցնորքս այսոքիկ դատարկութեամբ իւրեանց, լռութեամբն իւրեանց և ոչնչութեամբ. ունայն է ամենայնն, ամայի և թափուր է հոգի. և մարդ՝ կայ միայն և մենաւոր հանդէպ ամայական աշխարհի։

Ի պահուս յայսմիկ եթէ չէ բնակեալ հոգին 'ի զգայութիւնս և 'ի հեշտախտութիւն և կամ 'ի ցրտին ամբարհաւաճութիւն մտաց՝ 'ի պահուս յայսմիկ ա-

1 Յայտ. Ը. 2։

սեմ կապտեալ սիրտ 'ի սիրոյ՝ հաչէ և հառաչէ։ Եւ, ո՜վ նորահրաշ սքանչելեացս, զոր վայրկեանք լիալի և բացարձակ պայծառութեան, յորում լոյս առանձնային այնպէս անդրադարձս ձգի՝ մինչև չկարել ինքնին իսկ պատանւոյ ումեք ընդ աղամող շաւիղս ցնորից և անրջոց խօլականաց, գնել համատարածոյն զլոյս իւր 'ի կենդանի պատկերն Աստուծոյ, այսինքն յէակ ոք իսկական նման իւր, 'ի մարդ՝ եղբայր իւր, և կամ 'ի կին՝ 'ի զուգամասն իւր։

Ի պայմանի աստ դէմ յանդիման և խորին տեսութեան՝ թուին նմա այլ ամենայն մարդիկ ցնորք իմն ընդունայն, յեղաշարժ, մահկանացու և անիմանալի, որոց չէ մարթ բնաւ տեսանել զոգին և կամ զսիրտն գրաւել։ Սին և ունայն է ամենայն։

Արդ, ո՜վ հոգիդ առանձնային, սիրտ հառաչող՝ այլ առ վայր մի զարթուցեալ, գիտեմ զի գտանիս յայնժամ առ դրունս երկնից, մերձ ամենեին առ Աստուած, և հասեալ յաշխարհն աստուածային։ Փոքր յոյժ երևի քեզ երկիր, քանզի վերացար 'ի բարձունս. և յումմէ՞ արդեօք. ինքնին առ 'ի յԱստուծոյ։ Հայր քո հանդէս արար քեզ. կալաւ զքեզ աջովն իւրով, 'ի բաց բառնալով յաչաց քոց զպատրուակս աշխարհի, զորօրանի քում. 'ի բազուկս իւր ընկալաւ զքեզ և ամբարձեալ 'ի վեր՝ յաւել. Կարո՞ղ իցես դու զարդիս տեսանել զիս. կարիցես սիրել զիս։

Թէպէտ և չիցէ դեռ ատակ սիրտ քո լիապատար, ազատ, գերաշխարհիկ և անհուն սիրոյ, կամիմ ասել աստուածեղէնն սիրոյ, այլ նա Հայր գոլով ոչ տրտմեսցի. հանգուսցէ զքեզ 'ի քում հանգստեան քո ամենայն աստուածային քաղցրութեամբք իւրովք, և թողցէ զքեզ տակաւին յանուրջս մինչև ցժամանակ մի, թերևս մինչև ցզարթումն յետին՝ եթէ չիցես

դու երբեք կազմ և պատրաստ. և կամ մանաւանդ մինչև 'ի մետ առցէ մանուկն յարբունս հասեալ, եթէ սնոտի են ցնորք ամենայն։

Այլ սակայն եթէ սիրտ քո իցէ քաջակորով, եթէ ձկտեսցի առ Հայր իւր 'ի շնաշխարհիկ պահուս, յայնժամ Հայր տացէ քեզ ծնունդ իմն վերանորոգ՝ և նոր դրոշմ մարդկեղէն, աստուածային գրկախառնութեամբ, որ է շնորհք երկնահրաւէր կոչման։ Ապա հաստատեսցէ զքեզ 'ի վերայ երկրի, այլ արթուն և զուարթուն, ուղղորդ 'ի վերայ ոտին և ականջօք պարզելովք։

Տեսցին յայնժամ ոչ միայն վերին երեսք աշխարհի, այլ և ներքինք նորա։ Տեսցի թէ ագարակ իմն է աշխարհ, ագարակ սերմանեալ յանկենդան սերմանց, զորս շունչն Աստուծոյ զարթուցանէ տակաւ. և զի որդիք անդրանկածնունդք՝ կենդանիքն 'ի վաղուց, մարթին նոյնպէս յանուն Հօր զարթուցանել և փթթեցուցանել զայնոսիկ։

Եւ ընդ այս տեսիլ մեք մշակքս և սատարք, լցեալք անչափապէս և կաթոգինք 'ի սէր մերոցս եղբարց, որք ոչ յարթնութեան կան՝ այլ ննջեն, և կարգեալք 'ի հունձս 'ի Հօրէն գերդաստանաց՝ թեւակոխեմք 'ի սրբազան վաստակ մշակութեան հողագնտոյս։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ Է

Կեանք յաւիտենականք.

« Հաւատամ 'ի յարութիւն մեռելոց և 'ի կեանսն յաւիտենականս »։

Ա

Արդ ահաւասիկ վերջին մասն Հանգանակին հաւատոց։ Հաւատամ 'ի կեանսն յաւիտենականս. խնդիր մեծագոյն 'ի մէջ այլոց ամենայնի։ Գոյցեն արդեօք կեանք հանդերձեալք. միթէ գուցէ ինչ այլ աշխարհ։ Ըստ վարդապետականին ամենեքին առ հասարակ ընդունիմք զանմահութիւն հոգւոյ, հանգոյն գոյութեան Աստուծոյ, այլ ըստ գործնականին, ո՛չ, զի որդ դուն ուրեք հաւատս ընծայեմք նմին։

Այո՛, յորժամ ճշմարտութիւնքս այսպիսի հաւանեցի 'ի վերին երեսս տեսանին և ընդ հերձս իմն, 'ի մտացօնս արկեալ գլխովի ընծայութիւնս և ընդ հանապազօր երկմտութեամբ, ստոյգ է ամենեւին զի հազիւ ոք հաւատայ։ Հաւատալ՝ է ունել յանձին, 'ի կեանս իւրում, 'ի սրտի և յարեան՝ զգոյութիւնն

ինքնին հաւատալեաց։ Աստուստ սպրդի յայտ յանդիման խտիրն ահագին որ ընդ կրօնս և ընդ իմաստասիրութիւն. զի զորոյ իմաստասիրութիւն կոչէ ևեթ զանունն, կրօնք պարգևեն զայն։ Աստանօր զանջատ իմաստասիրութենէ են բանք, և ոչ զայնմանէ՝ զոր սուրբն Գրիգոր Նազիանզու կոչէր գերակատար և արքայագոյն իմաստասիրութիւն, որ են կրօնք լուսաւորեալ։ Սուրբն Թովմաս ագուինացի ցուցանէ հաւատովս եթէ զինչ իցեն հաւատք, յասելն. «ի ներքս 'ի մեզ են հաւատք՝ սերմն և սկիզբն յաւիտենական կենաց»։

Ուխտիւք խնդրեմ հաւատալ 'ի կեանսն յաւիտենականս. զի այս միայն է ստոյգ օժան առ 'ի համակամիլ ընդ անհրաժեշտ հարկի մահու։

Տես, զի զլխովին երկիւղ մահու ճնշեալ ընկճէ զմեզ և ուժաթափ առնէ զամենեսեան, և զերծ զմեզ, ըստ բանից առաքելոյն Պօղոսի, ընդ բովանդակ կեանս մեր։ Ո՜հ, որչափ ազատ և բանի՛ մեծ լինէր ազգ մարդկան, եթէ չզանգիտէր 'ի մահուանէ։ Միթէ ո՞չ եկեսցեն հասցեն արդեօք աւուրք խնդութեան, յորում մարդիկ ուր ուրեմն հաւատարիմ համարեսցին ընդ պայծառութեամբ լուսոյ և հաւատոց, զյարութիւն մեռելոց, ըստ այնմ զոր հաւատան թէ զարթիցեն 'ի քնոյ։ Յայնժամ ահա 'ի վեր երևեսցին հրաշք զօրութեանց, արութեան, քաջութեան, ուրացութեան անձին, սիրոյ և հանճարոյ՝ զոր բարուցանէ յինքեան պատկերն Աստուծոյ՝ մեծն հոգի մարդոյ։

Աղաչեսցուք զԱստուած զի հոգի իւր մտցէ յաշխարհ, և գործեսցէ զքանչելիս զայսոսիկ։ Սակայն կամիմ հաղորդս առնել զքեզ իմում հաւանութեան մտաց զայսմանէ. իցէ՞ թէ մատուսցես ինձ ունկն առ վայր մի անբարբառ։

Խօսեաց, ահաւասիկ կամ 'ի յունկն մտադիր։

Արդ ասեմ քեզ եթէ թուիմ ես տեսանել իբր աչօք բացօք զՀանդերձեալ կեանս 'ի վախճան առաջիկայիս։ Թուիմ տեսանել և տեսանեմ ըստ յաւիտենանս այսանդր՝ նոր այլ յաւիտեան։ Տեսանեմ յառաջիկայ կենացս պայմանէ զարդիւնս և զՀետս այլոյ բարձրագոյն կենաց, յորմէ իմաստասիրել է ինձ թէ նկնացէ կեանքս այս նոր. զոր օրինակ աստեղագէտք տեսանելով յերեսս երկնից շարժմունս անմեկնելիս յազդեցութենէ ծանօթ աշխարՀի և աստեղաց տեսանելեաց, Հաւաստեաւ 'ի վերայ ածիցէ և ասասցէ թէ գոյ և այլ իմն աշխարՀ անտեսանելի։ Եւ արդարև զոր ասացիս քաղեալ է իմ 'ի վարդապետութենէ ուղղափառ Եկեղեցւոյ և 'ի զօրագոյն Հաւատոց՝ զոր Հաւատք ընծայեն. այլ զբովանդակն մարթ է 'ի մի ևեթ պարզ և մեկին ցուցակութիւն Համառօտել, 'ի Հանդամանաց իրացն առեալ. և աՀաւասիկ քեզ ցուցակութիւնս.

Ի խնդիր է մարդս, և խնդրէ մարդ զկեանս. և կեանք՝ որում 'ի խնդիր է մարդս, են կեանքն յաւիտենականք. ուրեմն կան միան մեզ կեանք յաւիտենականք։

Բ

Ոչ լոկ Հաւատի է ըստ ամենայնի եթէ 'ի խնդիր է մարդս, այլ և սկիզբն Հաւատոց և պատճառ պատմութեան. վասն որոյ չիք ինչ յայտնի կարօտ ցուցակութեան. զգլխաւոր Հանգամանս մեծի Հաւատոցս առաջի դիցուք ևեթ։

Եւ նախ առաջին, Հանրական Հաւատալիք են աղօթք. զի ամենայն էք աղօթեն։ Եւ զի՞նչ իցէ աղօթելն, բայց եթէ լինել 'ի խնդիր։

Երկրորդ, կենսալիր առածն այն ամենայն ուղիղ իմաստասիրութեան, թէ՝ «Գամ, զգամ և 'ի միտ առնում զի թերի և անկատար եմ ես. որ ցանգ ձկտիմ և անձկամ լաւագունի իմիք և մեծագունի որ չեմս»։

Եւ երրորդ, Համշտապ սլացմունք բովանդակ մերոցս կենաց. զի ցանգ անդր քան զառաջիկայն առբերեալք, և ձկտեալք միշտ առ Հանդերձեալն, «ոչ կեամք, այլ ակն ունիմք կելոյ»։ Անցաւոր ոք է մարդ, և կեանք իւր՝ գնացք ուղւոյ ճանապարՀի. և եռանդնավառ իղձս այս առ կէտ նպատակին՝ է իւրն անուն պարծանաց։

Սակայն ոչ միայն մարդ, ասէ սուրբն Պօղոս, այլ և ամենայն արարածք Հեծեն և երկնեն ակնկալեօք. «Ամենայն արարածք Հեծեն և երկնեն մինչև ցայժմ... ակն կալեալ»։ Եւ զի՞նչ քան զայս կայցէ լուսափայլ։ Հայեաց և տես զաշխարՀագունդս. նաւ է 'ի գնացս երկիր. և զոր ասեմ՝ ոչ եթէ պաճուճազարդ բանք ինչ իցեն, այլ ամենևին իսկ ճշմարտութիւն. ճանապարՀորդք եմք մեք նաւընթացիկք։ Ի ճգունս և

յաշխատութեան կայ աշխարհ, նա մանաւանդ՝ որպէս ասին, 'ի յապաղման է և անագանի։ Արդ գոյ ամենայն շարժմանց աշխարհիս, հոլից աստեղաց և բնութեան, մտաց և հոգւոց՝ կէտ նպատակի։ Վազս առեալ ընթանամք, այլ ոչ ընթանամք առ 'ի ընթանալ եւեթ, զի «Վախճան շարժմանն, ասէ սուրբն Թովմաս ագուինացի՝ ճառելով զխնդրոյս, ոչ է շարժումն ինքնին»։

Եւ ըստ բարձրաթռիչ իմաստից մեծահանճար աշխարհագլխի մերոյս աւուրց[1], առ որում աշխարհագրականն գիտութիւն ինքնին՝ է գիտութիւն բարոյական և կրօնական. «Երկիր 'ի հանապազորդ թաւալմունս իւր թերևս խնդրէ զտեղին իւրում յաւիտենական հանգստեան»։

Ահա այսպէս 'ի խնդիր է մարդ, և աշխարհս ընդ նմա։ Եւ անհուն է և անսահման նշանակիր իմաստ այսգունակ հաւաստեաց՝ որ մեծք են իբրև գեղելութիւն պատմական, և մեծք իբրև զաշխարհս։

Գ

Ի խնդիր է մարդս. բայց, ազէ, զի՞նչ խնդրիցէ. զկեանս արդեօք. այլ ո՞չ ապաքէն ունիցի նա կեանս։ Ոչ. զխայծ եւեթ կենաց ունիմք և ոչ զկեանս։ Առաջիկայ կեանքս՝ չեն ինչ կեանք. մօտակայ կեանքս՝ ստուերք են կենաց։ «Այժմեան մերս մարդկութիւն, ասէ պատմագիր ոմն[2], է վիճակ հանդերձանաց, և կոկոն ծաղկի որ կայ 'ի փթթել։ Մարդկութիւն մեր

1 Ռիթդեռ։

2 Հերտէր։

այժմեան՝ է յօղակապ երկուց աշխարհաց, որ յերկրորդում միայն լրիւ իւրով բարգաւաճեսցի»։

Առաջիկայ կեանքս՝ է յորդոր իմն առ 'ի կեալ և խանձ կենաց. խանձ ասեմ՝ որ գրգռեալ շարժէ զմեզ անդիմադարձ 'ի զկուտ աղբեր օշարակին՝ զորոյ զմի եւեթ չիթ ճաշակեալ է մեր։ Վասն այսորիկ մարդ՝ 'ի մանկութեան իւրում, 'ի տիս զարնանազուարճ կենդանութեանն, 'ի ժամանակի ասեմ ճգանց, յորում զարթուցեալք են ամենայն զօրութիւնք իւր, մարդ՝ զոգցես իմն ընկճի յանհուն ակնկալութենէ, և իբր 'ի բուրմանց անուշից մզեալ՝ ձգի 'ի խնդիր նորոյ և անծանօթ աշխարհի։ Ունի զմանական կեանս՝ և խնդրէ զկատարեալն։ Արհամարհանք առաջիկայ եղելոցս, տնկակից 'ի մարդումս, և յոյս հանդերձելոյն իմանալւոյ, բերումն առ զարմանալին և նախազդեցութիւն անսահմանին, առ հաւատչեայք են զօրութեանց՝ որ զմեզ վարեալ տանին։ Հոգի մարդոյ, մանաւանդ յորժամ վերամբարձ է յստորայնոց և ազատ և սուրբ, մտաբերի և ձգտի անպայման անձկով առ ամենայն գեղեցկութիւնս և համայն բարիս՝ զորոյ զհետս ինչ նշմարէ։ Յաղթէ ամենայն պայմանի, սահմանաց և ամենազգի թերութեանց. հովանացրէ 'ի միտս իւր զսէր յաւերժական, զուղղութիւն անաղօտ, զերանութիւն անյեղլի, զճշմարտութիւն անստուեր, և զկամ՝ քան զամենայն խոչ և խութ հզօրեղագոյն, և զզօրութիւն իշխող միջնոցոյ և ժամանակի. և սքանչելիս և յանկարծածագ արարչութիւնս 'ի գոյ ածէ միով եւեթ բանիւ, շարժմամբ և ըղձիւք։ Ամենայն նախիմաց ազդմունքս այսորիկ սրտի մարդոյ, համայն ոսկեփայլ անուրջքս մանկութեան և ամենայն սրարբեցութիւնքս իմանալւոյ օշարակին, ազդմունք են առ 'ի յԱստուծոյ։ Հաւատա հոգւոյ քում,

ասեն սուրբ Գիրք։ Սոյն այս է գերաբուն ազդումն 'ի մարդն, արմատ կրօնական, և յաւելից ասել՝ հիմն և արմատ ուսումնական։

Բայց միայն, աւա՜ղ, զի ոսկեփայլ երազքս այսօրիկ Թերակատարք են, և մնացածն ցնորքս՝ երկիւղալիցք և յողդողդք 'ի հոգւոջ։ Այսն կատականաց, անհաւատութիւն, անմիտ սովորոյթ արտաքին կենաց բանիբուն արանց և իմաստնոց, և օրինակ մեռեալ և քնեած կենաց նոցա, իսկ և իսկ զիջուցին զսլացաթևս սրտից պատանեաց, հանդոյն ապառում ազգաց ոմանց, որք ճնշեն զգլուխս նորածին տղայոց, առ 'ի տալ առ հասարակ ամենեցուն նոցա զանկիւն և զընագրոշմ խելեանցն տոհմի։ Այլ մարդ զմա՛րդ և կայցէ՝ խնդրէ միշտ, և խնդրէ զկեանս. սակայն կաղս 'ի կաղս յոյժ խնդրէ՝ յորժամ կորուսեալ իցէ զազդումն բնական և զյոյս անսահմանին։ Բիւրիցս խիղ արկեալ պեղեմք՝ զոր բիւրիցս գտաք ունայն, և «հանդոյն անբանից կենդանեաց, ասէ Լէյպնից, որք փորձառուք եւեթ են, վասն որոյ և առանց ինչ դժուարութեան 'ի հաղբս ըմբռնին», հանդոյն նոցին «մարդ կենդանի», զոր օրինակ կոչեն զնա սուրբ Գիրք, գամ մի կորուսեալ զիմանալին յաւէրժ, փորձառու եւեթ է և ինքն 'ի կեանս իւր, և յայս սակս միշտ և հանապազ 'ի նոյն Թակարդս անկանի։ Ի բիւր փորձոյ անձինն չկարէ իմաստասիրել զլինելոցն զկնի։ Ցանդ 'ի խոյզ և 'ի խնդիր անկեալ, հանդոյն ամենայն մարդկան, կարծէ իմն այնպէս Թէ բովանդակ աւուրք կենաց իւրոց ցայնժամ ունայն և անբաւականք եղեն առ 'ի ընծայել նմա զերանութիւն և պատրեցաւ 'ի նոցանէ, սակայն վաղիւն այլազգ ամենեւին լինիցի և պարգևեսցէ ինքեան զըղձալին իւր զերանութիւն։ Իղձ լինի և

ուխտս դնէ, որք չեն այլազգ յառաջնոյն՝ բայց ըստ երևութին և արտաքին տեսլեանցն. և գոչէ ըստ հեԹանոսական բանահիւսութեան.

Օ՛չ, ուր դաշտ և ըՍպերք և Տայեգետ բեղապարեալ
Ի կուսից Լակոնուհեաց, ու 'ի հովասուն ծործորս Հեմեայ.
Ո՞վ տարցի զիս և ոստովք պաշտպանեսցէ մեծ հովանեաւ [1]։

Գեղեցիկ է այս և քերԹողական, զի չէ ինչ անմասն յըղձից և 'ի խանդէ. այլ, ո՜հ, քանի՜ կոյր է և զաչացու։

Այլ աղէ՛, զի՞նչ. կարծիցես Թէ այսօրիկ լերինք և գետք քան զայլ վտականիդ և զլերինս գեղանիք իցեն։ Ունիս զԻտալիա, և զՑունաստա՛ն խնդրիցես. 'ի Նէապօլիս կաս և 'ի խորշ Պայեայ, և զՀեմոս կամիցիս և զՍպերքեաս։

Սակայն հարկ 'ի վերայ կայ բանահիւսութեան խնդրել և ոչ դադարել 'ի խոյզ և 'ի խնդիր լինելոյ. և այս է խեւութիւն քերԹողականին։ Սակայն գոյ բանահիւսութիւն իմն որ չարաչար խնդրէ, քանզի յերկրի եւեթ խնդրէ և 'ի սահմանաւորն։

Այլ լո՛ւր զբանահիւսութիւն աւուրց ժամանակացս, յորում զրոշմեալ է կնիքն քրիստոսական. լո՛ւր, աղէ՛, զայս.

Ցանբաւութեան բերիմ ընդ խորշս ամենայն,
Եւ չէք, ասեմ, ուրեք յուսալ ինձ բարիս.
. . . .
Եւ ոչ յանհուն տիեզերացս ինչ ցանկամ։

Այլ գո՛ն՝ գոչէ քերԹողն, աշխարհ լուսագոյն և այլ օԹեւանք,

[1] Մշակականք. Գ. Բ. 490։

Ուր այլ երկինս լուսաւորէ բուն արփին,
Անդ զիս զուարթ առնէր աղբիւրն անձկալի.
Եւ գայս, ըղձեր գըտանէի ես անդրէն
Եւ ըղձաւոր բարիս, ոգւոց ցանկալի,
Որ չէք անուն աստէն ի յարկս հողեղէն։

Աւադիկ բանաձեւութիւն անթերի, ջերմ ըղձիւք 'ի խոյզ և 'ի խնդիր անկեալ, և զանհունն հետազօտող։

Արդարեւ կեանք իմն այլազգ ամենեւին, և այլ իմն աշխարհ է՝ զոր խնդրէ մարդս։ Մօտ առ աղբիւրն իսկ գլխովին կամի երթալ, քանզի զկեանս խնդրէ. և ըստ ասից սրբոյն Օգոստինոսի՝ «Որ ասիցէ կեանք իսկ սոսկ, իմանայ կեանս ամենայնիւ, երանաւէտ և անմահ»։ Իցեն արդեօք այսօրիկ կենաց մերոց բնադրոշմք։ Ապաքէն այլ կեանս խնդրեմք ցանգ, զի չիք ոք բնաւ հաճ և հաւան ընդ կեանս զոր վարեմք։

Տես զմարդիկ որք հետամուտք են գիտութեան, այսինքն է՝ մտաւորական կենաց։ Մի՞թէ զառաջինս կեանս մտաց կամիցիմք. ո՛չ ապաքէն այլ իմն կեանս մտաց խնդրիցեմք։

Եւ նախ. ո՛չ արդեօք մարմռքիմք մեք յոյժ ընդ այն, զի միակողմանի են միտք մեր և մակածու, առանձնային և կաշկանդեալ ընդ միջոցի և ժամանակաւ։ Մի՞թէ չիմանայցեմք զի զոգցես բովանդակ կարողութիւնք մեր զատեալք են հանապազ զիրեւտար և յաճախ հակառակամարտք միմեանց։ Թող ըղշարժմունս՝ որ սկիզբն առնուն 'ի սրտէ թափ անցանելով ընդ ամենայն, չտեսանիցեմք զի ազդեցիկք, գիտակցութիւն, միտք, երեւակայութիւն, և շարժութիւնք իսկ և եղանակք խորհրդոց ուրոյն ուրոյն գոր-

ծեն, և բազում անգամ իսկ անազդեցիկ լինին առ ընդդիմամարտութեան իւրեանց ընդդէմ միմեանց, փոխանակ յաւելլոյ զմիաձայնութիւն։ Եւ բովանդակն առ հասարակ՝ է իբրեւ զլոյս իմն բեկեալ և բեկբեկեալ, մասնական, շարժուն և առկայծ։

Եւ ցաւալիք են յոյժ վասն մտացս վաստակելոյ թշուառ հանգամանք այժմեան պայմանիս, յորում հազիւ յառեմք զաչս 'ի կէտ մի, և ահա այլքն ըստ աչս մեր անկանին։

Միտք՝ հանգոյն ականողեաց, միով եւեթ ուղղութեամբ լոկ կարեն հայել։ Մինչ զմտաւ ածեմք խորհուրդս ինչ, անջատիմք յայլոց առ հասարակ. որպէս զի զոգցես երբեմն ասել մեզ. Եթէ առ 'ի տեսանել զաստղ մի, հարկ իցէ ինձ չտեսանել այլ ևս զերկինս, առ իմէ՞ իցէ լինել ջանահնար։ Այլ և այս չէ շատ. միտք՝ 'ի մոռացօնս արկանեն, յոր չյառենն այլ։ Եթէ փոխիցէ միտք զուղղութիւն իւր, նորանոր ծնանին 'ի նմա խորհուրդք, և առաջինք անհետ լինին. իբր այն թէ ծաղկունք նորանորք ոչ կարիցեն փթթել մինչեւ թառամեալ իցէ այլոց. և պտուղք նորանորք չկարիցեն խայծիլ, բայց զկնի առաջնոցն եղանակի։ Եւ բառք լեզուաց, ասէ Որատիոս, հնանան, և նորք ծաղկեն իբրեւ զտերեւս ծառոց։ Սոյին նման և յամենայն միտս զոգցես գոյ ժամանակեալ իմն անկումն տերեւոց. խորհուրդք հինօրեայք 'ի բաց մեկնին 'ի մտաց։

Ե՛ն, են և մտաց դարք, և դարուց 'ի դարս, հանդէպ դարուց բնութեան, կորնչին 'ի գաղափարաց ազգ ինչ և տեսակք. զոր օրինակ գոն և յերկինս աստեղք՝ որք լինին անհետ։ Արդարեւ գոն և իմանալի տեսակք կորստականք, զորոց գտանեմք աստ անդ 'ի յուշս մտաց զնշխարեալ մնացորդս, ընդ բազմա-

ծնունդ յարկաւ աւուրցս խորագոյնս թաքուցեալք։ Են 'ի միտս մեր ժամանակեալ շրջանք մեծամեծք և փոքունք. գոն և դարք և եղանակք մտաց, ժամանակ անպտղութեան և ժամանակ առատութեան, համառօտ ասել՝ ժամանակ գիշերոյ և տունջեան։

Եւ զոր օրինակ գոն դարք և ամք մտաց, գոն ևս աւուրք։ Որ ծարաւին իցէ լուսոյ՝ գիտէ քաջ զոր ասեմս։ Միթէ ո՛չ իմանամք զգժնեայ յաջորդութիւն լուսոյ և խաւարի ընդ հոգիս, հանդոյն տունջեան և գիշերոյ, որ անցանեն զերկրաւ։ Ո՞ր միտք ուշակալ չիցէ զգացեալ զնորանշանս երևոյթ, զիմանալն ասեմ զի փոխի ինքն յոչ կամս իւր առաջի խորհրդոյ ինչ մեծի, ծագելոյ յոլորտս մտաց իւրոց առ 'ի լինել լուսատու, իբրև այն ինչ յառէ 'ի նա զաչս իւր և արբենայ անյագուրդ յամենայն նշոյլս նորին։ Գոզցես մարթիմք իմն ասել եթէ և աշխարհ գաղափարաց թաւալեալ շրջի հանդոյն երկնից կամարին։ Արդարև ոչ եթէ գաղափարն փոխի, այլ մեք ևեթ. և գաղափարն փոխի վասն մեր տեսլեամբն, շրջի և 'ի մտաս իւր այլագունի, և փոքր միւս ևս և ահա անհետ լինի։ Կամիմք տակաւին տեսանել, այլ ոչ կարեմք։ Մարթ է դեռ ևս դեգերիլ յայն մօք, այլ չէ պատկերն կենդանի և առաջիկայ. յիշատակ իմն է որ երթալով երթայ և նուազի, և տպաւորութիւն՝ որ ջնջեալ եղծանի։ Զի՛ք մեր կար ծագելոյ անդրէն 'ի ներքս 'ի մեզ զկենդանաւէտ լոյս գաղափարաց, ըստ մերոյս կամաց, այլ հարկ է ակն կալեալ սպասել. և բազում այն է զի յետ ժամուց և ժամանակաց տեսանեմք յայլ կողմն երկնից չքնաղագեղ ևս փայլեալ. այսպէս են ահա առաջիկայ կեանք մտաց մերոց։ Սակայն ցոլք և կամ շիթք ևեթ լուսոյ են վասն մտաց այսօրիկ, որպէս և աստեղք՝ շիթք են լուսոյ առ գիշե-

րաւ։ Կայծք ևեթ են լուսոյ, և վասն այսօրիկ կամք ցանգ 'ի խնդիր. ոչ շատանայ մարդ և ոչ շատասցի ընաւ լուսով մասնականաւ։

Այն այս օճան է և պատճառք և իմաստասիրութեան յառաջադէմն նկրտելոյ. քանզի իմաստասիրութիւն՝ որպէս յայտ է, չէ գիտութիւն ստացեալ, գործ ինչ աւարտեալ և կամ աւարտելի. իմաստասիրութիւն պէտք իմն է կարևոր և հետազօտութիւն, ընթացք ինչ և աշխատութիւն։ Իմաստասիրութիւն ընթանայ և ոչ հանգիցէ ընաւ, քանզի 'ի խնդիր է լիալիր լուսոյն, զոր չիք իւր գտեալ երբեք։ Բազում անգամ թերևս կարծեաց յառաջասիրտ պատրանս ցնորից թէ լոյսն պատարուն և յարատևակ ծագէ յաշխարհ. սակայն զկնի միոյ միոյ իմաստասիրական ժամանակացն շրջանի և առ մէն մի երեկոյ մարդկեղէն մտաց, ողեաց ազատաշարժ ճանապարհորդս թախծագին, ձայնակից լեալ քեռն իւրում բանաստեղծութեան, որ հանդունակ ինքեան պանդուխտ է և հետաքննող.

Տէ՛ն ըղըըլլովք քով շիջանի, ո՛վ երկիր,
Անդ ուրանօր իմ քայլափոխք կըլթոտին.
Ե՞րբ իցէ ձեզ իմ աչկունք, ո՛հ, երբ իցէ ըրնծայիր
Ջանշիջական ողջունել զօրն այն վըսեմ,
Ոյր սատուածեան ցոլան արփիք լուսաճեմ։

Եւ դարձեալ.

Մի՛ խաւարի՞ թէ 'ի խնդիր բանայցեն
Աչս իմ հայեացք 'ի տըւընջեան շըլացիկ։

Աղէ՛, զի՞նչ հաւաստիցէ բանահիւսութիւնս այս՝ բայց զոր ասեմս, այսինքն է զտրտունջս մտաց զմասնական լուսոյ և զտենչ իւր առ լոյսն լիալիր։ Քերթողական է այս, վասն որոյ հանրական և ճշմարիտ։

Եւ արդարեւ իսկ ողջունել զաստուածապարգեւ պայծառութիւն անշիջանելի աւուրն կամին միտք մարդկեղէն։

Զայս այսպէս, այո՛, կամին միտք մեր. այլ զի՞նչ արդեօք և սիրտ մեր կամիցի։

Կարծիցես ինչ արդեօք զի սիրտ մեր 'ի մէջ վարդից հանգչիցի, երբ միտք մեր կրեն և հեծեծեն։ Մի՞թէ գուցէ՞ 'ի սրտի մերում սէր լիալիր, մինչ թերակատար է լոյս մտաց մերոց։ Աւա՜ղ, զի մարդիկ զուրկ են առաւել 'ի սիրոյ քան 'ի լուսոյ. մարդկեղէնս սիրտ պսակեալ է փշովք հանգոյն սրտին Յիսուսի, որպէս բազում անգամ նկարեալ տեսանեմք 'ի պատկերս. և սիրտ մարդկային բաբախէ ցանգ, քանզի 'ի խոյզ և 'ի խնդիր է միշտ։ Մէն մի բաբախիւն՝ է փորձ կատարեալ, և նորոգ իմն փորձ առ 'ի կեանս։ Առաւել ինչ քան զայս չէ ինչ պիտոյ ասել զայսմանէ։

Վասն այնորիկ միտք մեր և սիրտ և համայն էութիւն մեր՝ մասամբ և եթ կեան. որպէս և առաքեալն Պօղոս ասէ, թէ «փոքր 'ի շատէ գիտեմք»։ Յաւելցուք և մեք թէ կեամք փոքր 'ի շատէ։ Չէ կեանքս մեր լիալիր, և չիք իւր տարածումն ըստ ամենայնի. չեն կեանք մարմին հաստատուն, և ոչ իսկ մեկերեական՝ ըստ ճշգրիտ իմացուածոյ բանիս, այլ գծային են կեանքս, և գիծն իւր կէտ առ կէտ յառաջանայ։

Գո՛ն գործնապէս կեանք մեր 'ի մի կէտ և եթ, և կարող են 'ի լինել յայլումն ամենայնի. մի մասն ապառնի, մասն մի անցեալ, և մասն այլ հնարաւոր կամ զօրութենական. մի և եթ կէտ՝ է առաջիկայ և իրական, և կէտս այս՝ է փայլ մի լոկ.

Եւ պահս յոր կամ արդ 'ի խօսել՝ վաղ իսկ հեռի է յինէն։

Եւ ոչ միայն անցանեմք միշտ, որպէս և Ֆենելոնի իսկ քաջիկ ասացեալ է՝ թէ «հոսանուտ են կեանքս մեր», այլ և մեք ինքնին յար 'ի փոփոխման կամք յանցանելս մերում, և պայմանք մեր յաջորդականք՝ 'ի բաց զմիմեանս հատանեն։

Երիտասարդութիւն 'ի բաց պարուրէ զմանկութիւն և զպատանեկութիւն, և ծերութիւն՝ առ հասարակ զամենայն հասակս մերժէ 'ի բաց։ Ուրանօ՞ր գտանիցես արս ոմանս կենդանակիր միութեամբ կապեալս ընդ անցելոյն և ընդ պատանեկութեան. ուրանօ՞ր, իցի՜ւ, զայնպիսիս որք ունիցին 'ի միասին ընդ զուարթագուարճ մանկութեան և եռանդնալիր երիտասարդութեան՝ զզգօնութիւն այրական հասակի, և ամոքեսցեն զամենայն հասակս զայսոսիկ յաւերժս կենաց։ Ո՞վ տացէ մեզ միջամուխ լինել փոխ ընդ փոխ յամենայն տիս կենաց. ո՞վ տացէ մեզ զբովանդակ և զմիադումար կեանս։

Խնդրեմք մեք զլիուլի և զմիադումար կեանս. «Զբովանդակ և զանթերի ժառանգութիւն կենացն անվախճանից», ըստ աստուածաբանական ասացուածոյ. որում և բանաստեղծութիւն ինքնին ակն ունի հանգոյն հաւատոյ։

« Յերկրի աստ պայազատողք եմք միմեանց, ըստ աղուարան գրչի ումեք. այլ յորժամ լիցիմք որ ինչ լինելոցս եմք մահուամբ, ո՞չ ապաքէն ժառանգեսցուք միահաղոյն զողջոյն մանկութիւն մեր սեռն և պարզ, և զչքնաղ երիտասարդութիւն, զոյգ ընդ առոյգ ուժոյ և ծերութեան, հանգոյն նորահրաշ ծառոցն այնոցիկ՝ որք 'ի վերայ ոստախիտ բունոցն կրեն ծաղիկս, տերևս և պտուղս [1] »։

1 Կոմսուհին Տը Հօթըֆէյլ։

Ո՛չ ապաքէն այս իցեն և սրբոյն Օգոստինեայ աղօթք, յորժամ զառաջիկայ կեանս ցրուեալ կոչիցէ, և 'ի խնդրելն զի ուր ուրեմն 'ի մի ժողովեսցի լրիւ իւրով. «Մինչև, ո՛վ Տէր, ժողովեսցես զիս լրիւ և առ քեզ դարձուսցես զամենայն կէտս կենաց իմոց, զվայրատեալսն այսր և անդր հէքաբար»:

Ցան և ցիր հատակոտորք իմն եմք մեք բանահիւսութեան:

Ի կատար գործոյն յետնեալ՝ թէ չգիտիցէ զբոլորն անել.

Ահաւասիկ կեանքս առաջիկայ, որ է յաջորդութիւն իմն մանրամասանց. և ո՛ւր իցէ բովանդակն միահաղոյն. քանզի կամիմք մեք զբովանդակն մեր ողջ, զմիութիւն մեր և զլրութիւն:

Տես, աղէ, զմարդկութիւն. զմարդ իբրև զմեզ կէտ առ կէտ և յալեաց յալիս անցանէ: Եթէ յիւրաքանչիւր ոք կարողական զօրութիւնք, յօժարութիւնք, խորհուրդք և վայրկեանք ցրուեալ են, և կէտ առ կէտ ևեթ 'ի վեր երևին 'ի վերայ նրբաձիգ գծի կենաց, որ այն ի՞նչ գծեալ և եղծանի, զի՞նչ իցէ ասել զմիութենէ ազգի մարդկան: Եղբարք եմք, և մի եմք ըստ կամաց Աստուծոյ: Այլ զի՞նչ քան զազգատոհմս մեր առաւել օտարոտի կայցէ: Մեռանիմք առանց իսկ տեսանելոյ զբազումս յեղբարց մերոց. յոլովք նախ քան զծնանել մեր իջանեն 'ի գերեզման և կամ գան յաշխարհ յետ ելանելոյս մերոյ յաշխարհէ: Պարտք 'ի վերայ կան մեր սիրելոյ առ հասարակ զմարդիկ. սիրտ մեր կամի սիրել զամենայն մարդ՝ ըստ օրինակին զոր միտք մեր խնդրեն գիտել զամենայն իմանալիս: Սակայն 'ի մէջ յորձանացս իսկ այսոցիկ և 'ի մէջ ազգաց և ժողովրդոց՝ որոց մասն եմք և մեք, միջոցն առ պակասութեան ժամանակի անջրպետէ զմեզ: Զքանիս ոմանս ար-

ցեօք 'ի ժամանակակցաց մերոց, զմերձաւորագոյնսն անգամ, չհասանիցէ մեզ, չասացից թէ սիրել, այլ տեսանել գէթ մի անգամ:

Ընդէ՞ր, աղէ՛, և մարդկութիւն ողջ բովանդակ, չխնդրիցէ 'ի Հօրէն իւրմէ և յԱրարչէն զհամահաւաքել իւր յաւուր միում յետ վայրավատին լինելոյ, և զժողովել ուր ուրեմն լրիւ իւրով առաջի նորա, առ սեղանով Հօրն գերդաստանի: Սմին այսմիկ և բանաստեղծութիւն ակն ունի. «Հաւատալ արժան է, ասէ պոետ ոմն, թէ ամենայն արարածք 'ի մի միակ կէտ ձգեալ բերին, և թէ ևենացս՝ որ զարգիս ցրուեալ է, եղիցի տեղի մի, յորում հաւաքեսցին ամենաչուք ծիրք յառաջագիտութեան այնքանեաց չքնաղ արարածոց, և զի ամենազեղ ծաղկունք համօրէն աշխարհի գումարեսցին 'ի մի բուրաստան»:

Ոչ ընդհատ ինչ յայսմանէ խոստացաւ Քրիստոս. «Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի», ասելով 'ի մեկնելն իւրում յաշխարհէ: «Եւ եղիցին մի հօտ և մի հովիւ: Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի. զի ուր եսն եմ, անդ և որք սիրենն զիս եղիցին»:

Ահա այսպիսւոյ կենաց 'ի խոյզ և 'ի խնդիր է ազգ մարդկան, ողջիկ և համագումար կենաց, միաչունչ, հասարակային և անվախճան կենաց, կենաց ասեմ՝ որոյ չիցէ բաժանումն և ցրումն, ոչ 'ի մեզ յինքեանս 'ի ներքոյ և ոչ 'ի մէջ միմեանց, զի անդամք եմք միոյ նոյնաբուն մարմնոյ:

Եւ զայս կոչէ կեանք Աւետարանն, միով ևեթ բանիւ. զորոյ և ուղղափառ աստուածաբանութիւն այսպէս տայ զսահման.

« Անթերի և միահաղոյն ժառանգութիւն անվախճան կենաց », որ են կեանք յաւիտենականք:

Եւ հաւատի ուրեմն 'ի խնդիր է մարդս յաւի-

տենական կենաց, զոր ուղղափառ կրօնք ուսուցանեն և քարոզեն։

Եւ գտցէ զայն մարդ, քանզի ամենայն արարածք խնդրեն զոր գտանելոցն են։ Չխմրդ. Թուլն քեզ, աղէ, ընծայութիւնքս իմ այսօրիկ։

« Հաճոյ են ինձ յոյժ, այլ. . . . »։

Այլ զի՞նչ։

« Ասացից քեզ արդ »:

Դ

Արդարև չքնաղ է գեղեցիկն գաղափարական, այլ անչափ է առ 'ի նմանէ խնկութիւն դժնեայ. յերազիմք մեք զանմահութիւն։ Անցանեմք իբրև զխտականս ազիս և հանգոյն հօտից 'ի սպանդ վարեալք։ փոքր մի ևս՝ և անա որ զարդիս կենդանիքն են, ննջիցեն զքուն մահու ընդ երկրաւ. մարմինք նոցա լուծեալ քայքայեալ՝ յետ կերակրելոյ զորդունս, պարարեսցեն զերկիր, անցցեն 'ի տունկս և 'ի սերմանս, և այսպէս մտցեն անդրէն 'ի շրջանս համագոյից։ Եւ կարծիցես զի բիւրաւոր հիւլեայք՝ ցան և ցիր եղեալք մի առ մի այսր և անդր, և փոխանցեալք յայլ մարմինս, զայնն զիրեարս վերստին առ 'ի կազմել զնոյն մարմին: Եւ եթէ բազում զնոյն մեղեղ փոշոյ կրեալք իցեն յանձինս, ապշոյիցեն արդեօք 'ի միմեանց ըստ կորզելոյն իւրեանց և ապշեալոյ ստանեն զերկիր և զգանձս նորին։ Այլ այս չէ շատ. եթէ առ հասարակ ամենայն մարդիկ ծնցին վերստին, ուրանօ՞ր արդեօք կացցեն, քանզի երկիրս մեր չէ ինչ յոյժ լայնածաւալ։ Միթէ յայլո՞ւմ մոլորակի. և զի՞նչ առաւելութիւն իցէ այլոց մոլորակաց քան զմերս: Ո՞չ ապաքէն նոյն

կարգ իցէ ցանգ տունկեան և գիշերոյ, կենդանաւոր գարնայնոյ և մեռելատիպ ձմեռայնոյ, որ է սանդ կենաց և մահու։ Զի՞ք ուրեք չիք բնաւ տեղի անմահութեան 'ի մեծատարած տիեզերս։

Տեսանեմ զի 'ի մտացօնս արկանես զարեգակն. այլ թողցուք և զայս, զի և արեգակն ինքնին չէ երկինք։

« Հոգին է որ կենդանացուցանէ, ասէ Քրիստոս, մարմին ինչ ոչ օգնէ »։ Անգիտանայցես զի մարմինս մեր ցանց իմն է կենդանի, ընդ որոյ հիւսածս անցանեն հիւթանիւթք, զորօրինակ գետք ընդ անկողինս իւրեանց։ Ընդ ամս եօթն ցանդ՝ որպէս ասեն, բովանդակ հիւթանիւթ մարմնոյս մերոյ փոխեալ նորոգի, սակայն և այնպէս նոյն կայ մնայ միշտ մարմին, զի հիւթոյն չիք ինչ գործ անդանօր. նոյն եմ ես, որպիսի և իցեն հիւլեայք հիւթանիւթիցն՝ զոր կեանք աւերեն ինձ և կամ 'ի բաց տանին առյինէն։ Ընդ՝ յորում բողբոջ մարմնոյս իցէ, և յորում հոգի Աստուծոյ զարթուցէ զնա, բողբոջս այս կենդանացեալ զգեցցի մարմին, այլ ոչ խնդրեսցէ բնաւ առնուլ զհինաւուրց հիւլէս, որով կազմեալ էր երբեմն։ Զի եթէ մարմին մարդկային տասնիցս 'ի կեանս իւրում փոխէ զնիւթն և կամ զզգեստ իւր, զո՞ր արդեօք 'ի հին պատմուճան առնուցու. վասն որոյ ասէ Աւետարանն, « Հոգի առաւել է քան ըզկերակուր, և մարմին քան զհանդերձ »։ Եւ զայն զայս այլով օրինակաւ այսպէս առաջի առնէ մեծահանճար ոք իմաստուն. « Կեանք՝ առաւել կարեւորագոյն թուին գործարանաւոր մարմնոց՝ քան զնիւթն գլխովին »։

Թող զի և սուրբն Պօղոս ասէ. « Յարիցուք հանգոյն սերմանց սերմանելոց 'ի վերայ երկրի »։

վառն այսօրիկ զի՞ հոգաս զպայմանէ հիւլէից ընդմը-տելոց 'ի շրջան. մէն մի հիւլէի եղիցի պաշտօն սե-փական, արժանաւոր ստեղծողին միշտէի. և մի ինչ խիթար թէ յարուցեալքն կարեսցին առ 'ի կորզել զհինաւուրց հիւթանիւթսն, քանզի եղիցի նիւթ բա-ւական վասն ամենեցունց առ հասարակ:

Ոչ ուրանամ՝ զի անմտութեան է խնդիր յուզել զհիւ-լէից 'ի ձեռս յարուցեան մարմնոց. յայտնի էր ինձ կան-խաւ պատասխանի քո առ այս: Այո՛, մարթ է մարմնոց վե-րակերիլ 'ի կեանս՝ հանգոյն սերմանց զկնի ձմերայնոյ:

Այլ ծնունդս այս երկրորդ լիցի գեղեցկահրաշ, փառաւոր, հոգեկան, և իսպառ լուսափայլեալ կե-նօք և մտօք, ըստ բանից սրբոյն Պօղոսի. «Սերմանի մարմին շնչաւոր՝ և յառնէ մարմին հոգևոր[1]»:

Աստանօր 'ի դէպ և 'ի ճահ համարիմ առ այս յուշ առնել զմիտս այլ բան Աստուծոյ, դրոշմեալ յերևելի բնութեան, զօրինակ մի վարկպարազի՝ այլ ամենևին ճշգրիտ, զմահ ասեմ և զյարութիւն թըր-թրոյ: Տես, զիա՛րդ զեռեալ սողայ որդն այն անգործ և գարշատեսիլ[2]. հասեալ է ժամ նորա, և որ թըմ-բրեալն էր 'ի վաղուց՝ ընդարմանայ և ես իբրև 'ի քուն մահու. պարուրեալ ծրարի ընդ տեռև իւրով զոր կրէրն յանձին զոյգ ընդ ճիղմ գործարանաց հան-դերձեալ իւրումն պայմանի: Ահաւասիկ որդն երկրի 'ի շիրմին իւրում: Ընդ յայնժամ թաքուն զօրու-թիւնք կենաց պարզեալ 'ի վեր երևին և գործեն. այլ զառաջինն՝ փոփոխումն մեղմ և յամր տեսանի, և թուի իմն այնպէս թէ եղծումն իցէ: Մաշկ և թաթք՝ որովք սողայրն 'ի վերայ երկրի, աներևոյթ լինին.

1 Ա. Կորնթ. ԺԵ. 44:
2 Հէրտէր:

ապա նորանոր անդամք, այլ նախ անարդք և պատա-տեալք, 'ի վեր երևին և առնուն զչափ իւրեանց. սակայն և այնպէս ոչ յառնէ 'ի քնոյ արարածս այս նոր, մինչև իցէ լրացեալ կատարելապէս: Եւ ահա յեղակարծում երևի 'ի լոյս, և 'ի քթթել ական վճա-րի հուսկ յետինն այլակերպութիւն: Ընդ յայնժամ 'ի սուղ ժամու թևք նորա դեռաբուսիկք՝ որք էին ընդ ծածկութիւ մահու՝ լինին վեցիցս մեծ քան զառա-ջինսն. թեթևք, դիւրաշարժք, լուսացայտք, և ըստ ամենայն երանգս արեգական չքնաղագեղ երփնա-զարդեալք, և 'ի վեր ամբառնան յօդս և 'ի լոյս զէակն այլափոխիկ: փոխեալ է նա ամենևին. և որ զառա-ջինն ծախէր սաղարթս ստուարս՝ արդ ըմպէ զօշա-րակս ծաղկանց 'ի բաժակս նոցին ոսկիս. և 'ի նորըն-ծայ յայսմ պայմանիս առաւելեալ է 'ի սէր քան 'ի քաղց:

Աղէ՛, ո՞ր ուրուք տեսեալ զթիթեռնն ընդ կեր-պարանաւ թրթրոյ և ակն ունել էր զհանդերձեալ փառաւորութենէ նորա. և ո՞վ ոք արդեօք ասէր, եթէ երկաքանչիւրն նոյնատիպ արարածք իցեն, եթէ փորձոյ չև էր յայտնաբարբառ քարոզեալ:

Արդ եթէ կրկին տեսանք էութեանս այսմիկ՝ այլ և այլ կերպարանք են նոյնական էակին 'ի վերայ մի և նոյն հողոյ, ապա որպիսի՛ չքնաղահրաշ այլակեր-պութիւնք ոչ 'ի վեր երևեսցին, յորժամ ժամա-նակք կենաց բովանդակեսցեն յինքեանս զաշխարհս բազումս:

Սակայն ես ոչ դադարեմ դարձեալ 'ի կրկնելոյ, թէ աշխարհս և համագոյքս այս շարժականք՝ չեն ինչ ան-մահականք: Անյեղլի են օրէնք բնութեան. մշտարուն են զօրութիւնք՝ որով վարին աստեղք 'ի պարունակս իւ-րեանց. հաստատուն է ամենայն հաւատեօք մերս սա-

տեղաբաշխական կանոնադրութիւն։ Այդ՝ ինչ ինչք անկ ունիցիս. կառուցանիցես արդեօք աշխարհ մի նոր. և իցե՞ ինչ մարդ մտաբերիլ յայլ։

Եւ աշխարհս իսկ գլխովին իջցէ յապականութիւն, առ 'ի գեղեցկագոյնս ծնանիլ միւսանգամ, և ամբարձցի 'ի շարժութենէ ատտի 'ի հանգրուանսն մշտակայս։

Իսկ օրէնք բնութեան լուծանիցի՞ն ինչ արդեօք յայլակերպլին որդան 'ի թիթեռն. սմին նման և աշխարհս փոփոխեսցի առանց ամենևին ստնանելոյ օրինաց բնութեան. քանզի կեանք նոր ոչ եթէ լուծանեն զօրէնս հինաւուրց աշխարհի, այլ լնուն։

Գիտեմ առուցուրեամբ զի քրիստոնական ճշմարիտ կրօնից վարդապետութիւն է այս, ըն Գոյ վախճան համագոյից. այլ միրե և գիտութիւն կանխագիտիցէ արդեօք զման աշխարհիս։

Զայս մի ինչ գովելի իցէ ասել 'ի կողմանէ գիտութեան, եղբայր, եթէ չգիտեմք. և կամ եթէ գիտիցէ իսկ դարս այժմեան՝ այնպէս է իբր այն թէ ոչ գիտիցէ։ Գիտունք աշխարհի ոչ որոճան զգիտութիւնս իւրեանց, այլ բերանացի ևեթ գիտեն։ Ո՜ պաշտօնեայք գիտութեան, իցէ՞ թէ հանէր՝ որք զձեզ յատեան 'ի փուրսիչ. որք ունիք զփականս գիտութեան՝ և ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք։

Սակայն 'ի վերայ այսոցիկ, լո՛ւր և զոր ասէն Լէյպնից. «Աշխարհ, ասէ նա, կործանեսցի և նորոգեսցի ըստ ժամանակի յորժամ այդպէս պէտք իցեն վարչութեան ոգեղինաց»։

Եւ երազամիտ որ հանճարեղ, զոր չէ պարտ յամենայնի անգոսնել, ասէ, թէ Պարտ է մեզ ակնկալել զնորոգութիւն ոճոյ համայն տատեղաբաշխականին կանոնի և բովանդակ տարերց աստեղաց։

Հերտէր յիւրումն իմաստասիրութեան պատմութեան ասէ, թէ «Երկիրս այս անցցէ և ոչ ևս եղիցի, և դու կացցես տակաւին և զմայլեսցիս յԱստուած և 'ի նորայն արարչութիւն, յայլ օթևանս՝ որք այլազգ իցեն կազմեալք և յարդարեալք»։

Եւ երկրաբանք աւուրցս տեսեալ ընդ աղօտ ըղձչմարիտն, սակայն հարևանցի և խառն ընդ մոլորութեան, ծանօթս տան կանխաւ, թէ լինելոց է նոր իմն արարչութիւն, առաւել մեծահրաշ քան զառաջիկայս։

Իսկ 'ի մասին աստեղաբանութեան՝ ինքնին Հերշէլ 'ի քնին մատուցեալ՝ հարցանէ ցանձն, եթէ իցէ՞ անյեղլի դրութիւն աստեղաց. և թէ արդեօք պարունակքս այսոքիկ 'ի վախճանի ո՞չ անկցին կենդրոնէ 'ի կենդրոն 'ի հասարակացն անդր կենդրոն. և թէ տիեզերքս ո՞չ փոխակերպեսցին արդեօք յետ մեծի այլայլութեան։

Եւ զի՞նչ ասիցես զբանից Ռիգդերի 'ի վեր անդր յիշատակելոյ, թէ՝ «Երկիր 'ի հանապազորդ թաւալմունս իւր թերևս խնդրէ զտեղի իւրումն յաւիտենական հանգստեան»։

Համառօտ ասել, ո՞վ որ իցէ որ անգիտանայցէ զայսօսիկ տողս մեծի պուետի ուրուք.

Արփիք, աստեղք մոլորականք, որ զոյգ ընդ մեզ մըղէք յառաջ,
Պատմեցէք, եթէ իցէք ինչ խելամուտ, յո՞ր վայր գընամք
Առ հասարակ։ Մինթէ ցաւո՞ց և լըռութեան երթամք յափունս,
Առ 'ի լինել 'ի պարեխ մի աճազին խըրեալք ըղձայգն,
Զանհունն անբաւութիւն նաւարեկմանըս կոտորմք.
Եւ կամ վարեալք աջովն իւրով 'ի գեղազուարճ ինչ ծովափունս,
Եւ 'ի խարիսխն յաւերժական մինչև խաղաղ ամբարձընդեալք՝
Ի հանգրուանս ինչ երկնային իցէ՞ 'ի քուն մեզ հասանել։

Տես, աղէ՛, զերկիրս մեր փոքրիկ, զիարդ թաւալեալ հրջի արագ արագ շուրջ զմեծատարած արեգա

կամք իւրով. իբրև զնաւ մի վարդի նա զկղզեկաւս լուսոյ. Ճանապարհորդք եմք մեք արդարև նաւագնացք. արդ նաւս այս ոչ գնայ առ 'ի ընթանալ, այլ գնայ զի ժամանեալ հասցէ:

Արդ ժամանել է վասն իւր և վասն մեր՝ մեռանելն և ծնանել վերստին. և քերթողն ծանոյց կանխաւ զամենայն 'ի կրկին առաջարկութիւնս իւր: Երկիրս մեր՝ անկցի յարեգակն և 'ի հուր նորա կիզեսցի, և կամ հարցի և փշրեսցի հանդոյն թախչ աստեղ ընդ պարենս մի ապառաժ, եթէ արևու իցէ չիջեալ յառաջ քան զանկումն մեր:

Եւ անշուշտ կաճառք երկնապար աստեղաց հոսեսցին կենդրոնէ 'ի կենդրոն, և կազմեսցէ Աստուած առ 'ի նոցանէ աշխարհ մի միայն և օթևան միակ վասն ամենայն արարածոց առ հասարակ անսահման արարչութեան՝ բանաւորաց և աղատաց:

Չկայցեն այլ ևս աշխարհք ցիրք:

Ամենայն աստեղք ցանեալք ընդ միջնոցն իբրև զաւազ՝ գումարեսցին 'ի մի, և իւրաքանչիւրոց 'ի նոցանէ բարձցի իւրական աստեղն անուն, և աւերեսցին պարունակք նոցա, և 'ի մի ձուլեալք բոլանդակօրէն՝ կազմեսցեն զմիակ և զյաւէրժական քաղաքն Աստուծոյ:

Երուսաղէմ, ասէ մարգարէն, է քաղաք՝ որոյ ամենայն բաժինք բերին 'ի մի:

Ո՞չ ապաքէն սոյն այս իմաստք իցեն և բանիցն Քրիստոսի՝ յասելն. «Եւ եղիցին մի հօտ և մի հովիւ»:

Եւ զի՞նչ ասիցես զբանից Սաղմոսին.

«Ի սկզբանէ, Տէր, զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են:

«Նոքա անցանեն, և դու կաս և մնաս յաւիտեան:

«Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին, որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին[1]»:

Սակայն ուղղափառ աստուածաբանութիւն ոչ ուսուցանէ ինչ այսպիսի:

Խորհս, զի հիմունք այսոցիկ ամենայնի վարդապետեալ են յուղղափառ աստուածաբանէ ումեքէ, որ զերահռչակն է քան զայլ ամենայն աստուածաբանս, 'ի սրբոյն Թովմայէ ասեմ Ագուինացւոյ:

Աղէ՛, լուր զվերջին գլուխ Բովանդակութիւն աստուածաբանական կոչեցեալ մատենի նորա՝ որ ընդդէմ հեթանոսաց.

«Համօրէն զգալի արարչութիւն՝ կերպարանափոխ լիցի ընդ մարդոյս, և անհետ եղիցին ամենայն նշմարանք ապականութեան և ծննդականութեան. և սոյն այս է զոր ասէ Առաքեալն. Ինքեանք իսկ արարածք ազատեսցին 'ի ծառայութենէ ապականութեան յազատութիւն փառաց որդւոցն Աստուծոյ[2]: Այլ զի՞նչ պէտք իցեն առ այս. պարտ է զի դադարեսցի թաւալումն երկնից. որպէս և 'ի Յայտնութեան գիրս ընթեռնումք, թէ՝ Ոչ ևս կայ այլ ժամանակ[3]: Եւ յիրաւի, գոյ նպատակ թաւալման երկնից, և նպատակս այս չէ թաւալումն ինքնին, քանզի ամենայն շարժումն՝ է ձկտումն ինչ և ոչ նպատակ. վասն որոյ մարթ է մեզ ասել հաւաստեաւ, թէ 'ի ժամանակեալ ժամուն վերջացեալ զկայ առցէ թաւալումնս:

«Շարժմունք երկնից դադարեսցեն, այլ էութիւն տարերաց կացցէ մնասցէ վասն անշարժական գոլոյ բարութեանն աստուածայնոյ, որ արար զարարածս զի իցեն: Իսկութիւն առէից ատակ առ յաւէժութիւն՝ կացցէ մնասցէ յաւէժաբար. իսկութիւն

1 Սաղմ. ՃԱ. 26, 27:
2 Հռովմ. Գլ. Ը. 21:
3 Գլ. Ժ. 6:

տարարածոց կացցէ 'ի յետին այսմ պայմանի աշխարհիս, և Աստուած իւրով զօրութեամբ լցցէ զԹերին հիքութեան նոցա:

«Յայս միտս պարտ է իմանալ և զբանս սրբոյն Պօղոսի, որ ասէ. Անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ [1]. այսինքն անցցէ արտաքնայարդար վայելչութիւն աշխարհիս զոր տեսանեմք, այլ իսկութիւն նորա կացցէ մնասցէ:

«Ի սոյն միտս պարտ է առնուլ և զբանս Յոբայ. Մարդ ննջեաց և ոչ յարիցէ: Մինչև երկինք իցեն՝ ոչ կարկատեսցին, և ոչ զարթիցեն 'ի քնոյ իւրեանց [2]. այս է, յորժամ այլ ոչ ևս եղիցին երկնից կերպարանքս այս՝ որ տայ նոցին զչարժութիւն, և ձգէ ածէ զամենայն 'ի յեղյեղմունս իւրեանց:

«Ներկմիտ եմք զի աշխարհս կերպարանափոխ լիցի 'ի հրոյ, և այս է զոր ասէ առաքեալն Պետրոս. Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն դատաստանի:

«Յաւուր յայնմիկ երկինք տագնապաւ անցցեն, և բնութիւնք հրով կիզեալ լուծցին, և երկիր և որ միանգամ 'ի նմա գործք գտանիցին:

«Այլ նորոյ երկնից և նորոյ երկրի՝ ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք, յորս արդարութիւն բնակէ:

«Եւ քանզի բովանդակ արարչագործութիւն ըզգալի, (որբոյն Թովմայի ագուինացւոյ են միշտ բանքս), պարտի գաշնակաւոր լինել ընդ մարդոյս պայմանի, և մարդոյ՝ որպէս ցուցաք, ոչ միայն 'ի վերայ կայ փըրկել 'ի մահուանէ և յապականութենէ, այլ և զփառս

1 Ա. Կորնթ. Գլ. Է. 31:

2 Գլ. ԺԴ. 12. Իսկ ըստ լատին Վուլկադայ Թարգմանութեան՝ «Մարդ յորժամ ննջիցէ, ոչ զարթիցէ 'ի քնոյ, մինչև երկինք մղեղեալ 'ի հող դարձցին»:

զգենուլ, զհետ գայ ասել, Թէ երևելի արարչութիւն իսկ այլափոխեալ փառաւորեսցի ըստ իւրում բնութեան, և ըստ այսց իմաստից ասի 'ի գիրս Յայտնութեան. Եւ տեսի երկին նոր և երկիր նոր [1]. և Եսայի ասէ. «Եւ եղիցին երկինք նոր և երկիր նոր, և ոչ ևս յիշեսցեն զառաջինսն. և ոչ ևս անկցի 'ի սիրտս նոցա. այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն 'ի նմա, զոր ես հաստատեցից [2] — եղիցի եղիցի»:

Այսպէս աւարտէ սուրբն Թովմաս զգիրս իւր:

Գեղեցիկ են այսոքիկ:

Այլ և լի ճշմարտութեամբ: Այնէիր կամիսաւ Թէ չգտանեմ 'ի տիեզերիս տեղի անմահութեան: Եւ յիրաւի իսկ, չիք տեղի 'ի շարժուն տիեզերիս յայսմիկ. սակայն ո՞վ գիտիցէ որ ինչ գոյ 'ի կենդրոնի:

Համայն և այսպէս յորժամ Քրիստոս՝ Բանն յաւիտենական՝ ասէ ցմեզ, Թէ՝ «Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի», խօսի զտեղւոյն անմահութեան և զտիեզերաց նորոգելոց յաւիտենական և անյեղլի կատարելութեամբ:

Արդ պնդեսցուք, եղբայր, զսիրտս մեր յայս յոյս գերահրաշ:

Եւ լուիցուք, աղէ, զոր ինչ ասեն մեզ բան, գիտութիւն, բանաստեղծութիւն և կրօնք:

«Անցցէ երկիրս այս և տակաւին կացցես մնասցես դու, և վայելեալ զմայլեսցիս յԱստուած և յարարչութիւն նորին, յայլ բնակութիւնս, որք այլազգ յօրինեալք իցեն: Բարութիւնք բազումք եղեն քեզ յաշխարհիս յայսմիկ, և հասեր 'ի չափ հասակի առ 'ի կարող լինել պարագիտել որ շուրջ զքև են և 'ի վեր քան զքեզ, իբրև որդի երկնից: Գուն գործեա արդ

1 Գլ. ԻԱ. 1:

2 Գլ. ԿԵ. 17:

թողուլ լքանել զայն անտրտունջ, և օրհնեա իբրև զդաշտն զայն, յորում ծնունդդ անմահութեան զբօսար 'ի մանկութեան, իբրև զվարժարանն ասեմ՝ յորում հասեր տրտմախառն բերկրութեամբ 'ի չափ առն կատարելոյ։ Չի՛ք քոյ այլ ևս իշխանութիւն 'ի վերայ նորա, և ոչ իւր 'ի վերայ քո. ա՛ռ ընկալ զպը-սակն ազատութեան և զգօտին երկնային, և հանգո անտրտում զցուպ պանդխտութեան քո»։

ՑԱՆԿ

Տրամախոսութիւն Ա. – Հաւատք. Աստուած արարիչ. 1

Տրամախոսութիւն Բ. – Մարդեղութիւն. Աստուածութիւն Յիսուսի Քրիստոսի 35

Տրամախոսութիւն Գ. – Երրորդութիւն . . . 72

Տրամախոսութիւն Դ. – Փրկագործութիւն . . 103

Տրամախոսութիւն Ե. – Եկեղեցի 142

Տրամախոսութիւն Զ. – Խորհուրդք. Շնորհք . . 171

Տրամախոսութիւն Է. – Կեանք յաւիտենականք . 204

ՀՉ 148

Ընծայ Ս. Փրկչեանէ [illegible]

557

0026962

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0026962